ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY
1919

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ 1914-1918 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

სომეხთა გენოციდი

ქართულ პერიოდიკაში

1914-1918

თბილისი
გამომცემლობა „უნივერსალი"
2011

ՀՏԴ 94(479.25):070
ԳՄԴ 63.3(5Հ)+76.02
Հ 282

Հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը

Վրացերենից թարգմանեց
Հրաչյա Բայրամյանը

Հ 282 **Հայոց ցեղասպանության թեման վրացական պարբերականներում 1914-1918 թթ./** Վրացերենից թարգմանեց Հրաչյա Բայրամյանը.- Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 226 էջ:

Գրքում զետեղված են Հայոց ցեղասպանության նախապատմությանը, Արևմտյան Հայաստանում բարենորոգումները ժխտելուն, հայ մտավորականության ձերբակալություններին, բնակչության տեղահանությանը, բնաջնջմանը, ինչպես նաև Արևելյան Հայաստանում ու Այսրկովկասի հայաբնակ վայրերում սպանդին վերաբերող նյութերը 1914-1918 թթ. Վրացական մամուլում: Դրանք հնարավորություն են ընձեռում ծանոթանալու այդ եղերական իրադարձությունների ու հատկապես դեպի Վրաստան հայերի գաղթի վերաբերյալ վրաց գործիչների վերաբերմունքին ու մեկնաբանություններին:

Ժողովածուն նախատեսվում է Հայոց ցեղասպանության պատմությամբ զբաղվող մասնագետների, գիտական հանրության և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 94(479.25):070
ԳՄԴ 63.3(5Հ)+76.02

ISBN 978-5-8084-2218-6

© ԵՊՀ հրատ., 2017

Թարգմանչի կողմից

Բազմաթիվ երկրների մամուլի օրգանների հետևողությամբ Վրաստանի մամուլը ևս ժամանակին արձագանքել է Օսմանյան Թուրքիայում հայերի հանդեպ սկիզբ առած հրեշավոր ոճրագործությանը:

Այդ բնույթի հրապարակումների շարքում[1] առանձնանում է

«Հայոց ցեղասպանությունը վրացական պարբերականներում 1914-1918 թթ.» վերտառությամբ նյութերի ժողովածուն: Դրանք վրացական որոշ թերթերից ու հանդեսներից՝ «საქართველო»[2], სახალხო გაზეთი»[3], «სახალხო ფურცელი»[4], «სამშობლო»[5] և

---

[1] Տե՛ս օրինակ՝ **Kloian R. D**., T he Armenian Genocide. News Accounts from the Armenian Press (1915-1922). Third edition, Berkeley, 1985; Le génocide arménien dans la presse canadienne. The Armenian Genocide in the Canadian Press, vol. I, 1915-1916; vol. II, 1916-1923, Montréal, 1985; Armenians At the Twilight of The Ottoman Era. Compiled & edited by Vosgan Mekhitarian, Rev. Vahan Ohanian. News Reports From The International Press, vol. I, The New York Times 1890-1914. Published by Genocide Documentation & Research Center, 2011; The Times of the Armenian Genocide. Reports in the British Press, vol. 1: 1914-1919; vol. 2: 1920-1923. Compiled & edited by Katia Minas Peltekian, Beirut, 2013.

[2] «Սաքարթվելո» («Վրաստան»)- Վրացական քաղաքական, տնտեսական և գրական օրաթերթ՝ ազգային-դեմոկրատական ուղղությամբ: (Լույս է տեսել 1915-1921 թթ. Թիֆլիսում «Կլդե» ամսագրի փոխարեն: Խմբագիր-հրատարակիչ Ս. Շանշիաշվիլի [1915-1916], 1917-ից՝ Գ. Վեշապելի):

[3] «Սախալխո գազեթի» («Ժողովրդական թերթ»)- Վրացական քաղաքական, գրական օրաթերթ. Վրաստանի սոցիալ-ֆեդերալիստների կուսակցության կենտրոնական օրգան (հրատարակվել է 1909-1914 թթ. Թիֆլիսում ընդհատումներով):

«ՀԼՁԶ»[6], Մեծ եղեռնի վերաբերյալ ի մի բերված թղթակ-ցություններ, հոդվածներ, նամակներ, հարցազրույցներ, վկայություններ են, որոնց գերակշիռ մասը ամբողջովին կամ հատվածաբար քաղված են հայկական («Մշակ», «Հորիզոն», «Վան-Տոսպ», «Պայքար»), ռուսական (“Новое обозрение”, “Листок”, “Закавказская речь”, “Кавказское слово”, “Петербургские ведомости”, “Русские ведомости”), Անգլիայի, Բուլղարիայի, Գերմանիայի, Հոլանդիայի, Հունաստանի, Ֆրանսիայի և այլ երկրների լրատվամիջոցների հրապարակումներից և շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Նյութերը համակարգված են ժամանակագրորեն և ընդգրկում են Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած կարևորագույն դեպքերը՝ 1914 թ. հունվարից մինչև 1918 թ. հունիսի սկիզբը: Ժողովածուն բաղկացած է հինգ մասից՝ «1914», «1915», «1916», «1917» և «1918», որոնց վերնագրերը՝ «Մեր դրացիները», «Հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում», «Հայերի սպանդը», «Անգլիան և հայերի ինքնավարությունը», «Հայկական հարցը Անգլիայի պառլամենտում», «Հայկական հարցը Ռայխստագում», «Ամերիկան և հայերը», «Հայ գաղթականները» և այլն, ավելի քան խոսուն են և արտացոլում, խտացնում են արծարծվող հարցերի ու թեմաների բովանդակությունը:

Առաջին բաժինը ընթերցողին իրազեկում է Օսմանյան կայսրությունում տիրող կացությունը. թուրքական կառավարությունը ոչ միայն հրաժարվում է բարեփոխումներ իրակա-

---

[4] «Սախալխո փուրցելի» («Ժողովրդական թերթոն»)- Վրացական քաղաքական և գրական օրաթերթ, սոցիալ-ֆեդերալիստների կուսակցության օրգան (հրատարակվել է 1914-1917 թթ. Թիֆլիսում՝ «Սախալխո գազեթի»-ի փոխարեն):

[5] «Սամշոբլո» («Հայրենիք»)- Վրացական ազգային-դեմոկրատական կուսակցության օրգան (լույս է տեսել Քութայիսում, խմբ. Ի. Ցեցնաձե):

[6] «Կլդե» («Ժայռ»)- Վրացական հասարակական, քաղաքական, տնտեսական և գրական ամսագիր (լույս է տեսել Թիֆլիսում 1912-1915 թթ., հրատարակիչ խմբագիր Ռ. Գաբաշվիլի):

նացնել Արևմտյան Հայաստանում, այլև պետական մակարդակով թշնամանք է սերմանում հայ բնակչության հանդեպ, նաև Կովկասյան մեծ լեռնաշղթայի երկայնքով սահման անցկացնելու և առհասարակ Օսմանյան Թուրքիայի նախապատերազմական ծրագրերի ու նկրտումների մասին: «Սախալխո փուրցելի» լրագրում ուշագրավ թվական տվյալներ են ներկայացված, որոնք խոսում են Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության նահանգներում բնակվող հայերի մասին, չնայած թուրքական կառավարությունը միշտ խուսափել է հայերի էթնիկ պատկանելության մասին որևէ ճշգրիտ տեղեկություն հաղորդել, ավելին՝ նվազեցրել է տարածքի հայ ազգաբնակչության իրական թվակազմը: Թերթի վկայությամբ՝ Օսմանյան կայսրությունում «այժմ բնակվում է ավելի քան 2.100 հազար հայ: Վեց վիլայեթում հայերը կազմում են բնակչության 38.9 %, թուրքերը՝ 25.4 %, քրդերը, պարսիկները և այլազգիները՝ 29.7 %, մնացած քրիստոնյաները՝ 6.3 %»[7], ինչը, ամեն դեպքում, դժվար է իրական պատկերը համարել:

Երկրորդ և երրորդ բաժիններում առկա են անմիջական նկարագրություններ՝ հայերի տեղահանություն, բռնությունների արձանագրություններ, գաղթականների վկայություններ, Օսմանյան կառավարության կողմից իրականացված քստմնելի գործողություններ, օտար տերությունների արձագանքներ և այլն:

Հայոց ցեղասպանության մասին թուրքական «տեսակետներ» պարունակող նյութերում ներկայացված են կառավարության ներկայացուցիչների հայտարարություններ, հարցազրույցներ, որոնք հուշում են Հայկական հարցի, հայոց տարածքների ու հայերի ճակատագրի շուրջ եղեռնագործ եռյակի և նրանց կամակից ու հաճկատար չինովնիկների վերաբերմունքի մասին:

---

[7] «Սախալխո գազեթի», 1914 թ., 29 հոկտեմբերի (№ 124):

Դրանք հերթական անգամ հաստատում են, որ Հայոց ցեղասպանությունը և օսմանահպատակ ժողովուրդների սպանդները, կոտորածներն ու բռնությունները եղել են այդ երկրի պետական, ազգային, կրոնական և ռասայական քաղաքականության ու քարոզչության հիմնական գործելակերպը, կրել հստակ ծրագրված բնույթ: Հատկանշական են Թալեաթ մարդակերի՝ Հայկական հարցի մասին տրված պատասխանից քաղված հետևյալ խոսքերը. «…ես պետք է առնվազն հիսուն տարով արմատախիլ անեմ հայերի համար բարենորոգումներ անցկացնելու հարցի թեկուզև հիշեցումը… Հայերը կեղտոտ և զզվելի ժողովուրդ են: Նրանց ոչնչացնելով՝ ոչ ոք ոչինչ չի կորցնի»[8]:

Տարաբնույթ թղթակցությունները մեկ անգամ ևս համոզում են, որ դաժանագույն ոճրագործության համար մեղավոր են նաև իրենց քաղաքակիրթ հորջորջող մեծ տերությունների ղեկավարներն ու բարձրաստիճան պաշտոնյաները, ովքեր օսմանյան լծի տակ հեծող հայ ժողովրդի հանդեպ տասնամյակներ շարունակ ոչ միայն բացահայտ կրավորական կեցվածք որդեգրեցին, այլև բարբարոսություններն անգամ կատարվեցին նրանց լուռ համաձայնությամբ, երբեմն՝ արդարացմամբ, անգամ՝ խրախուսմամբ: Ասվածը վկայող բնորոշ մեկ օրինակ. կայզերական Գերմանիայի Ռայխստագի պատգամավոր, ձախ սոցիալ – դեմոկրատական ֆրակցիայի անդամ Կարլ Լիբկնեխտը պետության ղեկավարներից մեկին հարցնում է. «Կանցլերը գիտե՞, արդյոք, որ թուրքերը հարյուր հազարներով ոչնչացնում են հայերին և, եթե, այո, ի՞նչ քայլեր է ձեռնարկել առաջն առնելու համար»: Սրան ոմն բարոն ֆոն Շթում պատասխանում է. «Կանցլերը ամեն ինչ գիտի, գիտի նաև կոտորածի մասին, ինչպես նաև այն մասին, որ հայերը, մեր թշնամու կողմից ոգեշնչված, թուրքերի դեմ ցույցեր են նախապատրաստում: Դա թուրքերին դրդել է

[8] «Սամշոբլո», 1915 թ., 24 հոկտեմբերի (№ 205):

դիմել ծայրահեղ միջոցի՝ հայերին տեղահան անել և բնակության նոր վայրեր տարհանել: Մեր և Թուրքիայի կառավարող շրջանների միջև այսօր կատարյալ համաձայնություն է, թե որտեղ ինչ միջոցներ ձեռնարկել՝ լիակատար կարգ ու կանոն հաստատելու համար: Ինչ վերաբերում է մանրամասներին, ապա մենք դրանք հրապարակելու իրավունք չունենք»[9]: Հետաքրքիր են նաև չորրորդ և հինգերորդ մասերի այն թղթակցություններն ու հաղորդագրությունները, որոցում տրված է հայերին ոչնչացնելու ծրագրի շարունակությունը՝ դրանց աշխարհագրական ծիրը հասցնելով Արևելյան Հայաստան, Կովկաս ու ռուսական կայսրության նահանգային տարածքներ ու գավառներ, որտեղ թուրքական զորքերին անմիջական աջակցում էր այդ գավառների թուրք ու թաթար բնակչությունը: Ոճրագործությանը առավել նպաստում էին ռուսական զորքերի դասալքությունը, նրանց կողմից արևելահայ զինված խմբերի ու բնակիչների անօրինական զինաթափումը:

Դրանց մեջ բազում նյութեր խոսում են կատարած հանցագործությունների համար Օսմանյան Թուրքիային պատասխանատվության ենթարկելու օտար պետությունների գործադրած ջանքերի մասին: Այսպես, Անգլիայի Լորդերի պալատի պատգամավոր Բրայսը Հայկական հարցի վերաբերյալ իր ելույթում ասել է. «Դաշնակից պետությունները պետք է միավորվեն և Օսմանյան կայսրությունը ոչնչացնեն իբրև պետություն, իսկ օսմանցիներին քշեն այնտեղ, որտեղից նրանք եկել են»[10]:

Առհասարակ վրացական մամուլի որոշ օրգաններ սերունդներին են ավանդել Օսմանյան Թուրքիայի՝ հայերի հանդեպ կիրառած մարդկության պատմության մեջ աննախադեպ ոճրագործությունը, իրենց մշտական բնակավայրերից հայ ազգաբ-

---

[9] «Սաքարթվելո», 1916 թ., 20 հունվարի (№ 14):

[10] «Սախալխո փուրցելի» , 1915 թ., 30 դեկտեմբերի (№ 467):

նակչության տեղահանությունը, աքսորի ճանապարհներին ու հատուկ ճամբարներում ջարդարարների չարանենգ գործողությունները, հայ մտավորականության ձերբակալությունն ու գազանաբար սպանությունը, մոլեռանդ ամբոխի խժդժությունները, անօրինակ խոշտանգումներն ու դաժանությունները: Ժամանակի վրաց մամուլում խոսվում է նաև Մոսկվայում, Պետրոգրադում, Թիֆլիսում, Փարիզում, Նյու-Յորքում, Լոնդոնում և այլ քաղաքներում կազմակերպած ներկայացուցչական հավաքների ու խորհրդակցությունների մասին, որոնցում քննարկում և վճռում էին բազմաթիվ երկրներում, դրանց թվում և Այսրկովկասի հայաբնակ շրջաններում ու Վրաստանում ապաստան գտած հայ փախստականներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտության, գաղթականների կարիքների համար տարբեր երկրների կողմից տրամադրվող և հասարակական կազմակերպությունների ու խմբերի հանգանակած գումարները, սննդամթերքը, հագուստը իրացնելու և հրատապ այլ հարցեր:

Վրացի լրագրողներն ու հրապարակախոսները հոդվածներում ու հաղորդագրություններում համերաշխություն, կարեկցանք ու համընդհանուր ցավակցություն են արտահայտում հայ ժողովրդին, թեև սիրտ շոյող արտահայտություններից բացի, հանդիպում են նաև այլ տրամադրություններ:

Այսպես՝ «Կլդե» հանդեսը, նշելով, թե «Լիովին համոզված պետք է լինեն իրենց հայրենիքից տեղահանված, տունուտեղ կորցրած հայերը, որ մենք լավ ենք հասկանում նրանց ծանր վիճակը, հոգով, սրտով կարեկցում ենք…»: Արծարծելով ժողովրդագրական հիմնախնդիրներ՝ միաժամանակ հավելում է, որ գաղթականների զանգվածային մուտքը սրում է հայերի ու վրացիների հարաբերությունները, որովհետև, իբրև թե, նախորդ հարյուրամյակներում նույնպես մուտք գործելով Վրաստանի տարածք, անդամահատել են երկիրը, շատ հողեր գրավել: «Ոչ

մեկի համար գաղտնիք չէ,- գրում է պարբերականը,- որ անցած պատերազմների ընթացքում փախստական հայերն առանց կռիվների տեր դարձան Ախալքալաքի ամբողջ գավառին, Բորչալուի մի մասին և Կարսի նահանգի կեսին: Այդ գործողությունները կրկնվում են այսօր»:

Մեկ այլ հոդվածում կարդում ենք. «Հայերի բնակեցումը Վրաստանում տեղի է ունենում նաև այն ժամանակ, երբ Օսմանիայում նույնիսկ հալածանքներ ու միջադեպեր չեն լինում: Հայ փախստականների՝ վրացական տարածքներում բնակեցումը բոլորովին անհնար է դարձնում մեր բարեկամություն-հարևանությունը, բոլորս պետք է զգանք դրանից սպասվող վտանգը»:

Ըստ հանդեսի՝ փախստականները նյութական աջակցության կարիք ունեն, հնարավոր է քսան, հարյուր ընտանիքի ժամանակավորապես օգնել դրամով, պարենով, հագուստով, բայց նրանց նաև հող է պետք, ինչպե՞ս և որտեղի՞ց պետք է կտրեն այդ հողատարածքները, երբ դրա հետևանքները հայտնի են ամենքին և ամենուր, մանավանդ փախստականների հոսքը սաստկացնում է ժողովրդի դժգոհությունը, իսկ դա պատերազմից ավելի մեծ դժբախտություն է, քանզի կարող է «մեկընդմիշտ խորտակել վրաց և հայ ժողովուրդների համերաշխության ու բարի հարևանության հիմքերը»[11]:

Ժողովածուն չէր կարող ընդգրկել վրաց լեզվով պահպանված ամբողջ նյութը, մասնավորապես 1914-ին նախորդած, առավել ևս 1918-ի հունիսին հաջորդած օրերի, ամիսների ու տարիների հրապարակումները: Պետք է ենթադրել, որ մամուլում, եղածից բացի, հայոց թեմային առնչվող փաստաթղթեր ու հետաքրքիր նյութեր իրենց ուսումնասիրողներին են սպասում վրացական արխիվների պահոցներում:

---

[11] «Կլդե», 1915 թ., 25 հունվարի (№ 3):

Սրա մասին մեզ հուշում են այլ նյութեր ևս: Այսպես՝ մեկ հեռագիր վկայում է թուրք և վրացի հրամանատարների սերտ կապերի մասին: Թուրք Վեհիբ փաշան հեռագրով հայտնում է վրացական զորքերի հրամանատար, գեներալ Օդիշելիձեին. «Էրզրումից և նրա շրջաններից լուրեր եմ ստացել, որ Ձեր հեռանալուց հետո, հայերը գազանաբար ոչնչացնում են մուսուլմաններին և նրանց բնակավայրերը: Այդ իսկ պատճառով ստիպված ենք նշված վայրերը շտապ մաքրել այդ բռնամոլ տարրից»: Այնուհետև՝ «…մեր զորքերի վերադարձը Տրապիզոն մեծագույն հրճվանքով դիմավորեցին Ձեր զորքերը»: Նույն գրության մեջ նա, ասես, ավետում է վրացի գեներալին, թե «Բորչալուի գավառում թաթարները ավերել են Արամյանցի բամբակազտիչ գործարանը և այլ շինություններ…»[12]:

Տեքստերի մեջ հանդիպում ենք նաև ուշագրավ և հուզիչ մեկ այլ նյութի[13], որը ո՛չ հոդված է, ո՛չ թղթակցություն, առավել ևս՝ ո՛չ էլ ակնարկ է կամ գեղարվեստական պատում: Թերևս, վավերագրի արժեք ունեցող խմոր է, որ հետագայում մեր գրողներից որևէ մեկը երևի մշակի և դարձնի գրական որևէ ժանրի թեմա և հայ գրականությունը հարստացնի հայրենասեր հայուհու մեկ կերպարով ևս: Տեքստը բառացի թարգմանության տպավորություն է թողնում, անմշակ է, անվերնագիր, առանց բնագրի աղբյուրը կամ հեղինակի անունը նշելու:

Անկախ ծավալից ու բովանդակությունից, այս նյութերն էական են, քանզի վրացալեզու ընթերցողին հաղորդակից են դարձնում և գիտական շրջանառության մեջ դնում հայոց ողբերգությունը հավաստող, երբեմն էլ դատապարտող վրացական մամուլի արձագանքները:

---

[12] «Սաքարթվելո», 1918 թ., 27 փետրվարի (№ 44):

[13] «Սախալխո փուրցելի», 1915 թ., 12 փետրվարի (№ 208):

Ժողովածուն կազմելու, հրատարակելու գաղափարը հղացել, նախաձեռնել և աշխատանքներն իրականացրել են Վրաստանի հայ համայնքի ուսանողական միության անդամները՝ հանձինս Ռազմիկ Բաղալյանի, Արթուր Միրզոյանի, Գևորգ Յազուտովի, Էդուարդ Սահակյանի և Ալեքսանդր Օհանյանի:

Գիրքը լույս է տեսել Թբիլիսիում եվրահայկական ֆեդերացիայի վրացական գրասենյակի հովանավորությամբ:

ՀՐԱՉՅԱ ԲԱՅՐԱՄՅԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Մարդկության պատմությունը հիշում է մեկ ազգի ներկայացուցիչների կողմից մյուս ազգի նկատմամբ իրագործած բազում անարդարություններ և հանցագործություններ, բայց իր ծավալով, Հոլոքոստից հետո, առանձնահատուկ է այն արյունալի հաշվեհարդարը, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության կողմից իրականացվեց տեղի հայ բնակչության նկատմամբ:

Թուրքիայի կառավարական շրջանակների կողմից 1915 թվականին Օսմանական կայսրության բնիկ հայ բնակչության զանգվածային բնաջնջումն ու տեղահանությունը հայ պատմագրության և գրականության մեջ կոչվել է Հայոց գենոցիդ

Թուրքական պատմագիտությունը ժխտում է հայերի ցեղասպանության փաստը: Երկար ժամանակ Թուրքիայում այն հիշատակվում էր «այսպես կոչված ցեղասպանություն», իսկ վերջերս նախապատվությունը տրվել է «1915 թվականի իրադարձություն» արտահայտությանը:

Այս դրամատիկական իրականության համառոտ պատմությունը հետևյալն է. Օսմանիայի ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան վիլայեթներում բազմաթիվ հայեր էին բնակվում: Նրանց քաղաքական իդեալները և ընդհանուր ազգային երազանքը Հայաստանի քաղաքական ինքնավարության («Ազատ Հայաստան») ձեռքբերումն էր:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքերի դեմ ռուսական բանակի հաջողությունները Փոքր Ասիայի հայերին իրենց նպատակին հասնելու հույս ներշնչեց: Ակտի-

վացան տեղի հայկական կազմակերպությունները, սկսեցին ստեղծել կամավորական զինված ջոկատներ և այլն:

Հայոց ազգային ծրագիրը չէր համընկնում, ավելին՝ հակասում էր պանթուրքիզմի ոգով առաջնորդվող «երիտթուրքերի» նպատակներին և հեռագնա ծրագրերին: Այն բանից հետո, երբ Մերձավոր Արևելքի ռազմաճակատում իրավիճակը փոխվեց, թուրքական ղեկավար ռեժիմը հարձակվեց հայության վրա՝ պատճառ բերելով նրանց հակաթուրքական շարժումը: 1915 թվականի ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսում ձերբակալեցին, բանտարկեցին կամ երկրից վտարեցին հայ վերնախավի ակնառու ներկայացուցիչներին: Հետագա շրջանում մահապատիժը, հոծ բնակեցված տարածքներից հայերի տեղահանությունը և Թուրքիայի սահմաններից արտաքսելը զանգվածային բնույթ կրեց:

Գրեթե մեկ դար առաջ տեղի ունեցած աննախադեպ ողբերգությունը, որի ժամանակ որոշ տվյալներով, մեկ միլիոնից ավելի մարդ զոհվեց, անջնջելի հետք թողեց հայերի ազգային հիշողության մեջ: Ցեղասպանությունը դեռ այսօր էլ հայ ժողովրդի ազգային ինքնության նշանակալից ցուցանիշ է համարվում: Պատահական չէ, որ այս իրադարձության հիշատակումը հայ քաղաքական գործիչները անհրաժեշտ համարեցին ներառել անգամ հայկական նոր պետության ծնունդը հաստատող հռչակագրում. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»[14]:

Հարկ է նշել, որ դեռևս խորհրդային տարիներին՝ 1966-1967 թթ. Երևանում՝ Հրազդան գետի աջ ափին՝ Ծիծեռնակաբերդի

---

[14] «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», կետ 11, 23 օգոստոսի 1990 թ.):

բարձունքում, 1915 թվականի Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված տպավորիչ հուշարձան կառուցվեց: 1995 թվականին այս համալիրում հիմնվեց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, որը Հայաստանի տեսարժան վայրերից է, ինչպես նաև կարևոր մշակութային-կրթական և գիտահետազոտական կենտրոն:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայից արտագաղթած հայերը տարագրվեցին արտասահմանյան բազմաթիվ երկրներ: Զգալի մասը բնակություն հաստատեց Ռուսաստանում: Տասնյակ հազարավոր գաղթականներ, այդ թվում՝ ծերեր, կանայք և երեխաներ, ապաստանեցին Վրաստանում: Վրաց հասարակությունը չէր կարող անտարբեր մնալ այդ մարդկանց ճակատագրի նկատմամբ, և անտարբեր չմնաց: Նա անկեղծորեն ցավակցեց հարևանի ողբերգական վիճակին, կարեկից եղավ փորձության մեջ հայտնված հայ ազգի դառնություններին, պատսպարեց կոտորածից մազապուրծ բազում գաղթականների, անշահախնդիր հյուրընկալեց և իր հացը կիսեց կարիքավորների հետ: Թբիլիսիում, Բաթումիում, Ախալցխայում, Թելավիում ստեղծվեցին փախստականների օգնության միություններ կամ խմբեր, գաղթականներին օգնելու նպատակով կազմակերպվում էին հանգանակություններ, հավաքում սնունդ, դրամ, հագուստ և այլն: Այս ամենը հստակորեն արտահայտված է այն ժամանակվա մամուլի էջերում, որոնք մնացին պատմության մեջ մնացին որպես վրաց և հայ ժողովուրդների հարաբերությունների սկզբնաղբյուր:

20-րդ դարի 10-ական թվականներին Վրաստանում լույս էին տեսնում բազմաթիվ պարբերականներ: Այդ թվում թերթեր՝ «Սախալխո փուրցելի», «Իմերեթի», «Սախալխո սաքմե», «Սաքարթվելո», «Սամշոբլո», «Էրթոբա», ամսագրեր՝ «Էրի», «Կլդե» և այլն: Այս հրատարակությունները հիմնականում քաղաքական կուսակցությունների և ուղղությունների (սոցիալ-դեմոկրատ-

ներ, ֆեդերալիստներ, դեմոկրատներ և այլն) տեսակետներն էին արտահայտում: Սակայն այս կամ այն չափով դրանցում տեղ էին գտնում նաև բնակչության այլ խավերի հայացքները:

Վրաց թերթերն ու ամսագրերը անկեղծ կարեկցանք արտահայտեցին նախ՝ սուլթան Աբդուլ Համիդի, այնուհետև կառավարող եռյակի՝ Էնվեր փաշայի, Թալեաթ փաշայի և Ջեմալ փաշայի իշխանության կողմից Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի անողոք ջարդերի ու ավերածությունների համար: Մամուլը ցավակցություն հայտնեց հայ ազգին, հնարավորությունների սահմաններում իր ձայնը բարձրացրեց և դատապարտեց տեղի ունեցող բռնության և հալածանքների փաստերը:

Հայտնի է, որ ռասայական, էթնիկական կամ դավանանքի հիման վրա բնակչության բնաջնջումն արտահայտելու համար այն ժամանակ դեռևս չէր կիրառվում «գենոցիդ» եզրույթը, որն առաջ քաշվեց 1943 թվականին լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինի կողմից, սակայն, իբրև միջազգային հանցագործություն, դա ՄԱԿ-ի կողմից ընդունվեց 1948 թվականին: Բնական է, որ գենոցիդ եզրույթը չի հանդիպում նաև 1915-1918 թվականների վրաց պարբերականներում: Իրադրությունը նկարագրելու համար վրաց հրապարակախոսներն ավելի հաճախ դիմում էին «հայերի կողոպուտ», «հայերի հալածանք», «հայերի կոտորած», «հայերի ջարդ» և այլ արտահայտություններին:

Այս ժողովածուում զետեղված նյութերը պարզում են, որ վրաց մամուլը կարողանում էր ընթերցողներին տեղեկացնել այն սարսափների մասին, ինչ կրեց հայ ազգը Օսմանյան կայսրությունում: Ամսագիր-լրագրերում չոր ժամանակագրությունների և միջազգային գործակալությունների համառոտ հեռագրերի կողքին պարբերաբար լույս էին տեսնում նաև ընդհանրացված տեղեկություններ, տպագրվում էին ինչպես արտերկրի մամուլի հրապարակումներից թարգմանված նյութեր, այնպես էլ վրաց հեղինակների (Զ. Ճիճինաձե, Շ. Ամիրեջիբի, Ռ. Գաբաշ-

վիլի և ուրիշներ) ինքնուրույն հոդվածներ: Նյութերը հիմնականում զետեղվում էին այնպիսի խորագրերի տակ, ինչպիսիք են՝ «Ախալի ամբավի» («Նորություններ»), «Ուկանասկնելի դեպեշեբի» («Հեռագրեր»), «Ժուռնալ-գազեթեբիդան» («Թերթ-ամսագրերից»), «Օմիս ամբեբի» («Պատերազմական լուրեր») և այլն:

Հայ ժողովրդի հանդեպ համերաշխության, կարեկցանքի և համընդհանուր ցավակցության ֆոնին վրաց որոշ պարբերականներ քաջ գիտակցում էին նաև Վրաստանում հայերի նոր խոշոր ալիքի հաստատումով առաջացած իրական վտանգը: Օրինակ, ազգային-դեմոկրատական ուղղության «Կլդե» ամսագիրը, որը Վրաստանի ապագան տեսնում էր պետական անկախության մեջ և աննահանջ պայքարում էր ազատության հասնելու համար, բացահայտորեն բարձրաձայնում էր նաև ազգագրական հիմնախնդիրները, ինչը կարող էր սրվել Վրաստանի տարածքում գաղթականների զանգվածային բնակեցմամբ:

Այս գրքի հրատարակությունն իրականացվում է «Վրաստանի հայ համայնքի» հովանու ներքո: Այն պարունակում է նաև քաղաքական բաղադրիչ, սակայն ավելի կարևոր է ժողովածուի գիտապատմական նշանակությունը. նյութերը կընդարձակեն խնդրի աղբյուրագիտական հիմքը, շրջանառության մեջ կդրվի ցայժմ անհայտ տեղեկատվական հոսքը, որը լրացուցիչ շտրիխներ կհաղորդի այս իրադարձությունների նկատմամբ վրաց հասարակության կամ Վրաստանի քաղաքական սպեկտրի վերաբերմունքի ուսումնասիրությանը, վրաց պրիզմայով կներկայացնի ազգամիջյան հարաբերությունների բարդ հիմնախնդիրը, կնպաստի նրա գիտական ուսումնասիրմանը և այլն:

Նման բնույթի հրատարակությունները նոր չեն գիտական աշխարհում: Օրինակ, վաղուց առանձին գրքերով հրատարակվել են կանադական, ֆրանսիական և անգլիական մամուլի նյութերը, որոնք արտացոլում են հայերի ազգային ողբերգությունը («The Armenian Genocide in the Canadian Press»), առկա նաև

Կալիֆորնիայում 1985 թվականին հրատարակված մեկ աշխատություն՝ «The Armenian Genocide News Accounts from the American Press (1915-1922)», որը վերոհիշյալ թեմայով ամերիկյան թերթերից ի մի բերված լուսանկարներ է պարունակում: Այդ պատկառելի հրատարակություններին ավելանում է նաև վրացերեն ժողովածուն, որը, վստահաբար կարելի է ասել, իր համապատասխան տեղը կգրավի հայերի ցեղասպանության պատմությանը նվիրված բազմաթիվ երկերի շարքում:

Օթար Ջանելիձե
Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

1 9 1 4

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 01. 10 (№ 1087)

Հայերի կյանքը

Օսմանյան Հայաստան

Բարեփոխումների գործը կրկին անորոշ է: Օսմանյան կառավարությունը շարունակում է երկակի քաղաքականություն վարել, ասում են՝ որոշ գավառներում խառնակություններ են սկսվել:

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 02. 01 (№ 1105)

Օսմանյան ընտրությունները և հայերը

Հայերը չեն մասնակցում խորհրդարանական ընտրություններին:

Դաշնակցականները օսմանյան կառավարությունից պահանջում են բարեփոխումներ: Միայն դրանից հետո,- ասում են նրանք,- կվերսկսենք բանակցությունները և կմասնակցենք ընտրություններին:

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 02. 07 (№ 1110)

Օսմանյան Հայաստանում

Ստամբուլի օսմանական թերթերը սադրիչ հոդվածներ են տպագրում, որոնք ավելի են ալեկոծում ժողովրդին: Քրդերը թռուցիկներ են տարածում և բոլորին կոչ անում զինվել:

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 02. 28 (№ 1127)

Բուխարեստ: Ստամբուլից տեղեկացնում են, որ քրիստոնյա վաճառականների դեմ բոյկոտն ուժեղանում է: Նրանց ապրանքի վրա նույնիսկ նավթ են լցնում: Այդ պատճառով հույն և հայ վաճառականները նպատակադրվել են չեղյալ համարել Եվրոպայի գործարանատերերի հետ կնքած պայմանագրերը: Նրանց կարծիքով՝ օսմանցիները ցանկանում են, որ քրիստոնյաները հեռանան Օսմանիայից:

Ստամբուլ: Ջեմալ փաշան ռազմածովային նախարար է նշանակվել:

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 03. 29 (№ 1151)

Հայերի և քրդերի ընդհարումը

Ստամբուլ: Հայոց պատրիարքը Բայազետի եպիսկոպոսից ստացել է հետևյալ տեղեկագրությունը. «Քաղաքից մի քանի ժամվա հեռավորության վրա թեժ մարտեր են գնում: Կառավարական ջոկատում ընդամենը 240 զինվոր է: Քրդերը լավ զինված են, նրանք նույնիսկ գնդացիրներ ունեն: Քաղաքում խառնաշփոթ է: Քրիստոնյա բնակիչները փակվել են եկեղեցիներում: Փրկեք մեզ»:

Իրավիճակի բարդությունը զգում է նաև կառավարությունը: Նա հանդես է եկել պաշտոնական հայտարարությամբ, որտեղ ասված է, թե քրդերի շարժումը ուղղված է կառավարության և քրիստոնյաների դեմ:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1914. 06. 29 (№ 21)

Ստամբուլ

Որոշ դրագոմաններ[15] վերադարձան Փոքր Ասիա կատարած ճամփորդությունից: Նրանք հավաստում են, որ թեմի տեղեկությունները բացարձակ ճշմարտություններ են: Բնակիչները խիստ ստրկացված են եղել, ուստի այլևս չեն ուզում նախկին վայրերը վերադառնալ: Պարզվել է, որ առանձին դեպքերում կառավարությունը խրախուսել է:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1914. 07. 01 (№ 26)

Հայկական մամուլ

«Արև» թերթը շատ ավելի հոռետեսորեն է ներկայացնում Հայկական հարցի ներկա վիճակը: Ըստ թերթի՝ ամեն ինչ մշուշապատ է: Միաժամանակ թերթը պնդում է, որ անթույլատրելի է Հայաստանի բախտը թողնել դիվանագետների պատահական բարեհաճությանը: «Հայկական հարցը մենք ինքներս պետք է վճռենք:

Ասել ենք և կրկնում ենք, որ Հայկական հարցի բանալին հենց Հայաստանում պիտի փնտրենք: Մեր հայրենիքը պետք է ապրի և իր թշնամիներին վերացնի Հայաստանի ներքին ուժերի շնորհիվ: Եթե մենք հայ գյուղացուն հանձնենք բավականաչափ հող, եթե նա ապահովված լինի օրվա հացով և ինքնապաշտպանության միջոցներով, դրանով կլուծվի Հայկական հարցը: Ոչ մի դիվանագետ, ոչ մի գեներալ-տեսուչ չի կարող վճռել մեր հարցը, եթե մեր ներքին ամրությունը հաստատուն չլինի»:

---

[15] Դիվանագիտական ներկայացուցչության պաշտոնական թարգմանիչ Արևելքում (ծնթ. թարգմ.):

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1914. 07. 11 (№ 35)

Հայերի կյանքը

Օգնություն: Եգիպտոսի հայկական բարեգործական ընկերությունը Երևանի նահանգի տուժած հայ գյուղացիներին օգնության համար երեք հազար ռուբլի[16] է ուղարկել:

Օսմանյան Հայաստանի վիլայեթների կացությունը ուսումնասիրելու նպատակով Ռուսաստանից հայ ուսանողների մի քանի խումբ է ուղարկվել:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1914. 08. 03 (№ 55)

Օսմանիան և պատերազմը

Գերմանացիները հուժկու քարոզչություն են իրականացնում Օսմանյան Թուրքիայում, որպեսզի նրան պատերազմի մեջ քաշեն: Ջեմալ փաշան պահանջել է զորացրում, որովհետև պարենամթերք չունեն: Դրան Էնվեր բեյը պատասխանել է, թե ավելի շուտ կկազմալուծի ամբողջ գրասենյակը և բռնապետություն կհայտարարի, քան զորացրում կիրականացնի:

Օսմանցիները գերմանական ստացիոների[17] օգնությամբ Սև ծովի ափերին ականներ են տեղադրել:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1914. 08. 03 (№ 55)

Օսմանիան և հայերը

«Утро юга» թերթը գրում է. «Օսմանյան կառավարությունը Ռուսաստանի դեմ պատերազմի է նախապատրաստվում: Վանը

---

[16] Վրացերեն տեքստում ամենուր՝ մանեթ կամ մանաթ (ծնթ. թարգմ.):

[17] Գաղութային երկրներում ոստիկանական ծառայության համար նախատեսված ռազմանավ (ծնթ. թարգմ.):

և նրա շրջակայքը լքված են, այնտեղ զորքեր այլևս չկան: Էրզրումում հետևակի միայն մեկ գունդ է և քիչ հրետանի: Հաջորդը Բայբուրդ ամրոցն է, որը ամրացնում են և ռազմամթերք կուտակում: Իսկ հիմնական ուժը՝ չորրորդ կորպուսը, տեղակայված է ավելի հարավ՝ Երզնկայում և Սվազում: Ակնհայտ է, որ Օսմանյան կայսրությունը առայժմ չեզոքություն է պահպանում, բայց պատրաստվում է դիմադրություն ցույց տալ Ռուսաստանի հարձակման դեպքում հատկապես Փոքր Ասիայում. կայսրությունը այնտեղ այլ թշնամի չունի: Հոգեպես որքան վիհատված, բարոյալքված են օսմանցիները, այնքան ոգևորված, խանդավառված են Օսմանիայի և Ռուսաստանի հայերը: Կովկասում հայերը ուղղակի խաչակրաց արշավանքի են պատրաստվում օսմանցիների դեմ, նույնիսկ կաղերն են բանակի շարքերը մտնելու պահանջ դնում»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1914. 08. 12 (№ 61)

Թերթ - ամսագրերից

Եվրոպայի պատերազմը և Հայկական հարցը

Այս վերնագրով հոդված է տպագրված «Բաքու» թերթում: «Ամբողջ Եվրոպան կրակով է պատված: Մենք զգում ենք համաշխարհային մեծ աղետը, որը հետևանք է ժամանակակից քաղաքական և տնտեսական պրոբլեմների: Եվրոպան բաժանվել է պատերազմող երկու ճամբարի: Ո՞վ կհաղթի: Սա կասկած չի հարուցում:

Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթանակը կլինի տևտոնական (գերմանական) միլիտարիզմի պարտությունը… Այդ հաղթանակին՝ պատմական այդ նվերին ծարավ է նաև Օսմանյան Հայաստանի ամբողջ հայությունը: Ռուսաստանի հայերը ևս այս հաղթանակի մեջ են տեսնում իրենց փրկությունը:

Հայկական հարցի ողբերգական պատմությունը ավելի քան ուշագրավ է և շատ առումով ուսանելի: Վերջերս այդ հարցին հովանավոր է կանգնել Ռուսաստանը՝ Ֆրանսիայի և Անգլիայի համաձայնությամբ, իսկ թշնամի է Գերմանիան՝ աջակից ունենալով Ավստրիային:

Ինչպես հայտնի է, Օսմանյան Հայաստանի համար բարեփոխումների վերջին ծրագիրը, որը պետք է ապահովեր հայերի կայքն ու կյանքը, կարգավորեր նրանց տնտեսական, մշակութային դրությունը, ընդունվեց Ռուսաստանի համառ ջանքերի շնորհիվ՝ չնայած Գերմանիայի սաստիկ դիմադրությանը: Այսպիսով, Գերմանիայի կայսրը, որը եղբայրացել էր Աբդուլ Համիդի հետ, հայերի հանդեպ վնասակար քաղաքականություն էր վարում: Այդ քաղաքականությունը հայերի համար ստեղծեց մի անտանելի վիճակ, որը խեղդում և կործանում էր նրանց:

Գերմանիայի չարանենգ ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ պատերազմն սկսվելուն պես հայկական վիլայեթներում իսկույն չեղյալ հայտարարվեցին գեներալ-նահանգապետների պաշտոնները: Ի վերջո այսպես պետք է գերեզմանվեր Հայկական հարցը: Սակայն հայերի թշնամի Գերմանիայի դեմ ձեռք բարձրացրեց ազատարար Ռուսաստանը, որի հաղթանակը օսմանյան հայերի համար պետք է լինի վերածնունդ, փրկություն վերջնական կործանումից…

Ներկա պատերազմից, որին մասնակցելու համար Ռուսաստանի հայերը հաճությամբ ճամփում են իրենց զավակներին, օսմանահայերը հասարակական և մշակութային վերածնունդ են ակնկալում»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1914. 08. 15 (№ 64)

Թերթ-ամսագրերից

Օսմանյան կայսրության ռազմական պատրաստությունը

«Зак. речь»-ում տպագրված հայկական լրագրերի թղթակիցների նյութերը վկայում են Կովկասի սահմանի վրա Օսմանյան կայսրության ռազմական պատրաստությունների մասին:

Համաձայն այդ տեղեկությունների՝ Օսմանյան կայսրությունը բանակ է զորակոչում 20-45 տարեկան բոլոր տղամարդկանց: Շատ ընտանիքներ անտեր են մնացել: Օսմանյան կայսրության զանձարանում դրամ քիչ լինելու պատառով կառավարությունը հրահանգել է, որ զորակոչվողները մեկ շաբաթվա սնունդ վերցնեն իրենց հետ:

Էրզրումը ամրացնում են, խրամատներ են փորում: Այս պատրաստությունների պատճառով օսմանցիները լուրեր են տարածում, թե, իբր, իրենց դեմ պատերազմից խուսափելու համար Ռուսաստանը համաձայն է հանձնել Երևանի, Թիֆլիսի, Գյանջայի, Բաքվի նահանգները և Կարսի մարզը՝ իրեն պահելով միայն Բաթումը, մինչդեռ Օսմանիան այդ պայմանը չի ընդունում և պահանջում է մինչև Կովկասյան լեռներն ընկած բոլոր տարածքները:

Վանում, Էրզրումում, Բիթլիսում և Բայազետում իրականացվող բոլոր այդ պատրաստությունները ուղղված են Ռուսաստանի դեմ:

Օսմանյան հայերը ռուսներին վերաբերվում են իբրև իրենց ազատարարների և չեն ուզում կռվել նրանց դեմ: Միաժամանակ վախենում են պատժվել այդ համակրանքի պատճառով:

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 09. 04 (№ 103)

Օսմանյան կայսրություն

Պետրոգրադի թերթերը տեղեկություններ են ստացել, որ Ստամբուլում խուզարկություններ են կատարվել հայերի շրջանում և ոմանց բանտարկել են:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1914. 09. 10 (№ 83)

Հայաստանը և Օսմանյան կայսրությունը

Հայաստանի գեներալ-տեսուչներ Հոֆը և Վեստենենկը հեռանում են Օսմանյան կայսրությունից: Օսմանյան կառավարությունը ծանուցել է, որ կսահմանափակի նրանց իրավունքները և կփոխի բարեփոխումների ծրագիրը:

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 10. 09 (№ 107)

Օսմանյան կայսրություն

Մեծ վեզիրը հույների պատրիարքին կարգադրել է հեռանալ Ստամբուլից, որովհետև օր օրի պատերազմ է սպասվում Հունաստանի և Օսմանյան կայսրության միջև: «Հակառակ դեպքում,- սպառնացել է մեծ վեզիրը,- ուժով կարտաքսենք այստեղից»:

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914, 10. 16 (№ 113)

Հայերի բանտարկությունը Օսմանյան կայսրությունում

Վերջերս հաճախ են խուզարկում հայերի տները Պերիում և Ստամբուլում: Ձերբակալվել են մի քանի հոգի «Դաշնակցություն» կուսակցությունից և մեկ անձ «Հնչակյաններից»: Նրանք

մեղադրվում են Էնվեր փաշային սպանելու մտադրության մեջ: Նրանցից երեքին ռազմական դատարանը դատապարտել է մահապատժի:

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 10. 28 (№ 123)

Բուխարեստ, 25 հոկտեմբերի: Ստամբուլից հայտնում են, որ հույների և հայերի տներում խուզարկություն է կատարվում: Ոստիկանությունը զումարներ է բռնագանձել իբրև թե պատերազմի կարիքների համար: Շատերը ձերբակալվել են: Նրանց Փոքր Ասիա են աքսորում:

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 10. 29 (№ 124)

Հայերը Օսմանյան կայսրությունում

1912 թվականին հայ բնակչությունը եղել է՝

Էրզրումի վիլայեթում		215 հազար
Վանի	……	185 հազար
Բիթլիսի	……	180 հազար
Խարբերդի	……	168 հազար
Դիարբեքիրի	……	105 հազար
Սվազի	……	165 հազար

Վիլայեթների մնացած մասերում՝ 145 հազար, Կիլիկիայում՝ 407 հազար, իսկ Օսմանյան կայսրության եվրոպական մասում՝ 530 հազար:

Ներկայումս Օսմանյան կայսրությունում ապրում է 2.100 հազար հայ: Վեց վիլայեթներում հայերը կազմում են բնակչության 38.9 %-ը, օսմանցիները՝ 25.4 %-ը, քրդերը, պարսիկները և այլք՝ 29.7 %-ը, մնացած քրիստոնյաները՝ 6.3 %-ը: Ամբողջ մուսուլմանների (ոչ միայն օսմանցիների) թիվը հավասար է 1.187 հազարի, որը կազմում է բնակչության 45.2 տոկոսը, քրիստոնյա

բնակչության թիվը հասնում է 1.183 հազարի, այսինքն՝ բնակչության 45.1 %-ը, մնացած 254. հազարը՝ 9.7 %-ը, այլ կրոնների են դավանում:

Ինը վիլայեթներում բնակվում է 1.018 հազար հայ: Վերը նշվածի համաձայն՝ դա կազմում է բնակչության 38.9 %-ը:

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 11. 07 (№ 132)

Պարսկաստան

Օսմանյան կառավարությունը նորից փորձ է անում, որ Պարսկաստանն օգնություն ցուցաբերի:

Վերջերս Ստամբուլից արտակարգ դեսպան են ուղարկել Թեհրան: («Կ. Ս.»):

Անգլիա և Ռուսաստան

Անգլիական թերթերը վերջին ժամանակներս մտքեր են փոխանակել Օսմանյան կայսրությունը անդամահատելու մասին, նշել են, որ Ստամբուլը և Հայաստանը պետք է հանձնվեն Ռուսաստանին, Ֆրանսիան պետք է միակցի Սիրիան, Անգլիան՝ Արաբիան և Եփրատի հովիտները: («Կ.Ս.»):

«ՍԱԽԱԼԽՈ ԳԱԶԵԹԻ», 1914. 11. 15 (№ 139)

Աթենք: Ստամբուլից հայտնում են. «Օսմանցիները Ադրիանուպոլսից զորքեր են ուղարկել Տրապիզոն: Տրապիզոնում զորքերը կողոպտում են քրիստոնյաների խանութները: Սպանել են երեք քրիստոնյայի»:

1 9 1 5

«ԿԼԴԵ», 1915. 01. 18 (№ 2)

Փախստականներ

Զարհուրելի է յուրաքանչյուր պատերազմի հետևանքը: Զարհուրելի է տնտեսապես, հոգեբանորեն, և որ ավելի կանոր է՝ սարսափելի է կյանքի նկատմամբ սպառնալիքներով, կյանք, որ երբեք չի կրկնվում, մինչդեռ հոգին թանկ է ու քաղցր: Դրանից է, որ մարդ ամեն զրկանք տանում է, սակայն երբ հոգուն վրա է հասնում, նա երբեմն լիովին վերափոխվում է. կա՛մ վախից ընկճվում, փախչում, թաքնվում է վերջին վախկոտի պես, կա՛մ ձեռք է բերում խիզախություն, տղամարդկություն, նետվում պայքարի նոր ասպարեզ՝ հանուն նոր, անբիծ կյանքի: Այդպի-սին է վիճակը զինվորյալի և հասարակական մարդու, որոնց համար պատերազմը որոտ ու կայծակ է: Սակայն կա նաև մարդկության երկրորդ մասը՝ կանայք, երեխաներ, ծերեր, որոնք ո՛չ իրավաբանորեն, ո՛չ բարոյապես պատասխանատու չեն պա-տերազմական ուժերի առաջ, ուստի ստիպված են դիմել միայն մեկ միջոցի. տեղահանվել և փախչել այն վայրերից, որտեղ թշնամին վարվում է դաժանորեն, հաճախ՝ վայրենաբար: Մեծ մասամբ հենց այդպես էլ լինում է և ժողովրդի անզոր հատվածը փախչում է անհետ-անուղի:

Այսօր նման ճակատագիր է բաժին ընկել հայության այն հատվածներին, ովքեր բնակվում են Օսմանյան Թուրքիայում և Պարսկաստանում: Տղամարդիկ կա՛մ զորակոչվեցին բանակ,

կա՛մ զենքը ձեռքներին մարտնչում են նույն թշնամու դեմ, մինչ-դեռ նրանց կանայք ու երեխաները ենթարկվում են թշնամական ուժերի բռնություններին: Մենք հավաստի տեղեկություններ չունենք, թե ինչ բռնությունների մասին է խոսքը, ինչպես են գոր-ծի դրվում, բայց ըստ թերթերի և լուրերի՝ շատ դաժան են: Մի հայ մտավորականի կին մեզ պատմում էր, որ հազարավոր հայ կանայք նետվում են Վանա լիճը, որպեսզի գազանացած քրդե-րին զոհ չդառնան: Թերևս այս օրինակն էլ բավական է, որ մար-դու մեջ արթնանան մարդկային զգացմունքներ, պրկվեն ջղերը և ակամա հարձակվի թշնամու վրա, հայրերիդ, մայրերիդ նրա հասցրած վիրավորանքների, ջարդերի ու կոտորածների հա-մար: Բայց մի՞թե որևէ մեկն անում է այդ բանը: Ո՛չ: Ոչ այն պատճառով, որ չեն սիրում հայրենիքը, հարազատ ժողովրդին, կամ քիչ է ցավում նրանց սիրտը, այլ այն պատճառով, որ մարդը բանական արարած է և ծանրութեթև է անում յուրաքանչյուր փաստ, որքան էլ այն սահմռկեցուցիչ և սրտակեղեք լինի: Եվ ահա հայ ժողովուրդը ոչ թե առանց իրեն հաշիվ տալու հար-ձակվում է թշնամու վրա, այլ ջանում է նվազագույն զոհերի գնով առավելագույնը ձեռք բերել՝ ավելի լավ ապագա ունենալու համար: Սա դատապարտելի չէ, սա խելամիտ, իմաստալից քայլ է բոլոր ժողովուրդների, բոլոր մարդկանց համար: Ուրեմն՝ ինչու պիտի դատապարտել վրացիներին՝ սեփական ապագայի մա-սին հոգալու համար, որ կշռադատում, ծանրութեթև են անում, որպեսզի քիչ զոհերով դուրս գան այս անօրինակ ու հսկայա-մասշտաբ պատերազմից, որը սպառնում է ոչ միայն փոքր, այլ նաև մեծ ազգերին:

Մեր կարծիքով՝ որքան էլ վրդովված-շփոթահար լինի մարդ, չպետք է կորցնի բանականություն - զգոնությունը և բա-նականության թելադրանքով՝ զգուշանա բոլոր վտանգներից: Յուրաքանչյուր ժողովուրդ պարտավոր է հոգալ իր մասին և, եթե հնարավոր է, այլ ազգերի հետ լինի համերաշխ: Այսօր մենք

դա չենք տեսնում. արդեն մեկ անգամ կոտորված ու ջարդված հայ ժողովուրդը կրկին ապաստան է փնտրում Կովկասի շրջակայքում և Վրաստանի անկյուններում: Նա փախչում է ահավոր դժբախտությունից, ինչը նվազեցնում է նրա ուժն ու կորովը:

Նա պարտավոր էր ինքն իր մասին հոգալ ու մտածել, որպեսզի էլ ավելի սարսափելին չպատահեր թե՛ առաջին, թե՛ երկրորդ անգամ: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ անցած պատերազմների պատճառով փախստական հայերն առանց կռիվների տեր դարձան, օրինակ, Ախալքալաքի ամբողջ գավառին, Բորչալուի մի մասին և Կարսի նահանգի կեսին: Նույն իրավիճակն է այսօր, և արդեն իսկ լուրեր են պտտվում, որ փախստականները ոչ միայն փողի ու հագուստի կարիք ունեն, այլ նաև հողի: Ահա այն հիմնական տարբերությունը, որը ներկայացվում է իբրև հումանիտար և պետական օգնություն: Դա այդպես էլ պետք է լիներ. հնարավոր է տասը, քսան, հարյուր ընտանիքի ժամանակավորապես օգնել դրամով, պարենով, հագուստով, բայց անհնար է որևէ մեկը բարեգործությամբ մշտապես օգնի 60-100 հազար փախստականի: Այդքան մարդուն աշխատանքով պետք է ապահովել, նրանց հող պետք է տալ, որ մշակեն, կարողանան իրենց կերակրել, որ ուրիշին բեռ չդառնան: Հիմա մտածենք, թե ինչպես պետք է աշխատանք գտնեն Կովկասում, որտեղից պետք է կտրեն այդ հողատարածքները, երբ դրանց դժվարությունները հայտնի են ամենքին և ամենուր, իսկ հողի հարցը՝ վատթարագույնն է: Այսօր Կովկասում ոմանք համաձայնում են այն նվազագույն միջոցներին, որ անհրաժեշտ է գոյատևելու համար, բայց այս նվազագույնին եթե ավելացնենք փախստականների հոսքի ավելանալը, անկասկած կսաստկանա ժողովրդի դժգոհությունը, իսկ դա պատերազմից ավելի մեծ դժբախտություն է. պատերազմն անցողիկ է, մինչդեռ բարի հարևանությունը կարող է խաթարվել և մեկընդմիշտ քանդել համերաշխության հիմքերը:

Ճիշտ է՝ պատերազմի պատճառով շատ մարդ կզոհվի, բնակավայրեր կդատարկվեն և նրանց փոխարեն կարող են այլ տարրեր բնակեցվել, բայց դա ուրիշի դժբախտության վրա կառուցված երջանկություն կլինի: Արդարությունը բռնաբարվելուց բացի, դա գորդյան հանգույց կդառնա ապագա սերունդների համար: Այդպես բնակեցվեց Ախալքալաքի գավառը, մի՞թե նույն պատմությունը պետք է կրկնվի նաև այլ վայրերում:

Բայց ինչ ելք կարող ենք գտնել ստեղծված վիճակից դուրս գալու համար, մանավանդ դա ոչ թե իրենց ցանկությամբ, այլ արտաքին ուժերի ազդեցությամբ է առաջացել: Հայերը դեպի մեզ նրա համար չեն գաղթում, որ Կովկասի հացն ուտեն կամ կովկասյան հողերը գրավեն: Նրանք խուսափում են այն դժբախտությունից, որ պատերազմը բերեց իրենց գլխին: Ահա սա մտածելու տեղիք է տալիս, և սրա մասին պետք է մտահոգվեն ինչպես իրենք՝ հայերը, այնպես էլ՝ ուրիշները: Ոչ ոք չէր սպասում, առավել ևս՝ հայերը, որ նման սև օրեր կբացվեն պատերազմի ժամանակավոր խոտորումներից՝ մեկ այս կողմ, մեկ այն կողմ: Հայ ժողովուրդը, առավել ևս նրա ղեկավարները կարծում էին, թե պատերազմի ճակատագիրը լարի պես ուղիղ գիծ է, և կեռմանները նրանում բացառված են:

Այսօր նույնպես, քանի դեռ պատերազմն ավարտված չէ, հնարավոր է ի հայտ գան ավելի մեծամասշտաբ կեռմաններ, ահա ինչու հայությունը պետք է փորձի փախստականներին, որոնք տեղահանվել և կորցրել են տուն ու տեղ, ավելի ապահով վայրեր տեղափոխի, քան Էջմիածինն է կամ Կովկասի այս կամ այն տարածքը: Ոչ մեկը չի կասկածում, որ դաշնակից Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան ի վերջո կհաղթեն Գերմանիա-Ավստրիա-Թուրքիա եռյակին, բայց պատերազմական ժամանակավոր ռազմավարությամբ հնարավոր է բանակները մի քանի անգամ նահանջեն կամ առաջ գնան, և այդ ժամանակ փախստական հայերը, հնարավոր է, մի կողմից խաղազնդակ

դառնան նրանց միջև, մյուս կողմից՝ խանգարեն բանակի առաջընթացին և գործողություններին: Մեր կարծիքով, նրանք պետք է վերաբնակվեն առնվազն Հյուսիսային Կովկասում, որ պատերազմի թոհուբոհը նոր տառապանքներ չբերի նրանց: Նրանք արդեն տարհանված են, և մոտավորապես նույնն է, թե որտեղ կլինեն, այստեղ թե մի քիչ հեռու, մանավանդ այստեղ բնակվող փախստականների համար, կամոքն Աստծու, դեռ ճակատագրական պահ վրա չի հասել (Աստված տա՝ ոչ էլ վրա հասնի), քանի դեռ ռուսական անպարտելի բանակը դիմակայում է ներխուժած հորդաներին:

Եթե հայերը երբևէ ցանկանան վերադառնալ իրենց հայրենիքը, Հյուսիսային Կովկասից նույնքան հեշտությամբ կվերադառնան, որքան Էջմիածնից և Ախալքալաքից, եթե չցանկանան, նրանց՝ հայրենիքից զրկված մարդկանց համար, ի՞նչ տարբերություն, այստեղ կլինեն թե մեկ այլ վայրում: Իսկ տեղի բնակիչները հայեր կլինեն, վրացիներ թե մուսուլմաններ, խաղաղված կլինեն: Նրանց՝ առանց այդ էլ կրած նեղությունները ավելի չեն շատացնի անցանկալի, խորթ տարրերը: Այսպիսին է մեր օբյեկտիվ կարծիքը, և մեզ զարմացնում է, որ ոմանք իրար են խառնում փախստականներին օգնելու և փախստականության պրոբլեմները: Առաջինը զգացմունքի խնդիր է, երկրորդը՝ բանականության:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 01. 20 (№ 189)

Հայերին նվիված երեկո Պետրոգրադում

Պետրոգրադի Միխայլովսկու թատրոնում տեղի ունեցավ բարեգործական ներկայացում՝ հոգուտ փախստական հայերի, որին, ի դեպ, ներկա էին նախարարներ Սազոնովը, Սուխոմլինովը, քաղաքապետը, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանատների ներկայացուցիչներ:

Հավաքած գումարը մի քանի տասնյակ հազարի է հասնում:

Ի պաշտպանություն Հայաստանի՝ Հռոմում ստեղծվել է «Պրո Արմենիա» անվամբ կազմակերպություն, որպիսիք գոյություն ունեն նաև այլ երկրներում:

«ԿԼԴԵ», 1915. 01. 25 (№ 3)

Դարձյալ փախստականների մասին

Փախստականների հարցը գնալով բարդանում և հազար ու մի կերպարանք է ստանում: Հայերն իրենք էլ բաժանվել են մի քանի խմբի, և հետաքրքիր է համեմատության մեջ դնել նրանց կարծիքները, մանավանդ, որ առանձին անհատներ անդրադառնում և հրապարակում են իրենց տեսակետները, և մենք հնարավորություն ունենք ներկա պայմաններում ծանոթանալ մամուլից:

Ահա, օրինակ, ինչ ենք կարդում «Կասպի» թերթում (№ 12). հունվարի 14-ին, Ավան Յուզբաշև Սաղնաղի խանի նախագահությամբ, տեղի է ունեցել «Տուժածներին օգնող հասարակական կազմակերպություն» վարչության նիստը, որտեղ Իգդիրից նորերս վերադարձած Համայն Ռուսիո աշխարհիկ միության ներկայացուցիչ պարոն Եվանգուլովը հանդես է եկել զեկուցումով: Վարչությունը որոշել է փախստականներին օգնել սերմացուով, անասուններով և գյուղատնտեսական գործիքներով:

«Кавк. слово»-ի № 15-ում տպագրվել է գյուղատնտես Ա. Աթանեսյանցի հոդվածը, որտեղ ներկայացում է մի ամբողջ ծրագիր, թե ինչպես պետք է փախստականների ներուժը բաշխել տեղի տնտեսություններում: Հոդվածի հիմնական նպատակն է, որ 120 հազար փախստականներից ընտրվեն 40-50 հազար աշխատունակ մշակներ, որոնք կլրացնեն տեղի հայ աշխատողների պակասը (նաև՝ ռազմաճակատ զորակոչվածների), և

իրենք էլ կկերակրեն իրենց: Այս ծրագրի իրագործումը կարևորվում է բազմաթիվ փաստարկների առկայությամբ և հայ հասարակական ու գյուղատնտեսական կազմակերպություններին կոչ է անում ձեռնամուխ լինել դրանց իրականացմանը: Ա. Աթանեսյանցը «Кавк. слово»-ում (№ 15) թռուցիկ ասում է, որ հայ փախստականները այնտեղ ավելի լավ տնտեսվարություն կստվորեն և հետագայում կկիրառեն հայրենիքում: Նույն Աթանեսյանցը «Մշակ»-ում գրում է (այդ հոդվածը «Кавк. слово»-ն թարգմանաբար տպագրել է № 14-ում), որ փախստականներն անպայման պետք է վերադառնան իրենց բնակավայրերը, որպեսզի նեղություն չպատճառեն առանց այդ էլ նեղության մեջ գտնվող տեղացի հայերին:

«Մի՞թե ցանկալի է,- նշում է Աթանեսյանցը,- որ նրանց գյուղերը, քրտինքով շաղախված նրանց հողերը մնան անտեր, մի՞թե կգտնվի թեկուզ մեկը, ով, տեղյակ լինելով Այսրկովկասի հայության հողային սակավության մասին, կցանկանա կամ մտքով կանցկացնի, որ փախստական հայերը մնան այս կողմերում: Սա գիտակցված սպանդ կլինի ժողովրդի համար, ուստի այսօրվանից պետք է գործադրենք բոլոր ուժերը, գտնենք հնարավոր միջոցներ, որպեսզի բոլոր փախստականներին հայրենիք վերադարձնենք, հենց որ թույլ տա իրավիճակը:

Առաջին հերթին պետք է տղամարդկանց ուղարկել, որպեսզի հողը մշակելու նախապատրաստական աշխատանքներ կատարեն՝ ակնկալելով ապագայում լավ բերք, բայց դրա համար անհրաժեշտ է նրանց օգնել բանող անասուններով, սերմացուներով, գյուղատնտեսական գործիքներով»: Միաժամանակ հեղինակը մեծ համակրանքով է արտահայտվում հայոց «Նպաստամատույց» հասարակական կազմակերպության մասին, որը ճիշտ նույն նպատակներին է ծառայում:

Եթե մենք հայտնեինք այս միտքը, որ փախստականները պետք է հայրենադարձվեն, մեզ նման շովինիստ, անսիրտ ու

անհոգի մարդիկ այլ երկրներում չէին գտնվի, բայց այսօր դա հենց իրենք հայերն են ասում… կարծես: Ասում ենք՝ «կարծես…», քանզի չենք ուզում կասկածի տակ առնել պարոն Աթանեսյանցի անկեղծությունը. «Մշակի» էջերում նա, իրոք, իր սրտացավ վերաբերմունքն է արտահայտել: Սակայն, նախ՝ մի կողմից տարօրինակ հակասություն կա նրա ցանկությունների ու այդ ցանկությունները կյանքի կոչելու ձևերի մեջ, մյուս կողմից՝ հակասությունն ակնհայտ է այն հոդվածների մեջ, որ նա տպագրել է «Кавк. слово»-ում և «Մշակ»-ում: Իսկապես, եթե մի պահ մտածենք, որ արտաքին արգելքներ այլևս չկան, և հնարավոր է՝ ամեն ինչ լինի այնպես, ինչպես Աթանեսյանցն է ցանկանում, այսինքն՝ փախստականներն անպայման պետք է վերադառնան Օսմանյան Թուրքիա, այդ դեպքում նրանց ինչի՞ն են պետք զենքերը, գութանները, սերմացուները, աշխատունակ անասունները և այլն: Այս ամենը, անշուշտ, ավելորդ բեռ կդառնա փախստականների համար մինչ նրանց հայրենիք վերադառնալը, քանզի գութանը, որով պետք է հերկ անեն Թուրքիայում և Պարսկաստանում, փախստականների ինչին է պետք Ռուսաստանում: Մի՞թե գութան տալով կբարելավենք փախստականի դրությունը, մանավանդ, որ նա դեռևս վարելու հող չունի, կամ սերմացու տալով կկշտացնե՞նք գաղթականին, եթե, իսկապես, նա ունի դրա կարիքը: Սա մեկ հակասություն: Երկրորդն այն է, որ նույն Աթանեսյանցը «Մշակ»-ում փախստականներին խորհուրդ է տալիս անպայման վերադառնալ նախկին բնակավայր, միաժամանակ «Кавк. слово»-ում մի ամբողջ ծրագիր է ներկայացնում այստեղ բնակեցնելու մասին:

«Հենց այսօրվանից, անպայման պետք է օգնենք, բոլոր ուժերը ներդնենք, որ փախստականները վերադառնան հայրենիք,- «Մշակ»-ում գրում է Աթանեսյանցը:- Փախստականներից ընտրված 50 հազար աշխատունակ մշակներ և՛ տեղի հայերին

կօգնեն տնտեսություններում, և՛ իրենց կկերակրեն»,- գրում է Աթանեսյանցը «Кавк. слово»-ում:

Իհարկե, մեզ կասեն, որ այստեղ հակասություններ չկան, այսօր 50 հազարին այստեղ տեղավորենք, որպեսզի նրանք իրենց գոյությունն ապահովեն և հետո, երբ երկիրը խաղաղվի, բոլոր 120 հազար փախստականներին հետ կուղարկենք: Բայց ի՞նչ պարտադիր է ասել, թե հենց այսօրվանից պետք է մտածենք նրանց վերադառնալու մասին, եթե այդ օրը դեռ չի եկել, Աթանեսյանցը ինչպե՞ս պետք է տղամարդկանց վերադարձնի հող մշակելու: Իսկ եթե նա արդեն անասունները, գութանները և սերմացուն բաշխում է, գուցե հասե՞լ է վերադառնալու օրը:

Նշված և չնշված հակասությունները շատ են, քանզի մարդը հաշվի չի առել իրականությունը: Աթանեսյանցի հոդվածներում ժողովրդի կարևոր շարժիչ ներուժը բոլորովին անտեսված է: Իրոք, ի՞նչն է ստիպել հայերին փախուստի դիմել: Կոպիտ ո՞ւժը: Այդ դեպքում նախ և առաջ պետք է հիմնովին վնասազերծել այդ կոպիտ ուժը, որ հայերը վերադառնան, բայց դա երբ կլինի, ոչ ոք չգիտի, և այսօրվանից զբաղվել գաղթականների վերադարձի հարցով, անպտուղ ֆանտազիա է: Երկրորդ, Աթանեսյանցը ինչո՞վ և ինչպե՞ս է ստիպելու գաղթականներին՝ վերադառնալ այնտեղ, որտեղ նրանց դարձյալ ու դարձյալ ջարդ է սպասվում:

Ջարդ ու կոտորած տեսած մարդկանց հոդվածներով չես համոզի, թե հայրենիքը ավելի սիրելի վայր է: Եվ երբ այստեղ աշխատանքի պայմաններ ստեղծես՝ գութաններ, զենք, անասուններ, սերմացու և… ոմանց ծրագրով՝ նաև հողատարածք, չենք կարող հոգեբանական, տնտեսական կամ այլ մոտիվներ շահարկելով փախստականին համոզել, որ վերադառնա, այն էլ դրախտանման Կովկասից աղքատ Հայաստան: Մեր խորին համոզմամբ՝ փախստական հայերը այստեղ կմնան, եթե նրանց կամքին մնա, պ. Աթանեսյանցների գյուղատնտեսական-հայրենասիրական կոչերով այդ մարդկանց տեղից չես շարժի: Ուստի,

պետք է մտածենք, որ հնարավոր է միայն տնտեսական զրկանքները, հողի պակասը, ինչի մասին Աթանեսյանցը խոսում է «Մշակ»-ում, և ոչ թե «Кавк. слово»-ում, ահա այս զրկանքները կստիպեն փախստականներին շարժվել ինչ-որ ուղղությամբ:

Հենց այստեղ էլ ծնվում է երկրորդ այն դիրքորոշումը, որի վրա կանգ ենք առել, և եթե Աթանեասյանցները կարող են լիարժեք խոսել հայերի՝ հողի պակասի մասին Այսրկովկասում և այդքանով այս կամ այն կերպ լուծել փախստականների ճակատագրի խնդիրը, մենք կարող ենք անկեղծորեն ասել, որ փախստականների այստեղ մնալը «գիտակցված մահ կլինի» (Աթանեսյանցի խոսքերն են) թե՛ հայերի, թե՛ այլ տեղաբնիկների համար: Այս օբյեկտիվ դիրքորոշումը բոլորովին չի նվազեցնում գիտակցությունը, որ համընդհանուր մարդկային զգացմունքների համաձայն, փախստականներն օգնության կարիք ունեն, սակայն օգնության բովանդակությունն է կարևորը: Ահա թե ինչու, հայերի աչքում մենք դառնում ենք «շովինիստներ»:

Հոդվածը ավելի քան երկար ստացվեց, ուստի մանրամասն կանգ չենք առնի մեր և Աթանեսյանցների բանավիճային հարցերի վրա, առավել ևս, որ «Пет. Вед.»-ում (№ 8), քիչ թե շատ մոտավորապես նույն միտքն է արծարծված:

Փախստական հայերը

«Пет. вед.»-ում զետեղված է Օգյուստի հոդվածը փախստական հայերի մասին: «Երբ խոսքը վերաբերում է փախստականներին, շատերը կարծում են, թե, իբր, մենք նկատի ենք ունեցել Թիֆլիսից փախած հայերին: Այդ իսկ պատճառով հարկ ենք համարում հայտնել մեր ընթերցողներին, որ այս դեպքում խոսքը Թիֆլիսից փախած հարուստ հայերի մասին չէ, այլ Պարսկաստանից մազապուրծ հայերի մասին»: «Пет. вед.»-ին հենց այս վերջիններին նկատի ունի: Նրա կարծիքով՝ հայերը Կովկաս են գաղթում նույնիսկ այնպիսի շրջաններից, որտեղ նրանց ոչ մի

վտանգ չի սպառնում: Երբ գերմանացիները գրավեցին Բելգիան, նրա բնակիչները հեռացան Անգլիա և Ֆրանսիա, լեհերը՝ դեպի իրենց հայրենիքի սիրտը, մինչդեռ Պարսկաստանի հայերը, իրենց հայրենիքում խաղաղ ապաստան փնտրելու փոխարեն, գաղթում են այն երկրները, որոնք Պարսկաստանի հետ թշնամություն չունեն»: Այդ տեսանկյունից վերոհիշյալ թերթը Պարսկաստանից գաղթելը բացարձակապես ուշագրավ նախադեպ է համարում և գտնում, որ նրանք առաջին հերթին դրամի կարիք ունեն: Ըստ թերթի՝ փոխարքայի կողմից հիմնադրած «Հայոց ազգային բյուրո»-ում այլևս միջոցներ չկան նրանց օգնելու համար: Ճիշտ է, հայ մեծահարուստներին դիմում են, ամեն օր անհանգստացնում, բայց նրանցից շատերը գրեթե ոչինչ չեն տալիս, իսկ եթե տալիս են, ապա շատ քիչ… Այսպիսով՝ «Հայոց ազգային բյուրոն», որի նմանը ամբողջ կայսրությունում ոչ մի ժողովուրդ չունի, բոլորովին անզոր է հարուստների հանդեպ. անհրաժեշտության պահին նրանք օգնության ձեռք չեն մեկնում թշվառության մեջ հայտնված իրենց եղբայրներին, և սրանք կառավարությունից պետք է օգնություն սպասեն. հայ հասարակական գործիչները մտածում են՝ դիմել նորին գերազանցություն արքայի՝ մեծն Նիկոլայի դուստր Տատյանայի անվամբ հիմնադրված օգնության ֆոնդին:

Թիֆլիսում հիմա շատ մեծ է «փախստականների» թիվը, նրանց տեղավորում են տարբեր վայրերում, և «եթե եպիսկոպոս Ներսեսի միջնորդությունն ընդունվի՝ փախստականներին ռուսական անձնագրեր հանձնեն, նրանց բնակեցնելը ավելի լայն թափ կստանա…. Գաղթականների զգալի մասը, ինչպես միշտ, դարձյալ Վրաստանի սահմաններում կբնակեցվի: Վրաստանում նմանօրինակ բնակեցումը տեղի է ունենում, ահա, արդեն տասնյակ տարիներ: Դա կատարվել է նաև, երբ Թուրքիայում նույնիսկ հալածանքներ ու միջադեպեր չեն եղել: Հայ փախստականների բնակեցումը վրացական տարածքներում ամենացա-

վոտ հարցն է եղել վրացիների համար: Ժամանակակից վրացու ազգային աշխարհընկալմամբ ճանաչված և պաշտպանված է Վրաստանի տարածքը: Վրացու ազգային մտածելակերպը այդ հարցում ոչ մի փոխզիջման չի գնա, և, հենց դրա համար է, որ հայ-վրացական հարաբերություններում ծագած վեճերի թեման մեծ մասամբ տարածքային հարցերն են լինում:

Չենք կարող չհամաձայնել այս հոդվածի հեղինակի հետ, որ հող ու ջրի հարցը ամենացավոտ վիճահարույց հարցն է մեր և հայերի հարաբերությունների միջև: Դա չլուծվելու դեպքում, բոլորովին անհնար է մեր բարեկամություն-հարևանությունը, և բոլորս պետք է զգանք դրանից սպասվող վտանգը… «Пет. вед.»-ի պնդմամբ՝ փախստականների հարցը պետական հարց է, և նրանց «ժամանակավոր» բնակեցումը այնպես պետք է կայանա, որ հետագայում չհանգեցնի ազգային արժանապատվության վիրավորանքի և կեղեքման («Зак. Речь»):

ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 01. 29 (№ 197)

Տեղահանվածները

Ինչպես հավաստում են պաշտոնական հաղորդագրությունները, վերջին ժամանակներս Օսմանյան կայսրությունից և Պարսկաստանից մեծ թվով հայեր են գաղթել: Ասում են, որ գաղթական հայերի թիվը հասնում է 120-150 հազարի: Նրանց մի մասին տեղավորել են Թիֆլիսի տարբեր թաղամասերում: Բացի հայերից, մեր մայրաքաղաքում հիմա կա Պարսկաստանից գաղթած մոտ երեք հազար ասորի:

Գաղթականների խնդիրը բավականին բարդ է և լուրջ, բայց այն շատ ավելի սուր բնույթ է ստանում հատկապես ներկա պայմաններում: Մեզ, իհարկե, առաջին հերթին հետաքրքրում է, թե գաղթականները Վրաստան են գալիս ժամանակավո՞ր, թե՞ մշտական բնակության նպատակով: Լիովին համոզված պետք է

լինեն իրենց հայրենիքից տեղահանված, տունուտեղ կորցրած հայերը, ասորիները և այլք, որ մենք լավ ենք հասկանում նրանց ծանր վիճակը, հոգով ու սրտով կարեկցում ենք դժվարությունների համար և կօգնենք, ինչքան որ թույլ կտան մեր հնարավորությունները:

Բայց իրենք՝ գաղթականները, պետք է ըմբռնեն վրաց ժողովրդի դրության ծանրությունը և ոչ մեկից չպահանջեն այն, ինչն արմատապես դեմ է մեր ազգի ներկային ու ապագային: Առաջին հերթին չպետք է մոռանան, որ երկու տարվա անբերրիության և այժմյան նմանը չունեցող պատերազմի պատճառով մեզանում կյանքն անհամեմատ բարդացել է, սննդամթերք դժվար է ճարվում, իսկ դրսից բերելը ընդհանրապես անհնար է դառնում: Մեր տարածքում նույնիսկ տեղացիները ծանր դրության մեջ են, իսկ հիմա, երբ մշտական բնակիչներին ավելանում են գաղթականները, մեր վիճակը բոլորովին անտանելի է դառնում: Մենք շատ բանի կարիք ու պահանջ ունենք, ուստի ուրիշի նեղությունը չենք կարող մեզ վրա վերցնել…

Կա նաև երկրորդ հանգամանքը՝ ավելի լուրջ և նշանակալից: Թիֆլիսի նահանգի որոշ վայրեր այսօր էլ շատ խայտաբղետ են ազգերի առումով: 19-րդ դարի ընթացքում գաղթականների բնակեցմամբ մենք ամբողջովին կորցրինք Ախալքալաքի գավառը: Շատ գաղթականներ էլ բնակություն հաստատեցին Բորչալուի և Ախալցխայի գավառներում: Հիմա, որ նոր գաղթականներ բնավորվեն Վրաստանի տարածքում, դա բավականին կբարդացնի ու լարված վիճակ կստեղծի: Դա շատ վտանգավոր սպառնալիք կլինի մեր ազգի համար, և չենք կարող ամբողջ կարողունակությամբ չընդդիմանալ մեր հողն ու ջուրը մաս-մաս անելուն, որը հազիվ է բավականացնում վրաց ժողովրդին…

Մեր ազգային շահերը և զգոն բանականությունը պահանջում են, որ հենց սկզբից վերացնենք այդ վտանգը:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 01. 30 (№ 198)

«Հորիզոն»-ին Ստամբուլից հայտնում են, որ ռումբերը Դարդանելի ամրություններին ոչ մի վնաս չեն հասցրել: Երկու շաբաթ առաջ 150 հազար զինվոր Թրակիայից Փոքր Ասիա է մտել: Այդ զորքը ցամաքային ճանապարհով դեպի Էրզրում է գալիս: Օսմանյան կառավարությունը հայտնում է, որ զորքը կովկասյան տարածաշրջան կմտնի փետրվարի սկզբներին:

Գերմանացիների ողորմածությամբ ո՛չ Ստամբուլում, ո՛չ գավառում հայերի ջարդ տեղի չի ունեցել:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 02. 12 (№ 208)

«Հարուստ և պատվարժան այրի Մարիամի դուստրը՝ Աստղիկը, ուսումն ավարտում էր Բեռլինում: Մայրը Աստղիկից ստանում էր սրտաբեկ նամակներ: Հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը, նորից վտանգի մեջ է: Սպասվում են ջարդեր: Աստղիկը հայրենասեր է, ամբողջ էությամբ նվիրված իր ժողովրդին ու հայրենիքին: Որոշում է թողնել ուսումը և վերադառնալ հայրենի քաղաք: Անհրաժեշտ փաստաթղթերը ձևակերպելու համար դիմում է տեղի թուրքական դեսպանատուն: Այնտեղ հանդիպում է ոմն թխամաշկ երիտասարդի, որը, պարզվում է, բարձրաստիճան պաշտոնյա է: Սրան անչափ դուր է գալիս գեղանի օրիորդը, և իրեն այնպես է պահում, նրա հետ այնպես է վարվում, իբրև թե ցանկանում է օգնած լինել, սակայն իրավասու մարդկանց կարգադրում է տասը օրով ուշացնել փաստաթղթերը, մինչև աղջկան իր ձեռքը գցի: Հենց այդ պատճառով Բեռլինի պարետը Աստղիկի փաստաթղթերը ժամանակին չի վավերացնում: Երիտասարդին հաջողվում է սեր խաղալ այնպիսի վարպետությամբ, այնպես հմտորեն, որ նրա վարվեցողության մեջ կասկա-

ծի նշույլ անգամ չի զգացվում: Եվ Աստղիկին թվում է՝ պատվարժան, ասպետաբարո մարդ է իրեն աջակցողը: Աստղիկը վերջապես տղայի «միջնորդությամբ» Ստամբուլ մեկնելու տոմս է ձեռք բերում, որտեղից պետք է ուղևորվեր Արևմտյան Հայաստանի իր ծննդավայրը: Իբրև թե պատահաբար, երիտասարդ պաշտոնյան նույն գնացքով մեկնում է Ստամբուլ: Ստամբուլում օրիորդն իմանում է, որ Օսմանյան կայսրությունը Ռուսաստանին պատերազմ է հայտարարել. որ իր հայրենի քաղաքը նույնպես փորձանքի մեջ է: Աղջիկը ճշգրտում է նաև Բեռլինից իրեն ուղեկցող թխամաշկի ինքնությունը՝գայլ՝ գառան մորթի հագած, և առաջին իսկ նավով մեկնում է հայրենի քաղաք: Աստղիկը տանն է՝ ընտանեկան հարկի տակ: Ուրախությունը, սակայն, լիարժեք չէ. շաղախված է դառնագին իրականությամբ: Մարիամին, որպես մեծապես հարգված, պատվավոր այրու, Աստղիկը ուղարկում է քաղաքի ավագանու մոտ՝ Ռուսաստանի սահմանի մոտ գտնվող հայոց հրամանատար Արշակին նամակ գրելու և օգնություն խնդրելու համար: Աստղիկը պարտավորվում և նամակը անասելի դժվարություններ հաղթահարելուց հետո հասցնում է հասցեատիրոջը: Արշակի խմբերը թեև ամբողջովին տեղաբաշխված են, բայց և այնպես խոստանում է հաջորդ իսկ օրը մի ջոկատ ուղարկել օգնության: Վերադառնալով՝ Աստղիկը ականատես է լինում պատերազմական իրադրության հանգամանքներից օգտվող թուրք ու քուրդ խուժանի վայրագություններին: Հայրական տունը թալանված է, եղբայրներից մեկը՝ սպանված: Հրապարակում թուրք սպան կարդում է զորապետի հրահանգը: Նա ամբոխին խստիվ կարգադրում է դադարեցնել կողոպուտը, որովհետև «իմ բանակի մարդկանց համար ոչինչ չի մնա»: Հաջորդիվ՝ «Հրամայում եմ ճամբար բերել ընտիր, հասուն հայ աղջիկների»: Այս լսելով՝ Աստղիկը որոշում է մինչև Արշակի օգնության հասնելը, թեկուզ սեփական կյանքի գնով, կանխել օսման զինվորների սանձարձակությունները: Նպատակին հաս-

նելու համար անհրաժեշտ էր մուտք գործել ճամբար և հանդիպել գլխավոր հրամանատարին: Աստղիկը սպային հայտնում է, որ ինքը հաճույքով ենթարկվում է զորապետի հրամանին: …Նա ճամբարում է: Վշտաբեկ մայրը ուրվականի պես հետևում է դստերը: Աստղիկը՝ գեղեցիկ, հրապուրիչ Աստղիկը, թուրքական նրբագեղ հագուստով, գլխավոր հրամանատարին սպասում է նրա իսկ առանձնասենյակում: Անաղմուկ հետ են քաշվում վարագույրները, և երևում է բեռլինցի թխամաշկ երիտասարդը: Երկուսն էլ ցնցված են անսպասելի հանդիպումից: Աստղիկը, զզվանքը քողարկելով, հանդուրժում է նրա գուրգուրանքները: Մոտենում է Արշակի գալու ժամը: Աղջիկն անհամբեր դուրս է նայում պատուհանից, պարում է, սիրահետում, գավաթը քիչ-քիչ գինի լցնում և հարբեցնում հրամանատարին... Հանկարծ աղմուկ-աղաղակ է բարձրանում, ամբոխը խուճապի մեջ է, սպաները խառնաշփոթ ներս են վազում և սարսափահար հայտնում, որ հայերի մեծաքանակ խմբեր են հայտնվել: Աստղիկը գոհ ու երջանիկ ժպտում է: Հրամանատարը հարձակվում է նրա վրա և սկսում սաստիկ գանակոծել. կռահել է աղջկա խորամանկությունը: Այդ պահին ներխուժում է զայրույթից գունատված Մարիամը: Փայլատակում է դաշույնը, և թխամաշկ հրամանատարը, կրծքից խոցված, տապալվում է նրա ոտքերի առաջ: Մոր և դստեր աչքերում ուրախության արցունքներ են շողարձակվում... Թեկուզ ժամանակավոր, նրանք կարողանում են փրկել ժողովրդին: Աստղիկի վերքերից արյուն է ծորում: Այդ արյունը սուրբ է: Դա Հայաստանի փրկության խորհրդանիշն է»:

«ՍԱՄՇՈԲԼՈ»,1915. 03. 03 (№ 25)

Ամերիկայի դեսպանը պահանջել է քրիստոնյաներին պաշտպանելու միջոցներ ձեռնարկել: Բեյրութում ապստամբություն է:

Թուրք քաղաքագլխի փոխարեն գերմանացի է նշանակվել:

Զմյուռնիայի բնակիչներին կարգադրեցին հեռանալ քաղաքից: Կ. Պոլսում երիտթուրքերի դեմ դավադրություն հայտնաբերվեց: 200 հայ են բանտարկել: Հայտնաբերել են նաև ռումբեր:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 03. 05 (№ 27)

Քրդերը ոչնչացնում են քրիստոնեական գյուղերը

Ջուլֆա, 2 մարտի: Երբ մեր ջոկատը Դիլմանը գրավեց, պարզ դարձավ հետևյալը. այս տարածքում թուրքերը քրիստոնյաների 20 գյուղ են հիմնովին ավերել: Քանդված եկեղեցիներից, դպրոցներից և ընթերցասրահներից միայն պատերն են մնացել: Սրբապատկերները ցեխով են պատվել: Մի մասը ծվատված է, մյուսը՝ գնդակոծված: Եկեղեցիները վերածվել են գոմերի, ամբարների և պահեստների: Գյուղերը ծածկված են դիակներով: Երեք օր առաջ, մինչ մեր ջոկատը կմտներ Դիլման, ամենից շատ Գեսրտուվան գյուղն են ավերել: Այս գյուղի բոլոր տղամարդկանց սպանել են: Գյուղի ջրհորներից, փոսերից և նկուղներից 200 դիակ է հավաքվել ու թաղվել եղբայրական գերեզմանոցում: Զոհվածների համար մեր գնդի քահանան հոգեհանգստի արարողություն կատարեց: Գյուղի մաքրման համար մարդիկ են գործի դրվել: Դիակների վրա նկատելի են գազանաբարո տանջանք-չարչարանքների հետքեր: Նրանց սպանել են կացիններով ու դաշույններով: Թուրքերը պարենամթերքի պաշարի մի մասը տարել են, մնացածը՝ այրել: Հրդեհված շենքերում դռան ու պատուհանների հետք անգամ չի մնացել: Խոսրովում մեր դեսպանության հոգևոր շենքը փրկվել է: Դռներն ու պատուհանները ջարդված են, մի մասն էլ հողմացրիվ արված: Աթոռանիստ եկեղեցին ավերված է, սրբապատկերները՝ հատակին թափած: Դպրոցի գույքի մի մասը փրկվել է: Այստեղ շուտով

սպասվում է մեր հոգևոր դեսպանության վերադարձը ամբողջ կազմով:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 03.17 (№ 37)

Քրիստոնյաների ծեծը Ուրմիայում

Ջուլֆա: Ուրմիայից հենց նոր ստացված տվյալներով՝ Թուրքիայի դեսպան Ռահիբ բեյը 70 ասկյարներով Ուրմիայում հարձակվել է ամերիկյան դեսպանատան վրա, որտեղ 15 հազար քրիստոնյա էր պատսպարվել: Նա այնտեղից դուրս է բերել 3 քահանայի և 1 սարկավագի, ծեծելով քարշ տվել փողոցներով, այնուհետև սպանել:

Քրիստոնյա միսիոներների բակում Ռահիբ բեյը կախաղան է կանգնեցրել՝ միսիոներներին կախաղան հանելու համար:

Նույնիսկ ամերիկացի միսիոներ Ալենը չփրկվեց ծեծվելուց, այդուհանդերձ նա հասցրել է մարդկանց ուղարկել մեր զորքերի բանակատեղի:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 04. 09 (№ 52)

Օսմանյան Հայաստանի ինքնավարության հարցը

Համայնքների պալատի պատգամավոր Վիլյամսը հարցրել է. «Մտադիր է, արդյոք, Անգլիայի կառավարությունը մասնակցելու և ինչ-ինչ միջոցներ ձեռնարկելու, որպեսզի ասիական Թուրքիայում բնակվող հայերն ստանան այնպիսի ինքնավարություն, ինչպիսին Ռուսաստանն է խոստանում լեհերին»: Լորդ Պրիմրոզը վստահեցրել է Վիլյամսին. «Անգլիայի կառավարությունը պատրաստ է պաշտպանելու հայերի շահերը ասիական Թուրքիայում, սակայն, այս հարցի վերաբերյալ հստակ

որևէ բան ասել կամ քայլ կատարել դեռևս բացարձակապես հնարավոր չէ»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915 . 04. 09 (№ 253)

Անգլիայի համայնքների պալատի պատգամավոր Վիլյամսը հարցում է արել կառավարությանը. «Մտադի՞ր է, արդյոք, կառավարությունը միջոցներ ձեռնարկելու, որպեսզի Թուրքիայի հայերին պատերազմի ավարտից հետո փոքր-ինչ ինքնավարություն տրվի, մոտավորապես այնպիսին, ինչպիսին ռուսները խոստացան Լեհաստանին»:

Լորդ Պրիմրոզը վստահեցրել է Վիլյամսին. «Անգլիայի կառավարությունը կհոգա հայերի շահերի մասին, սակայն այս պահին ապագա միջազգային համաձայնությունների մասին ոչինչ ասել չեմ կարող»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 04.14 (№ 257)

Երիտթուրքերի պատրանքները

Երիտթուրքերի «Թանին» թերթը գրում է. «Օսմանիան չի դադարեցնի պատերազմն այնքան ժամանակ, քանի դեռ Ռուսաստանի հզորությունը չի ջախջախվել, և Ռուսաստանի ու Օսմանիայի միջև սահման չի դարձել Կովկասյան լեռնաշղթան»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 04.17 (№ 261)

Օսմանիայի ճակատագիրը

Գերմանական թերթերը հայտնում են, որ Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան համաձայնության են եկել Օսմանիան բաժան-բաժան անելու շուրջ. Ռուսաստանին կտրվեն Ստամբուլը և

Հայաստանը, Անգլիային՝ Միջագետքը, Ֆրանսիային՝ Սիրիան, իսկ Անգլիան Զմյուռնիան կզիջի Հունաստանին:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 04. 21 (№ 62)

Բուխարեստ, 19 Ապրիլի: Կոստանդնուպոլսից հայտնում են. «Հայերին և հրեաներին, հատկապես սիոնիստներին խուզարկում են և ձերբակալում»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 04. 24 (№ 266)

Օսմանիայի հայերը

«Б. Вед..»-ից ապրիլի 17-ին տեղեկացնում են, որ Վանի մարզը վատթար վիճակում է: Քաղաքները և գյուղերը ոչնչացված են: 10 հազար զինված հայ արդեն 5 օր մարտնչում է քրդերի ու թուրքերի դեմ և սպասում ռուսական զորքին:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 05. 30 (№ 294)

Թիֆլիսի վարկային ընկերությունը 4 հազար ռուբլի է նվիրաբերել պատերազմից տուժած հայերին:

Ալաշկերտից փախած հայերը վերադառնում են և սկսում արտերը մշակել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 06. 09 (№ 14)

Իբրև թե հայերն են օսմանցիներին թալանել

Պորտան պատասխանել է Եռյակ դաշինքի հռչակագրին, որը վերաբերում է Օսմանյան կայսրությունում հայերի ասպատակությանը: Պորտան ժխտում է հայերի նկատմամբ խիստ վե-

բաբերմունքը և մանրամասն տեղեկություններ է ներկայացնում հեղափոխական շարժման մասին, որ իրագործել են հատկապես Փոքր Ասիայի հայերը։ Պատասխան նոտայում ասված է, որ շարժումը նպատակ է ունեցել ապստամբության հանել Փոքր Ասիայի ամբողջ հայությանը և իրականացնել թուրքերի կոտորած-կողոպուտ։ Փաստարկները հավաստի դարձնելու նպատակով պատասխան նոտայում թվարկված են գյուղերի ամբողջ ցանկեր, որտեղ հայերը իբրև թե մեկ առ մեկ կողոպտել են բնիկ թուրքերին։

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 06. 11 (№ 304)

Սոլուն, 6 Հունիսի: Ստամբուլից եկողները պատմում են, որ այնտեղ դրությունը օրեցօր սաստկանում է և դառնում կրիտիկական։ Ձերբակալված 23 հայի կախել են, որոնց թվում եղել է Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Զոհրապ[17] բեյը։

Կ. Պոլսում հրդեհը ոչնչացրել է հազար տուն ու խանութ։

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 06. 11 (№ 16)

Հայերի կոչը

«Русск. Вед.»-ին Բուխարեստից հեռագրով հաղորդում են. «Հայոց «Միասնություն և ազատություն» կոմիտեն թերթերում բողոք-կոչ է հրատարակել օսմանյան սաստկությունների դեմ։ Ռումինիայի հայերը վրդովված հայտարարում են, որ պատրաստ են կռվել ռումինական զորքերի շարքերում և պատասխան տալ բարբարոսներին։

[17] Գրիգոր Զոհրապը նահատակվել է Եդեսիայի մոտերքում, 1915 թ. հուլիսի 7-ին (ծնթ. թարգմ.)։

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 06. 12 (№ 17)

Հայերի մեջ

«Մշակը» գրում է. «Շեշում և նրա շրջակայքում 7 հազար զինված հայ կա։ Նրանցից շատերը փախել են օսմանյան բանակից։ Սասունը թուրքերին չի տվել ոչ մի մարդ և ոչ մի գրոշ։

Օսմանյան կառավարությունը Սասուն պաշտոնյաներ էր ուղարկել, որպեսզի բանակի համար զորակոչիկներ հավաքագրեին, սակայն հայերը այդ պաշտոնյաներին կոտորել են։ Մուշի երիտասարդությունը պատրաստ է ապստամբություն բարձրացնել երբ... ռուսական զորքը մոտենա Մուշին։ Որոշ գյուղերում քրդերը հայերին կոտորել սկսեցին մեկ ամիս առաջ՝ շեյխ Ազրաթի և շեյխ Ալիի գլխավորությամբ։ Քրդերը բացեիբաց հայտարարում էին, որ իրենք երբեք չեն համակերպի հայերին ինքնավարություն տալու մտքին։ Նրանք ասում են՝ «Մինչև ռուսական բանակի գալը բոլոր հայերին պիտի կոտորենք, այլապես, ռուսների գալուն պես, հայերն իրենք մեզ կկոտորեն»։

Մինչ ռուսական զորքը Վանը կգրավեր, հայերը և հայկական լրագրերը հայտնում էին, թե հայերը Վանում ապստամբություն են սկսել։ Գիշեր-ցերեկ կրակոց է, մի քանի հայ է սպանվել և վիրավորվել։ Վանը գրավելուց հետո այնտեղից եկած մի հայ բժիշկ «Кавк. слово»-ում գրում է, թե իբր հայերից 80 մարդ են սպանել և 200-ին վիրավորել։

«Հորիզոնը» հրապարակել է ապստամբների ղեկավարի երկու հրամանները, որոնք գրվել են ապրիլի 7-ին և 8-ին։ Մեկում գրված է՝ «Թուրքերին հաղթեցինք։ Թշնամին, որ հազար անգամ է կրակում, մենք մեկ անգամ ենք պատասխանում։ Խնայում ենք փամփուշտները։ Թուրք ժողովուրդը պայքարին չի մասնակցում»։

Երկրորդ հրամանում գրված է. «Ընկերնե՛ր, երեկ գիշեր թշնամին թնդանոթ է ուղղել մեր դեմ և հրացանի հարյուր հա-

զար փամփուշտ վատնել։ Նրանք միայն ահաբեկել էին ուզում։ Մեզնից ոչ-ոք չի վիրավորվել, մենք պատասխան չենք տվել։ Ընկերնե՛ր, ռմբահարումներից միայն անզեն մարդիկ են վնասվել։ Զենք չունեցողներին հուսալի տեղերում թաքցրեք, ամրացե՛ք, ով զենքի կարիք ունի, թող մեզ մոտ գա, արթուն և պատրաստ եղեք, զգուշացե՛ք փամփուշտներից»։

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 06. 14 (№ 19)

Կ.Պոլսում շարունակվում է հայերի հալածանքը, շատերին ձերբակալում են։ Հայերից 20 տղամարդ և 3 կին մահապատժի ենթարկվեցին։ Բուրլայում և Այվալում ևս հալածում են քրիստոնյաներին ։

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 06. 25 (№ 28)

Հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում

«Հորիզոն»-ին Վանից տեղեկացնում են, որ Շատիխում, Սիզանում, Սիակերտում, Մակսում և Մամրտանկում հայերի կոտորած չի եղել, սակայն Ալջվազում, Արճեշում, Բերկրիում, Ախբակում և Նորդուզում կոտորել են ամբողջ բնակչությանը։ Ըստ նույն լրագրի՝ օսմանյան կառավարության հրահանգով հայերին արգելվում է մտնել Օսմանյան կայսրություն։ Արգելված է նաև Օսմանյան կայսրութան և արտասահմանյան հայերի միջև նամակագրությունը։ Այս օրերին 20 հնչակ մահապատժի է ենթարկվել։ Ոչ պակաս սարսափելի տեղեկություններ է հաղորդում երկրորդ լրագիրը՝ «Արծիվը»։ Ստամբուլից ստացված հեռագրի տեղեկությամբ՝ վերջին ժամանակներս հակահայկական քարոզչությունը մեծ ազդեցություն է ունեցել խավարամիտ զանգվածի վրա։ Ստամբուլից մինչև Հես ոստիկանները հատուկ հրահանգներ են իրականացնում. խանութներից հանում են ֆրան-

սերեն գրությունները և ստիպում, որ դրանք փոխարինվեն թուրքերենով:

Ինչ-որ կասկածելի դեմքեր են շրջում սրճարաններում, խանութներում, կրում «Պոլիս մեջիդ»-ի համարներ, որտեղ զենքերի և արկերի անթիվ նկարներ են տեղադրված, որոնք, իբրև թե, ոստիկանները հայերի տներում են տեսել: Այդպես գործակալները ցանկանում են տգետ խուժանին հրահրել հայերի դեմ և նրանց միջոցով ջարդ-կողոպուտ կազմակերպել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 06. 26 (№ 29)

Հայ պատգամավոր Զոհրապին կախաղան են բարձրացրել

Ինչպես «Русское слово»-ն է տեղեկացնում՝ գերմանացիների պահանջով օսմանյան խորհրդարանի հայ պատգամավոր Զոհրապին կախաղան են բարձրացրել:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 07. 01 (№ 122)

Զորահավաքը Օսմանյան կայսրությունում և պլանները: Օսմանյան կայսրությունում իրականացվում է զորահավաք: Օրենքի ուժով զորակոչվում են միայն 30 տարեկան հայերը: Թուրքիայի հայերը արդեն 5-6 տարի շարունակ ռազմական տուրք են վճարում պետությանը: Չնայած դրան՝ կառավարությունը 20-ից 45 տարեկան բոլոր տղամարդկանց զորակոչել է ռազմաճակատ, այսինքն՝ այն անձանց, ովքեր զինվորական ծառայության մեջ բոլորովին չեն եղել:

Վանի բնակիչները գիտեին, որ Օսմանյան կայսրությունը Ռուսաստանի դեմ պատերազմի էր պատրաստվում, այդ իսկ պատճառով չէին ուզում զինվորներ տալ: Հայտնի էր նաև, որ նույն կարծիքին են Շուշիի, Զեյթունի և Էրզրումի բնակիչները:

Բայց այդ որոշումը այստեղ այնքան տարածված և կայուն չի եղել, որքան Վանի մարզում… Դրանից բացի, Վանի բնակչությունը ավելի լավ է զինված և ավելի անկախ է զգում իրեն:

-Այսպիսով,- պատմում է Արաբը,- ծանր առաջադրանք է դրված մեր առաջ. երկար ժամանակ հուզումներ ենք առաջ բերել ժողովրդի մեջ ընդդեմ Օսմանյան կայսրության, հեղափոխության ենք կոչել, բայց հիմա իրադրությունն այնպես է փոխվել, որ ստիպված ենք այլ մարտավարություն կիրառել, խաղաղության մարտավարություն: Այն պայմաններում, երբ մանրամասն չգիտեինք ո՛չ Օսմանյան կայսրության, ո՛չ Ռուսաստանի նպատակների ու պլանների մասին, զինվոր տալուց մեր հրաժարվելը կհանգեցներ անպտուղ անարխիայի: Դրա համար հենց սկզբից ամբոխին ապստամբությունից հեռու պահելու և ժողովրդին հանգստացնելու համար, ես երաժշտությամբ և հայ երիտասարդների մի մեծ խմբով ուղևորվեցի Վանի նահանգապետի մոտ:

-Դուք սալդաթնե՞ր եք ուզում, ահա՛ նրանք:

Միաժամանակ մենք դիմեցինք նաև Օսմանյան կայսրության քաղաքացիներին:

Վանի նահանգապետ Թասիմ բեյի և երիտթուրքերի կոմիտեի հեղինակավոր անդամ Նաջի բեյի հետ զրուցելիս ես վերստին հիշեցրի Օսմանյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտության մասին և նախազգուշացրի, որ իրենց գլխից հանեն պատերազմի միտքը:

Մենք ասացինք նրանց.

-Օսմանիայի հաղթանակն անհնարին է, եթե նույնիսկ Օսմանյան կայսրությունը հաղթի, միևնույնն է՝ պարտվածը իրենք են մնալու, որովհետև երկրի ֆինանսական դրությունը չի դիմանա և նույնիսկ Օսմանիայի հաղթանակն անպայման կտանի պետության կործանմանը, դա ավելի սոսկալի կլինի Օսմանյան կայսրության համար:

Մեզ պատասխանեցին.

-Ռուսաստանի դեմ պատերազմը մեզ համար կենաց և մահու հարց է: Մենք չենք կարող հանգիստ մնալ այնքան ժամանակ, քանի դեռ արևելյան սահմանի վրա ամուր պատնեշ չի բարձրացել: Ռուսաստանի հետ սահմանակից լինելը մշտական սպառնալիք է Օսմանյան կայսրության համար, ուստի մենք մեզ երբեք քուն ու դադար չենք տա:

Մեր զրուցակիցները հրաշալի ներկայացրին սահմանները վերաձևելու իրենց ֆատաստիկ պլանները:

Օսմանյան կայսրությունն կզբաղեցնի Կովկասյան ամենագլխավոր լեռնաշղթան, մինչև Վլադիկավկազ: Պատերազմից հետո կստեղծի ինքնավար Վրաստան և ինքնավար Հարավ, որոնցով Թուրքիան հեռու կգտնվի Ռուսաստանի սահմանից: Հայթաթարական սուր հարցը կվճռվի պարտադիր վերաբնակեցումով: Երևանի և Ելիզավետպոլի մուսուլմանները կտեղափոխվեն Բիթլիսի և այլ վիլայեթներ: Իսկ այս վիլայեթների հայերը՝ Էրզրումի և Վանի վիլայեթներ: Դրանք կմիացվեն Կովկասին և կմտնեն ինքնավար Հայաստանի կազմի մեջ:

-Նախագիծը վատը չէ,- ասացի,- բայց ինչպե՞ս եք ուզում իրականացնել: Դրա համար պետք է նվաճեք Կովկասը:

-Պետք է կենսագործենք շատ պարզ ու հասարակ:

Նրանց կարծիքով, ինքնավարության հարցը ամբողջ Կովկասի բնակիչների կենսական հարցն է: Նրանց հույսը Դաղստանի չերքեզներն են, ավելի շուտ՝ Գերմանիայի հաղթանակը:

Մենք չէինք հավատում Գերմանիայի հաղթանակին, ուստի մենք հայտնեցինք մեր մտավախությունը, որ Գերմանիան Թուրքիային ներս կքաշի պատերազմի մեջ, ինչը շահավետ կլինի հենց իր՝ Գերմանիայի համար, և ո՛չ Թուրքիայի:

Իմ խոսքերը Թասիմ բեյը և Նաջի բեյը որպես վիրավորանք ընդունեցին.

-Ոնց թե, մենք հո քաղաքական մանուկներ չենք, քանի դեռ Գերմանիան չի գրավել Բեսարաբիան և Ղրիմը, մենք պատերազմ չենք հայտարարի, և ինչ պատերազմ. մեկ շաբաթից մենք արդեն Թիֆլիսում կլինենք:

Ինչպես երևում է, նրանք հույս ունեին Թիֆլիսը գրավել և միաժամանակ պատրաստ ունեին այն ադմինիստրատորների ցուցակը, որոնք չինովնիկներ կլինեին գրված Կովկասում:

Մենք հայտարարեցինք.

-Բարի, այս ծրագրի շրջանակներում մենք ձեզ հետ կհամագործակցենք, բայց ասեք մեզ, որ ձեր նպատակը ինքնավար Հայաստան ստեղծելն է:

Նախապես գիտեինք նրանց պատասխանը.

-Հետո՞:

Միայն թե հիմա այլ կերպ պատասխանցին.

-Դա մենք կանենք, երբ Կարսը կվերցնենք: Ավելի շուտ, ո՛չ:

Այդ ժամանակ մենք կատակով ասացինք. «Պատկերացրեք, որ հայ մտավորականության մի մասը կհամագործակցի ձեզ հետ, մյուս մյուսը՝ ոչ: Ինչպե՞ս եք ձեր կողմը քաշելու այն հայերին, ովքեր ապրում են Կովկասում և հարստության ու մշակույթի տեր են:

Նրանք ժպտացին և պատասխանեցին.

-Երևում է՝ դուք չեք ցանկանում մեզ հետ աշխատել:

Ճիշտ է, նրանք լավ գիտեին, որ մենք շատ ենք հեռացել իրենցից, բայց, այդուհանդերձ, ասացին.

-Կամավորներ տվեք:

-Կամավորներ չենք տա, միայն կպաշտպանենք: Այս խոսքերով բաժանվեցինք («Кавк. слово»):

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 07. 04 (№ 35)

Բուխարեստ, 1 հուլիսի: Օսմանյան կայսրության ղեկավարությունը հայերի ջարդի մասին Եվրոպայի հասարակական մտքի առջև իրեն արդարացնելու համար հրապարակել է հետևյալ շրջաբերական - հայտագիրը, որը ուղարկվել է Օսմանյան կայսրությունում գտնվող եվրոպական տերությունների ներկայացուցիչներին: Հայտագրում ասված է. «Ռազմական գործողությունների ասպարեզ դարձած բոլոր վայրերից հայերը ժամանակավորապես տեղափոխվել են, որպեսզի հնարավորություն չունենան հետևելու ռուսների քարոզչությանը: Ռուսները խոստանում էին օգնել հայերին»:

Օսմանյան կայսրությունից եկած հայ գաղթականների տեղեկությունների համաձայն՝ հայերի վիճակը ծայրահեղ ծանր է:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 07. 10 (№ 40)

Հայերի ապստամբությունն Օսմանյան կայսրությունում

Աթենքից «Բիր. վեդ»-ին հայտնում են. Ստամբուլից ստացված լուրերի համաձայն՝ հունիսի առաջին օրերին Խարբերդում տեղի է ունեցել հայերի ապստամբություն, որը հետագայում լայն ծավալ է ստացել: Հեղափոխականները ձերբակալել են կառավարության ներկայացուցիչներին, գրավել են պետական հիմնարկներ և հասարակական հաստատություններ: Բայց վեց օր անց Դիարբեքիրից եկած թուրքական զորքը սկսել է հայերի մասսայական ջարդը:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 07. 10 (№ 328)

Սոլուն, 7 հուլիսի: Այվալի թուրքական կառավարիչները կարգադրություն են ստացել ընդունել բոլոր կանանց և երեխաներին՝ թվով 12 հազար: Այս կարգադրությունը սկիզբն է երիտթուրքերի մշակած ծրագրի՝ բռնի մուսուլմանացնել կանանց և երեխաներին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 07. 14 (№ 43)

Սոլուն, 10 հուլիսի: Պաշտոնական վիճակագրական տվյալներով՝ Փոքր Ասիայից և Թրակիայից գաղթած հայերի թիվը հասնում է 108 հազարի: Նրանց թողած ուեցվածքը գնահատվում է 358 մլն. ֆրանկ: Բացի դրանից, կղզիներում և Հունաստանում վերաբնակեցվել է 140 հազար փախստական:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 07. 14 (№ 128)

Բաթում: «Հորիզոն»-ը հրատարակել է Ժնևի հայկական «Դրոշակ» թերթի (դաշնակցության օրգան) նամակը՝ ուղղված Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ բեյին: Կուսակցական թերթը հայ մտավորականության հալածանքների և հայերի ջարդի ամբողջ պատասխանատվությունը դնում է անձամբ Թալեաթ բեյի վրա:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 07. 16 (№ 130)

Ռազմական լուրեր

«Բեռլիներ» լոկալ անցայգեր»-ում դոկտոր Սաադ բեյը պնդում է, որ ոչ մի Հայաստան գոյություն չունի: Կա միայն

մարզ՝ բնակեցված տարբեր ցեղերով և մարդկանցով: Ոչ էլ հայկական ռասա գոյություն ունի: Վերջում հեղինակը փորձում է համոզել, որ Թուրքիայում երբեք չի եղել և չկա քրիստոնյաների (հավատքի առումով) հալածանք կամ ջարդ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 07. 18 (№ 47)

Թուրք սպաներ

Առավոտյան ժամը ինն էր, երբ երկու թուրք սպա բերեցին, նրանցից մեկը կապիտան էր, մյուսը՝ պորուչիկ, երկուսի դեմքին էլ դառն մաղձ էր նկատվում, ոչ մեկի հետ չէին խոսում, միայն պահ առ պահ զզվանքով նայում էին բոլոր նրանց, ովքեր շրջակայքում էին: Նրանք ֆրանսերենից և օսմաներենից բացի այլ լեզու չգիտեին: Ես օսմաներեն գիտեի: Մոտեցա և բարի լույս մաղթեցի, ձեռքս էլ մեկնեցի սեղմելու համար: Քիչ է ասել՝ ծուռ նայեցին ինձ վրա, բայց երբ լսեցին, որ իրենց լեզվով եմ խոսում, հաճույք զգացին և համեստորեն դեպի ինձ պարզեցին իրենց ձեռքերը:

-Դուք ո՞վ եք,- հարցրեց կապիտանը:

-Ես այստեղ ծառայում եմ ….

-Ո՛չ, դա չեմ հարցնում, ի՞նչ կրոն եք դավանում:

-Ուղղափառ վրացի եմ:

-Որտե՞ղ եք սովորել մեր լեզուն:

-Առիթ եմ ունեցել ծառայել ձեր սահմանին:

-Շատ ուրախ ենք, որ կարող ենք որևէ մեկի հետ խոսել:

Թեև զրույցը պետք է ընթանար այլ թեմայի շուրջ, և ինձ համար ավելի կարևոր էր պատերազմի մասին ինչ-որ բան իմանալ, խոսքն ընդհատեցի և հարցրեցի.

-Ինչպե՞ս եք ձեզ զգում մեզ մոտ:

-Շատ լավ, դո՞ւք:

-Շատ լավ, մենք չէինք պատկերացնի, որ մեզ այսպես կընդունեն, չնայած դուք գրում եք, որ մենք գազանություններ ենք անում, մեզանում էլ ձեր մասին են այդպես գրում, բայց հավաստիացնում եմ, որ ձեր գերիների հետ մերոնք շատ լավ են վարվում:

-Կապիտան, բայց հայերը ձեզ ի՞նչ են արել, որ այդպես խստորեն պատժում եք …:

-Դուք, պարոն, այնպիսի հարցի եք անդրադառնում, որ… ինձ համար հաճելի չէ, բայց քանի որ հարցրեցիք, կարճ պատասխանեմ: Ինչպես ձեր մեծ Ռուսաստանում, այնպես էլ մեզանում կան «խուլիգաններ», որոնք խաթարում են երկրի անդորրը… դրանում կառավարությունը ոչ մի մեղք չունի: Բայց հայ ազգի մասին մի երկու խոսք կասեմ. եթե հայերի դեմ հետապնդումներ տեղի են ունենում Օսմանյան կայսրությունում, ուրեմն՝ դա իրենց մեղքն է, որովհետև նրանք ամեն միջոց գործադրում են, որ մեր ընչազուրկ գյուղացիության արյան վերջին կաթիլը քամեն: Սակայն մեր պետությունը և ինքը ժողովուրդը մոլեռանդներ են, միաժամանակ՝ մուսուլման, ահա ինչու, մենք չենք կարող թույլ տալ, որ այլ ազգ իշխի մեզ վրա… դուք միայն հայերի համար եք աղմկում, թե մենք հալածում և կոտորում ենք նրանց, բայց ինչու չեք գրում, որ նրանք կոտորում են մեր գյուղացիներին, որտե՞ղ է արդարությունը…:

-Մեզանում էլ հայեր են ապրում, բայց նրանք փորձ չեն անում իշխել որևէ մեկի վրա…

Այդ պահին ուրիշները եկան և խանգարեցին մեզ: Պետք է գրանցեին գերիներին: Զինվորներ ներս բերեցին՝ պահակություն անելու, ինչի պատճառով մեր զրույցն ընդհատեցինք և հրաժեշտ տվեցինք միմյանց:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 07. 22 (№ 338)

Փախստական հայեր

«Листок»-ին հեռագրով Էջմիածնից տեղեկացնում են. «Մելյազկերտից Էջմիածին է եկել Առաքելյանը և հայտնել , որ Կոպից, Լիսից, Պոնտոսից, Մելյազկերտից և Բիթլիսից 40 հազար փախստական է եկել: Եկել են նաև Էջմիածնի, Թիֆլիսի և «Նպաստամատուցի» սանիտարական խմբերը: Ճանապարհին ոչնչացրել են բոլոր տղամարդկանց, ընդամենը 5 հազար մարդ է մնացել Սասունում: Այնտեղից էլ սպասվում է փախստականների մի մեծ խումբ: Փախստականների օգնության գլխավոր կոմիտեն շտապ նիստ է հրավիրել: Բաքվից 10 հազար ռուբլի են ուղարկել կարիքները հոգալու համար: Կարիքները ծայրաստիճան շատ են, «Նպաստամատույցի» խումբը կմնա

Էջմիածնում՝ օգնություն ցուցաբերելու»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 07. 23 (№ 339)

Բուխարեստ, 20 Հուլիսի: Ստամբուլում հայերի հետապնդումը սիստեմատիկ սպանդի բնույթ է ստացել. տեղահանությունը, ձերբակալությունները և բանտերում ոչնչացնելը սովորական երևույթ են: Բազմաթիվ հայերի բռնի իսլամ ընդունել են տալիս:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 07. 23 (№ 339)

Հայեր

Մեր դաշնակիցները շատ զոհեր են տալիս Գալիպոլիի թերակղզում, որպեսզի հնարավորինս շուտ ուղիղ կապ հաստատեն միմյանց միջև: Դժվար է դա, բայց դաշնակիցները հաստատակամ առաջ են գնում: Օսմանցիներն զգալով փոթորկի մո-

տենալը՝ անգթորեն հարձակվում են քրիստոնյա այն ազգերի վրա, որոնք դեռ իրենց ենթակայության տակ են: Հայկական կամավորական ջոկատները մեզ հետ միասին հերոսաբար մարտնչում են իրենց թշնամիների դեմ, օրինակ, Վանում մեկ ամիս աննկուն դիմադրեցին օսմանցիներին, մինչև մեր զորքերն ազատագրեցին քաղաքը: Օսմանցիները վտարում են նաև հույն կանանց և երեխաներին: Դա չէր կարող վրդովմունք չառաջացնել նաև Հունաստանի ժողովրդի ու կառավարության շրջանակներում: Հիմա նրանցից է կախված որոշումը, թե արդյոք կարող են Փոքր Ասիայի հայրենակիցներին օգնել այնպես, որ իրենց չմեղադրեն, թե, իբր, պայքարում են նրանց իրավունքների և ազատության համար, չհարեն այն պետություններին, որոնք պայքարում են իրավունքի և ազատության համար: Համոզված եմ՝ մյուս չեզոք պետությունները ևս նույն կերպ կվարվեն:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 07. 24 (№ 52)

Հայերի կյանքը

«Հորիզոն»-ին Բուխարեստից հայտնում են. «Օսմանյան կառավարությունը ռումինական, ֆրանսիական և գերմանական թերթերում հրապարակել է հետևյալ հայտարարությունը. «Հակառակորդ պետությունները մեզ մեղադրում են, թե ինչու ենք թշնամաբար վերաբերվում հայերին: Մեր ռազմական գերատեսչությունները ամեն օր ծանուցում են նորանոր փաստեր, որոնք հաստատում են, որ հայերը երկար ժամանակ պատրաստվել են լայնամասշտաբ ապստամբության: Վերջին փաստը վերաբերում էր Շապին-Գարահիսարի դեպքերին, երբ 500 հայ զինվոր հեղափոխականների օգնությամբ սպանել են 150 օսմանացու և կրակի ճարակ դարձրել ամբողջ քաղաքը: Մեր բոլոր փորձերը՝ խաղաղ ճանապարհով կարգավորել գործերը և հանգել ընդհանուր, փոխադարձ համաձայնության, հայերը ռումբերով ու գնդակներով

պատասխանեցին օսմանցիներիս: Կառավարությունը ստիպված ծայրահեղ միջոցների դիմեց և հունիսի 20-ին բանտարկեց բոլոր ապստամբներին»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1915. 07. 25 (№ 341)

Հայաստան

«Հորիզոն» թերթին տեղեկացնում են. «Գալիս են փախստականներ՝ մինչև 50 հազար կին և երեխա: Փախստականները Կ[ի-լիկիա]-ից են, Վ[անա] լճի շրջաններից, գալիս են նաև Մ[ուշի] շրջանից»:

- Համբ. Առաքելյանը «Մշակ»-ում գրում է. «Հայաստանը վերացվել է երկրագնդի երեսից.... Նա այլևս չկա... սարսափելի է նման խոսքեր արտաբերել... Բայց դա արդեն կատարված փաստ է... Ռուսական բարեգութ զորքերը, Ռուսաստանի կառավարությունը, մեր քաջարի ջոկատները հնարավոր բոլոր միջոցները գործադրեցին, բազմաթիվ զոհեր տվեցին վերջնական կործանումից Տաճկահայաստանը փրկելու համար, բայց անհնար էր անկարելին կարելի դարձնել... Օսմանյան Թուրքիան կարծում էր, որ Օսմանյան Հայաստանը վերջիվերջո անցնելու է Ռուսաստանի հովանու ներքո, դրա համար նա ուզում է՝ Հայաստանը Ռուսաստանին հանձնի առանց հայերի: Այդ ծրագիրը նա իրականություն դարձրեց՝ ամբողջովին բնաջնջելով հայությանը: Ալաշկերտի ամբողջ դաշտը արդեն իսկ մինչ պատերազմն սկսելը մաքրեց հայերից: Բայազետի, Դիադինի հովիտներում, Աբագի շրջանում, ամբողջ Բագրևանդում առհասարակ ոչնչացրեց հայերին: Նույն պատկերն է Մուշում, Վանա լճի հյուսիսում և հյուսիսարևմուտքում: Կիլիկիայից և Զեյթունից հայերին արտաքսեցին Միջագետքի ավազուտները: Բիթլիսը ծածկված է հայերի դիակներով... Դատարկվեց Հայաստանը: Մնացել է ըն-

դամենը 100 հազար հայ, որոնք փախել են մեզ մոտ և ապաստան են խնդրում…

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 07. 26 (№ 54)

Հայերի կյանքը

Համբարձում Առաքելյանը «Մշակ»-ում գրում է. «Հայաստանը երկրագնդի երեսից վերացվել է …. Նա այլևս չի գոյատևում… Եվ դա արդեն կատարված փաստ է… Ռուսական բարեգութ զորքերը, Ռուսաստանի կառավարությունը, մեր քաջարի հայ կամավորական ջոկատները հնարավոր բոլոր միջոցները գործադրեցին, բազմաթիվ զոհեր տվեցին վերջնական կործանումից Օսմանյան Հայաստանը փրկելու համար, բայց անհնար էր անկարելին կարելի դարձնել…

Ենթադրելով, որ Օսմանյան Հայաստանը ի վերջո անցնելու է Ռուսաստանին, թուրքական կառավարությունը ծրագրել է, որ Հայաստանը թողնի առանց հայերի: Այդ ծրագիրը նա իրականություն դարձրեց՝ հրի ու սրի մատնելով Հայաստանը:

Ալաշկերտի ամբողջ հարթավայրը դեռ մինչ պատերազմն սկսվելը արդեն իսկ մաքրել էր հայերից: Բայազետի, Դիադինի հովիտներում, Աբագի շրջանում, ամբողջ Բագրևանդում առհասարակ ոչնչացրել է հայերին: Նույն պատկերն է Մուշում, Վանա լճի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում:

Կիլիկիայից և Զեյթունից հայերին արտաքսեցին Միջագետքի անապատները: Բիթլիսը ծածկված է հայերի դիակներով, դրանք փտում են անտեր…

Անապատ դարձավ ամբողջ Հայաստանը: Ողջ մնացածներից 100 հազարը եկել է մեզ մոտ՝ ապաստան խնդրելու…

Հայկական բոլոր հաստատությունները, բանկերը, կապիտալիստները, անհատ անձինք անհապաղ պետք է օգնեն… Հայե՛ր, օգնեցեք կործանված Հայաստանից մազապուրծ աննշան խլյակներին, օգնեցեք…

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 07. 29 (№ 141)

Հայերի դրությունը

Սոլուն, 25 հուլիսի: Ստամբուլից եկած լուրերի համաձայն՝ Բիթլիսի վիլայեթում քրդերը 5 օրվա ընթացքում ոչնչացրել են 10 հազար հայ՝ պատճառաբանելով, թե, իբր, նրանք հեղափոխության են պատրաստվում: Սպանվածներին թափել են Տիգրիս և Եփրատ գետերը: Ստամբուլում կախել են յոթ հայի:

Իտալիայի մի քանի հյուպատոս հեռացել են Օսմանիայից: Իտալիայի դեսպանը օրերս կթողնի Օսմանյան կայսրության թագավորանիստ քաղաքը:

Արքայադուստր Էսման բաժանվել է իր ամուսնուց՝ Էնվեր փաշայից՝ Թուրքիայի դժբախտության մեջ մեղադրելով նրան:

Արքայադուստրը վերադարձել է սուլթանի պալատ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 07. 29 (№ 56)

Սոլուն, 25 հուլիսի: Ստամբուլից հաղորդում են. «Բիթլիսի վիլայեթում քրդերը 5 օրվա ընթացքում սպանել են շատ հայերի: Սպանված է տասը հազար հայ: Այս սպանդի համար պատճառաբանում են, թե իբր հայերը Օսմանյան կայսրության կառավարության դեմ հեղափոխություն էին նախապատրաստում: Սպանվածներին թափել են Տիգրիս և Եփրատ գետերը: Ստամբուլում մեկ շաբաթվա ընթացքում կախել են յոթ հայ գործչի»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1915. 07. 29 (№ 344)

Հինգ օրվա ընթացքում քրդերը սպանել են շատ հայերի: Սպանված հայերի թիվը հասնում է 10 հազարի: Պատճառաբանել են, թե, իբր, Թուրքիայի կառավարության դեմ հեղափոխու-

թյուն էին նախապատրաստում: Սպանվածներին թափել են Տիգրիս և Եփրատ գետերը: Ստամբուլում մեկ շաբաթվա ընթացքում յոթ հայ գործչի են կախել:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 07. 31 (№ 346)

«Հորիզոն» թերթի թղթակիցն Իգդիրից գրում է. «Էջմիածնի կայարանից մինչև Իգդիր արցունք եմ հեղել: Չգիտեմ՝ հնարավոր է արդյոք մեկ այլ տեղ այնքան վիշտ ու դժբախտություն, ինչքան ես տեսա: Մարդիկ կոտորվում են սովից, ծարավից, ուժասպառությունից… Ոչ մեկը նրանց վրա ուշադրություն չի դարձնում, չի օգնում… Ոչ մի տեղ չի հաց ճարվում: Փախստականները երկու մասի բաժանվեցին, 100 հազարը գնաց Աբագիի ուղղությամբ, 50 հազարը՝ դեպի Պարսկաստան: Հիմա մտահոգում է մնացածների ճակատագիրը, որոնց հնարավոր է շրջափակեն քրդերն ու թուրքերը»:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 07. 31 (№ 143)

Թբիլիսի: «Հորիզոն»-ին տեղեկացնում են, որ Երևանի նահանգի սահմաններից ներս է անցել 50 հազար փախստական: Մեծ մասամբ՝ կանայք և երեխաներ:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 08. 01 (№ 347)

«Հորիզոն»-ին Իգդիրից տեղեկացնում են, որ փախստականները անվերջ գալիս են ու գալիս… Նույնիսկ քար սիրտը չի դիմանա այն պատկերներին, ինչ տեսնում ենք փողոցներում: Դժբախտությունն աննկարագրելի է:

«Մշակ»-ին գրում են. «Փախստականներն Էջմիածնից գալիս են ու գալիս: Շատերը հիվանդ են, ոչ մեկի մոտ սնունդ չկա»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 08. 01 (№ 58)

Իգդիրից «Հորիզոն» թերթին գրում են. «Էջմիածնի կայարանից մինչև Իգդիր լաց եմ եղել: Չգիտեմ՝ հնարավոր է արդյոք մեկ այլ տեղ այնքան վիշտ ու դժբախտություն, ինչքան ես տեսա: Մարդիկ կոտորվում են սովից, ծարավից, ուժասպառությունից.... Ոչ մեկը նրանց վրա ուշադրություն չի դարձնում, չի օգնում... Ոչ մի տեղ հաց չի ճարվում: Փախստականները երկու մասի բաժանվեցին, 100 հազարը գնաց Աբազիի ուղղությամբ, 50 հազարը՝ դեպի Պարսկաստան: Այժմ տեղերում մտահոգվում են մնացածների մասին, որոնց սպառնում է քրդերի ու թուրքերի շրջափակումը»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 08. 02 (№ 59)

Սոլուն, 30 հուլիսի: Կաբինետի անդամների մեծամասնությունը Կոստանդնուպոլսի, Անտիոքի և Երուսաղեմի հունական պատրիարքությունները լուծարելու որոշում կայացրեց: Կրթության նախարարը ծանուցել է տիեզերական պատրիարքին, որ պատրիարքարանի դպրոցներն այսօրվանից անցնում են լուսավորության նախարարության ենթակայության տակ:

Կոնստանդնուպոլսի հայոց պատրիարքը գնացել է Պորտա և հայտարարել, թե ցանկանում է կառավարությանը բողոք ներկայացնել հայերի կոտորածի կապակցությամբ: Պատրիարքին Պորտայի շենքից դուրս են արել՝ թե ուրիշի գործերին մի խառնվիր:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 08. 02 (№ 145)

Հայ պատրիարքի վիրավորանքը

Սոլուն, 29 հուլիսի: Հայ պատրիարքը գնացել է Պորտա, որպեսզի կառավարությանը բողոք հայտնի հայերի կոտորածի կա-

պակցությամբ: Պատրիարքին Պորտայից դուրս են արել և նկատողություն արել, որ չխառնվի Թուրքիայի ներքին գործերին:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 08. 08 (№ 149)

Սոֆիա, 4 օգոստոսի: Բուլղարիայում բնակվող հայերը կոչով դիմել են բուլղար ժողովրդին, որտեղ խոսվում է հայերի՝ թուրքերից կրած աննկարագրելի տառապանքների մասին:

Կոչում նշվում է. «Օսմանյան թուրքերը հայերին բնաջնջում են իրենց հայրենի տարածքներում: Օսմանյան կայսրության կառավարիչները մտադրվել են Կոստանդնուպոլսից 10 հազար հայ արտաքսել Փոքր Ասիա, ահա ինչու, ամեն օր հայերը ընտանիքներով գալիս են Բուլղարիա»:

Կոչում խնդրվում է, որ Բուլղարիայի կառավարությունը միջամտի գործին, քանի որ թուրքական կառավարությունը ավելի շատ վախենում է հատկապես Բուլղարիայի՝ իրենց դեմ հանդես գալուց: Միայն Բուլղարիայի բողոքը կարող է կանխել հայերի հալածանքները: Այսօր հայերը սգո ցույց արեցին. նրանց բոլոր խանութները Սոֆիայում փակված են:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1915. 08. 08 (№ 352)

Հայերի ջարդը

Մարդը պետք է նման լինի գիշատիչ գազանի, որ այս սահմռկեցուցիչ դեպքերի ժամանակ ականջները խլացնի ու աչքերը փակի: Իմ գրիչը ի զորու չէ նկարագրելու սիրտ կեղեքող այն անցքերն ու իրադարձությունները, որ տեղի են ունենում հայերի հետ հուլիսի 11-ից ի վեր՝ Վանում, Բայազետի և այլ վիլայեթներում: Բայց փորձեմ դեպքերը պարզապես նկարագրել: Ռուսական զորքերը հուլիսի 11-ին հետ քաշվեցին Մուշ-Մանազկերտ-Բիթլիսից, նրանց հետևեց հայ բնակչությունը, առնվազն

200 հազար մարդ միայն Վանի վիլայեթից: Փախչում էր գլուխը կորցրած հայ ժողովուրդը, ամբողջ ընտանիքներով, ձիերով, ավանակներով, եզներով, կովերով, գոմեշներով: Ժողովուրդը հանապազօրյա հացը շալակին քարշ էր գալիս՝ ոտաբոբիկ, սոված ու ջերմությունից ճաքճքած շրթունքներով, և ամբողջ ճանապարհը՝ Իգդիրից մինչև Վան, լցված էր անօգ, քաղցած, ծարավ ու բոկոտն գաղթականներով: Ովքեր միջոցներ ունեին, օրինակ՝ հարուստները, հեշտությամբ ազատեցին գլուխները, գնացին դեպի Իգդիր: Տեսե՞լ եք, որ հասարակ մի մարդ 6 վերստ տանի երկու կնոջ՝ իրենց նորածին երեխաների հետ: Մեր շարժական հոսպիտալը լցվեց կաղ, կույր և նորածին երեխաներով: Երեկ մի մայր եկավ՝ իր հետ բերելով 4 մանուկ, որոնցից ավագը ընդամենը 7 տարեկան էր, 4-ամյա աղջիկը հիվանդ էր, ձեռքից բռնած մի կերպ քարշ էր տալիս: Վանից թե Արճեշից 200 մղոն կտրել անցել էր: Երեխաները լաց էին լինում: Մայրը սոսկալի վիճակում էր, մազերը գզգզված, պոկոտած, սոված, արցունքներն այտերին չոր-բացած, բոլորովին հյուծված: Գալիս էր կաղալով: Մոտեցավ մեր վրանին, հիվանդին դրեց գետնին: Լացում էր անձայն, զավակին մեղմորեն համբուրեց և շարժվեց առաջ: Մայրերի կողմից այսպես լքվածները շատ էին ճանապարհներին: Լքում էին նաև մեռածներին: Շատ ողջ երեխաներ նույնպես անտեր էին թողնված: Հիմա տողերիս հեղինակի մոտ 6-7 երեխա կա: Միայն մեկին տեր գտնվեց, իսկ մնացածը ինձ մոտ են, բոլորը՝ աղջիկ, երևում է՝ տղաներին հազվադեպ են թողնում: Ջորքը հնարավորինս օգնում է, չեք հանդիպի մի զինվորի, որի ուսին մի երեխա չլինի, բայց 200 հազարին ո՞վ կարող է տանել, խնամել, կերցնել, խմեցնել, հագցնել: Թույլերը մեռնում են ճանապարհներին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 08. 08 (№ 64)

Սոֆիա, 4 օգոստոսի: Բուլղարիայում բնակվող հայերը կոչով դիմել են բուլղար ժողովրդին, որտեղ խոսվում է հայերի՝ թուրքերից կրած աննկարագրելի տառապանքների մասին:

Փախստականների անվերջ քարավանը ձգվում է դեպի Ռուսաստանի սահմանները, որ ազատվի ոչնչացումից և անպատվությունից: Թուրքերը որոշել են հայերին կոտորել սեփական հայրենիքում: Ծրագրել են Ստամբուլից 10 հազար հայ արտաքսել Փոքր Ասիա, այդ պատճառով Բուլղարիա են գալիս մեծ թվով հայեր: Կոչում խնդրվում է, որ Բուլղարիայի կառավարությունը միջամտի գործընթացին, քանի որ թուրքական կառավարությունը ավելի շատ վախենում է հատկապես Բուլղարիայի՝ իրենց դեմ հանդես գալուց: Միայն Բուլղարիայի բողոքը կարող է կանխել հայերի հալածանքները:

Այսօր հայերը սգո ցույց արեցին. նրանց բոլոր խանութները փակ են Սոֆիայում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 08. 10 (№ 65)

Էջմիածին

50 հազար փախստական է եկել, և նրանց հոսքը դեռևս շարունակվում է: Փախստականների դրությունը քաղաքում և ճանապարհներին աննկարագրելի է: Մարդիկ ճանճերի պես կոտորվում են սովից, խոնջանքից, հիվանդություններից… Հաց, սնունդ չի ճարվում: Չկա բուժօգնություն: Դիակներն անթաղ են: Հայ հասարակական կազմակերպությունները ամոթալի կերպով անտարբեր են: Դիմում ենք բոլորին, ում մեջ մարդասիրական նշույլ է մնացել, որ գան Էջմիածին՝ բազմատանջ ժողովրդին օգնություն ցուցաբերելու: Հարկավոր են աշխատավոր ձեռքեր, բժիշկներ, բուժակներ, մանկաբարձուհիներ, գթության քույրեր,

գյուղատնտեսներ, ովքեր լավ գիտեն Կովկասի և Արևմտյան Հայաստանի կլիմայական և գյուղատնտեսական պայմանները, անհրաժեշտ է բոլոր մասնագիտությունների տեր մտավորականներին համախմբել՝ փախստականների ծանր վիճակը թեթևացնելու համար: Եկեք տասնյակներով, հարյուրներով, մի՛ սպասեք հրավերի:

Թիֆլիս

Հայ փախստականների համար բոլոր կողմերից հավաքվում են դրամական միջոցներ և նվիրատվություններ:

Հայ սոցիալիստական կուսակցության (Հնչակյան) կենտրոնական կոմիտեի անդամ Վարազդատը «Յումանիտե» թերթում գրում է այն աննախադեպ հալածանքների մասին, որոնց ենթարկվում է հայ ժողովուրդը թուրքերի կողմից ներկա պատերազմի ժամանակ:

Երիտթուրքական կուսակցության անդամները մահապատժի որոշում կայացրին 20 հայ բոլորովին անմեղ սոցիալիստների նկատմամբ՝ նրանց մեղադրելով իբրև թե Հայաստանի անկախության համար դրամահավաքի մեջ:

Բազմաթիվ հայ մտավորականների Պոլսից աքսորեցին Կոնյա, որտեղ նրանց սպասում է շատ դառն ճակատագիր: Օսմանցիների տեղեկությունների համաձայն՝ տեղահանվածները «ինքնասպան են եղել»:

Օսմանյան Հայաստանում կրկնվել է 1894-1896 թթ. հայերի ջարդը: Բիթլիսի նահանգում սպանել կամ Տիգրիս գետն են թափել 9 հազար մարդ: 40 հազարը ոչնչացվել է Կիլիկիայում: Որոշ մարզերից ժողովուրդը ամբողջովին արտաքսվել է անապատները: Այդ ամենի պատճառը,- ասում է Վարազդատը,- հայերից ունեցած վախն է և հեղափոխական շարժումն ի սկզբանե խեղդե-

լու մարմաջը: Այս մարտավարությունը թարմացրել են երիտթուրքերը՝ խալիֆ Հաջի Գիլեշ Երկրորդի հրամանով: Նա մուսուլմանների պաշտպանն է և ցանկանում է Օսմանյան կայսրությանը տիրել առանց հայերի:

Հայերի մեջ
Օսմանյան կայսրություն

Կ. Պոլսից հայկական «Արև» թերթին հաղորդում են. «Սոֆիայից ժամանել է վեց հոգուց բաղկացած ամերիկացի միսիոներների մի խումբ՝ տուժած հայերին օգնություն ցույց տալու նպատակով: Օսմանյան կառավարությունը թույլ չի տվել՝ իրականացնեն իրենց առաքելությունը, և նրանք այդ մասին, հեռագրով տեղեկացրել են ԱՄՆ-ի նախագահին:

Դրանից առաջ Նիկոմիդիայում խստագույն խուզարկություններ են կատարվել: Կառավարության գործակալները Պարտիզակում մի տան մեջ համագումար անելիս 80 մարդ են հայտնաբերել: Նրանց բոլորին հենց տեղում սպանել են ծեծելով:

Նիկոմիդիայում հայերին չերքեզներն են ոչնչացնում:

Հալեպ նորից 50 մարդ են ուղարկել «Դաշնակցություն»-ից:

Ամերիկացի միսիոներները ճշգրտում են ոչնչացված հայերի թիվը:

Էրզրումցի վաճառական Ազարյանցին օսմանցիները խոշտանգել են և ստիպել ստորագրել մեղադրանքի տակ, թե, իբր, Խաժակը, Ակնունին, Զարդարյանը և այլք իրեն հանձնարարել են հայերի համար զենք տեղափոխել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 08. 11 (№ 66)

Հայերի կոտորածը

Օսմանցիները Կիլիկիայում քառասուն հազար հայ են կոտորել. Վանի արքեպիսկոպոսը հեռագրով դիմել է Լոնդոնի Հա-

յոց կոմիտեին. «Բնաջնջված է գրեթե ամբողջ Հայաստանը՝ կին, տղամարդ, երեխա, բոլորին պարզապես ոչնչացրին: Մոտ քսան հազար հոգի թափառում է անտեր, անտուն, սոված՝ դառնալով համաճարակի զոհ»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1915. 08. 13 (№ 356)

«Русское слово»-ն գրում է Վանը ժամանակավոր դատարկելու մասին. «Վանում հուլիսի 17-ին Արամի ղեկավարությամբ տեղի ունեցավ բազմամարդ միտինգ: Նա հստակ ներկայացրեց Վանի ծանր կացությունը և այն վտանգը, որ սպասվում է: Արամը ներկաներին խորհուրդ տվեց հանգստություն պահպանել և քաղաքից անհապաղ հանել կանանց ու երեխաներին: Հավաքում որոշվեց կանանց ու երեխաներին ուղարկել Կովկաս: Տղամարդիկ՝ 18-46 տարեկան, պետք է մնան, զինվեն և օգնեն քաղաքի պաշտպանությանը: Միտինգն ընտրեց հանձնախումբ, որն իսկույն անցավ որոշումները կատարելուն: Հուլիսի 18-ի երեկոյան թուրքերը հարձակվեցին, և իրադրությունը փոխվեց: Արամը դիմեց ազգաբնակչությանը, որ բոլորը հեռանան քաղաքից և երեք օրվա ընթացքում հասնեն Բեգրիկալ:

Սկսվեց խառնաշփոթ: Սարսափահար ժողովուրդը ոտքով ճանապարհ ընկավ դեպի հյուսիս: Ունեցվածքը թողեցին անտեր, շատերը հրդեհեցին իրենց տուն ու տեղը: Ամբողջովին այրվեց անվնաս մնացած միակ թաղամասը՝ Հայաստանը:

Կովկասի ճանապարհին երկու անգամ նրանց վրա հարձակվեցին քրդերը: Նրանք սպանեցին 60 մարդու: Խառնաշփոթի ու իրարանցման ժամանակ սպանվեցին նաև շատ երեխաներ և անասուններ: Երբ թուրքերը գրավեցին Արճեշը, փախստականների ճանապարհը փակեցին, և ժողովուրդն ուղղվեց դեպի Ադրբեջան: Իգդիր գնաց ոչ պակաս 100 հազար մարդ, Ղազիզ-

ման՝ մի քանի հազարը, իսկ Պարսկաստան՝ 20 հազարը: Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների բոլոր քրիստոնյաները տեղափոխվեցին Ռուսաստան…

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 08. 18 (№ 71)

Սոլուն, 15 օգոստոսի: Հայոց պատրիարքը հանդիպել է Շեյխ-ուլ-Իսլամին և խնդրել դադարեցնել հայերի ջարդը: Խնդրանքն անտեսվել է:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 08. 18 (№ 71)

Թալեաթ բեյի լավատեսությունը

«Բեռլիներ տագեբլատ»-ի թղթակցին տված հարցազրույցի ժամանակ Թուրքիայի ներքին գործերի նախարարն ասել է. «Մեր ռազմական և քաղաքական վիճակն այնպիսին է, որ ավելի լավը դժվար է պատկերացնել: Բուլղարիա - Օսմանյան Թուրքիա դաշինքն արդեն կայացած փաստ է»: Նախարարը Ռումինիայի վերաբերյալ հրաժարվել է տեղեկություններ տալ: Սակայն հայերի մասին Թալեաթ բեյն ասել է. «Հայ հեղափոխականներին հետապնդելու մեջ խստություն բացարձակապես չենք ցուցաբերում, պարզապես մենք գործում ենք եռանդուն կերպով. հայերի կողմից լքված վայրերը բնակեցնում ենք օսմանցիներով»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 08. 22 (№ 75)

Բաքու

Բաքվում քրդերը հարձակվել են Վանից եկած փախստականների վրա և թալանել նրանց: Շատերին սպանել են: Բաքվի և Մակետաժինի խաները կարեկցանք են ցուցաբերել փախստականների հանդեպ: Ռուսաստանի հյուպատոսարանը միջոցներ է

ձեռք առել՝ մեղավորներին պատժելու և ավարը վերադարձնելու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 08. 29 (№ 81)

Բուխարեստ, 26 օգոստոսի: Ստամբուլից հայտնում են, որ նախարարների խորհրդի վերջին նիստում որոշել են լուծարել Հայոց պատրիարքի ազգային խորհուրդը: Բանտարկել են մեծ թվով հայերի:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 09.3 № 84

Հայերի մահապատիժը

Ստամբուլի ռազմական պարետը հրամայել է քաղաքում տարածել հայտարարություններ և հաստատել թերթերի նախնական այն լուրերը, ըստ որոնց՝ մոտ օրերս մեծ թվով հայ հասարակական և քաղաքական գործիչներ մահապատժի կենթարկվեն՝ Օսմանյան կայսրությանը դավաճանելու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 09. 5 (№ 86)

Աթենք, 2 սեպտեմբերի: Ըստ թերթերի՝ 150 հազար հայ Էնիշուքրիի և Աֆիոն-Ղասագիսարի սարերը փախան:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 09. 06 (№ 87)

Նորից փախստականների մասին

Եպիսկոպոս Ներսեսը Էջմիածնից հայտնում է, որ Վանի վիլայեթից կրկին 25 հազար հայ է գաղթել Այսրկովկաս: Մի քանի հազար մարդ Պարսկաստան է գնացել:

ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 09. 11 (№ 173)

Փարիզ, 8 սեպտեմբերի: Ռազմածովային նախարարութ-յունը հայտնում է, որ Ֆրանսիայի հածանավերը ազատել են 5 հազար հայ, որոնք պատսպարված են եղել Ջեմալմուսայի սարերում՝ Անտիոքի ծովածոցից վերև: Նրանք պայքարել են թուրքերի դեմ մինչև հուլիսի վերջը: Սնունդը, դեղորայքը և զինամթերքն արդեն սպառվել էին: Հածանավը հայերին տեղափոխել է Պորտ Սաիդ:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 09.11 (№ 378)

Ֆրանսիացիները փրկում են հայերին

Փարիզ, 8 սեպտեմբերի: Ռազմածովային նախարարի տեղեկությունը. Ֆրանսիացիների հածանավերը փրկել են 5 հազար հայ, որոնք թաքնված են եղել Ջեբելմուսայի սարերում՝ Անտիոքի նավթահորերից հյուսիս: Այնտեղ թուրքերին դիմադրել են մինչև հուլիսի վերջին օրերը: Նրանք արդեն կարիք են ունեցել զինամթերքի, դեղորայքի և պարենի: Հայերին տեղավորել են հածանավերի վրա և հասցրել Պորտ Սաիդ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 09.12 (№ 91)

Այց երեխաների կացարան

Սեպտեմբերի 10-ին կոմսուհի Է. Ի. Վորոնցով-Դաշկովան այցելեց Կրծանիսի հայ փախստական երեխաների կացարան, որտեղ ապաստանել էր 340 երեխա: Կոմսուհուն ուղեկցում էր եպիսկոպոս Մեսրոպը: Կոմսուհին ուշադրությամբ շրջագայեց կացարանի բոլոր բաժիններով և երեխաներին հյուրասիրեց քաղցրավենիքով: Երեխաները կոմսուհուն ծաղիկներ նվիրեցին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 09.27 (№ 103)

Բռնագաղթված հայերին օգնելու նպատակով, կառավարության թույլտվությամբ, երեկ դրամատուփերով գումար էին հավաքում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 09. 27 (№ 103)

Օգնություն փախստականներին

Կովկաս: Թերեքի մարզի և այլ շրջանների ղեկավարներին հանձնարարվել է՝ օգնել փախստականներին՝ ինչով կարող են: Փախստականների թիվը գնալով մեծանում է Կովկասում և նրա մերձակայքում: Երկրորդ Աթոնի վանքը խոստացել է սննդամթերքով օգնել փախստականներին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 09. 29 (№ 104)

Կես միլիոն ռուբլի փախստականներին

Մեզ տեղեկացնում են մեր ընթերցողները, Ներքին գործերի նախարարությունում սեպտեմբերի 10-ին տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրվել է խորհրդակցություն և քննարկվել փախստականներին օգնություն ցուցաբերելու հարցը: Վրաց հասարակության կողմից նիստին մասնակցել է փաստաբան պրն Դ. Զ. Ճիաբերաշվիլին: Վերջինս Թիֆլիսի նահանգի ազնվականության պարագլուխ Դ. Է. Չոլոդաշվիլիի անունից հանդես է եկել հայտարարությամբ, որ խորհրդակցության որոշման համաձայն կես միլիոն դրամական գումար պետք է փոխանցել Կովկասում գտնվող փախստականներին օգնելու համար. այդ գումարը նախատեսվում է ուղարկել Երևան և Կարս: Իշխան Դ. Է. Չոլոդաշվիլին անմիջապես հեռա-

գրով խնդրել է Ներքին գործերի նախարարին, որ նախատեսված գումարը ուղարկի փոխարքայի տրամադրության տակ: Սեպտեմբերի 27-ին իշխան Չոլոդաշվիլին հեռագիր է ստացել պարոն Ճիաբերաշվիլիից, որ կես միլիոնը կուղարկվի փոխարքային, այլևայլ ազգությունների հիշյալ կարիքները հավասարապես հոգալու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 10. 03 (№ 107)

Հայերի բնաջնջումը

Ամերկայի քննչական հանձնաժողովը Լոնդոն հեռագիր է ուղարկել, որտեղ գրված է, որ թուրքերը անգթաբար բնաջնջում են հայերին: Լորդ Կրիումը պատգամավորների պալատում հայտարարել է՝ Սասունի նահանգի բոլոր հայերին ամբողջապես ոչնչացրել են: Գյուղերն ու քաղաքները հողին են հավասարեցրել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 10. 03 (№ 107)

Տեղեկություններ վրացի փախստականների մասին Թիֆլիսի նահանգի ազնվականության պարագլուխ Դ. Է. Չոլոդաշվիլին հետևյալ բովանդակությամբ հեռագիր է ուղարկել Դ. Զ. Ճիաբերաշվիլիին, որը վրաց հասարակության կողմից մասնակցում էր ներքին գործերի նախարարությունում տեղի ունեցող խորհրդակցությանը: Փախստականների իրավիճակը կարգավորող «Վրաց բարեգործական ընկերության» տեղեկությունների համաձայն, փախստական վրաց ուղղափառների, կաթոլիկների և մուսուլմանների թիվը հասնում է Բաթումի մարզում՝ մոտավորապես 24.500-ի, Արդվինի մարզում՝ 30 հազարի, Ախալցխայի գավառում՝ 1.500-ի, Ախալքալաքի գավառում՝ 3 հազարի, Սուխումի մարզում՝ 6.400-ի, Սենակի գավառում՝1.500, Զուգդիդիում՝ 2 հազար, ընդամենը՝ 59. 900 հոգի:

Նրանց մասին հոգ է տանում միայն «Վրաց բարեգործական ընկերությունը», մյուս կազմակերպությունները ոչնչով գրեթե չեն օգնում: Հարկավոր է խնդրել, որ հնարավորինս շատ գումար հավաքեն և փոխանցեն «Վրաց բարեգործական ընկերության» գլխավոր վարչությանը:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 10. 04 (№ 108)

Մենք և հարևանները

Մեկ դարը բավարար եղավ, որ հայերը արմատապես բնավորվեն Այսրկովկասում: 1897 թվականի մարդահամարը ցույց է տվել, որ փախստական հայերի թիվը վրացիների ընդհանուր թվին համարյա հավասարվել է:

Համաշխարհային ներկա պատերազմը հայ ժողովրդի համար նոր հալածանքների դռներ բացեց, և նրանք եկան մեր կողմերը, դեպի արևելք, դեպի Այսրկովկաս: Ալիքը այնքան մեծ էր, որ կարող էր հեղեղել հարթավայրերը, սարերն ու ձորերը, որտեղ էլ որ դեմ առներ ալիքի այդ հոսքը: Ոչ մեկը ճշգրիտ չգիտի, թե որքան է հայ փախստականների թիվը, բայց եթե թերթերը որոշ միտումներով չեն կեղծում, նրանց թիվը երեք հարյուր հազարի է հասնում:

Չնայած թերություններին՝ հայ փախստականների մասին «Գրուզին»-ի հրապարակած տվյալները ուշագրավ և մտահոգիչ են: Եթե այսպես շարունակվի, ևս տասը տարի, և հայերի հետքն իսկ չի մնա նախկին Հայաստանում. բոլորը, ընտանյոք հանդերձ, հիմնովին բնակություն կհաստատեն այստեղ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 10.18 (№ 120)

Կիլիկիա և Զեյթուն

Կիլիկիայում և Զեյթունում հայերն ապստամբել են: Մեծ թվով հայեր են ոչնչացվել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 10. 22 (№ 123)

(Վնասված նյութը՝ մասնակի վերականգնված)

Հայերի ճակատագիրը Օսմանյան Թուրքիայում

…Լուրեր են պտտվում, որ Ֆրանց Իոսիֆը հանգստացրել է հայ կաթոլիկներին և խնդրել Թուրքական կառավարությանը չհալածել նրանց: Թալեաթը և մեծ վեզիրը նրան պատասխանել են, թե հայերը անկախ իրենց դավանանքից դեմ են եղել Օսմանյան Թուրքիային: Կայսրի խնդրանքը բավարարվել է այնքանով, թե միջոցներ ձեռք կառնվեն՝ հայ կաթոլիկներին չհետապնդելու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 10. 23 (№ 124)

Հայկական հարցը

Հայկական հարցի մասին խստագույնս արտահայտվում են ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Գերմանիայում: Ահա, օրինակ, ինչ հանգով է երգում հայտնի Թալեաթ բեյը. «…Ես պետք է առնվազն հիսուն տարով արմատախիլ անեմ հայերի համար բարենորոգումներ անցկացնելու մասին թեկուզև ակնարկը… Հայերը կեղտոտ և զզվելի ժողովուրդ են. նրանց ոչնչացնելով՝ ոչ ոք ոչինչ չի կորցնի»: Այս առիթով գերմանական լիբերալ լրագրերը նույնիսկ «այո» են ասում օսմանցիներին: «Հայկական հարցը անգլիացիների հորինածն է, նրանց կողմից արհեստականորեն ստեղծված մի բան է, որպեսզի միջամտեն Օսմանյան կայսրության ներքին գործերին: Անգլիայի փողը և անգլիական սադրանքներն այն «բարի» բարը տվեցին, որ հայ ժողովուրդը նստեց մեղադրյալի աթոռին և վաստակեց դարավոր դավաճանի անուն: Ուստի միանգամայն բնական է, որ օսմանցիները հայերի ոխերիմ թշնամին են, և զարմանալի չէ, որ Անատոլիայի խավա-

բամիտ ժողովուրդը և մոլեռանդ հոգևոր խավն սկիզբ դրեցին հայերի ջարդերին ու կոտորածներին»:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 10. 24 (№ 205)

Հայկական հարցը

Հայոց հարցի մասին խստագույնս արտահայտվում են ինչպես Օսմանյան Թուրքիայում, այնպես էլ Գերմանիայում: Ահա, օրինակ, ինչ հանգով է երգում հայտնի Թալեաթ բեյը. «…Ես առնվազն հիսուն տարով պետք է արմատախիլ անեմ հայերի համար բարեփոխումներ անցկացնելու հարցի մասին թեկուզև ակնարկը… Հայերը կեղտոտ և զզվելի ժողովուրդ են. նրանց ոչնչացնելով՝ ոչ ոք ոչինչ չի կորցնի»: Այս առիթով գերմանական լիբերալ լրագրերը նույնիսկ «այո» են ասում օսմանցիներին:. «Հայկական հարցը անգլիացիների կողմից հորինված, նրանց կողմից արհեստականորեն ստեղծված մի բան է, որպեսզի միջամտեն Թուրքիայի ներքին գործերին: Անգլիայի փողը և անգլիական սադրանքներն այն «բարը» տվեցին, որ հայ ժողովուրդը հայտնվեց մեղադրյալի աթոռին և վաստակեց դարավոր դավաճանի անուն: Ուստի միանգամայն բնական է, որ օսմանցիները հայերի ոխերիմ թշնամին են, և զարմանալի չէ, որ Անատոլիայի խավարամիտ ժողովուրդը և մոլեռանդ հոգևոր խավը սկիզբ դրեցին հայերի ջարդ-կոտորածներին»:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 10. 25 (№ 206)

Հայերի կյանքը

Զեյթունից բոլոր հայերին արտաքսեցին Օգոնիո և Հալեպ, որտեղ նրանք սովից ու ցրտից անխնա կոտորվում են:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 10. 28 (№ 208)

Ի՞նչ են մտածում հայերը

«Բաքու» թերթի հոկտեմբերի 24-ի համարում տպագրված է մեկ հոդված հայերի՝ արդի հոգեբարոյական տրամադրության մասին (վերջերս նմանատիպ բովանդակությամբ հոդված տպագրվել էր ««Кавк. слово»-ում): Ստորև ներկայացնում ենք դրա թարգմանությունը.

«Խոր հուսալքություն է համակել հայերի լայն շրջանակներին: Հայերի մոտ այլևս ոչինչ չի մնացել այն բնական խանդավառությունից, որը նրանց տիրել էր մեկ տարի առաջ Օսմանյան կայսրության դեմ ռուսների արշավանքով: Ասես ժողովրդի մեջքը կոտրվեց, և նա քար կտրեց իր անողորմ ճակատագրի առջև՝ ավելի մեծ փորձությունների հանդիպելով:

Ցավոք, հուսահատության ալիքը իր մեջ առավ նաև հայ մտավորականության և բուրժուազիայի մի մասին. նրանց համար սկսված ջարդը վկայում է Արևմտյան Հայաստանի քաղաքական բաղձանքների կատարյալ ձախողում»:

«Ի՞նչ կարող է անել անկախ Հայաստանը, երբ այլևս հայեր չկան»: Անընդհատ կրկնում են հուսալքվածներն ու երկչոտները: Նրանց ընդամենը մի քայլ է բաժանում ամբողջությամբ մերժելուց այն բոլոր ուղիներն ու միջոցները, որոնց օգնությամբ ցանկանում էին ազատություն ձեռք բերել:

Այդ ուղղությունը գլխավորում է «Մշակ» թերթը՝ թեժ քարոզչություն իրականացնելով հայ հասարակական շարժման ղեկավարների դեմ: Թերթը ամեն ինչում մեղադրում է հայ քաղաքական գործիչներին ու նրանց վարած հեղհեղուկ քաղաքականությունը:

Եթե հետևողական լինենք այն ամենին, ինչ ամեն օր տպագրվում է հայկական թերթերում, կտեսնենք, որ հայ հասարակու-

թյան գիտակից մասի վեճը այսօր երկու թեմայի շուրջ է ծավալվում:

Նախ՝ հայկական ղեկավար մարմինները որքանո՞վ են պատասխանատու այն դժբախտությունների համար, որ տեղի ունեցավ հայերի հետ: Կարելի՞ է, արդյոք, նրանց ձեռքում թողնել ժողովրդի ճակատագիրը:

Երկրորդ. ինչպիսի՞ն պետք է լինի հայերի քաղաքականությունը Հայաստանի բնակչության կոտորածից հետո:

Մենք արդեն գիտենք, թե գերմանացիները և երիտթուրքերն ինչպես անկաշկանդ ու հաստատակամ ծրագրեցին ու իրականացրին հայերին «մաքրելու» գործընթացը: Գիտենք, որ հայերի կոտորածը անհրաժեշտ էր մեր թշնամուն: Այդ պատճառով, այսօրվա պատերազմի պայմաններում, Օսմանյան կայսրության հայերի վիճակի վրա չէր կարող վճռորոշ ազդեցություն չունենալ հայկական կազմակերպությունների վարած քաղաքականությունը:

Բնականաբար, հայերը շատ սխալներ են թույլ տվել, դա բոլորի համար պարզ է: Սակայն դա պայմանավորված էր ոչ թե կազմակերպությունների քաղաքական կողմնորոշումով, այլ կազմակերպությունների անմիաբանությամբ, նպատակային ծրագրի բացակայությամբ, անկարգապահությամբ, ինչը հայերի ընդհանուր քաղաքական տհասության հետևանք էր, և այս ամենի պատասխանատուները ոչ մի կերպ չեն կարող լինել քաղաքական գործիչները:

Բոլոր նրանք, ովքեր այսօր հանդես են գալիս կանխատեսումներով և խոր դիվանագիտությամբ,- պատմում է քաղաքական լավագույն գործիչներից մեկը՝ Վարանդյանը,- որոնք այսօր «քաջաբար» շանթահարում են մեզ և փորձում համոզել, որ այլ կերպ անհնարին էր, որ հայ կամավորների՝ պատերազմին խառնվելը մեր ժողովրդի դաժան արյունահեղության պատճառ դարձավ, և այս ամենը նախապես պետք է հաշվի առնեինք.

սրանք բոլորը խեղաթյուրում, աղավաղում են փաստերն ու իրենց սեփական հոգեկան զգացմունքները: Նույնիսկ ամենասառնասիրտ, խելացի ու իմաստուն հայը հափշտակվեց ընդհանուր ազգային խնդիրներով և, եթե նույնիսկ որևէ կազմակերպությանը դիմադրություն ցույց տար, միևնույն է, նման ցանկությունները տարերայնորեն հօդս կցնդեին… Սա ավելի քան ակնհայտ է: Բոլորին համակել էր հույսը և բոլորը պարզ լսում էին հաղթանակի ղողանջները»:

«Հորիզոն»-ում և «Արև»-ում բազմիցս նշվել է, որ «Մշակի» ուշացած քննադատները և նրանց համախոհները որպես իրադարձության պատճառ համարում են պատրվակը: Հնարավոր է, որ հայ կամավորական ջոկատների մարտական գործողությունները հայերին կոտորելու պատրվակ դառնային, բայց ոչ պատճառ: Արդյոք Ավստրիայի լեհերի ջոկատների կազմավորումը պատճառ դարձավ Ռուսաստանի լեհերի կոտորածի համար…: Երիտթուրքերին պատրվակ էր պետք, և նրանք միշտ կարող էին գտնել այդ պատրվակը...

Եթե հայերի կոտորածի համար մեղադրենք հայ գործիչներին, կնշանակի համաձայնենք Օսմանյան կայսրության և Գերմանիայի իշխանությունների հետ, որ հայտարարում են, թե հայերը ապստամբեցին Օսմանիայի դեմ, ուստի և պատժվեցին:

Ինչ վերաբերում է հայերի քաղաքականության այսուհետ ինչպիսին լինելուն, ապա այն շրջանակները, որոնց հայացքները արտահայտում են «Հորիզոնը» և «Արևը», այսօր էլ վստահ են, որ, չնայած այսքան փորձանքներին ու զոհերին, հայերը դարձյալ ու դարձյալ հետևողականորեն և վստահորեն պետք է շարունակեն պայքարել հանուն իրենց քաղաքական գաղափարների իրականացման: Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա Հայաստանի վերականգնումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե, իհարկե, դաշնակից երկրները հաղթեն: Ուստի հայերը ամեն կերպ պետք է աշխատեն օժանդակել նրանց հաղթանակին:

Կենսական մեծ ուժ կա հայ ժողովրդի մեջ. իր պատմության ընթացքում բազում փորձանքների ու դժբախտությունների միջով է անցել՝ կդիմանա նաև այս դժբախտությանը: Սակայն հոգով չպետք է ընկճվել: Պետք է մինչև վերջ պայքարել և շարունակել այն հույսով, որով սկսել են...»:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 10. 29 (№ 209)

Թբիլիսի

Օգնություն հայ փախստականներին: Պետրոգրադի Հայոց օգնության կոմիտեն 46.500 ռուբլի է ուղարկել Հայոց կենտրոնական կոմիտեին, որի մի մասը պետք է հատկացվի կացարաններ կառուցելուն, իսկ մյուս մասը՝ 1550 գաղթական երեխաների խնամքի համար: Նույն կոմիտեն 17 հազար ռուբլի է ուղարկել Բաքվի Հայոց կոմիտեին՝ որբ երեխաների համար տաք հագուստ գնելու:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 10. 30 (№ 130)

Հայ փախստականներ

Պորտ Սաիդում հավաքվել է մի քանի հազար փախստական: Նրանց տեղավորել են 450 բարաքներում:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 10. 31 (№ 211)

Թուրքերը և հույները

Սալոնիկում հրատարակվող «Օրինիոն» թերթը ցավով նշում է գերմանական շաբաթաթերթում տպագրված հոդվածի բովանդակությունը, որի հեղինակը Օսմանյան կայսրությանը խորհուրդ է տալիս խիստ միջոցներ կիրառել կայսրության հույն կալ-

վածատերերի և վաճառականների դեմ: Նրանք, իբր, շահագրգռված են Օսմանյան կայսրության անկումով:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 11. 03 № 133

Բուխարեստ, 31 հոկտեմբերի. Թերթերը տեղեկացնում են, որ Գերմանայի նորանշանակ դեսպանը մինչ պաշտոնավայր ներկայանալը մեկնել է Բուխարեստ և որոշ ժամանակ հյուրընկալվել թագավորի մոտ:

Ստամբուլից տեղեկացնում են, որ Կուֆայում հայերի ջարդ է սկսվել: Ստամբուլից ստացված հրամանի համաձայն հայերին կոտորում են՝ առանց մեծ ու փոքր տարբերակելու, հրդեհում են տները, զրկում ամեն ինչից: Ասում են՝ հարձակումների ժամանակ զոհվել է ամերիկացի Լեսլին. նա պաշտպանելիս է եղել հայերին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 11. 11 (№ 140)

Օսմանյան բանակը և նրա տեղաբաշխումը

Այսօր Օսմանյան կայսրության կողմից պատերազմի դաշտում գտնվում է մոտավորապես 700 հազար զինված ասկյար: Այդ զորամիավորումը բաժանված է յոթ զորամասի: Ամենազորեղ խմբերը տեղակայված են Անատոլիայում և Թրակիայում. պաշտպանում են Փոքր Ասիայի արևմտյան ափերը և Բոսֆորի նեղուցը: Այս խումբը բաժանված է առաջին, երկրորդ և հինգերորդ միավորումների՝ 300 հազարական զինվորով: Այն գտնվում էր Գալիպոլիի թերակղզում և կռվում էր Անգլո-ֆրանսիական դեսանտայինների դեմ: Առաջին զորամասի հրամանատարն է ֆոն դեր Գոլց փաշան, երկրորդինը՝ Վեհիբ փաշան, հինգերորդինը՝ ֆոն Սանդերսը: Լուրեր կան, որ առաջին բանակից Պերտեֆ փաշայի կորպուսը ուղարկվել է Բուլղարիա՝ Էգեյան ծովի բուլ-

դարական ափերը պաշտպանելու և Վառնայում ու Բուրգասում կայազորային ծառայություն իրականացնելու:

Երրորդ բանակը տեղակայված էր Կովկասի ռազմաճակատում, Սև ծովի ափից մինչև Ուրմիայի հարավային ափերը (Պարսկաստան): Այս բանակի ասկյարների թիվը չի գերազանցում 150 հազարը: Նրանց գործողություններն իրականացվում են Մահմուդ փաշայի ղեկավարությամբ: Անհնար է այս զորքի բաժանումը կորպուսների. այն մասնատված է: Նրա գնդերը գործում են քրդերի հետ միասին: Որպես այս զորքի բազա համարվում է Էրզրումը:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1915. 11. 12 (№ 221)

Հայ պատգամավորներին կախաղան են հանել

Կոստանդնուպոլսից հաղորդում են, որ Բուլղարիայի կառավարությունը Օսմանյան կայսրությանն է հանձնել «Դաշնակցություն» կուսակցության չորս ազդեցիկ անդամի: Օսմանյան կայսրության զինվորական պաշտոնյաները կոմիտեի անդամներին հանձնել են ռազմադաշտային դատարան: Դատարանը նրանց կախելու որոշում է կայացրել: Դատավճիռն ի կատար է ածված:

Կոստանդնուպոլսի հավաստի աղբյուրներից իմանում ենք, որ Օսմանյան կայսրության խորհրդարանի 8 հայ պատգամավորի կախել են:

Նշվում է նաև, որ շատ պատգամավորներ, չդիմանալով դաժանագույն տանջանքներին, մահացել են բանտերում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 11. 13 (№ 142)

Հայերը Բուլղարիայում

Բուխարեստ: Սոֆիայից տեղեկացնում են, որ Բուլղարիայում գտնվող բոլոր հայերը զորակոչվում են բանակ: Օսմանիան

լքած 15 հայ փախստականի հանձնել են օսմանյան կառավարությանը, որոնց, հավանաբար, կգնդակահարեն: Մինչև 55 տարեկան հայերին բուլղարացիները ստիպում են խրամատներ փորել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 11. 13 (№ 142)

Հայերի կյանքը

Ռումինիայի հայկական թերթերը տեղեկացնում են, որ Օսմանյան կայսրությունը մտադրվել է տեղահանել Ստամբուլաբնակ բոլոր հայերին:

Կոնիա քաղաքի վալի Ջեմալ բեյը ազատվել է զբաղեցրած պաշտոնից. նա մեղադրվել է հայերի հանդեպ համակրանք տածելու մեջ:

Տրապիզոնի հայոց թեմի ծայրագույն վարդապետ Թուրինին ռազմական դատարանը երկարաժամկետ աքսորել է Էրզրում:

Ասում են՝ Ճանապարհին սպանել են վարդապետին:

Հայերի անսահման ջարդերի առիթով սուլթանը հայտարարել է. «Ես ոչինչ չգիտեմ, այդ բոլորը նախարարների գործն է»:

Այժմ սարսափի մեջ են նաև պարսկահայերը: Նրանք ամեն օր հարյուրներով փախչում են դեպի Կովկասի սահմանները:

Հայերը մեծ փորձությունների մեջ են եղել Ղարադաղում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 11. 17 (№ 145)

Հայերի կյանքը

Շվեյցարիայի կանտոններից Միացյալ Նահանգների նախագահին հեռագիր են ուղարկել՝ խնդրելով ուշադրություն դարձնել Օսմանյան կայսրության հայերի դժբախտ կացությանը:

Տատյանի անվան կոմիտեի նախագահի օգնական կամերգեր Նիկիտինը և եպիսկոպոս Մեսրոպը մոտ օրերս կուղևորվեն Սա-

նահին և Էջմիածին՝ փախստականների վիճակին տեղում ծանոթանալու:

Իգդիրի կողմերի փախստականներին առաջարկել են մնալ տեղերում. նրանց հենց այդտեղ օգնություն կցուցաբերեն:

Հայերը Ֆրանսիայում. Մարսելի հայկական «Հեթուն» թերթի նախաձեռնությամբ տեղի է ունցել հայկական գաղութի խորհրդակցություն. քննարկվել է Օսմանյան կայսրության հայերի ներկա իրավիճակը և փախստականներին օգնելու հարցը: Որոշվել է համակողմանի օգնություն ցուցաբերել Թիֆլիսի գլխավոր կոմիտեին և դրամ հավաքվելու դեպքում այն ևս հանձնել վերոհիշյալ կոմիտեին:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 11. 24 (№ 150)

Օսմանյան կայսրության հայությունը

Օսմանյան կայսրությունում շարունակվում է հայերի կոտորածը: Այս իրողությունը արթնացրեց նույնիսկ գերմանացիների քնած խիղճը: Ավետարանական քարոզիչների ղեկավարները ներումի խնդրանքով ներկայացել են կայսրության կանցլերին: Կանցլերը խոստացել է, որ ուժերի ներածին չափ ամեն ինչ կանի՝ օսմանյան հայության դրությունը թեթևացնելու համար:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 11. 25 (№ 231)

Օսմանյան կայսրության ծրագիրը

Վերջին տեղեկությունների համաձայն՝ Աֆիոնի և Կարահիսարի շրջաններում գերմանացի սպաների ղեկավարությամբ նոր զորք է կազմավորվում: Մամուլի որոշ ներկայացուցիչների համոզմամբ՝ նրանք մտադիր են հարձակվել Եգիպտոսի վրա:

Ինչպես Թուրքիայի, այնպես էլ Պարսկաստանի զինված քրդերը հավաքվում են Ուրմիայի մոտակայքում: Պարզվում է՝

Էնվերի ծրագիրը չափազանց դաժան է: Նա մտադիր է Այսրկովկասի վրա հարձակվել երեք ուղղությամբ՝ Ճորոխով, Սարիղամիշով և Ղարաքիլիսայով:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 11. 27 (№ 153)

Օսմանյան Հայաստանում

Հայերի առաջնորդ Ռուբենի զեկուցումը

Սասունում հայերի ապստամբության ղեկավարներից մեկը՝ Ռուբենը, Պետրոգրադից, որտեղ նա հանդիպել էր մի քանի դիվանագետի Օսմանյան Հայաստանի դրությանը ծանոթացնելու նպատակով, հյուրընկալվել է մոսկվահայերին:

Մոսկվայում հայ ներկայացուցիչների շրջանում Ռուբենը զեկուցել է այն իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունեցել Օսմանյան կայսրության հայկական վիլայեթներում:

Պատերազմն սկսվելուն պես դաշնակցական կուսակցության ներկայացուցիչներն Էրզրումում կոնֆերանս են հրավիրել: Իմանալով համաժողովի մասին՝ երիտթուրքերն անհապաղ պատվիրակություն են ուղարկել: Օսմանցի պատվիրակները հայերին առաջարկել են, որ եթե Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտնի Ռուսաստանի դեմ, հայերը պետք է աջակցեն Կովկասում նախատեսվող ապստամբությանը: Հայերը պետք է քարոզչական խումբ կազմեն և մեկնեն Կովկաս՝ այդ գործին ընթացք տալու համար: Օսմանցի պատվիրակներն իրենց հետ բերել էին նման պրոպագանդիստների, որոնց ղեկավարն էր Ամիր-Շիմխաթը:

Օսմանցիները հավաստիացնում էին, որ ապստամբությունը անհրաժեշտ է, որ շուտով ապստամբելու են թաթարները, վրացիները և այլ լեռնցիներ: Օսմանցիները համաժողովին ներկայացրին Կովկասի ապագա քարտեզը: Քութայիսի և Թբիլիսիի նահանգները, Սուխումի մարզով, Բաթումի մարզը և Տրապիզոնի

վիլայեթի մի մասը վրացիներին էր հատկացված: Դաղստանը, լեռնականների մարզերը, մինչև Կովկաս, Բաքուն և Գյանջայի նահանգի մի մասը՝ թաթարներին (կովկասյան ադրբեջանցիներին՝թարգմ.): Կարսը, Երևանի նահանգը, Գյանջայի վիլայեթի և Էրզրումի վիլայեթի մի մասը, Վանը և Բիթլիսը՝ հայերին: Օսմանցիների ծրագրի համաձայն՝բոլոր այս մասերը ինքնավար միավորներ պետք է լինեն: Հայերը չեն համաձայնել օսմանցիների այս բաժանմանը, որի հետևանքը եղել է հայերի հալածանքները: Ռուբենը շատ պարզ ներկայացրել է հայ-օսմանական հարաբերությունների ամբողջ պատկերը:

- Զոհերը շատ են,- վերջացրեց Ռուբենը… միայն Շուշիի շրջանում սպանվել է մոտ 60 հազար հայ: Նույնն էր նաև այլ վայրերում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 06 (№ 161)

Հայերի կյանքը

Վան է ուղարկվել բժիշկ և սանիտարների մեկ ջոկատ: Նրանք քաղաքին հատկացրել են մոտ 140 մահճակալ: Ջոկատը ղեկավարում է Կովկասի միջքաղաքային կապի լիազոր Աթանեսյանցը: Նրան վստահված է նաև սննդի կետերի բացում տարբեր վայրերում:

Ըստ հայկական թերթերի՝ ներկայումս Վան է վերադարձել 6 հազար փախստական: Առաջին անհրաժեշտության պարագաները չեն բավարարում: Ռուսական բանակի հրամանատարի կարգադրությամբ բացվել են հացաթխման բոլոր կետերը, գործի են դրվել ջրաղացները:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 08 (№ 162)

Հայերի կյանքը

Հայերը Պարսկաստանում

Թեհրանից հայկական թերթին տեղեկացնում են. Համադանի և Սուլթանաբադի հայերի իրավիճակին հաստատապես ոչ ոք տեղյակ չէ: Նրանց մասին հազար ու մի լուր է պտտվում:

Մալաքրիայից տեղեկացնում են, որ այնտեղ ձերբակալել են ռուսահպատակ մի քանի հայ:

Համադանից և նրա մերձակայքից հայերը Ղազվին են փախչում, բայց եթե նրանց ոչնչացնելու գործը իրենց ձեռքը վերցնեն քրդերը, կապաստանեն ամերիկյան միսիոներների մոտ:

Օսմանիայի հայերի կոտորածի մասին գերմանական թերթերում վերջերս շատ հաճախ են հոդվածներ լույս տեսնում:

Էջմիածնում ներկայումս փորձում են ճշգրտել գաղթականների (բառացի՝ սովի մատնված) մոտավոր թիվն ու կացությունը:

Երևանում փախստականների միջև վարակիչ տարբեր հիվանդություններ են տարածվում:

Վերջին ժամանակներս Պարսկաստանից ստացվող լուրերը հայ հասարակությանը շատ են անհանգստացնում, քանզի մտավախություն կա, որ այնտեղ նույնպես հայերի ջարդ տեղի կունենա:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 10 (№ 164)

Հայերի կյանքը

«Մշակ» թերթին Վանից գրում են. «Ներկայումս Վան քաղաքում 1600 փախստական կա, իսկ նրա մերձակայքում՝ 4.500: Նրանց 10% տղամարդիկ են: Փախստականները հետզհետե վերադառնում են իրենց հայրենական կալվածքները:

Պրոֆ. Ն. Մառի աջակցությամբ Վան է գործուղվել մեկ մասնագետ, որին հանձնարարված է պահպանել հին Հայաստանի պատմամշակութային մնացորդները: Նպատակը՝ հավաքել պատմական, եկեղեցական ու այլ բնույթի ձեռագրեր և ուղարկել Էջմիածին՝ ի պահ, ինչին իր համաձայնությունն է տվել Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Ամերկահայերը պատերազմի հետևանքով տուժած և Օսմանյան կայսրության բնակավայրերից զրկված իրենց հայրենակիցների համար գումարներ են հանգանակում:

Ավստրիայի հայերը օսմանահայերի իրավիճակի մասին խնդրանքով դիմել են կայսր Ֆրանց Իոսիֆին:

Բուլղարիայում հայերին ձերբակալում են և հանձնում Օսմանյան Թուրքիային»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 11 (№ 165)

Հայերի կյանքը

Վան է եկել հայկական կամավորական ջոկատը՝ Իշխանի գլխավորությամբ:

Սովահար-փախստական հայերի համար Հայոց օգնության կոմիտեն ալյուր է ուղարկում:

Ամերիկան և հայերը

Փոքր Ասիայում հայության ջարդերի պատճառով ամերիկյան առաքելության լիազոր Մորգենթաուն հատուկ հանձնաժողով է ուղարկել Փոքր Ասիա, որը կարճ ժամանակամիջոցում պետք է հրապարակի իր գործունեության և ձեռնարկած միջոցների բովանդակությունը:

Հայերի ջարդը

«Չորլդ» թերթը հոդվածներ է տպագրել Անատոլիայի հայերի կոտորածի մասին։ Այս վիլայեթից տեղահանված 600 մարդուց միայն 200-ն է հանգրվան հասել, իսկ 400-ին ճանապարհին ոչնչացրել են։

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 12 (№ 166)

Հայերի կյանքը

Օգնություն փախստական հայերին

Էջմիածին է եկել 25 փախստական հայ երիտասարդ, ըստ նրանց պատմածի՝ մոտ 700 հոգի են եղել. Շուշիում կոտորածը սկսվելու ժամանակ նրանք դիմադրել են օսմանյան բանակին։ Փրկվել են 25 հոգի, մյուսները բոլորը կոտորվել են։

Մեծ Բրիտանիայի գաղութը 200 ռուբ. է փոխանցել՝ Բաքվում ապաստանած հայերին օգնելու համար։

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 13 (№ 167)

Հայոց ոգին

«Գոլոս» (№ 37) թերթը զետեղել է մի հարցազրույց հայ հրապարակախոս Կ. Ս. Քորողլունցի հետ։ Նա ասել է. «Ներկա համաշխարհային պատերազմի փոթորիկը բոլորիս հուշում է փայլուն ապագայի մասին, որն այլևս հեռու չէ։ Աշխարհին նոր ժամանակներ են սպասում, նման ժամանակներ են սպասվում նաև հայոց կյանքում։ Կային պահեր, երբ մենք՝ հայերս, կարծում էինք, թե մեր պատրանքներն արդեն իրականություն են դառնում, բայց հիմա համոզվում ենք, որ այդ պատրանքներն օրեցօր խորտակվում են, և հայ ժողովուրդը կանգնած է անդունդի եզրին, քանզի նրա մեծագույն մասը զոհ գնաց բարբարոս թշնամու

յաթաղանին. բազում ծաղկուն քաղաքներ հողին հավասարվեցին, այդուհանդերձ մենք հույսով ենք նայում մեր ապագային…»

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 13 (№ 167)

Հայերի կյանքը

Բաքվի «Հայոց մշակութային միությունը» որոշել է բազմակողմ օգնություն ցուցաբերել Օսմանիայից տեղահանված գրական գործիչներին, նրանց օգնելու նպատակով կազմակերպել երեկոներ, դրամահավաք, տրամադրել հայերեն գրքեր, թերթեր ու ամսագրեր:

Երևանի հայ հոգևոր ճեմարանում հիմնադրվեց «Կրթություն սիրողների խմբակ», որն իր գործունեության նպատակն է համարում տեղի հայության ինքնաճանաչողությանը նպաստելը և երիտասարդ սերնդի ազգային ոգով դաստիարակությունը:

«Հորիզոնին» տեղեկացնում են՝ Սոփչախլարում (Գյումրու նահանգ) փախստականների դրությունը չափազանց ծանր է և անտանելի: Սովի հետ մեկտեղ, փախստականների մեջ տարածվել են վարակիչ հիվանդություններ, առայժմ բժշկական օգնություն բացարձակապես չկա:

Օսմանյան իշխանությունը շարունակում է բանտարկել հայերին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 1 (№ 168)

Հայերի կյանքը

Վանի մերձակա գյուղերում հայերը ոչ մի վանք չունեն, նրանց աղոթատեղիները Ջևդեթ փաշայի զորամասերը հողին են հավասարեցրել:

Պարսկաստանում բնակվող հայերի մասին սարսափելի լուրեր են ստացվում:

Օսմանյան իշխանությունը քրդերի նորանոր ջոկատներ է կազմում հայերին ճնշելու նպատակով:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12.16 (№ 169)

Հայերի կյանքը

Հայկական հարցն Անգլիայի խորհրդարանում

Անգլիայի խորհրդարանի նիստում պատգամավոր Ա. Վիլյամսը հայտարարել է. «Անհապաղ պետք է օգնենք այն փախստական հայերին, ովքեր փրկվել են օսմանյան յաթաղանից»:

Իռլանդիայի ազգային կուսակցության առաջնորդ Օ.Կոննորը ևս աջակից եղավ Վիլյամսին և կառավարությունից դրամական օգնություն խնդրեց՝ թալանված հայ փախստականների համար: Անգլիան հայերին խոստանում է, որ կրկին կառաջարկի Միջագետքում գործող զորքերի հրամանատար՝ գեներալ Նիքսոնին, որ նա հնարավոր ամեն կարգի օգնություն ցուցաբերի այդ մարզում վերաբնակեցված հայությանը: Հայերը մեծ հույսեր են կապում նաև ամերիկյան և շվեյցարական միսիոներների հետ, որ նրանք Ստամբուլի նավահանգստում կբողոքեն հայերին կոտորելու և թալանելու դեմ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 17 (№ 170)

Հայերի կյանքը

Լորդ Բրայսը անգլիական թերթերում հոդված է հրապարակել Կոնիայում և Հալեպում վերաբնակեցված հայերի մասին:

Զմյուռնիայի առևտրական հայերի ունեցվածքն առգրավված է:

Փախստականների վիճակը հետզհետե բարելավվում է: Տարբեր վայրերից առատորեն նվիրատվություններ են ստացվում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 18 (№ 171)

Հայերի կյանքը

«Եղբայրական օգնություն» կոմիտեն Նոր Բայազետում փախստական որբերի համար ապաստարան է բացել:

Ներքին Ախթում փախստականների վիճակն ավելի անմխիթար է, այստեղ նրանք սննդի խիստ կարիք ունեն:

Ջուլֆայում հայերը նվիրատվություն են կազմակերպել, որով Բաշքալուի կոտորածից փրկված 27 հայերին ուղարկել են դեպի Նախիջևան:

Կովկասում և Պարսկաստանում դարձյալ սկսվել է փախստականների տեղաշարժ, որի պատճառը, թերևս, Պարսկաստանում տեղի ունեցող իրադարձությունները պետք է լինեն:

Երևանում հանգրվանած փախստականների վիճակը հետզհետե բարելավվում է:

Հայկական թերթերը այժմ հաճախ են գրում համագործակցելու և միասին աշխատելու մասին:

Ստամբուլում շարունակ ձերբակալում են պետական դավաճանության մեջ կասկածվող անձանց:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 12. 18 (№ 459)

Ըստ «Հորիզոն»-ի՝ «Ման Չուարդիան»-ում տպագրվել է առաջնորդող, որը վերաբերում է Օսմանյան կայսրությունում հայերի իրավիճակին:

Հոդվածում բերված են փաստեր՝ Օսմանյան կայսրությունում հայերին բնաջնջելու մասին: Թերթը հայտնում է, որ օսման-

ցիներին աջակցում են գերմանացիները, ու թեև անմիջական մասնակցություն չեն ունենում, բայց նրանց մեղքը շատ մեծ է:

«Գերմանացիներին պետք է նախատել, որ Օսմանյան կայսրությանը թույլ տվեցին բնաջնջել հնագույն մշակույթ ունեցող ժողովրդին, որին օսմանցիներն ատում են իր հավատը սիրելու, բարեկրթության և տաղանդի համար:

…Ոմանք կարող են պատասխանել, թե Գերմանիան Օսմանյան կայսրության վրա մեծ ազդեցություն չունի: Գուցե դա անհիմն չէ, բայց արդյո՞ք Գերմանիան երբևիցե փորձել է կանխել այդ ջարդ-կոտորածները: Ո՛չ: Գերմանացիները չափազանց մեծ նշանակություն են տալիս Օսմանյան կայսրության օգնությանը, այդ է պատճառը, որ նրանք ավելի գերադասում են հանդուրժել հայ ժողովրդի բնաջնջմանը, քան թե որևէ տհաճություն պատճառել իրենց դաշնակից օսմանցիներին: Այս առումով, հուսալի ոչինչ չկա, միակ ելքն այժմ այն է, որ արտերկրում տարածենք ջարդերի ու կոտորածների մասին փաստերը և օգնության ձեռք մեկնենք հայ ժողովրդի մնացած հատվածին, որպեսզի գոնե նրանք զերծ մնան ոչնչացումից»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1915. 12. 19 (№ 460)

Հիվանդանոցներ

Կովկասի հայերի կենտրոնական կոմիտեն դիմել է «Քաղաքների միության Կովկասի կոմիտեի» լիազորին և խնդրել, որ Կարսի մարզում մի քանի տեղ փախստականների համար հիվանդանոցներ և բուժկետեր բացվեն: Կոմիտեն որոշում է կայացրել՝ Շորագյալի, Սողանլուղի, Կարսի, Ղագիզմանի, Խորասանի, Նախիջևանի և Արդահանի շրջանների համար բուժկետեր հիմնել Բայրախտարում, Բայբուրդում, Կարսում, Ղագիզմանում, Արմութլուում, Դեգորում և Արդահանում: Եթե այս շրջաններում բժշկական կետեր բացելու հնարավորություն չլինի, ապա գոնե

բուժակներ գործուղվեն: Կոմիտեն նշված վայրերում խիստ անհրաժեշտ է համարում բժշկական օգնությունը, որպեսզի դրանով իսկ կանխվի վարակիչ հիվանդությունների առաջացումն ու տարածումը:

Օգնություն փախստականներին

Ըստ «Հորիզոն»-ի՝ Թիֆլիս է ժամանել Թեոդոսիայի հայ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչ Է. Թոփչյանը: Նա փախստականների համար բավականաչափ տաք հագուստ, ներքնաշորեր, իսկ հայ կամավորների համար երկու փութ ծխախոտ է բերել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 20 (№ 173)

Հայերի կյանքը

Հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում

Բալկանցի թղթակիցը «Թայմս» լրագրին տեղեկացնում է.

«Օսմանցիները շարունակում են Ադրիանուպոլսի վիլայեթի հայերի կոտորածը: Հոկտեմբեր ամսին օսմանական իշխանությունը ձերբակալել է Բուլղարիայի հպատակություն ընդունած 45 հայ: Կալանավորված հայերին նախ տարել են Ստամբուլ, այնուհետև ուղարկել են Փոքր Ասիա. նրանցից 10-ը փրկվել են փախուստով, իսկ 35-ը սպանվել են:

Ադրիանուպոլսում բանտարկել են երկու սեռի ներկայացուցիչ 1.600 հայ, որոնց նույնպես տեղափոխել են Փոքր Ասիա, ճանապարհին կալանավորների երկու նավ խորտակվել է, և նրանց մեծ մասը ջրահեղձ է եղել:

Անգլիական թերթի տեղեկությամբ՝ մինչ օրս Օսմանյան կայսրությունում կոտորվել և հավատափոխ է եղել 835 հազար հայ:

Օրերս Թիֆլիս են ժամանել միստր Վիլսոնը և միստր Գալլը: Նրանք Ամերիկայի փախստական հայերի կոմիտեի լիազորներ են: Հայկական թերթերը նշված անձանց մասին մեծ հիացմունքով և երախտագիտությամբ են արտահայտվում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 22 (№ 174)

Հայերի կյանքը

Հայկական մամուլը այժմ շատ է գրում Թբիլիսիի քաղաքային ընտրությունների մասին:

Պարսկական սահմաններից ելած հայ նոր գաղթականներ են հայտնվել:

Փախստական և այլ տուժած-թալանված հայերի կացության մասին հայերը նախատեսում են Պետրոգրադում մոտ օրերս միացյալ համագումար հրավիրել:

Ինչպես տեղեկացնում են հայկական թերթերը, Կովկասի սահմաններում ապաստանել է 200 հազար փախստական հայ:

Օսմանյան իշխանությունը Ստամբուլում ձերբակալել է ականավոր բոլոր հայերին:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1915. 12. 23 (№ 463)

Այս օրերին նիստ էր հրավիրել հայկական գյուղատնտեսության ընկերության վարչությունը, թե ինչպես պետք է օգնել հայ գաղթականներին, որոնք գտնվում են Բասենի դաշտավայրի 31 գյուղերում: Նրանց թիվը 6325 է: Այժմ նրանց խիստ անհրաժեշտ է վառելափայտ, սերմացու և բժշկական օգնություն:

Թիֆլիս է վերադարձել պետական դումայի անդամ Մ. Պապաջանովը: Նա լուսաբանում էր տարհանված հայերի վիճակը: Հայոց կենտրոնական կոմիտեն դեկտեմբերի 21-ին որոշեց.

1) Թիֆլիսի հայ գաղթականներին օգնություն ցուցաբերել մինչև հունվարի մեկը և պարտավորեցնել, որ նշված ժամկետում հեռանան Թիֆլիսից,

2) Թիֆլիսում, Մեծ Ղարաքիլիսայում և Դիլիջանում որբերի համար հիմնել նոր կացարաններ,

3) փախստականների համար ձեռք բերել 5 հազար զույգ գուլպա,

4) Բաթում ուղարկել 1.500 ռուբլի՝ տեղի փախստականների համար,

5) Տաբախմելայում վարձակալել Ղազարովի տունը, տարեկան 1.800 ռուբլիով և այնտեղ բացել կացարան որբերի համար,

6) Մեծ Ղարաքիլիսա ուղարկել 20 փութ բուրդ և 500 ռուբլի՝ փախստականների համար ներքնակներ պատրաստելու և այլ նպատակների համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 24 (№ 176)

Հայերի կյանքը

Թեհրանում հայերը ահ ու սարսափի մեջ են: Հայերի հանդեպ պարսիկները նույնպես վատ են տրամադրված:

Նոր Ջուլֆայում հայերին մեղադրում են դավաճանության մեջ:

Ղումում կալանավորել են հայերի քահանայապետին և մի քանի այլ մարդկանց:

Սուլթանաբադում ոչնչացրել են մի քանի հայ ընտանիք:

Համադանից լուր ստացվեց, որ 40 հայ երիտասարդի բռնի տարել են բանակ:

Այս օրերին Ուրմիա է եկել մի մարդ և հայտարարել, որ Խալիլ բեյը մեծ պատրաստությունների մեջ է, քանի որ մոտ ժամա-

նակներս հայերի նոր ապստամբություն է սպասվում: Այնտեղ կանոնավոր զորք են ուղարկում:

Սովջուք-Բուլաղի շրջանում քրդերի եռուզեռ է. հայերին փորձություններ են սպասվում:

Գաղթականների հոսքն Էջմիածին չի դադարում:

Ամերիկահայերը դարձյալ գումար են հատկացրել՝ պատերազմից տուժած և փախստական հայերին օգնելու համար:

Պարսկաստանում

«Հորիզոնի» տեղեկացմամբ՝ Նոր Ջուլֆայում (Սպահանից մի քանի վերստ հեռավորության վրա է) հայերը վտանգված են:

Պարսկական ջոկատայինների համար նախ 500 թուման են հատկացրել, երրորդ անգամ պահանջել են 40 հազար: Պահանջել են նաև զենք ու 40 զինյալ հայ՝ իրենց ջոկատներում ներգրավելու համար, Ռուսաստանի դեմ կռվելու նպատակով:

Համադանում սպանել են մեկ հայ, մեկին էլ բանտարկել են:

Ղումում հայ քահանա են ձերբակալել:

Սուլթանաբադում երկու հայի տուն են թալանել:

Մելայրում ռուսահպատակ երկու հայ են ձերբակալել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 25 (№ 177)

Հայերի կյանքը

Պարսկաստանում հայերի վիճակը հետզհետե վտանգավոր է դառնում: Հայկական թերթերը գրեթե ամեն օր լուրեր են ստանում հայերի ձերբակալությունների և նրանց տները թալանելու մասին:

Հայերն սկսել են փախչել Պարսկաստանից:

Վանում գաղթականները ներկայումս համեմատաբար բարվոք վիճակում են, գոնե սնունդ կա այնտեղ, միայն շաքար ու միս չի ճարվում, հացը բավական է:

Բուլղարիայում շարունակում են հալածել հայերին:

Ալեքսանդրիայում հայ վաճառականները սնանկացած եղբայրակիցների համար գումար են հավաքել:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 12. 25 (№ 465)

Երևանից «Հորիզոն» թերթին հայտնում են. «Փախստականների նահանգային կոմիտեն հաստատել է եկող տարվա առաջին եռամսյակի ծախսերը, այն հասնում է 4 միլիոնի: Կբացվեն դպրոցներ 10 հազար երեխայի համար, կբաժանվեն հագուստեղեն, կոշկեղեն և այլ պարագաներ: 105 հազար փախստականներից յուրաքանչյուրին ամսական կտրվի ութ ռուբլի, տուն, ջեռուցում և լուսավորություն:

«Հորիզոնի» տեղեկացմամբ՝ Վանի մերձակայքում քրդերի հետ ընդհարումների ժամանակ սպանվել է 4 հայ ջոկատային, 9-ը՝ վիրավորվել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 29 (№ 178)

Հայերի կյանքը

Հայկական թերթերի տեղեկացմամբ՝ Խալիլ բեյը Մուշի վիլայեթում քրդերին վարժեցնում է՝ ապստամբ հայերին ճնշելու համար:

Ուրմիայում հայերը ահ ու սարսափի մեջ են:

Մինչ պատերազմը, Օսմանյան կայսրությունում բնակվել է երկու միլիոն հայ, որից 200 հազարը՝ Ստամբուլում: Նրանց մեծագույն մասն այսօր արտաքսվել է այդ քաղաքից: Աբդուլ Համիդի ժամանակ (1895 թ.) ոչնչացվել է 100 հազար հայ, իսկ հիմա՝ երեք անգամ ավելի:

Օսմանյան կայսրությունում հայերի թիվը աժմ չափազանց նվազել է:

Հայերի մեծ մասը փախել է Կովկաս, փոքր մասը՝ Բուլղարիա և Ռումինիա, ինչպես նաև ապաստան են գտել Ասիայի այն նավահանգիստներում, որոնք Ռուսաստանի հովանավորության տակ են: Հայերը բոլոր վայրերում անհապաղ խիստ օգնության կարիք ունեն: Հուսով ենք՝ հայ հասարակությունը հաշվի կառնի դա:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1915. 12. 29 (№ 178)

Արտերկիր

Անգլիան և հայերի ինքնավարությունը

Անգլիայում լորդ Բրայսը խոսք է բացել հայերի ինքնավարության մասին, որի բովանդակությունը հետևյալն է. «Հայերի ինքնավարության հարցը, որը օսմանցիները օրակարգից հանեցին ջարդեր կազմակերպելով, սարսափելի վերջ է ունենալու: Ամբողջ Հայաստանը արյան մեջ է, ոչնչացվել են բնակիչներից շատերը:

Որոշ հայեր թաքնվում են սարերում, բայց, ով գիտի՝ կարո՞ղ են հաղթահարել և դեռ ինչքան կդիմանան քաղցին, ծարավին, ցրտին: Այս ամենը առաջին հերթին թելադրում է մեզ՝ դաշնակիցներիս, որ Օսմանյան կայսրությունը ժամանակին վերացվի, և օսմանցիներն արտաքսվեն այնտեղ, որտեղից եկել են: Սա նաև կարագացնի Փոքր Ասիան մասնատելու հարցը:

Հիմա կարող ենք հաշվի առնել հնարավոր տարաձայնությունները տվյալ հարցի վերաբերյալ, բայց կարող ենք ամեն ինչ կազմակերպել այնպես, որ անցանկալի դեպքեր տեղի չունենան:

Դաշնակիցների կարևորագույն նպատակը պետք է լինի հայերին ինքավարություն տալը: Սխալվում են նրանք, ովքեր

պնդում են, թե իբր վերջին իրադարձություններն արմատախիլ արեցին հայերի հույժ ազգային ինքնագիտակցությունը:

Թալեաթ բեյը, թե այս կոտորածը հայերին կստիպի 50 տարի մոռանալ ազգային ձգտումները, նպատակին չի հասնի:

Մի՞թե նույն կերպ չվարվեցին Հունաստանի հետ, բայց Հունաստանը ազատագրվեց և ոտքի կանգնեց:

Մոտավորապես 17 դար հայերը պահպանել են իրենց անկախությունը: Հետո ճիշտ է, ցրվել են այս ու այն կողմ՝ Լեհաստան, Ամերիկա, Պարսկաստան, Հունաստան, Ռուսաստան և այլուր, բայց միշտ ճանապարհ են հարթել ու պահպանել իրենց ինքնությունը: Նշանակալից է, որ այդ ամենը տեղի է ունեցել ոչ թե շնորհիվ փորձառու քաղաքական ղեկավարների, այլ շնորհիվ այն իրողության, որ այդ ժողովուրդն ունի քաղաքացիական հստակ ինքնազգացողություն: Հայերի ինքնավարությունը Փոքր Ասիայի կենտրոնում խաղաղություն պահպանելու երաշխիք է: Եվրոպայի պարտքն է նպաստել այդ հարցի արագ կարգավորմանը»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1915. 12. 30 (№ 467)

Հայերի կենտրոնական կոմիտեն որոշեց. 1) Հավլաբարում՝ Ադամովի տանը, բացել որբերի նոր կացարան, 2) Կարսում գտնվող 3 հազար տեղահանվածներին, որոնց կառավարությունը չի աջակցել, ուղարկել 3 հազար ռուբլի, 3) հայ ուսուցիչների կոմիտեին փոխանցել 500 ռուբլի՝ փախստական աշակերտներին օգնելու համար, 4) 1.500 ռուբլի հատկացնել փախստականների համար Դիլիջանում բացված արհեստանոցին, 5) Թիֆլիսի կոմիտեին հատկացնել 500 ռուբլի՝ գաղթականների տոնական արարողությունների և 7 հազար ռուբլի՝ ներքնակների բուրդ գնելու համար, 6) Թիֆլիսի փախստականներին օգնություն ցուցաբերել մինչև հունվարի 10:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1915. 12. 30 (№ 467)

(Նյութը վնասված է)

Հայերի ինքնավարությունը

Ռուսական թերթերում տպագրվել է լորդերի պալատում Բրայսի՝ Հայկական հարցի շուրջ ունեցած ելույթը. «Հայկական հարցի լուծում,- ասել է լորդ Բրայսը,- այն եղանակով, որ հորինել է Օսմանյան կառավարությունը՝ ոչնչացնել բոլոր հայերին, իրականացվում է առանձնահատուկ հետևողականությամբ և սոսկալի դաժանությամբ: Օսմանյան Հայաստանը լողում է արյան հորձանուտում, տեղի բնակչությունը գրեթե լիովին ոչնչացված է: Որոշ հայեր թաքնվել են սարերում, բայց կասկածելի է, թե նրանց մեջ ողջ մնացողներ կլինեն:

Այս ամենը կրկնակի պարտավորություն է դնում դաշնակից պետությունների վրա: Դաշնակիցները պետք է ոչնչացնեն Օսմանյան կայսրությունը որպես պետություն և նրանց քշեն այնտեղ, որտեղից եկել են: Սա մեր՝ դաշնակիցներիս առաջին պարտականությունն է:

Այժմյան պատերազմի գլխավոր նպատակն է փոքր ազգերի կարգավորումը: Դաշնակից պետությունների երկրորդ նպատակը պիտի լինի հայ ժողովրդի պահանջի բավարարումը: Նրանց պետք է ինքնավարություն տրվի: Սխալված կլինի նա, ով մտածում է, թե վերջին ժամանակների դժբախտությունները հայերի մեջ վերացրին համառ ազգայնականությունը: Եթե դաշնակից պետությունները նման սխալ թույլ տան, ապա Փոքր Ասիայում տեղի կունենա այն, ինչ տեղի ունեցավ Բալկաններում:

Անգլիայում բնակվողները լավ չեն պատկերացնում, թե հայերը որքան են սիրում իրենց հայրենիքը: Կարգը վերականգնելուն պես հայերը բոլոր երկրներից կվերադառնան Ինքնավար Հայաստան:

Ոմանք ասում են, թե հայերը քաղաքական տաղանդ և ձիրք չունեն, այդ պատճառով անիմաստ է նրանց ինքնավարություն տալ: Պատմական փաստերն այլ բան են վկայում»:

Լորդ Բրայսը նշում է այն փաստերը, որոնց մեջ, իր կարծիքով, հստակ զգացվում են հայերի քաղաքական ձիրքերը, և շարունակում է. «Բոլոր այս փաստերը պարզորոշ վկայում են հայերի պահանջի իրավունքի մասին: Քրդերի հարցն ինքնին կլուծվի, նախ, որ օսմանյան պետությունն այլևս նրանց թիկունքը չի ամրացնի և երկրորդ՝ քրդերին կզինաթափեն:

Անհրաժեշտ է նաև ..րկու (երկու) հարցի լուծում՝ նշվ…ծ (նշված) գավառում ազգային մ…նությունը (մեծամասնությունը) ով է կազմելու և քան… … և լինի ինքնա… տում ապագա …. …. նության մեջ: Թեև… ա.. գոյություն չունի…. Համառ…. …հիշյալ կազմ…., թեև …մոտ…., սակայն …դարձյալ ավելին են, քան …և քրդեր առանձին-առանձին …հայերը մշակույթով …(ավելի) բարձր են կանգնած»:

…. Լորդ Բրայսի այս …տությունը (արտահայտությունը), որ ա..ժեշտ (անհրաժեշտ է) Ինքնավար Հայաստանին տալ ելք դեպի Միջերկրական ծով:

1 9 1 6

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01.03 (№ 2)

Տեղահանված որբեր

Ստացված տեղեկությունների համաձայն՝ Վանից գալիս է 70 որբ երեխա, որոնց պետք է տեղավորել մայրաքաղաքում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 03 (№ 2)

Հայերի կյանքը

Անցյալ տարի հայերին մեծ դժբախտություն պատահեց: Օսմանյան կայսրությունում բնակվող հայերից ավելի քան ութ հարյուր հազարը բնաջնջվեց, իսկ մեծագույն մասը ապաստանեց Կովկասի սահմաններում: Հայությունը կոտորածի դեմ ստիպեց խոսել Անգլիային, Ամերիկային, նաև բազմաթիվ այլ փոքր ու մեծ տերությունների: Անգլիայում նույնիսկ դրամահավաք կազմակերպեցին փախստականներին օգնելու նպատակով:

Ընդհանրապես, փախստական հայերի վիճակն այլևս անմխիթար չէ, նրանց օգտին ամեն կողմից գալիս են նվիրատվություններ:

Ներկայումս հայ հասարակության ուշադրությունը բևեռված է Պարսկաստանի վրա, որտեղ հայ բնակչությանը վտանգ է սպառնում, և որտեղից հայերն արդեն սկսել են փախչել: Թուրքիայի բոլոր վիլայեթներում հայերի ապստամբությունը զուր անցավ և առայժմ ամենուր պարտություն են կրում:

Բաքվի վրացի բանվորները հայ փախստականների օգտին նվիրաբերեցին 27 ռուբ.:

Փախստականների ընդհանուր թիվը

Ներկայումս Կովկասի սահմաններում ապաստանել է մոտ երեք հարյուր հազար հայ փախստական, Պարսկաստանում նրանց թիվը քսան հազար է:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 03 (№ 2)

Ուրմիայից «Հորիզոն»-ին հայտնում են, որ վերջին շաբաթվա ընթացքում 7 ասորի են սպանել: Դեպքը այլևայլ հանգամանքների հետ հուշում է, որ սպանությունները կատարում է նույն կազմակերպությունը: Պետք է ենթադրել, որ այդ կազմակերպությունը պատկանում է պարսիկ ահաբեկիչներին: Նրանց նպատակն է՝ հարյուրապատիկը հատուցել քրիստոնյաներին այն համակրանքի համար, որ նրանք ցուցաբերել են Ռուսաստանի նկատմամբ: Մարդասպաններից ոչ մեկը չի ձերբակալվել:

Հայերի գյուղատնտեսական ընկերության նախագահ Սահակովը դեկտեմբերի 31-ին Կովկասում սննդամթերքի պաշարների կարգավորման ղեկավար Բ. Շաշկովսկուն խնդրել է, որպեսզի նա արագացնի հայկական սովյալ գյուղերի բնակիչների համար ալյուր ստանալու «նարյադների» վավերացումը:

Վերջին տեղեկությունների համաձայն, որ հայտնում է միջքաղաքային կապի լիազոր Ա. Աթանեսյանցը, այս պահին Կովկասում կա ընդամենը 164 հազար փախստական: Նրանցից 100.716- ը բնակվում է Երևանի նահանգում, 11.840-ը՝ Գյանջայի նահանգում, 7.660-ը՝ Թիֆլիսի նահանգում, բուն Թիֆլիսում՝ 1.360 հոգի: Կարսի մարզում՝ 11 հազար, Բաքվի նահանգում՝ 900 հոգի, Ալաշկերտի շրջակայքում՝ 12 հազար:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 01.05 (№ 3)

Մեր հարևանները
Հայերի մեջ

Քաղաքային կապի լիազոր պ. Աթանեսյանցի վերջին տեղեկությունների համաձայն՝ ներկայումս Կովկասում 164 հազար փախստական կա, որոնցից 100.716 մարդ գտնվում է Երևանի նահանգում, 11.840-ը՝ Գյանջայի նահանգում, 7.660-ը՝ Թիֆլիսի նահանգում, 1360-ը՝ բուն Թիֆլիսում, 11 հազարը՝ Կարսի նահանգում, 900-ը՝ Բաքվում, 12 հազարը՝ Ալաշկերտում և 20 հազարը՝ Պարսկաստանում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 05 (№ 3)

Հայերի կյանքը

Վանից 70 որբ հայ փախստական երեխա են ուղարկել:
Մուշում բանտարկել են մի քանի հայ նշանավոր անձանց:
Նոդանում երեք հայ են սպանել:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 01.05 (№ 471)

Մեր հարևանները: Հայերի մեջ

«Հորիզոն»-ին Ջաբրայիլից գրում են. «Այս օրերին Ջաբրայիլում մեծ իրարանցում է եղել. լուրեր տարածվեցին, թե Բեուք խանի գյուղից 7-8 հազար թուրք գալիս է դեպի ռուսական սահման: Հետո իրավիճակը պարզվեց, և բնակիչները հանգստացան: Մինչդեռ իրականում հետևյալն է տեղի ունեցել՝ ղարադաղցի խաները արդեն երեք ամիս է (Ղարադաղը մեզ սահմանակից Պարսկաստանի գավառ է) միմյանց դեմ կռվում են և պատժում անմեղ բնակչությանը: Ոխերիմ թշնամիներ են Արշադ խանն ու Բեուք խանը: Վերջերս Արշադ խանը հաղթել էր Բեուք խանին, և

նա թաքնվել է սարերում: Արշադը վրեժ լուծելու համար ավերել է Բեուքի գյուղերը, ի դեպ, քանդել է նաև Բեուքի տունը: Բնակիչ-ները Արշադի վրեժխնդրությունից խուսափելու համար գաղթել են Արաքս գետի ափերը և կղզիները: Նրանք գտնվում են անտա-նելի վիճակում: Օրերս լուր ստացվեց, որ Բեուք խանը հավաքել է 800 հեծյալ և հարձակվել Արշադի վրա: Դա սարսափ է առաջ բերել: Բեուք խանը հայտնի ռեակցիոներ Ռահիմ խանի որդին է: Բեուք խանն այն հզոր խաներից է, ով միաժամանակ թուրքական բանակին դիմավորելու խոստում է տվել, ռուսական կառավա-րությանը՝ օգնելու: Նա Ջաբրայիլ գավառում հօգուտ թուրքերի քարոզչություն էր անում:

Թավրիզից «Մշակին» գրում են. «Թուրքերը կրկին հայտնվել են Սովջուք-Բուլաղ գյուղում: Այդ շրջանի թուրքերը միավորվել են: Կանոնավոր բանակը հասնում է 5 հազարի, իսկ ոչ կանոնա-վորը՝ 6 հազարի: Նրանց ղեկավարում են 12 գերմանացի սպա-ներ, ունեն 8 թնդանոթ, դրանից բացի, Պարսկաստանում բնակ-վում է 30 հազար քուրդ, որոնք պատրաստ են արշավելու դեպի Թավրիզ, բայց երկաթուղին անց է կացվել մինչև Շարափխա, և Ուրմիա լճում ռուսներն ունեն 4 նավ, որով կարող են ցանկացած պահի զորք տեղափոխել Սուդուխ, բացի այդ, Մարագում, Ջուլֆայում, Մարադանում և Սոֆիանում ռուսական զորքեր են կանգնած, ուստի կասկած չկա, որ եթե քրդերը և թուրքերը ար-շավեն դեպի Թավրիզ, կպարտվեն:

Պարսիկ վաճառականները, որոնք Սովջուք-Բուլաղից Թավ-րիզ են եկել, մեզ հայտնեցին, որ թուրքերը սպառնում են, թե Թավրիզ մտնելուն պես հայերին ոչնչացնելու են…

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. ? (№ 4)

Փախստական հայեր

Ինչպես բժիշկ Օհանջանովն է տեղեկացնում, Էջմիածնում այս պահին 27 հազար փախստական հայ է բնակվում: Սակայն նրանց տունը անտառն ու դաշտն է, իսկ անկողինը՝ սառն ու խոնավ հողը: Այդ պատճառով հիվանդություն է տարածվել նրանց մեջ: Օհանջանովը վկայում է, որ օրական մոտ 300 մարդ է մեռնում, առավելապես՝ կանայք և երեխաներ: Խոստացած հիվանդանոցներն ու այլ օգնություն դեռ ոչ մի տեղից չի երևում: Էջմիածնից 1.400 հոգի ուղարկել են Դոլիար, բայց հազար ու մի զրկանքի պատճառով նրանք ճանապարհին ոչնչանում են :

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. ? (№ 4)

Հայերի կյանքը

Բիթլիսում հայ երկու քահանա են ձերբակալել և բանտ ուղարկել:

Հայկական «Վան-Տոսպ»-ը մեծ ափսոսանքով նշում է հայ ժողովրդի գլխին եկած դժբախտությունների մասին և մեղադրում հայ գործիչներին, որ նրանք հայ ժողովրդին խորհուրդներ չեն տալիս իրենց գործողություններում:

Ամերիկայից Մոսկվա է ժամանել ամերիկացի մի պատգամավոր: Նա հանգանակած գումար է բերել հայ փախստականների համար:

Փախստական հայ որբերի մեծ մասին տեղավորել են Կրծանիսում բացված պատսպարանում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. ? (№ 5)

Հայերի կյանքը

Վանում այս պահին 1700 բնակիչ կա: Առհասարակ, փախստականները պարենի առումով այստեղ բարվոք վիճակում են:

Վանում աշխատանքը շարունակում է Տեր-Ավետիսյանը: Ն. Մառը նրան ուղարկել է հնագիտական մնացորդները պահպանելու համար:

Փախստականների և պատերազմից տուժած հայերի օգնության Մոսկվայի կոմիտեն ամերիկացի պատգամավորից արդեն ստացել է Ամերիկայում հավաքած գումարը:

Ստամբուլում փակեցին հայկական բոլոր հրատարակչությունները:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 09 (№ 6)

Հայության դժվար կացությունը

Ինչպես տեղեկացնում են «Մշակ»-ին, Վանում ներկայումս կա 1317 մարդ, իսկ գավառում՝ 5.500: Նրանք զուրկ են անգամ մի կտոր հացից:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 09 (№ 6)

Հայերի կյանքը

«Ран. утро»-ի ամանորյա համարում տեղադրված է ոմն Գ. Արշունյանի կարճառոտ հոդվածը՝ հետևյալ վերնագրով. «Արյունահեղ պատերազմը առաջ բերեց բազում սարսափներ, բայց բոլոր սարսափների մեջ առանձնահատուկ տպավորություն է թող-

նում մի քանի միլիոնանոց ժողովրդի իսպառ ոչնչացումն ու անհետացումը Օսմանյան կայսրությունում»:

Այդ ժողովուրդը հայերն են:

«Ի՞նչ կարող եմ ցանկանալ հայերին 1916 թվականին: Ես ցանկանում եմ,- գրում է Գ. Արշունյանը,- որ Օսմանյան կայսրությունն իսպառ վերացվի, և օսմանցիները վտարվեն Եվրոպայի սահմաններից. նրանց տեղն այստեղ չէ»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 01. 09 (№ 474)

Օսմանյան Հայաստանը և Կովկասի հայերը

Ռուս-թուրքական պատերազմը հայտարարվելուց հետո Օսմանյան կայսրությունում մի խումբ հայ հասարակական գործիչների մեջ միտք հղացավ ստեղծել հայկական կամավորական ջոկատներ՝ Օսմանյան կայսրության դեմ ակտիվ գործողությունների դիմելու համար: Նրանք համոզված էին, որ գլխավոր ղեկավարները աջակից կլինեն: Շուտով կամավորական ջոկատներ ստեղծվեցին, և պատերազմը սկսվելուն պես դիմեցին գործուն քայլերի: Օսմանյան կայսրության հայերը ռուս-թուրքական պատերազմի ժամանակ որոշակի դիրքորոշում որդեգրեցին և օգնում էին ռուսներին: Վան քաղաքի հայությունը զինված դիմավորեց թուրքական բանակին՝ թույլ չտալով քաղաք մուտք գործել: Դա հայերի ողբերգության նախադեպի առիթ դարձավ, որը թափվեց նախ Վանի, ապա ամբողջ Օսմանյան կայսրության հայության գլխին: Բայց ռուսական զորքերի առաջխաղացումը Վանի շրջանում հույս էր ներշնչում, որ ապստամբությունը կծավալվի և

Վանի հայությունը կփրկվի արյունահեղությունից:

Օսմանյան կայսրության բանակի հրամանատար Ջևդեթ փաշան Վանի հայերին հրահանգում է հանձնել հազար «դասալիք» զիվորներին: Հայերը բոլոր պահանջները մերժում են: Ջևդեթ

փաշան, ստանալով ռուսական զորքերի մոտենալու լուրը, թողնում է Վանը, և ռուսները մտնում են քաղաք։

Բայց Վանը երկար ժամանակ չմնաց ռուսական զորքերի ձեռքին, նրանք շուտ հեռացան։ Հայերը ծանր դրության մեջ ընկան. կա՛մ ռուսական բանակի հետ պետք է հեռանային Վանի վիլայեթից, կա՛մ մնալով տեղում՝ վտանգեին սեփական գոյությունը, որովհետև թուրքական ֆանատիզմը անպատիժ չէր թողնի նրանց իրենց վերաբերմունքի համար։ Եվ, իսկապես, ովքեր չհասցրին ռուսական բանակի հետ հեռանալ, զոհ գնացին թուրքական դաժանություններին։ Օսմանյան կայսրությունում իրականացված հայերի ջարդը բավականին հայտնի է, ուստի հիմա դրան չենք անդրադառնա։ Մեր նպատակը դա չէ։ Մենք կփորձենք անդրադառնալ հայերի հալածանքների ու ջարդերի պատճառների պարզաբանմանը և ընթերցողին կներկայացնենք այդ հարցի վերաբերյալ հայերի տարբեր կազմակերպությունների տեսակետները։

Մի մասը գտնում է, որ ջարդի պատճառը ուղղակի հետևանքն է կովկասահայերի կամավորական ջոկատների ստեղծման։ Եթե դա տեղի չունենար, հնարավոր է, որ այդ սարսափելի արյունահեղության ականատեսը չդառնայինք։ Սրան հակառակ՝ հայ հասարակության մեկ այլ խումբ ուրիշ տեսակետ է հայտնում։ Նրանք ասում են, որ հայերի կոտորածը, միևնույնն է, տեղի կունենար՝ անկախ այն բանից, թե ինչ դիրք կբռներ Կովկասի հայությունը։

Այս հարցի շուրջ հայկական մամուլում տարակարծություն կա։ «Հորիզոն»-ում լույս էր տեսնում Բ. Վարանդյանի հոդվածների մի ամբողջ շարք։ Դեռևս պատերազմից առաջ, եվրոպական դիվանագիտության խորհրդով, Հայաստանում նշանակվեցին երկու գեներալ-տեսուչներ, որպեսզի բարենորոգումներ անցկացնեին և վիլայեթները կարգավորեին։ Գեներալ տեսուչներից մեկը արդեն ձեռնամուխ էր եղել իր առաքելության բուն նպատակին,

սակայն Եվրոպայում պատերազմի սկիզբը, բնականաբար, խոչընդոտեց նման գործերի իրականացումը. թուրքերն արձակեցին ինսպեկտորներին։ «Հորիզոնի» կարծիքով՝ եվրոպական դիվանագիտության միջամտությունը Հայկական հարցին և բարենորոգումներ կատարելու փաստը թուրքական կառավարող շրջանակներին բերեցին այն համոզման, որ «Օսմանյան կայսրության անկախ պետականության զարգացմանը խոչընդոտում են քրիստոնյա տարրերը, այդ իսկ պատճառով կայսրությունը իր ապագան պետք է կառուցի իսլամի և թուրք-թաթարական հանրությունն ուժեղացնելով»։ «Հորիզոնը» պատմում է Օսմանյան կայսրության հզորացման մասին, որն ուղղված է ազգային արդյունաբերության, վերածննդի և ինքնագիտակցության ուժեղացմանը։

Դրա հետ մեկտեղ, «Հորիզոն»-ը ծանուցում է, որ Օսմանյան կայսրությունում սկսվեցին հետապնդումներ ու հալածանքներ հայերի և հույների հանդեպ, ինչը հետագայում վերաճեց արյունահեղության։ Հայերին ու հույներին առևտրի ոլորտում բոյկոտ են հայտարարում։

Թերթի կարծիքով՝ այսպիսին էր դրությունը մինչև պատերազմը, երբ երիտթուրքերի և դաշնակցության միջև բանակցություններ սկսվեցին, թե ինչ դեր կկատարի հայությունը սպասվող ռուս-թուրքական պատերազմի ժամանակ։

Բանակցություններն ընթանում էին 1914 թ. ամռանը Էրզրում քաղաքում։ Այդ ժամանակ Էրզրումում տեղի էր ունենում դաշնակցության համագումարը։ Երիտթուրքերի կողմից բանակցություններին մասնակցում էին Նաջի բեյը, Խալիլ բեյը և Շաքիր բեյը։ Դաշնակցության կողմից՝ Վռամյանը, Ակնունին։ Վերջիններս հայտարարեցին, որ պատերազմն սկսվելու դեպքում կուսակցությունը չեզոք կմնա, իսկ պատերազմող պետությունների հայերը սրբորեն կկատարեն հպատակի իրենց պարտականությունները։ Դրա հետ մեկտեղ դաշնակցականները նա-

խազգուշացրեցին երիտթուրքերին՝ հեռու մնալ պատերազմական արկածախնդրությունից, այլապես դա կհանգեցնի կայսրության մասնատման ու կործանման գործընթացին:

Երիտթուրքերի ներկայացուցիչներից մեկը դրան ի պատասխան ասաց, թե նման դիրքորոշումը ռուսամետություն է և վտանգ կայսրությանը՝ հայերի կողմից :

Ըստ Բ. Վարանդյանի՝ երիտասարդ թուրքերը դաշնակցության ներկայացուցիչներից պահանջեցին ապստամբություն հրահրել կովկասահայերի մեջ, որպեսզի աջակցեն Օսմանյան կայսրության ռազմական գործողություններին, նաև ասել են, թե, իբր, համաձայնության գան Կովկասի մյուս ժողովուրդների հետ Ռուսաստանին դավաճանելու հարցում:

Երիտթուրքերը ներկայացրին Կովկասի ապագա քաղաքական քարտեզի պլանը, որի համաձայն՝ բնիկները կունենան անկախ ինքնավար կառավարություն Օսմանյան կայսրությունում պրոտեքտորատի (հովանու) ներքո: Կովկասի լուսավորությունը հայերի, մուսուլմանների և վրացիների միջև նրանց ծրագրով հարաբերակցված էր համաձայն այդ ժողովուրդների ազգագրական բնակավայրերի:

Վրացիներին հատկացված էին Քութայիսի և Թիֆլիսի նահանգները, Բաթումի մարզը և Տրապիզոնի վիլայեթի մի մասը: Ըստ նրանց՝ Դաղստանի լեռնային մարզերը մինչև Կովկասյան լեռնաշղթա, Բաքվի նահանգը և Գյանջայի նահանգի մի մասը մուսուլմանների տարածքներ են: Կարսի մարզը, Երևանի նահանգը, Գյանջայի նահանգի մի մասը, Վանի մարզը, Բիթլիսը և Էրզրումի վիլայեթի մի մասը հատկացնում էին հայերին: Երիտթուրքերն այս բանակցությունների ժամանակ, երբ Օսմանյան կայսրությանն օգնելու հարցում մերժում ստացան դաշնակցականներից, Էրզրումից Վան մեկնեցին, որպեսզի համաձայնության գային Վանի կոմիտեի հետ, այնտեղ նույնպես չհասան իրենց փափագին:

Օսմանյան կայսրության հայերը կտրականապես մերժեցին Կովկասում հայերին ապստամբության հրահրելու և թուրքական կողմին ակտիվորեն աջակցելու պահանջները:

«Հորիզոնը» այս բանակցություններում տեսնում է թուրքերի քաղաքական մաքիավելիզմը և դիվանագիտական հմուտ խաղերը: Նրանց նպատակները պարզ են,- ասում է,- թուրքերը ցանկանում էին ինչ-որ կերպ հայերին հայտարարել որպես դավաճաններ, որպեսզի սկսեն ջարդն ու կոտորածը, և եթե հաջողվեր հայերին իրենց թակարդը գցել և նրանց մեջ Ռուսաստանի նկատմամբ թշնամական տրամադրություն սերմանել, նրանք կհասնեին իրենց նպատակին՝ Ռուսաստանը վերջնականապես երես կթեքեր իրեն դավաճանողներից:

Այս տեսակետն ունի «Հորիզոնը» հայերի կոտորածի պատճառների վերաբերյալ: Հայ ազգի սահմռկեցուցիչ ողբերգությունը, ըստ Վարանդյանի, թուրքերի կողմից ծրագրված է եղել նախօրոք և բոլոր բանակցություններում ու դիվանագիտական խաղերում հստակորեն գծագրվում էր նրանց նենգամտությունը:

Օսմանյան կայսրությունում հայերի հույսերն անչափ վառ էին, որ ռուսական բանակը շատ շուտով գրավելու էր Հայաստանը, և կանխվելու էին մոլեռանդ թուրքերի հարձակումները, սակայն նախախնամությունն այլ վճիռ էր կայացրել...:

Արևմտյան Հայաստանը ավերված է, բնակչությունը գրեթե գլխովին բնաջնջված:

Այժմ նույն հարցի վերաբերյալ ծանոթանանք այլ տեսակետի:

Թիֆլիսում լույս է տեսնում «Վան Տոսպ» թերթը, որը տնօրինում են Օսմանյան կայսրության հայերը: Այս թերթը բոլորովին այլ կերպ է ներկայացնում դեպքերի զարգացումը, և հայ ժողովրդի դժբախտության ամբողջ մեղքը փաթաթում է դաշնակցական կուսակցության վզին:

Պրոֆ. Մինասյանը, ի միջի այլոց, ծանոթացնում է Հայկական հարցի առիթով Եվրոպա պատվիրակություն ուղարկելու պատ-

մությանը, և սրա մեջ է տեսնում դաշնակցական կուսակցության մի տեսակ դուրսպրծուկությունը և բռնատիրությունն այնպիսի հարցում, որն ամբողջովին կապված է Օսմանյան կայսրությունում ողջ հայության քաղաքական ճակատագրի հետ:

Մինասյանն անդրադառնում է նաև այն իրողությանը, թե հայերի կոտորածում ինչ դեր է խաղացել Կովկասի հայերի կամավորական ջոկատների կազմակերպումը, և բացականչում է. «Մասնավոր անձանց հրավերով գործն իր ձեռքն է վերցնում այն մարմինը, որը ինքնակոչ կերպով ինքն իրեն տվեց «Ազգային բյուրո» անունը»:

Խորհրդակցություններ են տեղի ունենում ջոկատներ ստեղծելու վերաբերյալ: Տարածվում են կեղծ լուրեր, թե իբր Հայաստանին խոստացել են ինքնավարություն, շարժման մեջ դրվեցին բոլոր ուժերը այն կուսակցության, որն իր իսկ կամքով Կ. Պոլսում դիվանագիտական բանակցություններ վարեց Հայկական հարցի վերաբերյալ և որն անպատիժ մնաց: Մի քանի հոգի Թիֆլիսում վճռում են կամավորական ջոկատներ ստեղծել: Այս որոշման մեջ թաքնված է ինքնակամության, հանցանքներով լի ինտրիգների և անհամաձայնության ամբողջ պատմությունը: Եթե մի պահ խորհեք, ապա դժվար թե ձեզ չզայրացնի այն խմբի վարմունքը, որը ոչ միայն առանց Ամենայն Հայոց կաթողիկոսի թույլտվության, առանց հայերի պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայից իրավունք ունենալու, առանց թուրքահայերին հարցնելու՝ լուծեց հայ ժողովրդի ճակատագրական խնդիրը:

Այդ մարդիկ, որ հայոց ճակատագրի հետ էին խաղում, չլսեցին, գոնե մեկ անգամ իրենց խորհրդակցությանը չհրավիրեցին ո՛չ Կ.Պոլսի Ազգային ժողովի նախագահ ընկերոջը, ո՛չ էլ պատվիրակության ղեկավարին, ով բազում օգտակար խորհուրդներ կարող էր տալ նրանց, չցանկացան լսել յային և մյուս դաշնակցականների կարծիքը, ովքեր կարող էին հետ պահել նման

քայլերից, ջոկատներ կազմակերպելուց, զգուշացնել, որ դա կհանգեցնի ազգի ոչնչացմանը: Սակայն Օսմանյան կայսրության հեղափոխական հայերի խնդրանքներն ու խորհուրդները չներգործեցին, խելքի չբերին Թիֆլիսում հանգիստ ու հարմար տեղավորված անմիտների այդ փոքր խմբին:

Դիվանագիտություն հարկավոր չէ հասկանալու համար, որ երբ ջոկատների ստեղծումն արդեն կայացած փաստ է, Նուբար փաշայի մի քանի տողը նրանց գործունեության մասին կամ կաթողիկոսի օրհնությունը արդարացուցիչ փաստաթուղթ չեն կարող լինել ջոկատների ղեկավարների համար:

Ժամանակին մենք կպարզաբանենք հայկական ջարդերի պատճառները, և թե ով է նրանց ճակատագրի պատասխանատուն: Ամբողջ վերոհիշյալը նկատի առնելով՝ մենք մեզ իրավունք ենք վերապահում հայտարարելու, որ մեր առջև կանգնած է մի փոքրիկ խումբ, որը համարձակվել է ինքնագլուխ գնալ չափազանց վտանգավոր ավանտյուրայի, և որը անխղճորեն խախտել է Ամենայն Հայոց կաթողիկոսի և հայ ժողովրդի կողմից հաստատված պատվիրակության իրավունքները, որպեսզի իր ձեռքը վերցնի չափազանց պատասխանատու մի գործ, որը ազգի համար հսկայական նշանակություն ուներ»: Այս ծանր մեղադրանքը դեռևս չեն ժխտել «Հայոց Ազգային բյուրոն» և «Հորիզոնի» խմբագրությունը:

Այսպիսին է երկու ուղղությունների տեսակետը այն հարցի վերաբերյալ, թե ինչն է Օսմանյան կայսրությունում հայկական ջարդերի պատճառը:

Հավաստող փաստաթուղթը, թե ինչ զայրույթ առաջ բերեց հայկական կամավորական ջոկատների ստեղծումը թուրքական շրջանակներում, համարվում է Ջևդեթ փաշայի հրաշալի խոսքերը: Նա հայերի հետ բանակցությունների ժամանակ Վանում ասել է. «Ռուսների գնդակները մեր ոտքերին կկպչեն, իսկ հայ կամավորական ջոկատների գնդակները մեր սիրտը կխոցեն»:

Հատկանշական է նաև մի քանի թերթերի տարօրինակ վերաբերմունքը («Մշակ» և «Հովիվ»), որոնք նախ խրախուսում և աջակցում էին ջոկատների կազմակերպման գործին, մինչդեռ հիմա ոտքի են ելել դաշնակցական կուսակցության դեմ և նրա վրա են դնում հայ ժողովրդի դժբախտության պատասխանատվությունը:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 10 (№ 7)

Հայերի կյանքը

Հոգատարություն փախստականներին

Կարսի մարզից վերադարձել է Կովկասի փախստականների կոմիտեի գլխավոր լիազոր գեներալ Թամամշևը:

Այնտեղ փախստական հայերին նոր օգնություն են ցուցաբերել:

Հայ փախստականների մասին Թուրքիայից ավելի ահարկու և սահմռկեցուցիչ լուրեր են գալիս:

Պարսկաստանում սկսվել են հայերի ակնհայտ հալածանքներ:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 01. 12 (№ 476)

Մեր հարևանները

Քաղաքային կապի Կովկասի բաժանմունքին հայտնում են, որ Վանում բնակիչների թիվը ներկա դրությամբ հետևյալն է. տղամարդիկ՝ 2,435, կանայք՝ 1,516, երեխաներ՝ 919, որբեր՝ 201, հիվանդներ՝ 68: Սրանց մեջ ազգությամբ հայ են՝ 2,063-ը: Ընդհանրապես, Վանի մարզում ապրողները տնավորվել են, սակայն եթե նրանց ժամանակին գյուղատնտեսական մթերքով և նյութապես օգնություն չցուցաբերեն, ապա նրանք ստիպված կլինեն հեռանալ դեպի Կովկաս:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1916. 01. 12 (№ 476)

Հայկական մամուլ

Ամանորյա տեսության մեջ հայկական «Հորիզոն» թերթը նշում է, թե ինչ հալածանքներ ու տառապանքներ է կրել հայ ժողովուրդը անցյալ տարի, մեջբերում է օսմանյան կառավարության կողմից հայերի հալածանքների օրինակներ և հոդվածը վերջացնում հետևյալ խոսքերով. «Հույս ունենք, որ կփոխվի Ռուսաստանի հանրության վերաբերմունքը մեր հանդեպ, պետք է փոխվի նաև պաշտոնական Ռուսաստանի վերաբերմունքը: Եթե այս անհրաժեշտ փոփոխությունը տեղի չունենա, հայկական մնացած բնակավայրերը ևս կավերվեն ու կամայացվեն: Այս ամենը ապագայի սահմանված երաշխիքն է: Մինչ այս փոփոխությունը տեղի կունենա դաշնակիցների հոգեվիճակի մեջ, մինչ Եվրոպայի ազնվաբարո դեմքերը կպաշտպանեն Հայկական հարցը, մենք մեր կողմից կշարունակենք միավորվել և պայքարել: Վերջ տանք արցունքին ու սին խորհուրդներին: Հիշենք մեր անմեղ, անթիվ զոհերին և շարունակենք պայքարը վիրավորներս ու կիսակենդան մարդիկս: Հավերժ վառ պահենք մեր սրտում հույսի կրակը: Երգենք, ինչպես երբևէ ամենասարսափելի պահերին լեհերը երգեցին իրենց ազգային երգը, որի ամեն տունը վերջանում է «դեռևս չկործանված Հայաստան» բառերով:

Հայկական «Մշակ» թերթը նույնպես Ամանորյա վերլուծականում նշում է, որ անցյալ տարին ամենասոսկալին էր հայ ժողովրդի համար: Վստահաբար կարելի է ասել, որ մայր Հայաստանն այլևս գոյություն չունի: Երբ միլիոն ու կես բնակչից մեկ միլիոնը բնաջնջված է ու ավեր-թալանի ենթարկված, կարելի է ասել, որ Հայաստանում այլևս հայեր չկան: Հոդվածի վերջում թերթը գրում է. «Ազգային կյանքի այլ կողմերը՝ կրթական, տնտեսական, թատերական, գրական, կաղում էին, քանզի ուշադրությունն այլ գործի վրա էր սևեռված: Մեր ուսումնական հաստա-

տություններից միայն Էջմիածնի հոգևոր ակադեմիան չէր գործում: Թատրոնը բավականին լավ էր աշխատում: Գրական ասպարեզում ուշագրավ երևույթ պիտի համարել «Ցիտեն» (Խաղաղության մասնաճյուղ) ժողովածուի հրատարակությունը: Այն կարելի է համարել Նոյյան տապանի աղավնի՝ ապագա խաղաղության լրաբեր: Նա պետք է սահման դնի: Մենք հավատում ենք. բազմատանջ հայ ժողովրդի տառապանքները վերջ կունենան: Հայոց կյանքի հորիզոնում նոր արշալույս է փայլատակելու: Մենք այս խոր համոզմունքով ենք դիմավորում Նոր տարին»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 13 (№ 10)

Վանի նկարագիրը

Պարոն Պապաջանովի լիազորությամբ, պարոն Աթանեսյանցը նկարագրել է Վանի բնակիչների կացությունը: Ինչպես նկարագրությունից երևում է, Վանում այդ պահին եղել է արական սեռի 2.435 հոգի, իգական՝ 1.516, երեխաներ՝ 919 հոգի, վերջիններիս թվում 201-ը որբ են: Ըստ ազգային պատկանելիության՝ 2.063-ը հայեր են, 389-ը՝ ասորիներ:

Պարոն Աթանեսյանցը տեղեկացնում է Ա. Ի. Խատիսովին, որ տվյալ պահի դրությամբ բնակարան և հաց բոլորին կբավականացնի, սակայն գարնանը անհրաժեշտ կլինի սերմացու, բանող անասուն և աշխատանքային գործիքներ: Եթե նշվածները ժամանակին չուղարկվեն, ժողովուրդը ստիպված կլինի տեղափոխվել Այսրկովկաս:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 13 (№ 10)

Օգնություն փախստականներին

Քաղաքապետ Ա. Ի. Խատիսովը Լոնդոնից պրն Թումանյանից 300 գիր. ստերլինգ է ստացել՝ փախստականների որբերին օգնելու համար:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 01. 13 (№ 477)

«Պայքար» հայկական թերթը գրում է. «Կովկասի տարբեր ազգությունների՝ հայերի, վրացիների և թաթարների միջև հաճախ ծնվում են ցավալի թյուրիմացություններ, որոնք տեղի չեն ունենա, եթե իրար լավ ճանաչեն: Դա հետևանք է ներքին և արտաքին քաղաքականության, որ վարում են այս ազգերը գրական-պատմամշակութային ոլորտներում: Նրանք ոչ մի պատկերացում չունեն այդ ժողովուրդների մշակույթի, գրականության և իրական հոգեկացության մասին: Հայերը վրացիների և թաթարների մշակութային կյանքին տեղյակ են այնքան, որքան չինացիների գրականությանը: Նույնը կարելի է ասել թաթարների և վրացիների մասին, որոնք բացարձակապես ոչինչ չգիտեն հայերի մասին: Սա բավականին լուրջ բացասական երևույթ է, որին հետևում են անցանկալի դեպքեր:

Իրոք, միասին ապրող երեք ազգություն, որ ունեն միանման հետաքրքրություններ ու ցանկություններ, միանման քաղաքական ու հասարակական հեռանկարներ, չկարողացան ու չճանաչեցին մեկմեկու: Սրա կարևորագույն նպատակն է նախ՝ մշակութային գործունեության սահմանափակումը ազգային շրջանակներում և երկրորդ՝ ազգայնամոլական մամուլի հատուկ քաղաքականությունը: Կովկասյան ազգերի ազգայնական մամուլը միշտ փորձում է բարձրաձայնել հարևան ազգերի բացասական կողմերը և ստվեր գցել դրական կողմերի վրա:

Ազգայնամոլական մամուլի օրգանները հարևան ազգերի բացասական հատկանիշները դարձրել են ներքին պայքարի զենք: Այդպիսի մամուլի համար շահավետ է, որ ամբոխը տգիտության, խավարի և մշտական սարսափի մեջ լինի:

Հայկական ազգայնամոլ մամուլն իր հերթին նման քաղաքականությամբ ոչնչով չի զիջում վրաց ազգայնամոլներին:

Օրինակներ՝ որքան ուզեք: Հայ մտավորականությունը ոչինչ չգիտի տաղանդավոր արձակագիր Ի. Ճավճավաձեի մասին, վրաց ազգի հպարտություն, բանաստեղծ Ա. Ծերեթելիի մասին: Նրանց տաղանդը մեզ տվել է այնպիսի ստեղծագործություններ, որոնք կզարդարեին յուրաքանչյուր կուլտուրական ժողովրդի գրականությունը:

Հայկական ազգայնամոլական մամուլին հայտնի չէ վերոհիշյալ գործիչների մշակութային դերը, այդ է պատճառը, որ մեր ժողովուրդը նրանց ճանաչում է ոչ թե որպես գրական խոշոր գործիչների, այլ միայն որպես շովինիստների, որոնք ազգային ատելության սերմեր են ցանում:

Նույնը կարելի է ասել թաթարների մասին: Հայ ազգը ոչինչ չգիտի թաթարների մշակութային կյանքից: Այս ժողովրդին հայերը միշտ այնպես են ներկայացրել, ասես նրանք բոլորովին զուրկ են եղել մշակութային ունակություններից»:

Հոդվածի վերջում թերթն այն միտքն է հայտնում, որ անհրաժեշտ է ազգերի ավելի սերտացում և միմյանց մշակույթի իմացություն:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 01.14 (№ 478)

Մեր հարևանները: Հայերի մեջ

Քաղաքային կապի լիազոր Ա. Աթանեսյանցը Վանից հայտնում է՝ եթե Վանի մերձակայքում ապրող հայերին գյուղատնտեսական գործիքներ և անասուններ չուղարկենք, նրանք ստիպված կլինեն տեղափոխվել Կովկաս: Անհրաժեշտ է կառավարության և հանրության օգնությունը:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 20 (№ 14)

Հայկական հարցը Ռայխստագում

Ռայխստագի պատգամավոր, սոցիալ-դեմոկրատ Լիբկնեխտը հայկական հարցի առիթով հարձակվել է կանցլերի վրա և դիմել հետևյալ հարցով. «Արդյոք կանցլերին հայտնի է, որ թուրքերը հարյուր հազարներով ոչնչացնում են հայերին, և եթե, այո, ի՞նչ քայլեր է ձեռնարկել արգելելու համար»: Սրան բարոն ֆոն Շթումը պատասխանել է. «Կանցլերին ամեն ինչ հայտնի է, հայտնի է նաև կոտորածի մասին, ինչպես նաև այն, որ հայերը, մեր թշնամուց ոգեշնչված, թուրքերի դեմ խռովություններ են նախապատրաստում: Դա թուրքերին դրդել է դիմել ծայրահեղ քայլերի՝ հայերին տեղահանել և բնակության նոր վայրեր փոխադրել: Մեր և Թուրքիայի կառավարությունները կատարյալ համաձայնության են եկել, թե որտեղ ինչ միջոցներ ձեռնարկեն՝ լիակատար կարգ ու կանոն հաստատելու համար: Ինչ վերաբերում է մանրամասներին, մենք դրանք հրապարակելու իրավունք չունենք»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 23 (№ 17)

Հայերի կյանքը

«Բաքու» թերթը փախստական հայերին փոխանցելու համար ստացել է 110 ռուբլի:

Հայոց մարդասիրական միությունը Բաքվում երեկույթ է կազմակերպել: Ամբողջ եկամուտը եղել է 1077 ռուբլի: Միությանը մաքուր մնացել է 835 ռուբլի:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 26 (№ 19)

Վերջին փոստը

Էրզրումի դատարկումը

«Листок»-ը տեղեկություն է ստացել, որ Էրզրումը ամբողջովին դատարկվել է:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 28 (№ 21)

Հայերի կյանքը

Լոնդոնում տիկին Ռոբինսոնի ղեկավարությամբ հիմնվել է «Օսմանահայերի որբ երեխաների օգնության կոմիտե»: Կոմիտեականները հավաքել են մեծ թվով հագուստ և գումար:

«Հորիզոն» թերթը փախստական հայերի օգտին ստացել է 82.668 ռուբլի:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 29 (№ 22)

Հայերի կյանքը

«Հորիզոն» թերթի վերջին համարում զետեղված հաշվետվությունից երևում է, որ այս թերթի միջոցով հայ «դրուժիննիկների» օգտին հավաքվել է 11.493 ռուբլի, իսկ հայ փախստականների օգտին՝ 82.668 ռուբլի:

Վերջերս Թիֆլիսում հիմնվեց Աշխատանքի բյուրո, որի նպատակն է աշխատանք գտնել հայ փախստական բանվորների, ուսուցիչների, արհեստավորների և այլոց համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 29 (№ 22)

Կրկին տեղահանվածներ

Հայոց գյուղատնտեսական ընկերությանը Ալաշկերտի Ղարաքիլիսայից պարոն Աբովյանցը հեռագրով հաղորդում է, որ Օսմանյան կայսրության գավառներից հեռանում է փախստականների մեծ ալիք. բնակարաններ չեն ճարվում: Տեղեկացրեք՝ ինչպես վարվեմ՝ փախստականներին տեղավորե՞մ Ղարաքիլիսայի մերձակա գյուղերում, թե՞ ուղարկեմ Կովկաս:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 31 (№ 24)

Փախստական հայերի ճակատագրի մասին հոգացող Թիֆլիսի հանձնաժողովի նախագահ Համբարձում Առաքելյանը հրահանգել է՝ կազմել Թիֆլիսում ապաստանած գաղթականների ցուցակ՝ Թիֆլիսի նահանգապետին ներկայացնելու և հրահանգ ստանալու համար, որպեսզի այդ ցուցակների հիման վրա փախստականներին տրվի մթերաբաժին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 01. 31 (№ 24)

Հայերի կյանքը

«Հորիզոնի» տվյալներով՝ Գյանջայի մարզի 8 գյուղերում այս պահին 1.084 փախստական կա, որոնցից 202-ը ասորի են: Քաղաքների միությունը երկու հիվանդանոց բացեց: Փախստականներին նաև բաղնիքներ են հատկացնում:

Հայոց կենտրոնական կոմիտեն քաղաքների կապի Կովկասի բաժանմունքին տեղեկացնում է, որ փախստականների երեխաների համար Թբիլիսիում ընդամենը վեց ապաստարան կա: Այդ ապաստարաններում տեղավորվել է 700 երեխա:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 02. 11 № 32

Հայերի կյանքը

Պետրոգրադի հայ եկեղեցական խորհուրդը 5 հազար ռուբ. է նվիրաբերել Թբիլիսիի Հայկական գյուղատնտեսական ընկերությանը:

Թբիլիսիի Հայկական գյուղատնտեսական ընկերության լիազոր Աբովյանը Ալաշկերտից տեղեկացնում է, որ ռուսների գրաված Մուշից և այլ վայրերից 300 փախստական է եկել: Աբովյանը օգնություն է խնդրում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 02. 12 (№ 33)

Օգնություն փախստականներին

Քաղաքային կապի Կովկասի բաժանմունքը 30 հազար ռուբլի է ուղարկել Երևանի նահանգապետին՝ կարիքավորներին օգնելու նպատակով: Պրն նահանգապետը հեռագրով տեղեկացրել է պարոն Խատիսովին, որ ստացած գումարից 20 հազար ռուբլի փոխանցել է եպիսկոպոս Խորենին՝ փախստական հայերի կարիքները հոգալու, իսկ մնացած 10 հազար ռուբլին՝ Մոսկվայի հայերի կոմիտեի երևանյան բաժանմունքին՝ դարձյալ հայ փախստականներին օգնելու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 02. 14 (№ 35)

Հայերի կյանքը

Մոսկվայի հայերի կոմիտեն հեռագրել է քաղաքային միության լիազոր Խատիսովին. «Տեղեկացրեք Էրզրումից, Մուշից և

Խնուսից գաղթած հայերի քանակի և վիճակի մասին, որպեսզի օգնություն ցուցաբերենք»:

«Հորիզոնը» հեռագիր է ստացել. «Էրզրումում բարձիթողի է հայերի բազմաթիվ ունեցվածքը. հարկավոր են մարդիկ, որ տիրություն անեն»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 02. 17 (№ 37)

Հայերի կյանքը

Բաթումից «Հորիզոնին» ծանուցում են, որ օրերս Արխավեի շրջանից բերել են մուսուլմանություն ընդունած 15 հայ:

Հայոց կենտրոնական կոմիտեն իր վերջին նիստում որոշում է ընդունել օգնել Էրզրումի կողմերում մնացած հայերին, հավաքել նրանց, տալ տաք հագուստ և սնունդ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 02. 19 (№ 39)

Հայերի կյանքը

Էրզրումը վերցնելուց հետո Թիֆլիսում գտնվող փախստականները հայրենիք վերադառնալու պատրաստակամություն են հայտնել և արժանի են դրան: Մի քանի խումբ նույնիսկ արդեն մեկնել է:

Օդեսայի ղեկավարի թույլտվությամբ թողարկվել է հայկական ամսագիր՝ «Պատերազմը և հայերը»:

Մոսկվայի հայերի կոմիտեն մարդ է ուղարկել Էրզրումի հայերի վիճակը պարզելու նպատակով:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 02. 21 (№ 40)

Հայերի կյանքը

Ժնևից «Մշակին» տեղեկացնում են. «Ժնևում հայ փախստականներին օգնելու համար հավաքվել է տասը հազար ֆրանկ:

Այդ գումարից երկու հազար ֆրանկ ուղարկվեց կաթողիկոսին՝ Ուրմիայի փախստականներին օգնելու համար»:

Էրզրումից «Հորիզոնին» տեղեկացնում են. «Քաղաքում մնացել են մոտ քսան հայ կարիքավոր ընտանիք և շատ երեխաներ: Խանութներն ու կրպակները թալանված են մեծ մասամբ պարսիկների կողմից: Թեմական շենքը հրկիզված է: Այնտեղ մնացած հայերն ասում են, որ տասը ամիս առաջ հայերին տեղահանել են Էրզրումից:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 02. 25 (№ 43)

Փախստական հայեր

Հայ հասարակական կազմակերպությունները լուրեր են ստանում, որ ռուսական զորքերի գրաված վայրերից հայերը փախչում են: Այդ գաղթականներից շատ շատերը եկել են Ալաշկերտ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 02. 26 (№ 44)

Էրզրումից Թիֆլիս վերադարձան վարչության անդամ Ա. Մ. Արղութինսկին, միության խոսնակ Խունունցը և բժիշկ Մինասյանցը: Ինչպես վկայում են նրանք, Էրզրումում այս պահին կան մոտ 90 հայ և 25 հազար թուրք:

Օսմանցիները Սարիղամիշից նահանջող հայերին ստիպել են դեպի Միջագետք գնալ:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 02. 27 (№ 513)

Հայերի ջարդը

Բազելից «Յումանիտե»-ին տեղեկացնում են, որ գերմանական սոց.-դեմոկրատական «Հեմնիցեր ֆոլկշտիմե» թերթը

փետրվարի 22-ի համարում անդրադառնում է Էրզրումի գրավմանը և արդարացնում օսմանցիների գործողությունները, որոնք հայերի նկատմամբ խիստ դաժանություն են ցուցաբերել: Թերթը նշում է, որ հայերը միացել են ռուսներին և աջակցում են նրանց: Ուստի և սենտիմենտալ բողոքներն օսմանցիների վայրագությունների մասին անհանդուրժելի են:

«Յումանտեի» հաղորդմամբ՝ Գերմանիայի բուրժուադեմոկրատներին անգամ զայրացրել է նման ցինիզմը:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1916. 02. 27 (№ 513)

Մեր հարևանները

Հայերի կյանքը

Հայ տնտեսական կազմակերպությանը Ալաշկերտի Կարակլիսիից տեղեկացնում են, որ գաղթականների թիվն աճում է. ամեն օր փախստականներ են գալիս Խնուսից և Մուշից: Նրանց մեջ շատ են հիվանդները, վիրավորները և ուժասպառները:

«Հորիզոնին» հայտնում են, որ Էրզրումում մոտ հարյուր հայ է մնացել. մի մասին պետք է Կովկաս տեղափոխեն:

«Հորիզոնին» Բայկալի մյուս կողմից տեղեկացնում են, որ Բերյոզովկա կայարանի մոտերքում կան 349 գերիներ: 30-ը հույն են, 319-ը՝ հայ, բոլորը օսմանյան կողմերից:

«Մշակի» տեղեկությամբ՝ «Հայկական բարեգործական ընդհանուր միության» լիազորները մոտ ապագայում պատրաստվում են Եգիպտոսում համագումար հրավիրել: Համագումարին կմասնակցեն Ռուսաստանի և Օսմանյան կայսրության հայերի ներկայացուցիչները: Համագումարի նպատակն է կոչ անել Կովկասի հայ հանրությանը՝ աջակցել ««Հայկական բարեգործական ընդհանուր միությանը», որի նախագահն է Պողոս Նուբար փաշան և գտնվում է Եգիպտոսում: Միության նպատակն է հիմնադրամի հզորացմամբ նպաստել Հայաստանի վերածննդին:

«Մշակին» տեղեկացնում են, որ մոտ օրերս Երևանից Էրզրում է մեկնել «Պատերազմից տուժածների օգնության» Մոսկվայի հայերի հանձնախումբը: Հանձնախմբի կազմում են բժիշկ, բուժակ և սանիտարներ:

Քարվանսարայում կրկին բացվել է «որբերի ապաստարան» 100 երեխայի համար:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1916. 02. 27 (№ 513)

Էրզրումից Թիֆլիս են վերադարձել քաղաքի վարչության անդամ իշխան Ա. Մ. Արղութինսկի-Դոլգորուկովը, քաղխորհրդի պատգամավոր Ի. Ն. Խունունցը և բժիշկ Մինասյանցը: Նրանք վկայում են, որ էրզրումում կա 25 հազար օսմանցի և 90 հայ:

Օսմանցիները նահանջելուց առաջ հայերին ստիպել են դեպի Միջագետք գնալ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 02. 28 (№ 46)

Հայերի «ազատագրումը»

Էրզրումի գրավումից հետո հոլանդական «Տելեգրաֆ» թերթում զետեղվել է հոդված՝ «Հայերի ազատագրումը» վերտառությամբ, որտեղ ասված է. «Ռուսական բանակը հաղթել և ցիրուցան է արել Օսմանյան կայսրության երկու հարյուր հազարանոց բանակը: Հոգեվարքի մեջ գտնվող Հայաստանը վերակենդանացել է, քանզի ռուսների կողմից այս տարածքի գրավումը հավասարազոր է ազատագրելուն: Գերմանիան այժմ հնարավորություն չի ունենա Անատոլիայից դուրս բերած զորամասերով համալրել բանակը: Ռուսական զորքերն անարգել կարող են միանալ Միջագետքում գործող անգլիական բանակին»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 03. 01 (№ 47)

Հայերի կյանքը

Թիֆլիս է ժամանել Անգլիայի պառլամենտի անդամ Բեկստոնը՝ գաղթականների իրավիճակին ծանոթանալու:

Հայոց կենտրոնական կոմիտեի և Կովկասի Հայոց բարեգործական միության ներկայացուցիչ Շարաթյանը տեղեկացնում է, որ ինքը վերջացրել է Պարսկաստանի և Կովկասի տարածքներում քրիստոնյա գաղթականների հաշվառումը:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 03. 02 (№ 48)

Հայերի կյանքը

Պատերազմից տուժածների օգնության քաղաքային կենտրոնական կոմիտեին կից հանձնաժողովի նախագահ Ա. Առաքելյանցը փախստականների ցուցակը ներկայացրել է գեներալ Թամամշևին և խնդրել ընթացիկ տարվա հունվար, փետրվար և մարտ ամիսների ընթացքում 88 հազար ռուբլի հատկացնել փախստական հայերին, ասորիներին, ռուսներին և լեհերին օժանդակելու համար:

Մուշում այժմ հազար գաղթական կա: Սասունից եկել է 160: Խնուսում գաղթականների թիվը հազարից ավելի է: Խնդրում են՝ շտապ տաք հագուստ ուղարկել:

«Հորիզոն» թերթում զտեղված է հետևյալ հայտարարությունը. «Էրզրումից, Շուշիից, Սասունից, ինչպես նաև Կովկասի այլ վայրերից խումբ-խումբ Թիֆլիս են գալիս գաղթական հայեր: Նրանք ցանկանում են իսկույն ևեթ վերադառնալ իրենց բնակավայրերը, բայց քանի որ ռազմական վարչությունից դեռևս մեկնելու թույլտվություն չեն ստացել, ստիպված են սպասել Թիֆլիսում: Լավ կլինի՝ առայժմ մնան այնտեղ, որտեղ գտնվում են, և

երբ հնարավորություն կստեղծվի, «Հորիզոն» թերթը նրանց տեղյակ կպահի»:

Ամերիկայից Թիֆլիս է ժամանել հայ կամավորների ևս երկու ջոկատ: Նրանք շուտով կուղևորվեն ռազմադաշտ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 03. 08 (№ 53)

Հայերի մեջ

Տեղի ունեցավ փախստականների հայրենիք վերադառնալու հարցի վերաբերյալ հայ հասարակության ներկայացուցիչների խորհրդակցություն: Որոշվեց, որ պետք է նպաստել միայն աշխատունակ տղամարդկանց վերադարձին, բայց անվտանգ վայրեր, ինչպես Ալաշկերտի, Վանի և Մելազգերի կողմերում է: Այդ նույն ժողովում որոշվեց հիմնել փախստականներին օժանդակող կոմիտեների ընդհանուր բյուրո, որն իրավասու կլինի անհրաժեշտության դեպքում ուղղակի դիմել կառավարությանը և հասարակական կազմակերպություններին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 03. 11 (№ 56)

Հայոց կաթողիկոսը 10 հազար ռուբլի է փոխանցել օսմանահայերի ավերված տները վերականգնող հանձնաժողովին:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1916. 03. 13 (№ 309)

Խառնակություն Ստամբուլում

Անցած շաբաթ Ստամբուլում սննդամթերքի թանկացման պատճառով խառնակություն առաջացավ: Հայտնվեցին «հարձակվողներ», որոնք անխնա ոչնչացնում էին կրպակները և թալանում հայերի ու հույների տները: Խառնակությունները կանխվեցին զինված ուժերի միջոցով:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 03. 29 (№ 70)

Օսմանյան կայսրություն

Կահիրեից տեղեկացնում են՝ «Օսմանյան Հայաստան ուղարկվեցին փրկիչ զորամասեր՝ թվով 25 հազար մարդ»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 03. 31 (№ 71)

Օսմանյան կայսրության գրեթե բոլոր քաղաքներում խառնակություններ են սկսվել: Ժողովուրդը զայրացած է գերմանացիների վրա, իսկ երիտթուրքերին հայրենիքի դավաճաններ է համարում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 04. 22 (№ 89)

Հայերը որոշել են հատուկ պատվիրակություն ուղարկել դաշնակից պետությունների մայրաքաղաքներ՝ հայ ժողովրդին կարեկից լինելու համար տեղական կառավարություններին շնորհակալություն հայտնելու:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 04. 24 (№ 90)

Տրապիզոն

«Речь»-ի թղթակից Զդաննիչի վկայությամբ՝ Տրապիզոնում մնացել է ընդամենը 15 հազար հույն: Օսմանցիները փախել են, իսկ վիլայեթի հայությունը գլխովին բնաջնջվել է: Ժողովրդի հետ մեկտեղ ոչնչացվել են նաև նրանց տները: Քաղաքը փրկվել է հողին հավասարվելուց: Խանութները և հյուրանոցները բացվել են, բայց ամենուր ահավոր թանկություն է տիրում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 04. 24 (№ 90)

Նոր փախստականներ

Հայկական բարեգործական ընկերության տեղեկությունների համաձայն՝ Բաթում են եկել փախստական հայեր… 7 մեծահասակ և 27 փոքրահասակ որբ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 05. 03 (№ 98)

Գաղթականների վերաբնակեցում

Թբիլիսիում այժմ թվով մոտ 2 հազար ներգաղթած փախստական կա: Նրանցից 1.500-ը հայ է: Կառավարության հրահանգով մինչև մայիսի 10-ը բոլոր գաղթականներին պետք է ուղարկեն Երևանի նահանգ: Հիմա նրանք ստանում են միայն ապրիլի համար նախատեսված նպաստ, շնչին՝ 4 ռուբ. 50 կոպեկ:

Առատ նվիրատվություն

Վախճանվել է իշխան Է. Ա. Բեկթաբեկովի դուստրը, ով իր ամբողջ ունեցվածքը և կանխիկ գումարը կտակել է Թբիլիսիի ինքնակառավարությանը: Նվիրատվության ամբողջ դրամը կազմում է 500 հազար ռուբլի: Քաղաքում այդ գումարով առավելագույնը 7 տարվա ընթացքում պետք է կառուցվի հիվանդանոց բնակիչների համար՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից: Եթե սահմանված ժամանակում չկատարվեն կտակի պայմանները, ամբողջ ունեցվածքը և դրամագլուխը կփոխանցվեն Հայկական բարեգործական ընկերությանը:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 05. 08 (№ 103)

Կովկասում օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար է նշանակվել գեներալ Էնվեր փաշան:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 05. 12 (№ 105)

Հեռագրեր

Թերթերը ջերմորեն արձագանքեցին հայերի համագումարին: «Рech»-ը ափսոսանք է հայտնում, որ համագումարի ծրագիրը սահմանափակ է: «Бирж. вед.»-ին գրում է. «Ռուսաստանի պարտականությունն է Հայաստանի վերքին սպեղանի դնել»:

«День»-ում Վոդովոզովը գրում է, որ Հայաստանի զոհերը գերազանցում են Բելգիայի և Սերբիայի զոհերի ընդհանուր քանակին: Վոդովոզովը հիշատակում է հայերի հալածանքները: Համագումարը պետք է անդրադառնա քաղաքական հարցերին և հայ–վրացական առնչություններին: Լարված հարաբերությունների պատճառով վրացիները կարեկցանք չեն ցուցաբերում հայ փախստականների հանդեպ և ասում են. «Ձեզ համար նրանք դժբախտության մեջ հայտնված մարդիկ են, մեզ համար՝ մեր երկիր ներխուժած, մեր հող ու ջրին բռնի տեր դարձող ապազգային տարրեր»: Թերթերը համոզված են, որ եթե հայերի և վրացիների միջև համաձայնություն լինի, հնարավոր կդառնա ամեն ինչ կարգավորել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 05. 13 (№ 106)

Հայերի համագումար

Թբիլիսի, 13 մայիսի: Պետրոգրադում սկսվեց հայերի համագումարը: Այդ մասին Պետրոգրադի մեր թղթակիցը գրում է. «Մայրաքաղաքի թերթերը ջերմորեն անդրադարձան հայերի համագումարին: Մամուլը նշում է, որ Հայաստանի զոհերը գերազանցում են Բելգիայի և Սերբիայի ընդհանուր զոհերին: Ռուսաստանի պարտականությունն է Հայաստանի վերքին սպեղանի դնել: Արդարացիորեն վշտացած են, որ հայերի համագումարի աշխատանքը խիստ սահմանափակ է: Կառավարության հրա-

հանգով համագումարը քննարկելու է միայն փախստական հայերի հարցը: Փախստականների հարցերով մեծապես շահագրգռված են թե՛ հայ հասարակությունը, թե՛ կառավարությունը և թե՛ լայն մասսաները, բայց միայն այդ մեկ հարցով հայերը ընդհանուր համագումար չէին անի և չէին հրավիրի եվրոպական պետություններից իրենց հայրենակիցներին և կարեկիցներին: Համագումարն ավելի մեծ նպատակներ ուներ: Այն պետք է արծարծեր Հայկական հարցը:

Այս պատերազմի ընթացքում հայերի ապագա ճակատագրի մասին գրում էին ոչ միայն հայերը, այլև Ռուսաստանի և Եվրոպայի մամուլը, նույնիսկ պատերազմող պետությունների ներկայացուցիչներն առանձնակի ուշադրությամբ հետազոտում էին հայերի քաղաքական իրավիճակը: Կազմվել են բազմաթիվ նախագծեր ապագա Հայաստանի վերաբերյալ: Այդ նախագծերը քննարկվում էին մամուլում և օրենսդիր մարմիններում: Ապագա Հայաստանի պետական կառուցվածքը և ապագա Հայաստանի սահմանները լիովին պարզելը հնարավոր չեղավ, չնայած Հայաստանի մասին անընդհատ գրում էր հայկական մամուլը և լիբերալ մամուլի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Միլյուկովը և ուրիշներ: Շատերն այն կարծիքն էին հայտնում, թե ապագա Հայաստանը, որտեղ բնակվելու էին Կովկասի, Օսմանյան կայսրության և Պարսկաստանի հայերը, պետք է մտներ Ռուսաստանի կազմի մեջ՝ որպես ինքնավար միավոր: Շատերն էլ պահանջում էին, որ Հայաստանը անկախ պետություն դառնա, բայց Ռուսաստանի շրջանակներում և վասալական կախման մեջ լինի: Ապագա Հայաստանի սահմաններն այս նախագծերում միանման չէին նշվում: Հայ հրապարակախոսները պահանջում էին, որ ապագա Հայաստանը դեպի ծով երկու ելք ունենար, Միջերկրական ծովը Ալեքսանդրետի նավահանգստով և Սև ծովը Լազիստանի ափերով: Ինչ խոսք, այդ տարածքներում հայերը զգալի փոքրամասնություն էին, բայց այդ ծովափերը ապագա

Հայաստանի սահմաններ մտցնելը փաստում էին Հայաստանի համար երկու ծովերի խիստ անհրաժեշտությամբ: Հյուսիսից Հայաստանը Կովկասյան լեռնաշղթայի փեշերին պիտի հենվեր: Մյուսները չէին ժխտում ապագա Հայաստանի համար երկու ծովի անհրաժեշտությունը, սակայն երկյուղ ունեին, որ Հայաստանի սահմանները Միջերկրական ծովին հասցնելը շահագրգիռ պետությունների միջև առաջ կբերեր տարաձայնություն, և հայերին խորհուրդ էին տալիս բավարարվել Սև ծովի ափերով, Լազիստանով: Այսպես անմիաբան էին հայ քաղաքական միտքը և հայերի բարեկամները ապագա Հայաստանի պետական սահմանների և կառուցվածքի հարցում: Պետրոգրադում հրավիրված համագումարը կարող էր այդ հարցերը քննարկել, ձևակերպել, և շահագրգռված հանրությանը հնարավորություն կտրվեր մեկ ծրագրի հետ գործ ունենալ: Ցավալի է, որ կառավարությունը համագումարի աշխատանքը սոսկ փախստականների հարցով սահմանափակեց և նրանց զրկեց հայերի իղձերն ու ձգտումները որոշակի ձևաչափով արտահայտելու հնարավորությունից:

Պարզվում է՝ պրն Վոդովոզովը «Биревия ведомости»-ում համագումարին առաջարկում է փախստականների հարցը կապել հայ-վրացական անհամաձայնության խնդրին: «Քաղաքական լարված հարաբերությունների պատճառով վրացիները կարեկցանքով չեն վերաբերվում փախստական հայերի հանդեպ»,- փոխանցում է մեր թղթակիցը Վոդովոզովի խոսքերը: Թե ինչպես է արտահայտված վրացիների անկարեկից վերաբերմունքը փախստական հայերի նկատմամբ, այդ մասին հարգարժան հեղինակը ոչինչ չի ասում: Գուցե հայերի համագումարը քննարկումներ անցկացնի վրաց-հայկական տարաձայնության վերաբերյալ: Կարելի է վստահորեն ասել, որ այդ հարցի վերաբերյալ հայ ռոմանտիկների և նրանց բարեկամների, Միլյուկով-Վոդովոզովների մեղադրանքը կլինի այնպես հիմնավոր և անաչառ, ինչպես դա եղել է մինչ օրս այլևայլ հարցերի շուրջ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 05. 21 (№ 112)

Հայերի համագումարը

Պետրոգրադ, 11 մայիսի: Բաժինների աշխատանքն սկսվեց երեկ երեկոյան և շարունակվում է այսօր: Աշխատանքային լեզուն հայերենն է, միայն մի քանիսը, ովքեր հայերեն չգիտեն, ռուսերեն են խոսում:

Գյուղատնտեսության բաժին:

Տնտեսության և գյուղատնտեսության բաժինների միացյալ նիստում ընթերցվեց երկու զեկուցում՝ Երևանի պատվիրակ Սողոմոնյանցի և Վանի պատվիրակ Տեր-Զրբաշյանցի: Երկու զեկուցումներն էլ վերաբերում էին Ռուսաստանի՝ հայոց զաղթավայրերում տնտեսության վերածննդին:

Առաջինի զեկուցման մեջ քննարկվում էր հայերի գյուղատնտեսական արտադրության խնդիրը, իսկ երկրորդի զեկուցման թեման առևտրի մասին էր:

Զեկուցողները սարսափելի գույներով նկարագրեցին գաղթականների կենսական անտանելի պայմանները, որոնց բարելավումը, ըստ զեկուցողների, ինչպես ռուսական կառավարության, այնպես էլ հայ հասարակական հաստատությունների անմիջական պարտականությունն է:

Նրանց հավաստմամբ՝ 200 հազար հայ գյուղացի գաղթել է Այսրկովկաս, Կարսի մարզ, Երևանի, Գյանջայի նահանգներ և ձեռքները պարզած՝ օգնության են սպասում: Անհրաժեշտ է անհապաղ օգնություն, որպեսզի հնարավոր լինի վերականգնել թալանի ենթարկված նրանց հայրենիքը:

Զեկուցողների հաշվարկով՝ որպես օգնություն յուրաքանչյուրին պետք է հատկացնել ոչ պակաս 150 ռուբ., ինչը գաղթականների ընդհանուր թվի համաձայն՝ կազմում է 30 միլիոն ռուբլի: Գլխավոր կոմիտեին կից անհրաժեշտ է հիմնել գյուղատնտեսա-

կան բաժին, որին հանձնարարվելու է ժողովի որոշման իրականացումը:

Ցանկություն հայտնվեց, որ հիմնվեն կոոպերատիվներ և այլ օժանդակ ընկերություններ, որպեսզի գաղթականներին սերմացու փոխանցեն: Ժողովը անհրաժեշտ համարեց մեծածավալ օգնություն տրամադրել նաև վաճառականներին և խոշոր հողատերերին, ովքեր տուժել են այս պատերազմից: Նրանց վարկեր հատկացնելու հարցում ոչ մի խոչընդոտ չպետք է լինի:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 05. 22 (№ 113)

Հայերի համագումար

Օր երրորդ

Ժողովը կրկին հայերենով է անցկացվում, և օտարերկրյա մամուլի ներկայացուցիչներս բավականին անհարմար վիճակում ենք:

Մեծամասնության և փոքրամասնության կարծիքը գրեթե նույնն է, ինչ արտահայտվել էր բաժնի ժողովում: Ոմանք պնդում էին, որ կոմիտեն Թբիլիսիում, Էրզրումում կամ Էջմիածնում պիտի տեղակայվի, որպեսզի գործին ավելի մոտ լինեն և տուժածներին անհապաղ օգնություն ցուցաբերեն: Իսկ Պետրոգրադի կողմնակիցները ասում են, որ «Կովկասի հայերի մեջ նոր ուժեր այլևս չկան, իսկ հները բոլորն էլ զբաղված են: Պետրոգրադում, Մոսկվայում, Ռոստովում և Ռուսաստանի այլ քաղաքներում գտնվող հայերը լիովին ներգրավված չեն և անհրաժեշտ է նրանց մոբիլիզացնել»:

Իսկ կարևորագույն նպատակը, իհարկե այն էր, որ Պետրոգրադի կոմիտեն մոտ լինի կառավարությանը և հեշտությամբ իրականացնի հայերի միջնորդությունը:

Հետաքրքիր է, որ Օսմանյան կայսրության հայերը նույնպես Պետրոգրադի կողմնակիցներ էին:

Այս հարցն այն աստիճան «բարդ» էր, որ նույնիսկ ընդհանուր ժողովը չկարողացավ հանգել մեկ եզրակացության:

Ժողովում մեծ անհանգստություն է, վերևից ստացված հրահանգի համաձայն՝ ժողովն այսօր պետք էր եզրափակել, բայց միջնորդության շնորհիվ ևս երկու օր շարունակվելու է:

Կառավարության հաստատումը դեռ չի եկել, և ժողովականներն անհամբեր սպասում են, քանզի չգիտեն՝ անցնե՞ն հաջորդ հարցերին, թե՞ վերջնական վճիռ կայացնեն քննարկված հարցերի վերաբերյալ: Պապաջանովը ուրախությամբ տեղեկացնում է ժողովի մասնակիցներին, որ կառավարությունը հարգել է իրենց խնդրանքը և թույլ է տվել ևս մեկ օր շարունակել աշխատանքը: Սակայն, երկու օրվա փոխարեն միայն մեկ օր. շատերին դա բոլորովին չգոհացրեց:

Ժողովը նոր հարցերի է անդրադառնում և լսում է բաժինների աշխատանքները: Ուշադրության են արժանանում հայ գերիների մասին արծարծումները:

Չալխուշյանի և շատ ուրիշների հրապարակած տեղեկություններից պարզվում է, որ հայ գերիների վիճակը Ռուսաստանում ավելի վատ է, քան գերմանացիների և օսմանցիների: Օսմանյան կայսրությունում նրանց համարում են ռուսահպատակ և չարաչար տանջում են, իսկ Ռուսաստանում՝ օսմանյան կայսրության հպատակներ, ուրեմն՝ դավաճաններ, և ով գիտե, թե ինչպես են վերաբերվում նրանց:

Ժողովը միանշանակ համաձայն է զեկուցողների հետ և կարևոր է համարում նրանց վիճակի պարզաբանումը: Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը ժողովը հանձնարարում է կենտրոնական կոմիտեին:

Ժողովը հանձնարարում է հատուկ հանձնախմբին մանրամասն պարզել Օսմանյան կայսրության վայրագ արարքները հայերի նկատմամբ և հիմնավոր տեղեկություններ ներկայացնել սենատոր Կրովցովի ենթակայության տակ գտնվող հանձնաժողովին:

Գաղթական վաճառականներին և տնտեսություններին օժանդակելու հարցը ժողովն ընդունեց առանց վիճաբանության÷

Վեճ չի հարուցել նաև կառավարության՝ փախստականներին վերադարձի համար 27-30 միլիոն ռուբ. հատկացնելու որոշումը: Առաջադրվեց մեկ հարց նույն Չալխուշյանի կողմից. նա անհրաժեշտ էր համարում անդրադառնալ և որոշել գաղթականների թողած հողերի իրավական կարգավիճակը:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 06. 15 (№ 132)

Թալեաթ բեյը հայերի հետապնդումների մասին

Լոնդոնից տեղեկացնում են. Թալեաթ բեյը Ստամբուլում գերմանացի ժուռնալիստների հետ երկար հարցազրույց է ունեցել հայերի հալածանքների շուրջ: Նա հայտարարել է. «Ռուսաստանի և Օսմանյան կայսրության հայերը միշտ ձգտել են քաղաքական մի իդեալի, որ մասնատվի, բաժան-բաժան լինի Օսմանյան կայսրությունը: Արևելքի վիլայեթներից հայերի վերաբնակեցումը պարտադիր էր: Դա ազգային և պատմական անհրաժեշտություն էր: Անշուշտ, արևելյան վիլայեթներից վերաբնակեցումը մեծ դժբախտություններ բերեց, և շատերը զոհվեցին, այդ պատճառով քրդերը նույնպես դրան հարիր պատժվել են: Ինչ վերաբերում է այն դժբախտությանը, որը գալիս է արևելյան վիլայեթներից, դրանում ընդամենը մեղավոր է այն ապաշնորհ պաշտոնյան, որին վստահված էր այդ գործը»: Վերջում կայսրության վեզիրը ասաց. «Օսմանյան կառավարությանը չենք կարող մեղադրել, որ նա մեղավոր կամ անմեղ հայերին չի տարբերում. այսօրվա նրանց անմեղը հնարավոր է՝ վաղը մեղավոր դառնա»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 07. 15 (№ 156)

Երզնկայի առումը

Երեկ երեկոյան տեղեկություն ստացվեց, որ ռուսական բանակը գրավել է Երզնկան: Երզնկան Էրզրումի վիլայեթի ամենագլխավոր քաղաքն է, գտնվում է Ղարասու գետի ձախ ափին, Եփրատից արևմուտք: Քաղաքում բնակիչների թիվը գերազանցում է 40 հազարը, մեծամասնությունը օսմանցիներ են: Մինչ պատերազմը նաև հայեր էին ապրում:

Երզնկայի շրջակայքը ավելի քան բերքատու վայր է: Եթե օսմանցիները բերքը չայրեն կամ էլ չհասցնեն իրենց հետ տանել, ռուսներն այստեղ մեծ ավար կունենան:

Օսմանցիները նոր զորքեր են ուղարկում հայկական տարածքներ: Փոքր Ասիայում գտնվող օսմանական զորքերի համալրումը կառավարությանը շատ է մտահոգում:

Ռուսական բանակի առաջխաղացումը կասեցնելու համար կառավարությունը որոշել է, հենց որ ազատ զորք լինի՝ ուղարկել հայկական ճակատ: Դրանից բացի, մտադիր են բանակ զորակոչել նաև 17 տարեկան տղաներին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 07. 23 (№ 162)

Գերմանիայի կարծիքը Երզնկայի գրավման վերաբերյալ

Վոլֆի հեռագրական գործակալությունը տեղեկացնում է չեզոք պետություններին, որ օսմանյան բանակի գլխավոր շտաբը լիովին համաձայն է Գերմանիայի գլխավոր շտաբի տեսակետին՝ Փոքր Ասիայում ռազմական գործողությունների վերաբերյալ: «Օսմանյան կայսրության բախտը,- նշում է գործակալությունը,- ոչ թե Հայաստանի և Միջագետքի ճակատներում է վճռվում, այլ միայն եվրոպական մարտերի ասպարեզում: Ահա թե ինչու, Հա-

յաստանի տարածքի մի մասի կորուստը որևէ ազդեցություն չի կարող ունենալ Օսմանիայի ապագայի վրա:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 07. 26 (№ 165)

Ազգային դրությունը
Հայերի կյանքից

«Հորիզոն» թերթում տպագրվել է պրն Արշակ Սաֆրաստյանի հոդվածը, որը կոչ է անում հայրենակիցներին՝ տեղեկություններ հայտնել Օսմանյան կայսրությունում հայերի ջարդերի մասին: «Մեր բարեկամ լորդ Բրայսին հարկավոր են այդ տեղեկությունները իր աշխատության համար… Առավել արժեքավոր են տուժածների և ականատեսների վկայությունները, հատկապես այն մասին, թե ինչ էին անում հայերը, մասնավորապես կանայք, բռնությունների ժամանակ:

Արտամետից մազապուրծ մի տիկին այնպիսի սոսկալի դեպքեր պատմեց, որ սարսափազդու վեպի նյութ կարող է դառնալ. այդ վեպը մենք կհրատարակենք Անգլիայում… Ովքեր մեզ գրավոր տեղեկություններ կհայտնեն, կստանան նաև համապատասխան վարձատրություն...»:

Միքայելյանցը «День»-ում գրում է. «Հայ գործիչները և կազմակերպությունները պետք է մոռանան կուսակցական վեճերը և հայ բուրժուազիայի աջակցությամբ հոգ տանեն ավերված հայրենիքի մասին…»:

Միքայելյանցը, անդրադառնալով Ամենայն Հայոց կաթողիկոսի Թբիլիսի ժամանելուն, ասում է. «Պատերազմի ավարտին հայերը պետք է ներկայանան Հայկական հարցը վճռելու պատրաստի ծրագրով, հակառակ դեպքում Հայաստանը չի արժանանա իր կորուստների փոխհատուցմանը»:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ» 1916. 08. 05 (№ 643)

Օսմանահայերի բնակեցումը

Նվաճված Հայաստանի տարածքները բնակեցնելու հարցին մեծ ուշադրություն են դարձնում և այն ուսումնասիրելու նպատակով Կովկաս են ուղարկել կոմս Տատիշչևին: Նախ և առաջ ստեղծվել են, այսպես կոչված, անզեն դրուժինաներ, որոնք հողերը պետք է նախապատրաստեն մշակելու համար: Այդ դրուժինաները միջին Ռուսաստանից են, և խստորեն որոշված է, որ նրանց կազմում ոչ մի հայ կամ վրացի չպետք է լինի: Նրանք, մասնագետ-ագրոնոմների ղեկավարությամբ, որոշ տեղերում արդեն սկսել են աշխատանքները: Սակայն այդ ջոկատների աշխատանքները բավարար չեն, և առկա է նաև երկրորդ նախագիծը: Մտադիր են Հայաստանում բնակեցնել կազակներին. նման փորձը՝ Հյուսիսային Կովկասը կազակներով բնակեցնելը, լավ արդյունք է տվել: Կազակներին պետք է բնակեցնել այնպես, որ Օսմանյան Հայաստանի և Ռուսահայաստանի միջև տարածք լինի՝ կազակներով բնակեցված: Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրության տարածքներին, դրանց բնակիչներից շատերին բնաջնջել են, կենդանի մնացածները մեկնել են Ռուսաստան: Խաղաղության հաստատումից հետո գաղթականների մի մասը նորից վերադարձել է: Սակայն, ենթադրելի է, որ առաջին իսկ վտանգի դեպքում այդ ժողովուրդը նորից կտեղահանվի. նա կխանգարի զորքերի տեղաշարժմանը: Ուստի նորին օգոստափառ գլխավոր հրամանատարը կարգադրել է՝ տեղեկացնել բնակիչներին, որ Ալաշկերտի, Բայազետի և Դիադինի դաշտերի հողերը կտրվեն բոլոր ցանկացողներին՝ մշակելու մինչև իսկական տերերի վերադարձը: Դրանից հետո գեներալ Յուդենիչը հրամանին ավելացրել է՝ Միջին Ռուսաստանի բնակիչներից և կազակներից բացի՝ ոչ մեկին թույլ չենք տա բնակություն հաստատել նշված վայրերում: Թույլ է տրվում վերադառնալ միայն

այն բնիկներին, ովքեր ունեն գնումների համապատասխան փաստաթղթեր: Սա նշանակում է, որ տեղացի բնակիչներին ուղղակի արգելվում է վերադառնալ իրենց բնակավայրերը, քանզի Օսմանյան կայսրությունում զավեշտ էր նման փաստաթղթերի մասին խոսելը: Եթե անգամ ունենային, փախուստի ժամանակ կկորցնեին, ուստի բնիկներն անկարող են լծվել խաղաղ աշխատանքի կամ տուն վերադառնալ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 08. 13 (№ 180)

Ազգային իրավիճակը Օսմանիան հայերի մասին

Օսմանյան կայսրությունը ուշագրավ գիրք է հրատարակել հետևյալ վերնագրով՝ «Ճշմարտությունը հայերի շարժման և կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների մասին»: Գիրքը պնդում է, թե հայկական «տարրը» մինչ պատերազմը պետության մեջ մեծ վստահություն ուներ, նրանցից շատերը նույնիսկ լավ պաշտոններ էին զբաղեցնում: «Հայկական տարրին» Օսմանիան որպես ազգություն (նացիա) չի ընդունում, նրանք սոսկ «էլեմենտ» են: Անում էինք այնպիսի զիջումներ և տալիս այնպիսի արտոնություններ, ինչպիսին ոչ մի օտարերկրացու ո՛չ արել էինք, ո՛չ էլ երբևէ տվել: Այդքան բարության համար հայերը, փոխանակ երախտապարտ լինելու, երախտագիտություն հայտնելու, ամեն առիթ օգտագործում էին, որ վնաս հասցնեին Օսմանյան կայսրությանը ինչպես ներսից, այնպես էլ դրսից: Հենց հայերն իրենք էին խանգարում Անատոլիայում բարեփոխումներ իրականացնելուն, իբրև թե այդ միջոցով ցանկանում էին եվրոպացիներին մեր գործերի մեջ ներգրավեին: Արդյունքը եղավ այն, որ Օսմանյան կայսրության մուսուլման ժողովուրդը հասկացավ, թե ինչու են խարխափում իրենց պետության մեջ և սաստիկ ատեց մատնիչ ու նենգ հարևանին: Պա-

տերազմը սկսվելուց հետո, երբ, Ռուսաստանի կողմից գայթակղվելով, Վանի հայերը ապստամբություն բարձրացրին, մենք ստիպված եղանք համարժեք միջոցներ ձեռք առնել և հայկական բոլոր «էլեմենտներին» ուժի գործադրումով նախ պատերազմին մոտ տարածքներից տեղահանեցինք, հետո՝ ամբողջ Անատոլիայից և փոխադրեցինք օտարների աչքից հեռու վայրեր (Միջագետք)»:

Այսպես է արդարանում օսմանյան կառավարությունը: «Армян. вест.»-ին մտահոգել է այն հանգամանքը, որ ոմանք, թերևս, հավատ ընծայեն Օսմանյան կայսրությանը, և գրում է. «Չնայած մեր գործի արդարությանը, ձեռքներս ծալած չպետք է սպասենք զինադադարի կոնգրեսին, որտեղ որոշվելու է մեր բախտը, և հենց հիմա մենք պետք է հավաքենք բավական չափով փաստաթղթեր՝ կոնգրեսին ներկայացնելու համար»:

Վանի տարելիցը

«Վան-Տոսպ»-ը գրում է. «Այս օրերին լրացավ Վանից ռուսների և նրանց հետ մեկտեղ ամբողջ Վանի վիլայեթի հայերի գաղթի տարելիցը»: Ամսագիրը հիշատակում է, թե ինչ պայմաններում էին գտնվում հայերը՝ «ռուսական բանակի ոչ պաշտոնական հրահանգը այնպիսի հուսահատ վիճակի մեջ գցեց, որ մենք որոշեցինք, բոլորս մեկ ժամում անհապաղ հեռանալ այստեղից: Նման աղետաբեր տեղահանություն չէր եղել նույնիսկ Շահ Աբասի ժամանակ: Ամբողջ շաբաթվա ընթացքում Վասպուրականի հայերը, թվով մոտ 150 հազար, հուլիսյան կիզիչ արևից խանձված, օր ու գիշեր, առանց հանգիստ առնելու, գնում էինք դեպի ռուսական Կովկասի սահմանները… Այդ շարժը մեզ վրա 50 հազար կյանք նստեց»:

Ի դժբախտություն հայերի՝ հենց տարվա գլխին սկսվեցին Իզեթ փաշայի ասպատակությունները Բիթլիսից, և Վանի հայությունը կրկին շարժվեց դեպի հյուսիս:

Հայերը Ամերիկայում

Օսմանյան կայսրությունից հարյուր հազար հայ է մեկնել Ամերիկա: Նրանք բնակություն են հաստատել գերազանցապես Ատլանտյան օվկիանոսի ափերին՝ Նյու-Յորքում, Բոստոնում, Ֆիլադելֆիայում: Ամերիկահայերի մեջ հայտնի են Թովմաս Կարվինը՝ ԱՄՆ-ի ֆինանսների նախկին նախարարը, և Սերոբյանը՝ թղթադրամի տպագրական ներկի գյուտարարը: Ամերիկահայերն այնքան հավատարիմ են իրենց ինքնությանը, որ նախագահ Վիլսոնն ասել է. «Մոնղոլական ցեղերից հետո (ճապոնացիներ, չինացիներ), ես չեմ ճանաչում մի այլ ժողովուրդ, որը բնակվեր արտերկրում և այսքան դժվար ենթարկվեր ձուլման կանոններին»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 08. 20 (№ 185)

Ազգային իրավիճակը

Հայաստանի ճակատագիրը

«Кавказское слово»-ում Օսմանյան կայսրության ապագայի վերաբերյալ տպագրվել է ոմն «Մագիստրոսի» հետևյալ հոդվածը.

«Օսմանյան Հայաստանի ինքնավարությունը մեռած է, բայց հայերը դեռևս չեն համարձակվում թաղել և կրում են իրենց հետ: «Հայկական ինքնավարությունը» միշտ ուտոպիա է եղել: Օսմանցիների ձեռքից դեռևս հնարավոր էր խլել ինքնավար կառավարումը… եթե Գերմանիան չլիներ: Ռուսաստանն ի զորու էր այդ անելու, բայց հայերն իրենք ի՞նչ պիտի շահեին, չէ՞ որ նրանք պատերազմից առաջ նույնպես փոքրամասնություն էին, և ինքնավարություն ընդունելով՝ կհասնեին միայն նրան, որ Կոստանդնուպոլսի կայսերական խորհրդարանի փոխարեն նրանց ճակատագիրը կհանձնվեր Էրզրումի տեղական սեյմին, որտեղ մեծամասնություն էին կազմում մուսուլմանները:

Պատերազմից հետո հայ ազգը վերածվեց կոտորված փախստականների կույտի և սփռվեց Կովկասով, Միջագետքով ու Սիրիայով մեկ: Նույնիսկ եթե նրանք բոլորը հայրենիք վերադառնան և հետ բերեն նաև Ամերիկայում բնակություն հաստատած հայերին, այդուհանդերձ այնքան քիչ կլինեն, որ սեփական իշխանություն ստեղծելն անհնարին կդառնա: Պետք է այն էլ նկատի ունենալ, որ նվաճված Օսմանյան կայսրությունում քիչ չեն նաև մուսուլմանները, որոնք հետզհետե բազմանում են:

Ո՛չ Անգլիան, ո՛չ Ֆրանսիան, առանց Ռուսաստանի համաձայնության, «Ինքնավար Արմենիա» չեն կարող հիմնել (Անգլիայի ռազմանավերը չեն հասնի Վանա լիճ), եթե Ռուսաստանը, անգամ ինքը՝ Կերենսկին, կառավարության գլուխ կանգներ, չէր ցանկանա ռուսական «շտիկների» օգնությամբ ստեղծել և պաշտպանել ինչ-որ մեկի և ինչ-որ բանի համար հիմնած «ինքնավար մարզը»:

Եթե Ռուսաստանին հարկավոր լինեին Վանը, Բիթլիսը և Մուշը, նա դրանք իրեն կմիացներ և կկառավարեր այնպես, ինչպես Կարսի և Երևանի հայաբնակ «ույեզդները»:

Ոչ ոք չի կարող պարտադրել Ռուսաստանին, որ իր սահմաններում «ինքնավար Հայաստան հիմնի, և եթե զինադադարի առիթով հրավիրված կոնգրեսում մեկը ցանկանա նման նախաձեռնություն հանդես բերել, դրանով ռուս ժողովրդին ոչ միայն իր դեմ կհանի, այլ նաև նրանց դեմ, ովքեր կանգնած են այդ ամենի (այսինքն՝ հայերի) հետևում: Ռուսաստանը 1912 թվականին հարավի ռեֆորմի հարց առաջ քաշեց, որովհետև դա վերաբերում էր Օսմանյան կայսրությանը, բայց քանի որ Հայաստանը մտցվեց Ռուսաստանի կազմի մեջ, Հայկական հարցն էլ ինքնին փակվեց…:

Պատերազմի ավարտն արդեն նկատելի է. արդեն նշմարվում են նրա հետևանքները, հատկապես, ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությանը, թերևս հոռետեսները չեն հավատա, որ Կոս-

տանդնուպոլիսը և նեղուցները մեզ են պատկանում, իսկ Օսմանյան Հայաստանի և Օսմանյան Վրաստանի մասին ոչ ոք չի կասկածում, քանի որ նրանք ամբողջովին մեր սահմանների մեջ կմտնեն, և մեր սահմանը Բաթումից մինչև Տրապիզոն կամ ավելի հեռու՝ Օլթիից մինչև Բայբուրդ, Կարսից Երզնկա կամ էլ մինչև Սվազ և Երևանից Վան ու Մուշ է ձգվելու: Իրականում հայոց միտքը ճիշտ սրա վրա պետք է կառուցի իր գործողությունների ծրագիրը: Միայն այն դեպքում, երբ հայ քաղաքագետները կհրաժարվեն ինքնավարության ուտոպիական իդեալից, կկարողանանք որոշել, թե ինչպես պետք է լուծվի նվաճված Օսմանիայի հողի և կառավարման խնդիրը. հիմնե՞նք այնտեղ Կարսի ու Բաթումի մարզերում գոյություն ունեցող ռազմական վարչություն կամ քրդերից դատարկված տարածքները բնակեցնե՞նք ռուսական ցեղերով, թե՞ այն հատկացնենք Այսրկովկասի հողազուրկ գյուղացիներին: Պատերազմից հետո Հայաստանը կներառվի Կովկասի սահմաններում և Վրաստանի նման հնարավորություն կունենանք հոգալու ազգային մշակույթի ու տնտեսության վերածննդի մասին:

Քաղաքական վերականգնման երազանքն էլ հայերը վերջնականապես պետք է մոռանան և ուտոպիան փոխարինեն իրապես հասանելի ազգային ռեալ նպատակներով:

Այսպիսին է պրն Մագիստրոսի հոդվածը. ըստ երևույթին բոլորովին սնանկացել է Հայկական ինքնավարությունը, եթե Դոլուբանովների թերթն է «Սուլթաթանա[18]» երգում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 08. 20 (№ 185)

Երզնկայից Էրզրում հայ բազմաթիվ փախստականներ են եկել: Նրանցից շատերը հիվանդ են:

---

[18] Ինչեցյալի հոգուն նվիրված հին ծիսական երգ (ծնթ. թարգմ.):

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՅԵԼԻ, 1916. 09. 04 (№ 665)

Հայկական մամուլը

«Հորիզոն» թերթում հոդված է տպագրվել հետևյալ վերնագրով՝ «Հայերը և Վրաստանի տարածքը»: Մեջբերում ենք այդ նամակից մի քանի հատված. «Հայ-վրացական վիճաբանության մեջ,- գրում է «Հորիզոնը»,- Վրաստանի տարածքի ազգագրական ամբողջականությունը հսկայական նշանակություն ունի: Վրաստանի ինքնավարությունը, որն այժմ վրացիների քաղաքական իդեալն է, կարող է վերանալ կամ առաջիկայում լուրջ խոչընդոտների հանդիպել, եթե ազգագրական ամբողջականությունը օտար տարրերի ներգաղթի պատճառով խախտվի, մտածում են մեր հարևանները, և քանի որ հայերը, ըստ նրանց՝ հետզհետե փորձում են տարածվել Վրաստանում, կամ, ինչպես վրացիներն են ասում, «գրավել Վրաստանը..», այդ իսկ պատճառով, Վրաստանի համար քաղաքական ապագայի տեսակետից, վտանգ են ներկայացնում: Այստեղից է բխում վրաց հրատարակիչների կողմից առաջ քաշած թեզիսը. «Եթե հայերը ցանկանում են վրացիների հետ ունենալ բարեկամական հարևանություն, ապա պետք է ձեռք քաշեն Վրաստանից կամ, այլ կերպ ասած, այլևս Վրաստան չլցվեն»:

«Հորիզոն»-ը նշում է, որ շատերը դեռ հիմա էլ կրկնում են, որ հայերը միտումնավոր են գալիս Վրաստան, նրանք նախապես մտածված նպատակ ունեն: Թերթն այսպիսի կարծիքը «զառանցանք» է համարում և պնդում է, որ եթե հնարավոր լիներ, վերջին հային էլ կտանեինք Վրաստանից և կվերաբնակեցնեինք Հայաստանում: Սրանից հետո թերթը բոլոր տեղափոխված հայերին բաժանում է մի քանի կատեգորիայի: Առաջին կատեգորիային դասվում են այն հայերը, ովքեր պատմական շրջանում են բնակվել Վրաստանում: Երկրորդ կատեգորիան կազմում են նրանք, ովքեր 1830-ական թթ. բնակություն հաստատեցին Ախալքալաքի

և Ախալցխայի գավառներում: Երրորդ կատեգորիան կազմում են այն հայերը, ովքեր արվարձաններից հաստատվեցին մեծ քաղաքներում: Չորրորդ կատեգորիան կազմում են հայ կապիտալիստները, ովքեր Վրաստանում հողեր էին գնում և նոր տիպի տնտեսություն վարում: Հինգերորդ կատեգորիան կազմում են այն հայերը, ովքեր ընթացիկ պատերազմի հետևանքով ապաստանել են Թբիլիսիում և նրա մերձակայքում:

Առաջին երկու կատեգորիայի հայերի արտաքսման մասին,- գրում է «Հորիզոնը»,- ոչ մի լուրջ վրացի հարց չի բարձրացրել, ճիշտ այնպես, ինչպես ոչ մի հայ հարց չի բարձրացրել թաթարների և հայերի տեղերում վերաբնակեցված գերմանացիների արտաքսման վերաբերյալ: Թեև գրում են որոշ վրացի հրատարակիչներ, սակայն դրանք ոչ մի քննադատության չեն դիմանա: Վրաստանի մայրաքաղաքը, իբրև Կովկասի վարչական և առևտրաարդյունաբերական կենտրոն, դեպի իրեն է ձգում ամեն ազգի մարդկանց: Ռուսները շարունակ բազմանում ու բազմանում են, օսերը, վրացիները, հրեաները և լեհերը հեռու տեղերից գալիս են, որպեսզի տարածքներ գրավեն: Զարմանալի չէ, որ ճակատագրի բերումով նաև հայեր են գալիս: Այս իրավիճակը կփոխվի, եթե վարչական ղեկավարությունը Կովկասի ապակենտրոնացման հիման վրա փոխվի, և նոր կենտրոններ ստեղծվեն՝ նոր առևտրաարդյունաբերական կյանքով, իսկ մինչ այդ մեր հարևաններին այլ բան չի մնում, քան այն, որ արհեստական կերպով ուժեղացնեն վրացիների ներգաղթը, այնքան հզորանան իրենց քաղաք-նստավայրում, որ վարչությունը իրենց ձեռքը վերցնեն: Հայ հասարակության գիտակից մասը ոչինչ չի ունենա դրա դեմ, քանզի լիովին կամակից է այն սոլոլակցիներին, ովքեր քաղաքի ինքնակառավարման մեջ լինելը ազգային գործ են համարում:

Հայ կապիտալիստների մասին «Հորիզոնը» գրում է, թե հայերի ազգային շահերը բոլորովին չեն պահանջում, որ կապի-

տալիստները Վրաստանում հողեր գնեն: Վրացի ազնվականները լավ կանեն, եթե հայ կապիտալիստներին հողեր չվաճառեն:

Վերջում «Հորիզոնը» գրում է՝ հաճույքով ենք նշում պարոն Ար. Ջ-շվիլիի կարծիքը, թե հայերի կողմից Վրաստանին ոչ մի վտանգ չի սպառնում:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈԻՐՑԵԼԻ», 1916. 09. 30 (№ 685)

Հայկական հարցը

Պարոն Մագիստրոսի[19] հոդվածը, ինչպես և սպասվում էր, մտքերի փոխանակում առաջ բերեց նաև Ռուսաստանի հայերի միջավայրում:

Անհնարին էր, որ դա այդպես չլիներ: Պարոն Մագիստրոսն այնպես վճռական դրեց Օսմանյան Հայաստանի ինքնավարության հարցը և նույն վճռականությամբ էլ այնպես ժխտեց, որ չէր կարող դժգոհություն չառաջացնել ինքնավարության կողմնակից հայերի մեջ: Նման դժգոհներից մեկն էլ պարոն Ջիվիլեգովն էր: Հնարավոր էր, որ ինքնավարության կողմնակիցների ծրագրերն իրարից տարբերվեին, հնարավոր էր, որ նրանց միջև տարաձայնություններ լինեին, սակայն ինքնավարության կողմնակիցները մի հարցում համակարծիք էին. բոլորն էլ գտնում էին, որ Օսմանյան Հայաստանին պետք է ինքնավարություն շնորհել: Դա անհրաժեշտ էր, որովհետև Ռուսաստանը և նրա դաշնակիցները պայքարում էին փոքր ազգերի ազատագրման համար, իսկ Հայաստանն էլ չէ՞ որ նրանցից մեկն է, վերջապես, Հայաստանը ևս պայքարում էր ազատության համար. շատ արյուն է թափել և այդ ամենի համար փոխհատուցում է պահանջվում: Մոտավորապես

[19] Մագիստրոս - Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյան, եկեղեցական, ազգային-հասարակական գործիչ (ծնթ. թարգմ.):

սրանք են դրդապատճառները, որոնց վրա հիմնվելով՝ հայերը ինքնավարություն են պահանջում:

Պատերազմի նախնական շրջանում ճիշտ այդպես էր դրված Հայկական հարցը, բայց Ռուսաստանի հասարակական և քաղաքական շրջանակներում հստակ ոչինչ չէին ասում: Միայն վերջին ժամանակներս Միլյուկովը նոր, հստակ ձևակերպում տվեց Հայկական հարցին: Հստակ է, որովհետև բավականին պարզ է այդ ձևակերպումը, և պարզ է, քանի որ այն հստակ է: Նա հայտարարեց, որ անհրաժեշտ է ոչ թե ինքնավարություն, այլ միացում: Այս բանաձևը, չնայած իր պարզությանն ու հստակությանը, ամբողջովին հակասում էր հայերի նույնքան պարզ ու հստակ բանաձևին՝ ինքնավարություն Հայաստանին:

Ռուսներից առաջինը Միլյուկովը փոխեց իր դիրքորոշումը, հայերից՝ Մազիստրոսը, բայց քանի որ հայերի մեջ դեռևս կան ինքնավարության կողմնակիցներ, վերջիններիս և միացման կողմնակիցների միջև վեճ ծագեց:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1916. 10. 05 (№ 452)

Միտիլինա կղզում Այվալից փախստականներին պատմել են, որ օսմանցիները Կոստանդնուպոլսում գերի են վերցրել հույների պատրիարքին, մեծաթիվ հոգևորականների և 500 հայտնի ու ազդեցիկ հույն գործիչների:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 10. 07 (№ 690)

Հայկական «Արև» թերթը, որը լույս է տեսնում Եգիպտոսում, հետևյալ տեղեկությունն է տալիս Օսմանյան կայսրությունից տեղահանված հայերի մասին. Կոնիայում և Էրեյլում 400 ընտանիք կա: Նրանց հովանավորում է Կոնիայի «չելեբը» (ղեկավարը): Բազանթ քաղաքում 200 ընտանիք կա, իսկ Ռաջոդոյում՝ 1.500 հայ,

հիմնականում կանայք և երեխաներ: Հալեպ քաղաքում՝ 5 հազար հայ. նրանց օգնում են տեղի հայերը: Գամա և Գոմ քաղաքներում մոտ 20 հազար հայ կա, ովքեր սեփական աշխատանքով են ապրում: Դամասկոսում 7 հազար հայ կա, նրանք արդեն տեղավորվել են: Երուսաղեմում 30 հազար հայ է, որոնց մասին հոգում է Ստամբուլի նախկին պատրիարք արքեպիսկոպոս Օրմանյանը: Բացի այդ, 20-ից մինչև 40 տարեկան 10 հազար հայեր աշխատում են երկաթգծի շինարարության վրա:

Հայոց կաթողիկոսը պատերազմի սկզբից մինչև 1916 թվականի սեպտեմբերի 1-ը, ինչպես հայտնում է «Արարատ»-ը, հայ փախստականների օգտին փոխանցել է 2.558.869 ռուբլի:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 10. 08 (№ 223)

Թեհրանից «Հորիզոն»-ին տեղեկացնում են, որ Պարսկաստանի ժամանակավոր կառավարությունը մի կողմից և Օսմանա-Գերմանական կառավարությունները՝ մյուս կողմից, համաձայնության եկել և կապ են ստեղծել ռազմական և ֆինանսական ասպարեզներում: Այդ պայմանագրի համաձայն՝ Պարսկաստանը պետք է զինի 40 հազար ժանդարմ:

Թեհրանից փախած հայերը նորից Թեհրան են վերադառնում:

Թեհրանում խոլերա է բռնկվել:

Հայոց կաթողիկոսը հայ փախստականներին օգնելու նպատակով ստացել է 2.558.869 ռուբլի:

«ՍԱՄՇՈԲԼՈ», 1916. 10. 09 (№ 455)

Մոտ ապագայում եպիսկոպոս Թորգոմը մեկնելու է Հաբաշ, Հնդկաստան և Յավա կղզի: Նրա նպատակն է նվիրատվություններ հանգանակել հայերին օգնելու համար:

Հայոց կաթողիկոսը բաց նամակ է ուղարկել Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին: Կաթողիկոսը երախտագիտություն է հայտնել նրան՝ հայերին աջակցելու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 10. 12 (№ 226)

Հայերի մեջ

Փախստականների նոր հոսք

Կառավարությունն անհրաժեշտ է համարում, որ Խնուսից, Երզնկայից, Բայբուրդից և այլ վայրերից փախած հայերին հյուրընկալեն Կարսի մարզում: Պատմում են, որ մեծ թվով փախստականներ կլցվեն Կարսի մարզ: Տարաբախտ փախստականների գործերի կառավարիչ գեն. Թամամշևը ժողովրդին օգնելու հայցով դիմել է Հայոց կենտրոնական կոմիտեին: Կոմիտեն համաձայնել և ձեռնամուխ է եղել ծախսերի հաշվարկին:

Գումարի հատկացում

Գեներալ Թամամշևի հրահանգով՝ Հայոց կենտրոնական կոմիտեին տրվելու է 315 հազար ռուբլի. այն նախատեսվում է հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների՝ հայ որբերի կացարանների ծախսերը ծածկելու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 10. 14 (№ 228)

Հայերի մեջ

Էջմիածնում

Թիֆլիսում ստացված տեղեկությունների համաձայն, պարենամթերքի բոլոր տեսակները վերջացել են, և այդ պատճառով մեծ թանկություն է առաջացել: Շաքարը լիովին սպառվել է, իսկ միանգամայն ոչ պիտանի մեկ գրվանքա հացն արժի 15-20 կոպեկ, նույնքան նավթը՝ 20 կոպեկ, բայց դա էլ չի ճարվում:

Հայոց կենտրոնական կոմիտեն սեպտեմբերի 14-ից մինչ այսօր Թիֆլիսի իր պահեստներից փախստականների համար առաքել է հացամթերք՝ 1) Աղստև՝ 4 վագոն ալյուր, 2) Գյումրի՝ 4 վագոն, 3) Գյանջա՝ 2 վագոն, 4) Իգդիր՝ 4 վագոն, 5) Վաղարշապատ՝ 3 վագոն, 6) Ղարաքիլիսա՝ 2 վագոն, 7) Երևան՝ 3 վագոն, 4) Սարիղամիշ՝ 1 վագոն:

Դրանից բացի, Ստավրոպոլում գնված ալյուրը ուղարկվել է՝ 1) Սարիղամիշ՝ 3 վագոն, 2) Էրզրում՝ 2 վագոն, 3) Ղարաքիլիսա՝ 3 վագոն, 4) Էջմիածին՝ 5 վագոն, 5) Ղամարլու՝ 2 վագոն, 6) Իգդիր՝ 3 վագոն: Կոմիտեն ձեռք բերել և ուղարկել է նաև 6 վագոն նավթ:

Փոխանցում փախստականներին

Գեներալ Թամամշևը հրահանգել է 500 հազար ռուբլի փոխանցել քաղաքների միության բաժնին՝ փախստականների ծախսերը հոգալու համար:

Ալյուրի գնում

Հայոց կենտրոնական կոմիտեի ռազմական պարենի գնորդ պարոն Դանիլևսկին 19 վագոն ալյուր է նախատեսել Եկատերինոդար ուղարկելու համար: Կոմիտեն աշխատում է վագոններ ձեռք բերել՝ ալյուրը տեղափոխելու համար:

Հայոց կենտրոնական կոմիտեից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ղամարլուում սննդամթերքը սպառվել է: Դեկտեմբերի 21-ին Թիֆլիսից ուղարկած ալյուրը դեռևս տեղ չի հասել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ». 1916. 10. 18 (№ 231)

Գեներալ Մ. Թամամշևի հայտարարությունը

Կովկասյան ճակատի փախստականների գլխավոր լիազոր, գեներալ Մ. Թամամշևը հայտարարել է հետևյալը. «Ռուսաստա-

նի պատերազմը Օսմանյան կայսրության դեմ երկու տարում պահանջել է միլիոնների ծախս՝ հայ այն փախստականներին տեղավորելու համար, ովքեր խոշոր ալիքի նման Օսմանյան կայսրությունից ներթափանցեցին Ռուսաստան: Ծախսերը հասել են 25 միլիոն ռուբ., և ռուսական բանակը որքան առաջ է գնում Օսմանյան կայսրության տարածքում, հայ փախստականների հոսքն այնքան մեծանում է: Այժմ կովկասյան ճակատում ծախսերը նախատեսված են միայն 200 հազար հայ փախստականների համար, չհաշված այլազգի փախստականները: Ներկայումս Ռուսաստանի կառավարության խնամատարությամբ նրանց համար բացվել են սննդի կետեր, մթերային պահեստներ, հիվանդանոցներ, դպրոցներ և ապաստարաններ երեխաների համար: Դրանցից բացի, փախստականներին տրվում է սննդամթերք և դրամ՝ բնակարաններ վարձելու և հագուստ գնելու համար: Հայրենիք վերադառնալու դեպքում նրանց կտրվի վարկով գումար՝ իրենց շենները վերականգնելու, սերմացու գնելու, անասուններ և գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու համար: Բացի այդ, հայ փախստական մտավորականներին կառավարության կողմից տրվել է 3 միլիոն ռուբ. երկարաժամկետ վարկ»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ». 1916. 10. 23 (№ 236)

Հայերի մեջ

Հայոց կենտրոնական կոմիտեն քննարկել է պատգամավոր Չխենկելիի տեղեկությունները պատերազմից տուժածների ծանր վիճակի մասին և որոշել է անհապաղ այնտեղ ուղարկել իրենց լիազորին, որն իր հետ կտանի 5 հազար ռուբ. և տաք հագուստ՝ առավել կարիքավորներին բաժանելու համար:

Խոշոր գումար

Նախարարների խորհրդի որոշմամբ, փոխարքան 300 հազար ռուբ. վարկ է տրամադրել Հայոց բարեգործական ընկերու-

թյանը՝ որպես օգնություն Օսմանյան կայսրության ենթակայության տակ գտնվող հայ գյուղացիներին, արհեստավորներին և վաճառականներին: Այդ գումարից, նշված ընկերության որոշմամբ, Հայ գրողների միությանը տրվում է 10 հազար ռուբ., իսկ փախստական հայ գրողներին՝ 15 հազար ռուբ.: Մնացած 275 հազար ռուբլին, որոշման համաձայն, պետք է բաժաներ Արտակարգ կոմիտեն, որի մեջ մտնում են Բարեգործական ընկերությունը, «Նպաստամատույցը» և Գրողների միության ներկայացուցիչները: Կոմիտեն տեղակայվելու է Երևանում:

Հայոց բարեգործական ընկերությունը մեկական վագոն շաքար է ուղարկել՝ Երևանի, Գյանջայի և Գյումրու փախստական հայերին բաժանելու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 10. 28 (№ 240)

Հայերի մեջ
Փախստականների կարիքները

Քաղաքային կապի բաժանմունքին Իգդիրից տեղեկացրել են, որ փախստական հայերը ծանր վիճակի մեջ են սնունդ ու հագուստ չունենալու պատճառով: Հարկավոր է անհապաղ օգնություն ցուցաբերել: Նաև բազմատեսակ հիվանդություններ են տարածվել նրանց մեջ:

Սերմացուի և սննդամթերքի բաշխում

Բաքվի հայոց հասարակական կազմակերպությունները որոշել են ցորենն ըստ արժեքի հատկացնել Գյանջայի, Երևանի և Կարսի հազար գյուղերին:

Հայոց բարեգործական ընկերության և Կենտրոնական կոմիտեի նախագահ Հարությունովը սենատոր Ն.Դ. Չապլինին հանդիպել և հակիրճ հաշվետվություն է ներկայացրել հայ փախստա-

կանների, ապաստարանների և դպրոցների մասին: Ապաստարաններում տեղավորել են 7 հազար մարդ, իսկ դպրոցներում 9 հազարի փոխարեն տեղավորել են 20 հազար երեխա: Սենատորը աջակցություն է խոստացել «Տատյանա» կոմիտեի կողմից և հանձն առել այցի գնալ դպրոցներ ու ապաստարաններ:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 10. 28 (№ 703)

Ինչպես Իգդիրից տեղեկացնում են Հայոց կենտրոնական կոմիտեին, Վանի կողմերում մեծ սով է: Անթիվ սովահար մարդիկ մթերային դատարկ պահեստների առաջ կանգնել և իզուր սպասում են ալյուրի: Իգդիրի պահեստից այնտեղ ուղարկվեց այն, ինչ հնարավոր էր՝ 500 փութ ալյուր, 502 փութ շաքար և հազար գրվանքա թեյ:

Ալաշկերտի Բայազետից Հայոց կենտրոնական կոմիտեին տեղեկացրել են, որ պարենը բոլորովին սպառվել է, և փախստականները սաստիկ սով են ապրում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 11. 06 № 248

Ավանդների կանխիկացում

Էրզրումի մի շինությունում հայտնաբերել են մեծաքանակ թանկարժեք իրեր: Այդ առիթով Էրզրում է մեկնել Օտոմանի բանկի տնօրեն Ջորջ Ալգարդը՝ պարզելու, թե այդ իրերը իսկապե՞ս իրենց բանկի ավանդատուներին են պատկանում:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 11. 08 (№ 717)

Հայերի կյանքը

1914 թվականի դեկտեմբերի 17-ին, Արդվինի գավառի հայկական մի գյուղում կանանց և երեխաներին դաժան փորձու-

թյուններ էին սպասվում թշնամուց: Այդ ժամանակ աչքի ընկավ զինվոր Իոսեբ Դավիթի Ղանչավելին և իր փոքրիկ ջոկատով փորձությունից փրկեց հայ կանանց և երեխաներին: Այս հերոսը, ում շնորհիվ փրկված մոտ 200 երեխա հիմա հանգիստ սովորում է ուսումնարանում, զոհվեց: Հայկական թերթը նշում է այդ մասին և խնդրում, որ ուղարկեն գրքեր ու թերթեր այն ընթերցասրահի համար, որ երախտապարտ գյուղը բացեց Ղանչավելիի անունով: Ընթերցասրահում կախված է Ղանչավելիի մեծ դիմանկարը:

Ըստ «Հորիզոն»-ի՝ Ռումինիայից փախստական մեծաթիվ հայեր անտանելի վիճակում են: Հատկապես դա վերաբերում է Դոբրուջի փախստականներին:

Փախստականներին հետապնդել են գերմանացի և բուլղարացի հեծյալ զինվորները, հասնելով նրանց՝ հարցրել են, թե արդյոք, հայեր կան նրանց մեջ: Հայերին ձերբակալել, տարել են իրենց հետ: Մյուսներին թույլ են տվել գնալ Ռուսաստան և բնակվել այնտեղ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 11. 09 (№ 250)

Օգնություն փախստականներին

Բարեգործական ընկերության վարչությունը ծավալուն նամակ է հղել գաղթականների գործերը կառավարող գերագույն լիազոր, գեներալ Թամամշևին: Վարչությունը տեղեկացրել է, որ Ախալցխայի շրջանում 600 փախստական կա՝ 400 չափահաս և 200 երեխա, իսկ Արդահանի մարզում՝ 800 հոգի՝ 500 չափահաս և 300 երեխա: Այս փախստականներին պահելու համար վարչությունը գեներալ Թամամշևից խնդրել է 14 200 ռուբլի մինչև հունվարի մեկը:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 11. 09 (№ 250)

Հայերի մեջ

Կենտրոնական կոմիտեին Խնուս-Մուշ շրջանից տեղեկացրել են, որ այնտեղ են եկել 33 փախստական առանց տաք հագուստի: Կոմիտեն հրահանգել է՝ անհապաղ տաք հագուստ ուղարկեն: Նույն կոմիտեին տեղեկացրել են Օսմանյան կայսրությունում 13 հայ կախաղան հանելու մասին:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1916. 11. 10 (№ 719)

«Հորիզոն»-ին տեղեկացրել են. Բասենի դաշտ էի ուղևորվել՝ փախստականներին հատկացված գումարն ու սնունդը բաժանելու: Ամբողջ տարածքն ավերված է: Շատ հող են վարել, սակայն ցանելու ցորեն չունեն: Անհրաժեշտ է, որ հայկական գյուղատնտեսական ընկերությունը դրան ուշադրություն դարձնի:

Որոշ լքված գյուղերում, ինչ-որ «փոդրադչիներ» տները քանդում են և շինանյութը օգտագործում նոր անցկացվող ճանապարհի շինարարության համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 11. 16 (№ 256)

Հայերի մեջ

Պարոն Օհանջանովը Հայոց կենտրոնական կոմիտեին տեղեկացրել է, որ հայերը Վանից հապճեպ փախչում են դեպի Տաբարշ և կանգ առնում Ջանակում: Վանը դատարկվել է: Հույս չկա, թե կոմիտեի մթերային պահեստները և խանութները անվնաս կպահպանվեն:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 11. 17 (№ 257)

Հայերի մեջ

Հայոց կենտրոնական կոմիտեին Իգդիրից տեղեկացրել են, որ Վանից փախած 15 հազար հոգի մոտենում է քաղաքին: Կոմիտեից անհապաղ օգնություն են խնդրում փախստականներին հագուստով և սննդով ապահովելու համար:

Փախստականների վերաբնակեցում

Հայկական կազմակերպությունները միացյալ ժողով են արել և որոշել՝ Թիֆլիսից դուրս հանել և կառավարության կողմից տրամադրած վայրերում վերաբնակեցնել այն փախստականներին, որոնք ո՛չ ինչքի տեր են, ո՛չ էլ որևէ գործ ունեն:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 11. 19 (№ 259)

Հայերի մեջ

Օհանջանյանը Հայոց կենտրոնական կոմիտեին տեղեկացնում է, որ Վանի շրջանից կազակներն ամբողջովին վտարել են քրդերին, և փախստական հայերը վերադառնում են Վան և մոտակա գյուղերը: Մթերային խանութներում սննդամթերքի մի մասը անվնաս է մնացել, օրինակ՝ ալյուրը, շաքարը և թեյը:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 11. 24 (№ 262)

Հայերի մեջ

Հայկական կազմակերպությունների ստացած տեղեկությունների համաձայն, վերջին ժամանակներս Վանի շրջանում 6 հազար հայ ընտանիք է մնացել՝ անտուն և առանց ուտելիքի:

Քրդերը և փախստական հայերը

Եպիսկոպոս Մխիթարին Իգդիրից հեռագրով տեղեկացրել են, որ Օրգովեռում քրդերը հարձակվել են հայ փախստականների վրա և թալանել նրանց: Հետագայում զինվորները վռնդել են քրդերին, և հայերը հանգստացել են:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 11. 27 (№ 265)

Հայերի մեջ

Հայկական կազմակերպությունները տարբեր տեղերից լուրեր են ստանում, որ փախստական հայերը շատ աղքատ են և բազում վարակիչ հիվանդություններ են տարածվել նրանց մեջ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 11. 30 (№ 267)

Հայերի մեջ

Տաք հագուստեղեն

Գեներալ Թամամշևը հրահանգել է 50 հազար ռուբլի փոխանցել Հայոց կենտրոնական կոմիտեին՝ փախստական հայերի համար ձմեռային հագուստ գնելու:

Հայոց կենտրոնական կոմիտեին լուր է հասել Էրզրումից, որ այնտեղ մոտ 5 հազար փախստական նյութական ծանր կացության մեջ է: Կոմիտեն համապատասխան միջնորդությամբ դիմել է գեներալ Թամամշևին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 12. 04 (№ 271)

Հայերի մեջ

Հայկական բարեգործական ընկերության ներկայացուցիչը 2 վագոն օճառ և 4 վագոն ալյուր է գնել Եկատերինոդարում: Այդ նույն ներկայացուցչին ռազմական սննդի գնորդ պարոն Դանի-

լովսկին տրամադրել է 30 վագոն ալյուր, ևս 20 վագոն խոստացել է ուղարկել հետո: Հայոց կենտրոնական կոմիտեն իր հերթին մեկ վագոն մակարոն և վերմիշել է գնել Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ որբերի համար:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 12. 08 (№ 274)

Հայերի մեջ

Հայերի կոտորածը: Լոնդոնում «Կապույտ գիրք» վերնագրով լույս է տեսել մի երկ՝ «Օսմանյան կայսրությունում հայերի կացության մասին»: 1915 թվականին 1.800.000 հայերից կենդանի է մնացել միայն 600 հազարը: Մնացածին ամբողջապես կոտորել են:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 12. 10 (№ 276)

Հայերի մեջ

Հայերի պատրիարքի սպանությունը:

Երիտթուրքերը անվավեր են ճանաչել հայերի սահմանադրությունը և Ստամբուլի պատրիարք Զավենին արտաքսել են Երուսաղեմ, սակայն ճանապարհին սպանել են:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 12. 11 (№ 277)

Հայերի մեջ

Գեներալ Թամամշևի հրահանգով Հայոց կենտրոնական կոմիտեին փոխանցել են 40 հազար ռուբլի՝ հայ փախստականների համար ձմեռային հագուստ գնելու:

Հայոց կենտրոնական կոմիտեն Անգլիայից հեռագիր է ստացել, որ Վանի շրջանից 60 սոված-ծարավ և մերկ հայ երեխաներ

են բերել: Կոմիտեն տաք հագուստ է ուղարկել երեխաների համար և հրահանգել, որ երեխաներին ուղարկեն Գյումրու ապաստարան:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1916. 12. 29 (№ 290)

Հայերի մեջ

Փախստական հայերի օգտին Բաքվի նավթարդյունաբերական «Свет» ընկերությունը Էջմիածին է ուղարկել 50 տակառ նավթ, իսկ Երևան և Մեծ Ղարաքիլիսա՝ քսան-քսանհինգ տակառ:

Հայոց բարեգործական ընկերությունը փախստականների համար գնել է 7 վագոն բրինձ և իր լիազորին հանձնարարել է Հյուսիսային Կովկասում գնել ևս 60 վագոն եգիպտացորենի ալյուր:

1 9 1 7

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1917. 02. 21 (№ 40)

Օսմանիա

Ցյուրիխ: Ստամբուլից տեղեկացնում են. «Թալեաթ բեյը փորձում է նախարարությունում նշանակել քաղաքական այնպիսի գործիչների, ովքեր չեն մասնակցել հայերի և սիրիացիների հալածանքներին»: Ասում են՝ սա կանխամտածված քայլ է, որով չեզոք և դաշնակից պետություններում ուզում է մոռացության մատնել երիտթուրքերի կողմից հայերի և արաբների դեմ իրականացված հանցագործությունները:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1917. 02. 23 (№ 42)

Քրդերի կողմից գերեվարված հայերին փրկագնելու համար Հայոց կենտրոնական կոմիտեն Հայոց բարեգործական ընկերության Կովկասի բաժանմունքից ստացել է 1.500 ռուբլի, իսկ Դարուբանդի բաժանմունքից՝ 6.400 ռուբլի:

«ՍԱԽԱԼԽՈ ՓՈՒՐՑԵԼԻ», 1917. 02. 24 (№ 803)

Մեր հարևանները

Հայերը.

Ըստ «Հորիզոնի»՝ Թոփրակ-Կալեում (Ալաշկերտ) գտնվող հիվանդանոցը, որը բացվել էր կենտրոնական կոմիտեի կողմից,

փակվել է: Այդ կողմերում 600 մեծահասակ և 130 հայ որբ երեխա մնացել են անօգնական: Հիվանդանոցի տնօրենը՝ բժիշկ Օհանյանը, լքել է շրջանը: Փախստականներից շատերը ծանր հիվանդ են:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1917. 03. 24 (№ 67)

Հայաստանի պետական ինքնավարությունը

Մոսկվայի հայկական կոմիտեն իշխ. Լվովին հեռագիր է ուղարկել, որտեղ ասված է. «Հայաստանը պետք է ազատ լինի և պետականորեն ինքնավար»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1917. 04. 09 (№ 71)

III. Օսմանյան Հայաստանի խնդիրը միջազգային խնդիր է, ուստի այն լուծում կստանա միայն միջազգային կոնգրեսում: Կուսակցությունը պետք է ջանքեր թափի, որ այդ խնդիրը լուծում ստանա այնպես, ինչպես դա ցանկանում են օսմանահայերը:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1917. 05. 13 / 26 (№ 101)

Սադրանք Բաքվում

Բոլորովին վերջերս քաղաքում կրակոցներ լսվեցին: Լուրեր տարածվեցին, թե հայերի և թաթարների միջև բախում է տեղի ունեցել: Սակայն հետագայում պարզվեց, որ այդ ճարպիկ հնարանքը միտումնավոր կազմակերպել էին խուլիգանները:

Սադրանք Նուխիիում

Տեղի մուսուլմանները մեղադրվում են հայերի ջարդ կազմակերպելու մտադրության մեջ: Սադրիչները նրանց դեմ տրամադրեցին տեղի ռուս զինվորներին, որոնք մեկ օր անց անձամբ համոզվեցին, որ մեղադրանքները բոլորովին անհիմն են:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1917. 05. 31/13 (№ 115)

Հույների ջարդը

Սոլուն, 27 մայիսի: Այվալից գաղթածները պատմում են, որ այնտեղ թուրքերին մեծ դիմադրություն են ցույց տվել: Թուրք-գերմանացի սպաները կոտորել են 7 հազար հոգու, քաղաքն ամբողջովին ավերված է: Նրանք վաղուց էին ցանկանում գնալ Այվալից, բայց Կոնստանդին արքայի հյուպատոսը խորհուրդ չէր տալիս: Հույն փախստականներն ահից զարհուրել էին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1917. 06. 23/5 (№ 135)

Լլոյդ Ջորջի ելույթը

Լոնդոն, 16 հունիսի: Լլոյդ Ջորջը ելույթ է ունեցել Գլազգոյում: Ի միջի այլոց նա ասել է, որ Բելգիան պետք է վերադարձնել բելգիացիներին, իսկ Միջագետքը ապագայում չի կարող մնալ օսմանյան բռնապետության կրակի մեջ այնպես, ինչպես Հայաստանը: Գերմանացի գյուղացիների նոր ձեռք բերած տնտեսությունն այնպես պետք է կազմակերպել, ինչպես բնակիչներն են ցանկանում: Լլոյդ Ջորջը մեծ հիացմունքով և գովեստով է խոսել Ռուսաստանի մասին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1917. 06. 27/9 (№ 138)

Հայ-քրդական տրամադրությունը

Օրերս թերթերում հաճախ են հանդիպում տեղեկություններ Երևանի նահանգում և այս կամ այն շրջանում տեղի ունեցող կողոպուտների մասին:

Գրավոր տեքստերից բացի, նաև բանավոր կերպով լուրեր են տարածվում, թե, իբր, որոշ վայրերում քրդերը հարձակվում են

հայերի վրա և կողոպտում միանգամայն առանց պատճառի: Մինչդեռ վրացական մամուլը այլ կերպ է բացատրում. «Անցած մայիսի 22-ին Բեգրիկալ գյուղում (գտնվում է Օսմանյան Հայաստանում) Կովկասի հրաձգային հայկական 5-րդ ջոկատը, իբր, հարձակվել է բնակչության վրա և կոտորել նրանց, հատկապես ծերերին և երեխաներին:

Այս ամենը պետք է ամենուրեք հուզեր քրդերին, և նրանք իբր վրեժ են առնում բեգրիկալցիներից»:

Այդ լուրերը հանգեցրին նրան, որ հեծելազորային մեկ ջոկատ ուղարկվեց Երևանի նահանգ՝ կարգուկանոն հաստատելու համար:

«Հայերի՝ մեր անբաժան հարևանների, մեզ համար ցանկալի դաշնակիցների բարեկեցությունը և ազգային անձեռնմխելիությունը մեզ համար շատ հաճելի է և չափազանց կարևոր,- ասել է Իլիա Ճավճավաձեն:- Այն բանից հետո, երբ անկում ապրեց Հայաստանը, բացվեցին Վրաստանի հարավային դարպասները, և այդ օրվանից մինչ օրս վրացիները փորձում են այդ դարպասները փակել, սակայն չեն կարողանում»:

Այսօր էլ նույն վիճակում ենք, ուստի երբեք չենք կարող սառնասիրտ լինել, եթե Հայաստանին և հայերին առանց պատճառի և անարդարացի որևէ մեկը ցանկանա ոչնչացնել, լինի նա քուրդ, թե մեկ ուրիշը:

Սակայն այս դեպքում ևս մենք միանգամայն բավարար չենք համարում զորք ուղարկելը: Զորքը ռազմական կազմակերպություն է, զենք և ֆիզիկական ուժ գործադրող. նա խաղաղությունը կարող է վերականգնել, եթե առաջնորդվի ժողովրդի վստահությունը վայելող և իրավասու կառավարության կողմից: Սակայն, երբ խոսքը վերաբերում է երկու հարևան ժողովուրդների միջև անհամաձայնությանը, խնդրի լուծումը պետք է վստահել այդ ժողովուրդների կողմից նման նպատակների համար ընտրված մարդկանց:

Ուստի մենք անհրաժեշտ ենք համարում, որ Այսրկովկասի կոմիսարիատը երկու հրահանգ տա. առաջինը՝ բանակին, որ նա ոչ մեկի դեմ զենք չգործածի, մինչև վերին ատյանից՝ տվյալ դեպքում կոմիսարիատից համապատասխան կարգադրություն չստանա, իսկ երկրորդ հրահանգով՝ հայ և քուրդ ժողովուրդներից ընտրված ներկայացուցիչներով Երևանի նահանգում պետք է ստեղծել մի հանձնախումբ, որը կբացահայտի առկա բոլոր խնդիրների ծագման պատճառները և կհայտնաբերի մեղավորներին:

Եթե այս ամենն այժմ անհավանական ու ինչ-ինչ պատճառներով անիրականանալի դառնա, ապա հետաքննության համար Թիֆլիսից պետք է ուղարկվեն երկու կողմերի համար վստահելի մարդիկ՝ Այսրկովկասի կոմիսարներից որևէ մեկի նախագահությամբ:

Մենք վախենում ենք, որ եթե ներկայիս կառավարությունը այս կերպ չվարվի, ապա կարող է կրկնվել այն, ինչը տեղի ունեցավ 1905-1906 թվականներին հայերի և թաթարների միջև:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1917. 09. 25 (№ 235)

Հայերի ինքնապաշտպանությունը

«Դաշնակցություն» կուսակցությունը հայերի ինքնապաշտպանության համար ընդունած բանաձևում նշել է, որ եթե Հայաստանում շարունակվի անարխիան և քրդերը չդադարեցնեն հայերի վրա հարձակումները, ճակատում խառնակչություն, քաոս կառաջանա և անհնար կլինի ոչ միայն միակցված գավառները, այլ նաև ամբողջ Այսրկովկասը, որի կորուստը, կասկածից վեր է, իսկական աղետ կլինի պետության համար: Օսմանյան զորքերի Այսրկովկաս ներխուժելու արդյունքում խիստ կտուժի ողջ բնակչությունը և մասնավորապես՝ հայությունը, ճակատի ամրապնդման համար բանաձևը պահանջում է՝ փորձել կովկասյան

ճակատում ներգրավել տեղի բնակչությունից կազմված ռազմական միավորներ: Պետք է եռանդուն միջոցներ ձեռնարկել քրդական ավազակախմբերի հարձակումների դեմ. այն լուրջ սպառնալիք է ճակատի համար: Այդ գործում ղեկավարությանը պետք է օգնեն աշխարհազորայինները: Միևնույն ժամանակ նույն նպատակով անհրաժեշտ է ստեղծել ժողովրդական ոստիկանություն:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1917. 12. 22 (№ 279)

Կողոպուտ Սարիղամիշում

Սարիղամիշի կայարանից հեռագիր է ստացվել Այսրկովկասի կոմիսարիատում. հայտնում են, որ Սարիղամիշում թալան է սկսվել: Հազարավոր զինվորներ խուժում են կայարանի պահեստները և թալանում: Դա կարող է երկար տևել, որովհետև պաշտպանողներ չկան: Վնասը աննկարագրելի է: Բնակիչները խուճապի մեջ են:

1 9 1 8

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 01. 05 (№ 4)

Խառնակություն Ախալցխայում

Դեկտեմբերի 27-ին, առավոտյան ժամը 8-ին, լուրեր տարածվեցին, թե տեղացի 15 հազար զինված մուսուլմաններ հարձակվում են քաղաքի վրա՝ կողոպտելու և զինապահեստ-ամրոցը գրավելու նպատակով: Սարսափը պատեց բնակիչներին: Ով կարող էր զենք գործածել, ավելի քան 5 հազար մարդ, հավաքվեցին գործադիր իշխանության բակում, պահանջեցին հրացաններ, հակառակ դեպքում,- ասացին նրանք,- զինապահեստի դուռը կջարդենք և ուժով կվերցնենք: Կոմիտեն հրացաններ բաժանեց միայն բանակից ազատվածներին: Բնակիչները ձեռնամուխ եղան իրենց ունեցվածքը թաքցնելու գործին և պատրաստ էին փախչելու ինչոր տեղ՝ հալածանքների ու ջարդի չենթարկվելու համար: Եվ, իսկապես, քաղաքից 8 վերստ հեռավորության վրա Բորժոմիի խճուղիում հավաքվել էին մի քանի հազար մուսուլմաններ՝ զինված հրացաններով, բահերով, կացիններով ու երկաթաձողերով:

Քաղաքի ներկայացուցիչների և մուսուլմանների միջև կայացավ պատվիրակների հանդիպում: Ասում են՝ մուսուլմանները պահանջում էին ամրոցի և զինապահեստի հանձնում: Դեկտեմբերի 28-ը այդպես էլ անարդյունք մթնեց, որովհետև կողմերը համաձայնության չեկան: Բնակիչները առավոտյան սպասում էին թշնամու հարձակմանը, ուստի ինչպես ամրոցը, այնպես էլ քաղա-

քի ծայրամասային թաղամասերն ուժեղացվել էին զինված բանակայիններով և բնակիչներով: Կազմակերպեցին և բերդ-ամրոցներում տեղադրեցին 10-15 գնդացիրներ: Այդ գիշեր բնակիչները ոտքի ելան՝ դժբախտության առաջն առնելու սպասումով:

Այսպես թե այնպես, գիշերը խաղաղ անցավ: Երկրորդ օրը թշնամին մի քանի կողմից մոտեցավ քաղաքին և բարձունքներից ժամը 11-ին սկսեց կրակել: Ամրոցից նույնպես ճարճատեցին գնդացիրները և ապա ճայթեցին հրացանները: Եկեղեցիների զանգերը միացան հրացան-հրանոթների որոտներին, իսկ սարսափահար երեխաների ու կանանց ծղրտոց-ճղավոցը կրկնապատկում էր տեսարանի սարսափը: Հրաձգությունը երկու կողմից էլ ավելի քան անկանոն էր. տարեցներն անփորձ էին և կրակում էին վերևներքև: Հայկական գյուղերից սկսվեց փախստական կանանց ու երեխաների հոսքը դեպի քաղաք, նրանք փախել էին հարևան Ծուղրութ և Ծիրա գյուղերից՝ բոլորովին ոտաբոբիկ, տկլոր, որովհետև չէին հասցրել հագնվել կամ որևէ բան վերցնել իրենց հետ: Վրա հասավ նաև խառնակիչների ժամը. նրանք ավելի էին վախեցնում առանց այդ էլ սարսափահար ժողովրդին՝ բացականչելով՝ սպանեցին, բոլորովին կոտորեցին ծուղրութցիներին, համաջիլցիներին, սխվիսելցիներին և այլն, իրականում, սակայն, այս գյուղերում ոչինչ չէր պատահել: Այս իրադարձությունների պատճառով հուզված հայերը և վրացիները գնացին զինապահեստ՝ զենքեր վերցնելու: Զինապահեստի հսկիչը հանգստացնում էր քաղաքացիներին. «Համբերեք, եթե հարկ լինի, մենք ինքներս ձեզ զենք կբաժանենք: Իսկ հիմա թշնամին ոչինչ չի անում, դրա կարիքը չկա»:

Հրաձգությունը տևել է 3-4 ժամ: Զոհեր չեն եղել, վիրավորվել է երկու հայ զինվոր:

Թիֆլիսի կոմիսար Ռամիշվիլին դժգոհ է եղել մուսուլմանների պատվիրակներից. նրանք նույնպես պահանջել են, որ իրենց էլ զենքով ապահովեն՝ պաշտպանվելու համար: Կոմիսարը

նրանց առաջ զենքից օգտվելու հետևյալ պայմանն է դրել. զինանոցից զենք կտրվի առաջին հերթին զինվորներին, և եթե զենք մնա, միայն այդ ժամանակ համամասնությամբ կբաժանվի բոլոր ազգերին, նրանց հետ նաև մուսուլմաններին: Այս որոշմանը համաձայնել են մուսուլմանների պատվիրակները և վերադառնալով՝ դադարեցրել են հրաձգությունը:

29-ի առավոտը խաղաղ բացվեց: Ամրոցի պահապան զինվորները վերստին իրենց տեղերում էին: Սադրողները դեկտեմբերի 29-ին դարձյալ տարատեսակ սարսափելի լուրեր էին տարածում, թե, ահա, ուր որ է, թաթարները կգան և կսկսեն կոտորել խաղաղված ժողովրդին: Դեկտեմբերի 29-ին մինչև կեսօր իրավիճակը խաղաղ էր, և հարձակում, ջարդ չի եղել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 01. 11 (№ 8)

Հայ փախստականներ

Հայ փախստականների թիվը սահմանափակվում է հետևյալ նիշերով. Երևանի նահանգ՝ 117.287, Կարսի մարզ՝ 14.234, Գյանջայի նահանգ՝ 7.060, Թիֆլիսի նահանգ՝ 1.397, Բաթումի մարզ՝ 3.034, Բաքվի սանջակներ՝ 2.120, Վանի մարզ՝ 23. 261, Բաշղալի մարզ՝ 1.809, Բայազետի մարզ՝ 8.500, Անիի Դուտակ Մուշ. մարզ՝ 14.140, Կարակլիսի Ալաշկ. շրջան՝ 15 հազար, Խորասանի շրջ.՝ 12.234, Էրզրումի մարզ՝ 4.676, Բայբուրդի մարզ՝ 637, Երզնկայի մարզ՝ 1.193, Տրապիզոնի շրջան՝ 696, Ուրմիայի շրջան՝ 1.010, Խոյի շրջան՝ 612, Դիլմանի շրջան՝ 3.118, Թավրիզում՝ 992, ընդամենը՝ 228.110 մարդ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 01. 16 (№ 12)

Լեհերը և հայերը

Կարսից Հայ ազգային խորհրդին տեղեկացնում են, որ տեղացի լեհերը հայերին խոստացել են լեհական մի գունդ ուղարկել Կարս:

Հայերի զորահավաք

Զորահավաքի հարցում Ջալալօղլիի և Գերգերի հայերը երկու մասի բաժանվեցին. մի մասը հարեց դաշնակցականներին և զինվորագրվեց, իսկ մյուսները ներկայացան իբրև բոլշևիկներ և զորահավաքին դեմ դուրս եկան:

Հայոց Ազգային խորհրդին հեռագրով տեղեկացնում են, որ Երևանի նահանգում և Կարսի մարզում զորահավաք է անցկացվում: Հավաքագրում են բոլոր նրանց, ովքեր կարող են զենք կրել:

Հայոց Ազգային խորհրդի անդամ են ընտրվել՝ էսէռներից՝ Աթաբեկյանը, Տեր-Օհանյանը, ժողովրդական կուսակցությունից՝ Այվազյանը, Հարությունովը, դաշնակցականներից՝ Աղբալյանը, Գաբազյանը, Գյուլխանդարյանը, Կարճիկյանը, Պարոնյանը, Տեր-Մինասյանը, անկուսակցականներից՝ Բեկզադյանը, Զաքարյանը, Մամիկոնյանը, մենշևիկներից՝ Երզնկյանը և Տեր-Ղազարյանը:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 01. 19 (№ 15)

Վերջին հեռագրերը

Երևանից տեղեկացնում են՝ Սուրմագինի և Նախիջևանի մարզերում կողոպուտ-թալանը շարունակվում է: Սպանվածները շատ են:

Իգդիրից տեղեկացնում են. քրդերը հարձակվել են գանձատար տրանսպորտի վրա, հափշտակել մեծ քանակությամբ հաց: Սպանվել է մի քանի զինվոր: Բայազետի, Մոզունի և Էջմիածնի միջև հաղորդակցությունը կտրվել է: Կողոպուտ-թալանը սաստկանում է:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 01. 20 (№ 16)

Նոր Բայազետից պրն Չխենկելիին տեղեկացնում են, որ անարխիա է տիրում, ամենուր կողոպուտ-թալան է և ջարդ-սպանություն, մի գյուղը հարձակվում է մյուսի վրա. կառավարությունը չի երևում. ճանապարհներին խաղաղ մարդկանց երթևեկը դադարել է, փոստն այլևս չի աշխատում:

Այսրկովկասի կոմիսարիատին տեղեկացնում են, որ Բակինի երկաթուղու վիճակը հետզհետե ավելի է վատանում. կայարանների ու գնացքների վրա մշտապես հարձակվում են Արարատի քրդերը, ճանապարհը բոլորովին պաշտպանված չէ: Կոմիսարիատին խնդրում են՝ աշխարհազորայինների մի ջոկատ ուղարկել ճանապարհը հսկելու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 01. 24 (№ 19)

Վերջին հեռագրերը

Այսրկովկասի կոմիսարիատին Արարատ կայարանից հեռագրով տեղեկացնում են, որ դեպի Արարատ կայարան և Դավալու է գալիս մոտ 6 հազար քուրդ:

Արարատ կայարանից Այսրկովկասի կոմիսարիատին տեղեկացնում են՝ կայարանի մերձակայքում հրաձգություն է, պահակները փախել են: Ծառայողներին համակել է սարսափը, նրանք պատրաստ են մեկնել առաջին իսկ գնացքով:

Ուլուխանլուից Այսրկովկասի կոմիսարիատին տեղեկացնում են, որ քրդերը հարձակվել են Արազդայան կայարանի վրա: Կողոպտել և հրդեհել են տները, սպառնում են մերձակա շրջաններին: Մի քանի միլիոն արժողությամբ գույք է ավերվել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 01. 24 (№ 19)

Զինված հարձակում

Հունվարի 22-ին, երեկոյան ժամը 8-ին, վեց զինված մարդ ներխուժել է Կարսի «Северный номер»-ում հանգրվանած վաճառական Ջամբազյանի սենյակ, հափշտակել 60 հազար ռուբլի արժողությամբ իրեր և անհետացել: Հարձակվողներից մեկը եղել է սպայական համազգեստով:

Օգնություն կողոպտված գյուղերին

Հայ բարեգործական ընկերությունը 10 հազար ռուբլի է ուղարկել Նուխիի գավառ՝ վերջերս կողոպտված 11 գյուղերի բնակիչներին օգնելու համար՝ անկախ նրանց ազգությունից:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 01. 25 (№ 20)

Վերջին հեռագրերը

Արարատ կայարանից (հունվարի 23-ի ամսաթվով, երկաթուղու գործակալ Չիտաշվիլի) Այսրկովկասի կոմիսարիատին հեռագրով տեղեկացնում են, որ գիշեր թե ցերեկ քրդերը հարձակվում են մեծ ուժերով: Կողոպուտ-թալանը, ջարդն ու կոտորածները հաճախակի են դարձել: Տեղի բնակիչները պատսպարվում են սարերում: Կայարանի աշխատակիցներին մինչև հիմա մի կերպ պահել ենք տեղում, սակայն հիմա նրանց այստեղ պահելը անհնար է: Խնդրում ենք փակել Արարատ կայարանը: Շտապ գնացք ուղարկեք Ուլուխանլու՝ աշխատակիցների և պետական գույքը տեղափոխելու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 01. 28 (№ 23)

Հայերի զորահավաքը

Օսմանահայերի զորահավաքը լավ է ընթանում: Համարյա բոլորն ուրախությամբ զինվորագրվում են հայ ազգային ջոկատներում:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 02. 06 (№ 29)

Վերջին հեռագրերը

Ջուլֆա-Բաքու երկաթուղու շարժակազմի պետ պրն Տրաչենկոն փետրվարի 4 թվակիր հեռագրով տեղեկացնում է Այսրկովկասի կոմիսարիատին. «Հայերի և թաթարների միջև կռիվներն ազգային հողի վրա սաստկանում են: Կայարանը և Նորաշենը շրջապատված են թաթարներով՝ հայերին կոտորելու նպատակով: Կայարանի աշխատակիցների վիճակը անտանելի է: Աշխատողները որոշել են վաղն նեթ հեռանալ: Ուլուխանլու կայարանի փակումը կհանգեցնի նաև դեպի Ջուլֆա երթևեկության դադարեցմանը»:

Երկաթգծի գործակալ պրն Լիշչենկոն Այսրկովկասի կոմիսարիատին հեռագրում է. «Հայկական զորքերի և թաթարների միջև 3 օր է մարտեր են մղվում. այդ մարտերը մոտենում են Ուլուխանլու կայարանին: Ինչպես թաթարներն են ասում, Ուլուխանլուն մարտադաշտի է վերածվելու»:

Ուլուխանլուից պրն Տրաչենկոն փետրվարի 4 թվակիր հեռագրով Այսրկովկասի կոմիսարիատին տեղեկացնում է. «Այսօր՝ երեկոյան ժամը 7-ին տեղի թաթարներն սկսել են կայարանի կողոպուտը»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 02. 15 (№ 37)

Պատերազմ

Թուրքիայի հարձակումը

Թուրքերը հայերի մասին

Էրզրումից գեներալ Օդիշելիձեն տեղեկացնում է. «Օսմանյան կայսրության զորքերի հրամանատար Վեհիբ փաշան հայտարարեց, որ առաջ կգնա այնքան, մինչև հանդիպի ռուսական զորքին: Հայ ազգային գնդերը նա ռուսական զորք չի համարում: Նրա իսկ խոսքերով՝ դա անհրաժեշտ է ռուսների՝ պատերազմի ընթացքում գրաված մարզերում մուսուլման բնակչությանը պաշտպանելու համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է շտապ Էրզրում ուղարկել ռուսական մի քանի գումարտակ, որոնք կծառայեն որպես առաջապահ: Միայն այդպես հնարավոր կլինի կանխել օսմանյան զորքերի ներխուժումը Էրզրում: Հակառակ դեպքում թուրքերը անկասկած կգրավեն Էրզրումը»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 02. 15 (№ 37)

Վերջին հեռագրերը

Խալդինի շրջանում (Գյանջայի նահանգ) դրությունը ահավոր է: Հայկական գյուղերին ջարդեր են սպասվում: Շելկովնիկովի կալվածքը թալանված է և ավերված:

Երևանից Այսրկովկասի կոմիսարիատին տեղեկացնում են. «Դրությունը, պարեն չլինելու պատճառով, կրիտիկական է:

Խնդրում ենք, անհապաղ 15 վագոն ալյուր ուղարկեք»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 02. ? (№ 43)

Թղթակցություն Ախալցխայից

Փետրվարի 15-ին շտապ հեռագրում են, որ թաթարները մտել են Ղրել գյուղ և բոլորին կոտորել: Շուտով քաղաքում հայտնվում

են Ղրելից փախած մի քանի կին և երեխա: Կատարվածի ճշմարտության մեջ համոզվում են բոլորը: Երբ փախստականներին տեսան, լսելով հայերի ձայնը՝ 9-րդ վաշտը առաջինը գնաց օգնության, բացականչելով՝ օգնեցե՛ք... Այնուհետև շարժվեց 10-րդ վաշտը: «Ո՞ւր եք գնում և ո՞ւմ թույլտվությամբ,- հարցնում են նրանց ավագներին, ում հանդիպում են փողոցներում,- ոչինչ չկա, բամբասանքներ են, հետ դարձեք...»: Շփոթահար զինվորները չեն լսել, պարզվում է՝ գումարտակներ գնալուց հետո հայերը ցանկացել են կողոպտել զինապահեստը: Նրանց մտադրությունը հասկացել են զինվորները և հրաժարվել Ղրել գնալուց. մնացել են զինանոցը պաշտպանելու:

Աձղուրիի մուսուլմանական շտաբից հեռախոսով հաղորդել են Ախալցխայի վարչակազմին, թե լսել են, որ ավազակները հարձակվել են Ղրելի վրա, միջոցներ ձեռնարկեք դեմն առնելու: Իրենք մուսուլմանների զինված հեծյալներ են ուղարկել՝ ավազակներին մեկուսացնելու համար: Երբ զորքը հասել է Ղրել, շրջապատված ավազակները իսկույն մի կողմ են քաշվել: Նրանք ոչ մի վնաս չեն հասցրել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 02. 27 (№ 44)

Վերջին հեռագրերը

Վեհիբ փաշան հեռագրով ծանուցում է գեներալ Օդիշելիձեին. «Տեղեկություններ եմ ստացել Էրզրումից և նրա շրջաններից, որ այնտեղից ձեր գնալուց հետո հայերը գազանաբար ոչնչացնում են մուսուլմաններին և նրանց բնակավայրերը: Ահա ինչու, մեր սրբազան պարտքն ենք համարում նշված վայրերը շտապ կարգով ազատագրել հայերի գործողություններից: Խնդրում եմ՝ որևէ կերպ հայտնեք այդ բռնակալներին, որ իրենց արարքը անցանկալի արդյունքի կհանգեցնի: Օգտվում եմ առիթից և Ձեզ հայտնում, որ մեր զորքերի վերադարձը Տրապիզոն, մեծագույն հրճվանքով

դիմավորեցին Ձեր զորքերը: Անկեղծորեն կարեկցանք եմ հայտնում Տրապիզոնի ռուսական զինապահեստի պայթեցման կապակցությամբ:

Բորչալուի գավառում տեղացի թաթարները Արամյանցի կալվածքում քարուքանդ են արել բամբակազտիչ գործարանը և ուրիշ շինություններ: Խառնամբոխի կողմից ավերվել է նաև իշխ. Մ. Ումբաթաշվիլիի կալվածքը, ոչնչացված են խաղողի այգիները և այլն»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 02. 27 (№ 44)

Հայերի տեղահանությունը Արդվինից

«Մշակին» տեղեկացնում են. «Կովկասյան ճակատում տեղի ունեցած վերջին իրադարձությունների պատճառով Արդվինից հայերը տեղահանվում են, Ճորոխով գալիս են Բաթում: Նրանց ուղեկցում են լազերը, մուսուլման վրացիները և Լազիստանի բնակիչները:

Լազերը հաճախ չեն զգուշացնում հայերին: Օրեր առաջ հայերը (մոտ 300 հոգի) լազերից վարձում են երկու նավ՝ Ճորոխն անցնելու համար: Լազերը ուղևորներին խաղաղասիրաբար հասցնում են գետի մեջտեղը, բայց հետո այնպես են անում, որ նավերը շրջվում են, և նավերում գտնվող բոլոր հայերը խեղդվում են: Փրկվում են միայն լազերը. նրանք լավ լողալ գիտեին»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 04 (№ 48)

Արդահանից հեռագրով մեզ տեղեկացնում են. «Օսմանցիների հարձակումը տագնապալից դրություն է առաջացրել ամբողջ մարզի բազմաքանակ քրիստոնյաների մեջ: Շատերին են դիմել, բայց ոչ մի տեղից օգնություն կամ համապատասխան միջոցների

ձեռնարկումներ չեն սպասվում, ուստի որոշել են թողնել ծննդավայրը և հեռանալ այստեղից»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 08 (№ 51)

Արդահանի դեպքերը

Կառավարության նախագահ Է. Գեգեճկորին կարդում է այն հեռագրերը, որոնք տեղեկացնում են Արդահանում կատարված դեպքերի մասին: Մի քանի գյուղ և հենց Արդահանը շրջափակված են զինված մուսուլմանականներով: Նրանք սպառնում են ոչնչացնել տեղի քրիստոնյաներին: Գեգեճկորին նշեց նաև, որ առանց տեղյակ պահելու Գյումրու վարչակազմի ղեկավարին և առանց իրավունք վերցնելու հայկական ռազմական ջոկատ է ուղարկել՝ Մոլլա Մուսայի և մուսուլմանական մյուս գյուղերին հանգստացնելու համար:

Արդահանի դեպքերի առիթով խոսք է վերցնում Ալ. Լոմթաթիձեն. «Կա մի խնդիր, որի վրա ուզում եմ հրավիրել մեծարգո Սեյմի ուշադրությունը. Այսրկովկասի դեմոկրատիան, հանձինս հեղափոխական կազմակերպությունների ու պատվիրակությունների, միայն մեկ նպատակի է ձգտում. այդ նպատակը հաշտությունն է, որպեսզի Այսրկովկասին պարգևի խաղաղություն և հանգստություն»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 09 (№ 52)

Փախստականները

Կարսից Թբիլիսի է եկել 500 փախստական:

Հայ դասալիքները

Վերջին օրերին Հայոց ազգային խորհրդին կից դասալքության դեմ պայքարող կոմիտեն մի քանի հարյուր դասալիք է ձերբակալել: Դասալիքներին ռազմաճակատ են ուղարկել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 10 (№ 53)

Օգնություն փախստականներին

Սեյմն ընդունել է դաշնակցականների և մուսուլմանների առաջարկը, համաձայն որի՝ 1 միլիոն ռուբլի պետք է փոխանցվի մուսուլման փախստականների կարիքները հոգալու համար:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 11 (№ 54)

Դրությունը Սարիղամիշում

Կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովը Այսրկովկասի կոմիսարիատին տեղեկացնում է. «Ներկայումս Սարիղամիշը լեփ-լեցուն է փախստականներով ու ծառայողներով նաև թանկարժեք գույքով, որ անհրաժեշտ է դուրս հանել: Վագոններ չունենալու պատճառով դա առայժմ անհնար է: Խնդրում ենք անհապաղ կարգադրեք՝ անմիջապես և հնարավորինս շատ վագոններ ուղարկեն: Դժվար ձեռք բերված մի քանի միլիոն գույքը կարող է թշնամու ձեռքն ընկնել»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 11 (№ 54)

Դրությունը Արդահանում

Մարտի 8-ին Այսրկովկասի կոմիսարիատին տեղեկացնում են. «Փետրվարի 8-ից կտրվել է փոստային կապը: Կարսի հետ հեռագրակապն այլևս չի աշխատում: Ճանապարհները փակ են: Գանձարանում գումար չկա: Ամբողջ մարզում մարտեր են մոլեգնում: Արդահանում իշխանությունը մուսուլմանների ձեռքին է: Հայկական ռազմական ուժերին զինաթափել են ամբողջապես: Քրիստոնյաները տեղահանվում են: Դրությունը սարսափելի է: Խնդրում ենք անմիջապես կարգադրեք՝ գանձարանը տեղափոխեն»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 15 (№ 57)

«Հորիզոն»-ին հաղորդում են. «Մարտի 11-ին Իգդիրում փախստականների թիվը հասել է 22 հազարի: Նրանց դժբախտությունը սաստկանում է նաև վատ եղանակի պատճառով: Մեծաքանակ փախստականներ են գալիս հատկապես Սուրմալուի գավառից»:

Երևանից ստացված լուրերի համաձայն, թաթարները մտել են Խալ-Լուխրանի մարզ: Դրությունը շատ ավելի լուրջ է:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 15 (№ 57)

Օսմանիան և Այսրկովկասը

Ն. Ռամիշվիլին մտերիմների հետ զրույցի ժամանակ Օսմանյան կայսրությունում և Այսրկովկասում տիրող դրության մասին հետևյալ հայտարարությունն է արել. «Օսմանյան պատվիրակության վերաբերմունքը չի փոխվել: Մեր պատվիրակությունը հայտարարել է, որ Բրեստ-Լիտովսկում կնքած հաշտության պայմանագիրը որևէ ուժ չունի:

Օսմանյան պատվիրակները պատասխանել են, որ այդ ամենը անձամբ հաղորդել են իրենց ղեկավարությանը և սպասում են հրահանգների: Հրահանգներ ստանալու ժամկետը երեկ է լրացել:

Պատվիրակները, ինչպես երևում է, չեն ուզում համաձայնության գալ: Նույնիսկ Այսրկովկասին անկախություն տալով՝ չենք կարող ստիպել նրանց՝ հրաժարվել Կարսի, Բաթումիի և Արդահանի մարզերից:

Մասնավոր զրույցի ժամանակ նրանք ուղղակի հայտարարել են. «Այսրկովկասն այնքան թույլ է, որ չի կարող պահպանել այդ մարզերը»:

Օսմանյան Հայաստանի կացությունը կարգավորելու հարցը օսմանցիները համարում են իրենց ներքին գործը և Այսրկովկասի միջամտության դեմ այս հարցում բողոքարկում են:

Օսմանցիները մեր ճակատում երկու ոչ ամբողջական դիվիզիա ունեն (մոտ 8 հազար ասկյար), պակաս է երեք հարյուրը: Նրանք ասում են, թե տանում են ոչ թե պատերազմելու, այլ դատարկված մարզերը հսկել – պաշտպանելու համար:

Մեր գնած նավատորմը արդեն պատրաստ է: Հույս ունենք, որ ռազմանավեր էլի կստանանք: Ցենտրոֆլոտի հետ բանակցությունները հաջող են ընթանում:

Բաթումը պատրաստվում է ինքնապաշտպանության: Հայտարարվեց մինչև 40 տարեկանների զորահավաք:

Օզուրգեթի գավառը 10 հազար զինվորյալ է տալիս:

Լիախովի նշանակման հարցը հանված է:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 15 (№ 57)

Ախալցխայում

Մարտի 12-ին գեներալ Արջևանիձեն հայտնում է, որ ինքը կլինի Ախալցխայում: Աբասթումանից այնտեղ են եկել կարմիր գվարդիականները, և դրությունը աստիճանաբար կբարելավվի:

Ձերբակալված բոլոր մուսուլմաններին ազատ են արձակվել:

Մարտի 12-ին շրջանի զորքերի հրամանատար Մաղլակելիձեն հայտնում է. «Թաթարները գրոհում են Ախալցխայի վրա: Նրանք շրջապատել են քաղաքը: Բախումներ են տեղի ունենում: Ուժեր ուղարկեք մեզ օգնելու»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 15 (№ 57)

Արդահան

Արդահանից հայերը հայտնում են. «Մենք՝ Բաթումիի մարզի հայերս, վախենում ենք 1914 թվականի սպանդը կրկնվելուց, այդ

պատճառով տեղափոխվեցինք Ախալքալաք: Տասնմեկ օր մեզ բռնի պահեցին Արդահանում: Անցնելու թույլտվության համար մենք դիմեցինք մուսուլմանների ազգային խորհրդին, բայց պատասխանի չարժանացրին: Քաղցած ենք: Ծարավ ենք: Մերկ ենք: Հիվանդությունները շատացել են: Խնդրում ենք միջոցներ ձեռք առնեք, որպեսզի կորստի չմատնվենք»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 03. 20 (№ 61)

Հարևան ազգերի տրամադրվածությունը

Ինչ վերաբերում է հարևան ազգերի տրամադրվածությանը, ապա պետք է նշենք, որ սեյմում թաթարները պաշտոնապես հայտարարեցին. «Մենք օսմանցիների դեմ չենք գնա, բայց դուք հույսով եղեք, որ ձեզ էլ չենք դավաճանի և չեզոքություն կպահպանենք»: Մեր հարցին, թե արդյոք կարող եք երաշխիք տալ, որ ձեր ժողովուրդը ևս դուրս չի գա մեր դեմ, որ նրանք էլ չեզոքություն կպահպանեն»: Պատասխանեցին, որ նման երաշխիք տալ չեն կարող, քանի որ հնարավոր է՝ ժողովուրդը չլսի իրենց: Մասնավոր զրույցի ժամանակ մուսուլմանները հայտարարեցին. «Այնքանով որ մենք դեմ ենք պատերազմին, չենք ուզում պատերազմ սկսել, դուք էլ պետք է դեմ լինեք»:

Ռազմաճակատի պաշտպանությունը

Ռազմաճակատի պաշտպանությունը կարող է տեղի ունենալ երկու ուժով, մասնավորապես, հայերի և վրացիների ուժերով: Հնարավոր է՝ մեզ աջակցեն նաև ռուսները և հույները: Մենք պետք է պաշտպանենք Բաթումի մարզը: Պետք է ասել, Բաթումի մարզի բնակիչները մեծապես շփոթահար են լուրերից: Ամբողջ Գուրիան ոտքի է կանգնել: Որոշ գյուղերից միակամ գալիս են այս կամ այն զորքում զինվորագրվելու: Այսօր կարևոր է բանակին վարժեցնել: Բաթումում եղածս ժամանակ զորքերի ներկայացու-

ցիչներից ոմանք հաճախ գալիս էին և ղեկավար պաշտոն պահանջում: Միաժամանակ պետք է նշել, որ իրենք՝ սպաները, որոշ դեպքերում, պահի ազդեցության տակ, պատշաճ բարձրության վրա չեն գտնվում: Այս պարագայի վրա ենք հրավիրում ռազմական բաժանմունքի ուշադրությունը: Մենք մեր հույսը դնում ենք Վրաստանի զորքերի և նրա նոր գլխավոր հրամանատար Գաբաշվիլիի վրա:

Հուսով ենք՝ նա կարող է այս գործը հաջողությամբ իրականացնել:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 04. 01 (№ 71)

Արդահանում

«Кавказское слово» թերթի խմբագրությանն Ախալցխայից ամալբաշիկները հաղորդեցին հետևյալը.

Վերջերս Արդահանից փախստական երկու հայ եկավ: Մեզ պատմում էին ջարդ-կոտորածի մասին: «Երեխաներին և հղի կանանց սպանում էին: Փողոցները ծածկված են մերկացրած դիակներով: Մի քանի հազար մարդուց մնացել են ընդամենը մի քանիսը»: Մատիրյանը հետևյալն է հաղորդում. «Արդահանի ջարդ-կոտորածի ժամանակ ներկա են եղել Կարատարովը, Ջելալ բեկ և Ասլան բեկ աջարցիները, Բեխշադ բեկ Աբաշիձեն: Ջարդին մասնակցում էին մուսուլման ասկյարները: Կանանց ամուսինների աչքի առաջ մերկացնում էին և բռնաբարում: Գեղեցիկներին տանում էին իրենց հետ: Նրանցից շատերը խելագարվեցին: «Երբ հայտնեցին Աբդուլի ասկյարների մոտենալու մասին, Ջելալ բեկ աջարացին նրանց դիմավորեց իր ջոկատով: Խավիզտիկանելին, Ղարաշարովը, Աբաշիձեն մուսուլմանների ղեկավարներին կարգի էին հրավիրում: Սպանվել է մոտ 2 հազարը»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 05. 01 (№ 84)

Օգնություն փախստականներին

Կարսից և Ալեքսանդրապոլից սարսափելի լուրեր են ստացվում: Օսմանական զորքերի Կարս մտնելու պատճառով ամբողջ քրիստոնյա բնակչությունը թողնում է իր տունուտեղը: Հարյուր հազարավոր մարդիկ մերկ ու բոկոտն փախչում են պապենական վայրերից: Թե ինչն է այս ահավոր իրադարձությունների պատճառը, առայժմ մանրամասն չգիտենք: Ունենք միայն մասնակի տեղեկություն, որ փախուստը պայմանավորված է օսմանական զորքերի ներխուժումով: Փախչում է ամբողջ հայությունը, փախչում են նաև ռուսներն ու հույները, որոնց որքանով տեղեկացվել է՝ օսմանցիներն իրենց վնաս չեն տալու: Եվ ինչպես հայտնում են Կարսից, այս բազմաքանակ փախստականները շարժվում են դեպի Թիֆլիս: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ հեռանկարներ են սպասվում այս փախստական ամբոխին, որոնք ո՛չ սնունդ ունեն, ո՛չ համապատասխան միջոցներ և անիծում են թե՛ իրենց ճակատագիրը և թե՛ նրանց, ովքեր դարձել են իրենց դժբախտության պատճառը:

Թիֆլիսի մամուլի որոշ օրգաններում արդեն հնչում են կշտամբանքներ և այդ կշտամբանքները ցանկանում են փաթաթել Չխենկելիի կառավարության վզին:

Կան մարդիկ, ովքեր առանց կասկածի նշույլի հաստատում են, որ զանգվածային տեղահանությունները հետևանք են կառավարության անհիմն, ոչ խելամիտ գործարքների և ցանկանում են այդ վտանգավոր երևույթի ամբողջ պատճառը գտնել այն հրամանի մեջ, որ Չխենկելին տվեց Կարսը դատարկելու վերաբերյալ: Ակնհայտ է, որ նման պնդումները միայն հնարք են և խարդավանքն այն մարդկանց կամ այն դժգոհ խմբերի համար, որոնք ցայժմ չեն կարողանում հաշտվել Չխենկելիի նախարարության հետ: Մեր խորին համոզմամբ, եթե որևէ մեկի վրա կարելի է մե-

ղադրանք բարդել, դա նրանք են, ովքեր ժամանակին չեն կատարել Չխենկելիի հրամանը, և նրանք, ովքեր բնակիչներին չեն նախապատրաստել այն գործողությունների համար, որ կոչում են Կարսի էվակուացիա: Ճիշտ այդ հողի վրա հայտնվեց Չխենկելիի կառավարության ճգնաժամը և ճշտիվ Հայոց ազգային բյուրոն էր, որ Թիֆլիսում ամեն ինչ անում էր Չխենկելիի կառավարությունը տապալելու համար, մինչդեռ ինքը Կարսում ոչինչ չէր անում՝ ժողովրդին նախապատրաստելու և օսմանցիների հարձակումներից պաշտպանվելու համար:

Հիմա, երբ հայկական ղեկավար շրջանակները բարդացրել են գործը, ցանկանում են մեղադրյալի աթոռին նստեցնել կառավարությանը և նրանից պահանջել, որ միջոցներ ձեռք առնեն և ինչոր կերպ օգնեն կոտորվող ժողովրդին: Մեր կարծիքով՝ կառավարությունը ավելի շուտ պիտի հոգար, որ այս ցավալի և վտանգավոր երևույթը տեղի չունենար: Նույնիսկ հիմա, երբ կառավարությունը մեղքի ամենաքիչ բաժինն ունի այս հարցում, փախստականների հոսքին օգնել և նրանց մասին հոգ տանել է պետք ոչ միայն նրա համար, որ դա է պահանջում մարդասիրությունը, այլ նաև նրա համար, որ մի քանի հարյուր հազար սոված-ծարավ, միաժամանակ զինված փախստականներ կարող են անարխիայի որջ և մեր պետության թշնամիների ձեռքում զենք դառնալ:

Կառավարությունն ինքը պետք է բոլոր միջոցները ձեռք առնի, բայց այն բոլոր միջոցները, որոնք նախատեսում է, մենք դրանցից միայն մեկը չէինք ընտրի: Միանգամայն անհանդուրժելի և անցանկալի է, որ սոված, ծարավ, ամեն ինչ կորցրած խեղճուկրակ ժողովուրդը Թիֆլիս է գալիս: Թիֆլիսը, որպես հանրապետության կենտրոն, որտեղ տեղի են ունենում պետական նշանակության կարևոր հանդիպումներ և որտեղ պետք է միշտ կարգ ու կանոն պահպանվի հանուն մեր ապագայի, ամբողջ հանրապետությունը անվտանգ և ապահով պետք է լինի նաև անարխիստական, վտանգ ներկայացնող տարրերից: Մինչդեռ ցնցումները, որ

ունեցանք մենք, մեր ամբողջ երկիրը և հատկապես Թիֆլիսը, որը լի էր սադրիչ տարրերով, դաս պետք է լինեն մեզ համար: Եթե կառավարությանը ամբողջ օրվա ընթացքում «անկցի» ասեն, թշնամին պատրաստ է հանրապետությանը հարված հասցնել, դժվար չէ պատկերացնել, որ դժգոհ կարող են լինել հենց սադրիչ ելույթների արդյունքում ջարդի ենթարկված, իրենց բնակավայրերից զրկված Կարսի խեղճուկրակ բնակիչները: Կհայտնվեն անխիղճ ու անպատասխանատու շատերը, ովքեր, հանուն իրենց արկածախնդրական նպատակների, չեն խղճա այս տարաբախտ ժողովրդին, ինչպես նաև Թիֆլիսին, որտեղ առանց այդ էլ բազմաթիվ դժգոհ տարրեր են կուտակվել: Այն անարխիայի որջ կդառնա սոված-ծարավ փախստականների համար, որոնց, սակայն, չի կարող բավարարել պարենից աղքատ Թիֆլիսը: Նրանց համար լավագույն կերակրող կդառնա հենց այդ անարխիան: Մնացած միջոցները, ինչ ձեռնարկել է կառավարությունը, մենք՝ հանրապետության բոլոր քաղաքացիներս, պետք է համախմբվենք և իրական գթասրտություն ցուցաբերենք. այդպես թեթևացրած կլինենք փախստականների ծանր դրությունը: Այս ձեռնարկումներն անհապաղ պետք է ընթացք ստանան և գործի դրվեն:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 05. 01 (№ 84)

Փախստականներ Կարսի մարզից

Կարսի մարզի կոմիսար Զամոևից հեռագիր է ստացվել. նա հայտնում է, որ Կարսի մարզից 100 հազար փախստական է գալիս: Նրանց մի մասը զինված է: Փախստականների մեջ շատ են օսմանահայերը, որոնք սկզբում ապաստանել էին այդ մարզում: Կոմիսարը ընդգծում է այն դժբախտությունը, որը սպասվում է փախստականների շարժման հետևանքով, և հրահանգների է սպասում: Կառավարությունը քննարկել է տվյալ հեռագիրը և կայացրել որոշում. չենթարկվել Կարսի մարզը դատարկելու ժամա-

նակը երկարացնելու օսմանական վարչակազմի կարգադրությանը:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 05. 11 (№ 88)

Հայերի հարցը Ռայխստագում

«Հորիզոնը» տեղեկացնում է. «Գերմանական ռադիոն հաղորդում է, որ Ռայխստագի նիստերից մեկում քննարկվել է Հայաստանի հարցը: Այն տևել է չորս ժամ: Նիստին ընթերցվել է հայտարարություն, համաձայն որի՝ Օսմանյան կայսրությունը պարտավորվում է հանգիստ թողնել հայերին, ավելին՝ խիստ միջոցներ կիրառել հայերին հալածողների հանդեպ: Միևնույն ժամանակ հայտարարել է, որ պատրաստ է Վանա լճի շրջանում բնակվող օսմանահայերին սահմանված շրջանակներում ինքնավարություն տալ»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 05. 16 (№ 92)

Հայկական մամուլ

Փախստականների հարցի շուրջ

«Մշակի» № 87-ի խորագիրը վերաբերում է արդի կենսական հարցերից մեկին՝ գաղթականությանը: Առ այսօր մեր անհանգստության և մտահոգության պատճառը եղել է Օսմանական կայսրությունից հայ փախստականների պրոբլեմը: Այդ անհանգստությանն ու մտահոգությանը ավելացավ մի նոր ցավ, ռուսահայերի՝ մեծամասամբ Կարսի և Սուրմալուի մարզերի հայության հալածանքներն ու փախուստը:

Դատարկվել է Օսմանյան Հայաստանը, հիմա էլ դատարկվում են Այսրկովկասի հայաբնակ մարզերը:

Եթե Օսմանյան կայսրությունից փախստական հայերի թիվը ընդունենք մոտավորապես 250 հազար, իսկ Կարսի և Սուրմալու մարզերից՝ մոտ 200 հազար, ապա կստացվի, որ այսօր մոտավորապես 450 հազար հայ ճանապարհներին է, քոչվորական կյանք են վարում, և բոլորն էլ, ինչքան հնարավոր է, հեռու են գնում՝ դեպի Հյուսիսային Կովկաս, այսինքն՝ դեպի Ռուսաստան: Նրանք փախչում են առանց մտածելու, առանց իրենց հաշիվ տալու, առանց ապագան նկատի ունենալու, միայն թե ազատվեն օսմանական գերիշխանությունից: Մասնավորապես՝ հայերը մտավախություն ունեն, որ Օսմանիան Այսրկովկասի նոր կառավարության հետ դաշինք կնքելու ժամանակ կպահանջի, որ իր ենթակայության տակ գտնվող հայերին վերադարձնեն իրենց նախկին բնակավայրերը, և Այսրկովկասի կառավարությունը ստիպված կլինի ընդունել այդ պահանջը: «Դաշնակցությունը», իհարկե, դեմ չի լինի նման պահանջին: Եվ, ահա, այդ ահը սրտներում, օսմանահայերը, որոնք համոզված չեն, որ, վերադարձին օսմանական կառավարությունը գետի մեջտեղում իրենց ջրասույզ չի անի, ուստի բնազդաբար շտապում են դեպի Հյուսիսային Կովկաս՝ Այսրկովկասի սահմաններից անդին:

Մեր կարծիքով՝ օսմանահայերի նման վախը անտեղի է. մենք կարծում ենք, որ ընդհակառակը, Օսմանիան շատ ուրախ կլիներ, որ Հայաստանը մնար առանց հայերի և, կասկածից դուրս է, որ նա անկեղծորեն է ցանկանում նրանց վերադարձը: Հարցի ամբողջ իմաստը և բարդությունը սրանում չէ, այլ նրանում, թե որտեղ պետք է տեղավորվեն մինչև 250-300 հազար օսմանահայերը, հետո էլ՝ 150-200 հազար փախստական ռուսահայերը: Մինչև այդ նրանք այնտեղ բնակավորվել են առանց ղեկավարի, առանց առաջնորդի, առանց խորհրդականի, բնազդաբար, տարերայնորեն: Այդուհանդերձ որտեղ էլ փոքր-ինչ ապահովություն են զգում, մտածում են, որ ապահով կլինեն և, բնական է, որ նրանց մի մասը գնաց վրացական տարածքներ և, ահա, վրաց ժողովրդի մի զգալի

մասն սկսել է բարձրաձայն լաց ու կոծ անել, որ անցանկալի տարրեր են գալիս երկիր և փորձեր անում տեր դառնալ իր հող ու ջրին:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 05. 17 (№ 93)

Օսմանիան և Ադրբեջանը

Օսմանյան կառավարության ռազմավարությունը վարագուրում է իրենց իսկ դիվանագիտությունը: Ալեքսանդրապոլից ստացված վերջին տեղեկությունները հստակ հուշում են, թե ինչ է ցանկանում Օսմանյան կայսրությունը: Ալեքսանդրապոլում պատերազմական թոհ ու բոփ է: Թուրքերը վերջնագիր են ներկայացրել գեներալ Նազարբեկովին՝ պահանջելով դատարկել Ալեքսանդրապոլը և 25 վերստ հեռանալ դեպի հյուսիս: Նման վերջնագիրը ժամանակավոր զինադադարի բացահայտ խախտում է, ուստի հանրապետության կառավարությունն առաջակեց Չխենկելիին այդ առթիվ բողոքով հանդես գալ օսմանական ղեկավարության առաջ, իսկ գեներալ Նազարբեկովին կարգադրվեց, որ եթե թուրքերը հետ չվերցնեն իրենց վերջնագիրը, գործի այնպես, ինչպես իրադրությունն է պահանջում: Այս պահին Ալեքսանդրապոլի մատույցներում ճակատամարտ է ընթանում: Տվյալ իրողությունը, անշուշտ, մեծ նշանակություն ունեցող փաստ է, որ կատարելապես բացահայտում է Օսմանյան կայսրության հավակնությունները: Եթե օսմանական կողմին հաջողվի հանրապետության զորքերին հետ մղել դեպի հյուսիս, Երևանի ամբողջ նահանգը կանցնի նրանց ձեռքը: Թե ինչի է ձգտում Օսմանյան կայսրությունը, դրա բացահայտ շարժառիթները արձանագրված են հենց վերջնագրի մեջ. օսմանցիները ցանկանում են տեր դառնալ Ալեքսանդրապոլ - Ջուլֆա երկաթուղուն և կանխել անգլիացիների գործողությունները թիկունքից:

Սա է նրանց ռազմավարական ծրագիրը, որի քաղաքական ենթատեքստը շատ ավելի նշանակալից է. դա նոր լույս կսփռի թուրքերի պահանջների վրա, որով նաև ակնհայտ կդառնա, թե Օսմանյան կայսրությունը ինչու է մղվում դեպի Ադրբեջան և հիմնականում ինչ է ցանկանում անել Այսրկովկասում: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Այսրկովկասի թաթարները բացարձակապես չեն ընդդիմանա, եթե Օսմանյան կայսրությունը ցանկանա Ադրբեջանը իրեն միացնել: Չեզոքությունը, որ Ադրբեջանը պահպանեց կովկասյան պատերազմի ժամանակ և լոյալ վարմունքը, որ դրսևորեց զինադադարի շուրջ բանակցությունների ընթացքում, հնարավոր է, որ քաղաքական ակնհայտ հաճկատարության վերածվի, և մի գեղեցիկ օր Ադրբեջանն իրեն լիովին Օսմանյան կայսրության մաս հայտարարի: Ինքնավարության գաղափարը, որ գուցե գոյություն ունի ադրբեջանցիների փոքրամասնության մեջ, հեշտությամբ հօդս կցնդի, եթե նրա վրա հարձակվի ադրբեջանցիների թուրքասեր մեծամասնությունը:

Բայց որպեսզի Ադրբեջանի միացումը տեղի ունենա առանց ցավի, Կովկասի հարավային մասում անհրաժեշտ է նոր կոնֆիգուրացիա, որի այժմյան պայմանները շատ քիչ են ձեռնտու նման կարգով միակցմանը: Բավական է՝ մի հայացք գցենք քարտեզին, և պարզ կդառնա, որ կոնֆիգուրացիայի կազմակերպումը նորագույն պայմաններում բավականին հեշտ գործ է: Այսրկովկասի, Պարսկաստանի և Օսմանիայի պետական սահմանները Կովկասի այն մասում, որտեղով անցնում է Ջուլֆայի երկաթուղին, քիչ ձեռնտու է Օսմանիային: Պարսկաստանի գավառները՝ Մակուն և Բոյը, սեպի նման խրված են Օսմանիայի և Այսրկովկասի միջև: Մյուս կողմից՝ Կասպից ծովի ափին գտնվող Այսրկովկասի Թալիշ գավառը նույնպես սեպի նման մտել է Պարսկաստան: Եթե Պարսկաստանի և Օսմանիայի միջև համաձայնություն կայանա, և Պարսկաստանը Օսմանիային զիջի Մակու գավառը, ինչը հեշտությամբ կարելի է անել մեր խառնաշփոթ պայմաններում, Օս-

մանիան կստանա լայն միջանցք և կունենա Ադրբեջանը լայնարձակ տարածքով իրեն միակցելու հնարավորություն:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 05. 21 (№ 96)

Փախստականների պատվիրակությունը

Կարակիլիսայում գտնվող Գյումրու տարագիրներն ընտրել են պատվիրակություն, որը պետք է միջնորդի թուրքական զորքերի գլխավոր հրամանատարի առջև, որպեսզի գաղթականներին թույլատրի իրենց բնակավայրերը վերադառնան:

Հարձակում փախստականների վրա

Ղաչաղները հարձակվել են Սանդար կայարանի փախստականների գնացքների վրա: Սպանվել է 3 մարդ:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 05. 22 (№ 97)

Սուրմալինի գավառում

«Հորիզոն»-ին տեղեկացնում են, որ Սուրմալուի գավառի ամբողջ հայությունը լքել է Հայաստանը և շարժվում է դեպի Կարակիլիսա:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 05. 22 (№ 97)

Դրությունը Կարակիլիսայում

«Մշակ»-ին Կարակիլիսայից հեռագրով տեղեկացնում են. «Կարսի մարզից և Շիրակից փախստականներ են գալիս: Փախստականները հազարներով դեպի հյուսիս՝ դեպի Թիֆլիս են գնում:

Ո՛չ ուժ գործադրելով, ո՛չ սպառնալիքներով չենք կարողանում նրանց կանգնեցնել:

Բորչալուի ճանապարհը շատ վտանգավոր է»:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 05. 25 (№ 100)

Փախստականներ

Որոշվել է միջոցներ ձեռք առնել, որպեսզի փախստականները չգնան այն վայրերից անդին, որտեղ սննդամթերքի կետերը զինվորներ են հսկում:

Ութ հազար հույն փախստականների, ովքեր 80-րդ վերստի վրա են գտնվում, թույլ տվեցին Մցխեթ գնալ:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 05. 25 (№ 100)

Գյումրի

Գյումրուց ժամանածների ասելով, քաղաքում հանգիստ է: Փախստականները հետզհետե վերադառնում են: Բնակչությունից զենքերը հավաքել են: Ոչ մեկին չեն անհանգստացնում: Քաղաքը պաշտպանում է միլիցիան և 200 ասկյար:

Կառավարումը փոխարինվել է մեջլիսով: Զորքի մի մասը կայարանում է բանակել:

«ՄԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 06. 04 (№ 108)

Փախստականներ

Եկատերինոֆելդ գյուղից կոմիսար Կրոմերը գերմանական ազգային խորհրդին հայտնում է. «Հունիսի 1-ին Բոլնիս-Խաչենից, Ղարաքիլիսայից փախած հայ զինվորներ, փախստական տղամարդիկ և կանայք եկան, որոնց այնտեղ թաթարները շրջապատել են, զենքերը խլել և շատերին սպանել: Վիրավորների և ողջ մնա-

ցածների թիվը 100-ից չի անցնում: Փախստականները ընդամենը 450 հոգի են եղել, բոլորին կողոպտել են, ընդհուպ մինչև նրանց շորերը»:

«ՍԱՔԱՐԹՎԵԼՈ», 1918. 06. 18 (№ 119)

Գյանջայում

Հունիսի 11-ին Նուրի փաշայի հրամանով Գյանջայի հայերով բնակեցված թաղամասը շրջապատվել է օսմանյան զորքերով: Նման անսպասելի հարձակումը որպես ահազանգ է հնչել բնակչության մեջ: Օսմանցիները պահանջել են, որ հայերն անհապաղ հանձնեն իրենց մոտ եղած բոլոր զենքերը:

Հայոց Ազգային կոմիտեն շտապ պատվիրակություն է ուղարկել թուրքական ղեկավարության մոտ՝ պարզելու, թե հիշյալ հրամանը արդյոք նրանց կողմից է արձակվել:

Երբ պատվիրակությունը համոզվել է, որ հրամանն իսկապես օսմանյան կառավարությունն է տվել, միտինգի ժամանակ ժողովրդին կարգադրել են ենթարկվել ղեկավարությանը և կանխել ոչնչացումը: Հունիսի 13-ին սկսվեց զենքերի հանձնումը: Օսմանցիները զենքերը ֆուրգոններով տանում էին քաղաքի մուսուլմանական թաղամասեր: Նրանք, ովքեր չեն եթարկվել, զենքերով բարձրացել են լեռները՝ պայքարելու օսմանցիների դեմ:

Գյանջան լի է օսմանյան սպաներով և ասկյարներով. նրանք ոչ մի ուշադրություն չեն դարձնում մուսուլմանական կորպուսի ռուս սպաներին: Խանութներում օսմանցիները գնումները կատարում են նիկոլևայան հարյուր ռուբլիանոցներով և օսմանական լիրայով, որի կուրսն այնքան է բարձրացել, որ ռուսական ռուբլին 8 կոպեկով են գնում:

Հունիսի 12-ին հայ-թաթարական ընդհարման ժամանակ սպանվել է գիմնազիայի տնօրեն Բոգոլեպովը: Նրա կինը դեպի սպանվածը վազելու պահին վիրավորվել է և մի քանի ժամ անց մահացել:

ԱՄՓՈՓՈՒՄ*

«Հայոց ցեղասպանությունը 1914-1918 թթ. վրացական պարբերականներում»

«Հայոց ցեղասպանությունը 1914-1918 թթ. վրացական պարբերականներում» ժողովածուի նշանակությունը դժվար է թերագնահատել: Ժողովածուն պարունակում է Վրաստանի Ազգային խորհրդարանական գրադարանի՝ վրացական պարբերականների արխիվներում պահպանվող նյութեր, որոնք լուսաբանում են Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանությունը և արտացոլում վրացական մամուլի ու հասարակության վերաբերմունքը այս հարցի շուրջ: Այն մատնանշում է Հայոց ցեղասպանության խնդրի արդիականությունը:

Վրաց հասարակությունը, որը գտնվում է մարդկության դեմ իրագործված հանցավայրի հարևանությամբ, Ցեղասպանության իրականացման անմիջական ականատեսն ու վկան է դարձել, ինչպես նաև մասամբ Ցեղասպանությանն ուղեկցող գործընթացների ակտիվ մասնակից կողմ (գաղթականներին ցուցաբերված օգնության, նրանց բնակեցման, Արևմտյան Հայաստան վերադարձի հարցերում):

20-րդ դարի 20-ական թվականներից ընդհուպ մինչև դարավերջ Վրաստանում տեղի ունեցող գործընթացները չեն նպաստել 19-ից 20-րդ դարերի սահանագծին կատարված որևէ իրադարձության անաչառ, գիտական ուսումնասիրմանը, այդ թվում՝ այնպիսի նշանակալի իրադարձությունների, ինչպիսիք են այսպես կոչված Մեծ Մերձավոր Արևելքի ժողովուրդների մոտ ազգային-ազատագրական գաղափարների ձևավորումը, և որպես հե-

* «Ամփոփումը» վրացերեն գրքում հայերեն է:

տևանք՝ Հարավային Կովկասի տարածաշրջանում Առաջին Հանրապետությունների ստեղծումը, այդ պետությունների և հարևան ժողովուրդների հետ նրանց փոխհարաբերությունները:

1915-23 թթ. Հայոց ցեղասպանության հարցը նաև գտնվել է արգելված-տաբուի կարգավիճակում, և եթե բոլշևիկյան բռնապետությունից զերծ տարածքներում լրջորեն ուսումնասիրվել և գնահատվել է, ապա Վրաստանում և սոցիալիստական բլոկի պետական մյուս միավորումներում տվյալ հարցը չի եղել լուրջ ուսումնասիրության առարկա, կամ էլ ներկայացվել է՝ ելնելով բոլշևիկյան ղեկավարության քաղաքական հայացքներից, արտաքին աշխարհի հետ նրա փոխհարաբերություններից և Թուրքիայի ու Գերմանիայի քաղաքական ռեժիմների հետ ռազմավարական համաձայնագրերից:

Նախկին ԽՍՀՄ արխիվներում պահվող նյութերը, տոտալիտար համակարգերի ավանդույթի համաձայն, վերացվել են, գաղտնի պահվել կամ էլ բերվել «քաղաքական կուրսի հետ համաձայնության վիճակի» այնպես, որ նույնիսկ չնայած առանձին անձանց ցանկությանը՝ ամբողջական պատկերը վերականգնելու, նշված խնդիրն ուսումնասիրելը լուրջ, մասամբ էլ՝ անհաղթահարելի արգելք է դարձել: «Կարգավորումը», պարբերականների արխիվի դուրսբերումը, ելնելով տվյալների ծավալից և դրանց ձևից, կապված էր որոշակի դժվարությունների հետ, սակայն տաբուի «ոգին» առնչվել է նաև այս ոլորտին՝ արխիվային տվյալների ստացմանը:

Վրաստանի արխիվներում պահվող պարբերական հրատարակությունները որևէ կերպ չեն ուսումնասիրվել Հայոց ցեղասպանության տեսանկյունից, այդպիսով տեղեկատվության լայն մի շերտ, որը հաստատում և լրացնում է արդեն ուսումնասիրված այդ հարցը, չի ներկայացվել լայն հասարակայնությանը:

Ժողովածուն ընդգրկում է 1914 թվականից մինչև 1918-ի կեսերն ընկած ժամանակահատվածը, ինչն ընթերցողին հնարավորություն է տալիս հետևել իրադարձությունների ընթացքին նա-

խապատերազմյան տարվա հունվարից, Առաջին աշխարհամարտին Թուրքիայի ներգրավվելուց մի քանի ամիս առաջ, մինչ 1918 թվականի մայիս, երբ նախկին Ռուսական Կայսրության տարածքում իրենց անկախությունը հռչակեցին Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը:

«Հայոց Ցեղասպանությունը 1914-1918 թթ. վրացական պարբերականներում» ժողովածուում նյութեր են ընդգրկվել 20-րդ դարի սկզբին Վրաստանում լույս տեսնող «Սաքարթվելո» («Վրաստան»), «Սամշոբլո» («Հայրենիք»), «Սախալխո փուրցելի» («Ժողովրդական թերթոն») և «Կլդե» («Ժայռ») ամսագրից: Գրքում հավաքված նյութերը ներկայացված են ժամանակագրական հերթականությամբ, ըստ այդմ ժողովածուն բաժանված է հինգ մասի (1914», «1915», «1916», «1917», «1918»):

Առաջին՝ «1914» բաժինը ընթերցողին հնարավորություն է տալիս ծանոթանալ Ցեղասպանությանը նախորդող շրջանում Թուրքիայում տիրող իրավիճակին: Այս բաժնի նյութերը տեղեկություններ են պարունակում այն մասին, որ թուրքական կառավարությունը հրաժարվում է բարեփոխումներ իրականացնել Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև պետական մակարդակով Թուրքիայի հայ բնակչության նկատմամբ ատելության հրահրման, Ռուսաստանի հետ Կովկասյան մեծ լեռնաշղթայի երկայնքով սահման անցկացնելու՝ Թուրքիայի նախապատերազմյան ծրագրերի մասին:

Այս բաժնում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Սախալխո փուրցելի» թերթի հոկտեմբերի 19-ի հոդվածը, որում տվյալներ են ներկայացված Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի այլ գավառներում բնակվող հայերի թվի մասին: Չնայած թուրքական կառավարությունը, ելնելով իր շովինիստական ներքին քաղաքականությունից, միշտ նվազեցրել է հայ հպատակների թիվը, այս տեղեկությունը, անկասկած, նշանակալի հետաքրքրություն է ներկայացնում այս թվերի հետևում թաքնված բովանդակության իմաստով:

Ժողովածուի երկրորդ և երրորդ՝ «1915» և «1916» բաժինները, առավել ծավալուն են: Այստեղ մենք հանդիպում ենք ինչպես անմիջական նկարագրությունների, հայերի դեմ իրականացվող սարսափելի մասշտաբով արտաքսման և բռնությունների արձանագրություններին, այնպես էլ հսկայական վկայություններ գաղթականների, Թուրքիայի կառավարության իրականացրած հանցագործության դատապարտման մասին օտար տերությունների արձագանքի: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Հայոց ցեղասպանության մասին թուրքական «տեսակետ» պարունակող նյութերը: Այդ հոդվածներում ներկայացված՝ թուրքական կառավարական շրջանակների տարբեր հայտարարությունները, այդ թվում՝ Թալեաթ փաշայի հետ անցկացված մի քանի հարցազրույցները, ընթերցողին հնարավորություն են ընձեռում եզրահանգում կատարել Հայկական հարցի և Թուրքիայի ենթակայության տակ գտնվող տարածքների հայերի ճակատագրի շուրջ Թուրքիայի կառավարության ցինիկ վերաբերմունքի մասին: Դրանք հաստատում են, որ հայերի կոտորածն ու նրանց դեմ իրականացված բռնությունները կրում են պետական գաղափարախոսության մակարդակով իրականացված, հստակ ծրագրված բնույթ:

Նախորդ՝ տեղեկատվական հարուստ ամփոփմամբ բաժնից հետո «1917» բաժինը կարող է աղքատիկ թվալ, սակայն այստեղ էլ նյութերը նկարագրում են գաղթականների վիճակը, Արևմտյան Հայաստանից դեպի Ռուսաստան նրանց տեղաշարժը, նրանց՝ Հայրենիք վերադարձին ուղղված ծրագրերը, Արևմտյան Հայաստանի հետագա կարգավիճակի շուրջ, այսպես կոչված, գերտերությունների մտադրությունները: Եթե նախորդ բաժիններում «իրադարձությունները» հիմնականում տեղի էին ունենում թուրքական կառավարության ենթակայության տակ գտնվող տարածքներում, ապա 1917 թվականից նկատվում է բռնությունների աշխարհագրության ընդլայնում դեպի Կովկաս և հասնում է մինչև կովկասյան շրջանների՝ թուրքական կառավարությանը լոյալ ժո-

ղովուրդներով բնակեցված Ռուսական կայսրության ներքին նահանգներ և գավառներ:

«1918» բաժնի նյութերը հիմնականում ներկայացնում են Թիֆլիսի նահանգին սահմանակից տարածքներում հայերի դեմ իրականացված հետապնդումներն ու կոտորածները: Կովկասյան ճակատում հիմնականում գործողություններն արդեն ավարտված են, սակայն թուրքական կանոնավոր զորքերը շարունակում են հայերի ոչնչացման ծրագիրը: Ավարտելով Արդվինի, Սարիղամիշի, Կարսի, Արդահանի և Ախալցխայի գավառներ, որտեղ հայկական կոտորածներին նպաստում և մասամբ անմիջական կատարողն է հանդիսանում այդ գավառների թուրք բնակչությունը: Այս իրադարձությունները տեղի են ունենում Ռուսաստանի զորքերի դասալքության և ռուսների կողմից Թիֆլիսի և Կարսի նահանգների հայերի զինաթափման ֆոնին: Զուգահեռ, հայերի նպատակաուղղված զինաթափում և ջարդ է տեղի ունենում նաև Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում, որտեղ գտնվում են թաթար բնակչության կողմից օժանդակություն ստացող թուրքական զորքերը: «1918» բաժնի նյութերը մատնանշում են կատարած հանցագործությունների համար Թուրքիային պատասխանատվության ենթարկելու՝ օտար պետությունների անդադար ջանքերը:

Այս հրատարակության հիմնական նպատակը 1914-18 թթ. վրացական տպագիր հրատարակություններում պահպանվող՝ մինչ օրս անհայտ նյութերին հասարակությանը ծանոթացնելն է, այդպիսով նպաստելով մի քանի տասնյակ տարիներ Վրաստանում «տաբու» հանդիսացող Հայոց ցեղասպանության հարցի մասին վրացական հասարակության ուսումնասիրմանն ու գնահատմանը:

Resume

"The Armenian Genocide as reflected in the Georgian press in 1914-1918"

It is very difficult to overestimate the importance of "The Armenian Genocide as reflected in the Georgian press in 1914-1918" edition. This volume consists of materials, kept in the Georgian press archives of the National Parliamentary Library of Georgia, touching on the Armenian Genocide in Western Armenia and the Ottoman Turkey. These materials are a good reflection of the Georgian civic and media attitude towards the Armenian Genocide, underlining the urgency of this matter.

The Georgian society of the time, having been located just across the border from where the crime against humanity took place, was a direct eyewitness of the unfolding genocide. The Georgian people were often in the position to make decisions regarding the victims of the Genocide (in issues, such as providing aid for the refugees, their re-settlement, the return of the refugees to Western Armenia).

Ever since the 20-ies of the XX century till its very end there was only a very small possibility for the scholars in Georgia to study the issues of the last decade of XIX and the beginning of XX centuries without hindrance or bias. This was dictated by the processes that took place in the country of Georgia, and included the gagging policies on crucial matters, such as the forming of the independence movements within the nations of the Greater Middle East, the creation of the First Republics in the South Caucasus area, and the relation of these states and the peoples thereof.

The issue of the Armenian Genocide of 1915-1923 was also blacklisted as a taboo, and though it was well-studied and evaluated

outside the Iron Curtain, it was either banned altogether or presented according to the political bias of the Bolshevik state in quasi-national entities such as the Soviet Georgia. The political relations with Turkey and Germany also have heavily influenced the study of the Armenian

Genocide.

The materials of the archives of former Soviet Union were largely destroyed, classified, or "edited" in order to match the official political course of the state. In these circumstances, all those who genuinely wanted to research the Armenian Genocide issue faced hindering strongholds, which they could not possibly overcome. However, similar "regulation" of the press archives was more difficult because of the large amounts of various materials, and its very form - usually, a newspaper.

The periodicals kept in the Georgian archives weren't ever studied on the matter of the Armenian Genocide, and thereby a sheer amount of information, adding to the spectrum of the research, was beyond the reach of the general public.

This edition covers the period from the beginning of 1914 to the middle of 1918, which allows the reader to follow the events from January of the prewar year, several months before the Turkish entry into war, all the way till May of 1918, when Georgia, Armenia and Azerbaijan proclaimed their independence on territories of the former Russian Empire.

"The Armenian Genocide as reflected in the Georgian press in 1914- 1918" compilation contains materials from the beginning of the XX century Georgian "Sakartvelo", "Samshoblo", "Sakhalkho phurtseli" newspapers and the "Klde" magazine. The collected materials are arranged chronologically, and the edition itself is divided into five sections ("1914", "1915", "1916", "1917", "1918").

The first section, "1914", allows the reader to encounter the preGeno- cide condition of Turkey. The materials of this section contain the information about the Turkish refusal of undertaking reforms in Western Armenia, about the state-directed policy of inciting hatred against the Armenian population of Turkey, and also about the Turkish plan to draw the border with Russia along the lines of the Greater Caucasus mountain range.

One particular article of interest in this section is dated October 29 ("Sakhalkho phurtseli"), where the stats figures of the Armenian population of Western Armenia and other Turkish regions is presented. In spite of the fact that the Turkish government, due to its chauvinistic policies, was constantly understating the numbers of the Armenian subjects, this piece of information reveals the sheer scale of the reality hidden beyond figures.

The second and the third sections of the compilation - "1915" and "1916" - are the broadest of all. Here we encounter the eye-witness accounts of the horrors of persecutions, the scale of repressions against Armenians, the information about the refugees, and the international reaction and condemnation of the Turkish government for the ongoing crime. Of some interest are the materials containing "the Turkish take" on the Armenian Genocide. Various declarations of the Turkish government officials, as well as an interview with Mehmed Talat (also known as Talat-pasha) allow the reader to make their own judgment about the cynicism of the Turkish approach to the issues of the Armenian Question and the Armenians of Western Armenia and other Turkish-governed territories.

After the previous informative sections, the following, "1917", may be perceived as a poorer one, but these materials also present the condition of the refugees, their movement from Western Armenia towards the Russian Empire, the programs of their return to Armenia, the intentions of the Great powers for the future status of Western

Armenia. While the previous sections uncover the atrocities on the Turkish-controlled territory, this section provides a broader geographical scale of similar activity. The persecutions expand towards the Caucasus, reaching the inner territories of the Russian Empire, which are populated by the pro-Turkish oriented peoples.

In the "1918" section the materials are describing the persecutions and destruction of the Armenians in regions just beyond the Tiflis gubernia (county). The main activities on the Caucasus Front are already over, but the Turkish regiments continue implementing the program of the annihilation of Armenians. Having concluded the annihilation of the Armenian population of Art- vin, Sarikamish, Kars, Ardahan, the troops are moving towards Akhalkalaki and Akhaltsikhe uyezds (districts), where the Turkish military are vigorously joined by the Turkish population of these regions, who were among the perpetrators of the attempt of the Armenian annihilation. These events take place while the Russian Imperial army deserts and the Armenians of Tiflis and Kars gubernias are forced by the Russians to disarm. During the same period, masterminded and progressive disarmament and destruction of the Armenians is taking place in Yelizavetopol and Baku gubernias, where the Turkish troops are supported by the Tatar population.

The materials of "1918" also point at countless efforts of the international powers to bring Turkey to responsibility for the committed crime.

The main goal of this edition is to provide the general public with the Georgian periodical materials of 1914-1918, which to this day were largely unknown, and thereby to contribute to the edification on the matter of the Armenian Genocide, an issue, tabooed in Georgia for decades.

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաշիձե Բ. – 190,
Աբդուլ – 190
Աբդուլ Համիդ – 17, 25, 104
Ադամով – 106
Աբովյան/Աբովյանց – 128-129
Ազրաթ, շեյխ – 51
Աթաբեկյան – 178
Աթանեսյանց – 35-39, 109-110, 123, 125
Աթանեսյանցներ – 38-39
Ալեն – 47
Ալի, շեյխ – 51
Ակնունի – 72, 116
Աղբալյան – 178
Ամիր-Շիմխաթ – 91
Ամիրեջիբի Շ.– 17
Այվազյան – 178
Առաքելյան Հ. – 61, 63-64, 129
Առաքելյանց Ա. – 134
Ասլան բեկ – 190
Աստղիկ – 43 - 45
Արաբ - 54
Արամյանց – 12, 184
Արղութինսկի-Դոլգորուկով Ա.Մ. – 131 - 133
Արշադ, խան – 110 - 111
Արշակ – 44 - 46
Արշունյան Գ. – 113-114
Արջևանիձե – 188

Բ

Բադալյան Ռ. – 13
Բայրամյան Հ. – 4, 13
Բեկզադյան – 178
Բեկթաբեկով Ա. – 137
Բեկստոն - 134
Բեուք խան – 110-111
Բոգոլեպով – 200
Բրայս, լորդ – 9, 97, 104, 106 - 107, 146

Գ

Գաբազյան – 178
Գաբաշվիլի Ռ.– 6, 17, 190
Գալլ - 100
Գեգեճկորի – 185
Գյուլխանդարյան – 178
Գոլց ֆոն դեր – 87
Գրուզին – 80

Դ

Դանիլովսկի – 166
Դոլուբանով – 152

Ե

Եվանգուլով – 35
Երզնկյան – 178

Զ

Զարդարյան –72
Զաքարյան – 178
Զդաննիչ – 136
Զոհրապ Գ. – 50, 53
Զավեն, պատրիարք – 167

Է

Էնվեր, փաշա – 17, 23, 28, 65, 90, 137
Էսմա, արքայադուստր – 65

Թ

Թալեաթ, փաշա – 8, 17, 58, 74, 80-81, 105, 144, 169, 204
Թամամշև Մ. – 121, 134, 158-159, 163, 166-167
Թասիմ բեյ – 54-55
Թորգոմ, եպիսկոպոս – 157
Թոփչյան Է. – 99
Թումանյան – 123
Թուրին, վարդապետ - 88

Ի

Իզեթ, փաշա – 149

Լ

Լեմկին Ռաֆայել – 17
Լեսլի – 86
Լիախով – 188
Լիբկնեխտ Կարլ – 8, 126
Լիշչենկո – 181
Լլոյդ Ջորջ – 171
Լոմթաթիձե Ալ. – 185

Խ

Խաժակ – 72
Խալիլ, բեյ – 102, 104, 116
Խավիզտիկանելի – 190
Խատիսով Ալ. – 123, 129
Խորեն, եպիսկոպոս – 129
Խունունց Ի. – 131, 133

Ծ

Ծերեթելի Ա. – 125

Կ

Կարատարով – 190
Կարճիկյան – 178
Կարվին Թ. – 150
Կոննոր Օ.– 96
Կրիում, լորդ – 78
Կրովցով, սենատոր – 143
Կրոմեր – 199

Հ

Հաջի - Գիլեշ Երկրորդ – 72
Հարությունով – 161, 178
Հոֆ – 27

Ձ

Ձամոն – 193

Ղ

Ղազարով – 101
Ղանչավելի Ի. – 163
Ղարաշարով – 190

Ճ

Ճավճավաձե Ի. – 125, 172,
Ճիաբերաշվիլի Դ. – 78
Ճիճինաձե Զ. - 17

Մ

Մագիստրոս – 150, 152, 155-156
Մահմուդ, փաշա – 87
Մաղլակելիձե – 188
Մամիկոնյան – 178
Մառ Ն. – 93, 113
Մատիրյան – 190
Մարիամ – 43 - 45
Մեսրոպ, եպիսկոպոս – 77, 89, 155
Միլյուկով – 139, 156
Միլյուկով-Վոդովոզով – 140
Միխայլովսկի – 34
Մինասյան /Մինասյանց – 118 -119, 131, 133
Միրզոյան Ա. – 13
Միքայելյանց – 146
Մխիթար, եպիսկոպոս –166
Մորգենթաու – 94

Յ

Յազուտով Գ. – 13
Յուզբաշև Ա. Սաղնաղ – 35
Յուդենիչ – 147

Ն

Նազարբեկով – 186, 196
Նաջի, բեյ – 54-55, 116
Ներսես, եպիսկոպոս – 40, 76
Նիկիտին – 89
Նիկոլայ – 40
Նիքսոն, գեներալ – 96
Նուրի, փաշա – 200

Շ

Շանշիաշվիլի Ս. – 5
Շահ Աբաս – 149
Շաշկովսկի Բ. – 109
Շարաթյան – 134
Շաքիր, բեյ – 116
Շելկովնիկով – 182

Շեյխ-ուլ-իսլամ – 74
Շթում ֆոն – 8, 126

Չ

Չալխուշյան – 143 - 144
Չապլին Ն. – 161
Չիտաշվիլի – 180
Չխենկելի – 160, 179, 191-192, 196
Չոլոդաշվիլի Դ. – 78

Պ

Պապաջանով Մ. – 101, 123, 143
Պարոնյան – 178
Պերտեֆ, փաշա – 87
Պողոս Նուբար, փաշա – 119, 132
Պրիմրոզ Ա., լորդ – 47-48

Ջ

Ջամբազյան – 180
Ջանելիձե Օ. – 19
Ջելալ, բեկ – 190
Ջեմալ, բեյ – 88
Ջեմալ, փաշա – 17, 21, 23
Ջիվիլեգով – 155
Ջ-շվիլի Ար. – 155
Ջորջ Ալգարդ – 162
Ջևդեթ, փաշա – 96, 114, 120

Ռ

Ռոբինսոն – 126
Ռահիբ, բեյ – 47
Ռահիմ, խան – 111
Ռամիշվիլի Ն. – 176, 187
Ռուբեն – 90-92

Ս

Սաադ, բեյ – 58
Սազոնով – 34
Սահակյան Էդ. – 13
Սանդերս Լ. – 87
Սաֆրաստյան Ա. – 146
Սերոբյան – 150
Սողոմոնյանց – 141
Սուխոմլինով – 34

Վ

Վանյա –119
Վարազդատ – 71-72
Վարանդյան Բ. – 84, 115, 117-118
Վեստենենկ – 27
Վեհիբ, փաշա – 12, 87, 182-183
Վեշապելի Գ. – 5
Վիլյամս – 47-48, 96
Վիլսոն – 100, 150
Վոդովոզով – 138, 140
Վոլֆ – 145
Վորոնցով-Դաշկովա Է. – 77

Վռամյան – 116

Տ

Տեր-Ավետիսյան – 113
Տեր-Մինասյան – 178
Տեր-Մովսիսյան – 155
Տեր-Զրբաշյանց – 141
Տեր-Ղազարյան – 178
Տեր-Օհանյան – 178
Տրաչենկո – 181

ՈՒ

Ումբաթաշվիլի Մ. – 184

Ց

Ցեցնաձե Ի. – 6

Ք

Քորոոլունց Կ. – 95

Օ

Օգյուստ – 39
Օդիշելիձե – 12, 182-183
Օհանյան Ա. – 13
Օհանյան, բժ. – 170
Օհանջանով – 112, 164
Օրմանյան – 157

Ֆ

Ֆրանց Իոսիֆ – 80, 93

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբազի – 63-64, 66-67
Աբասթուման – 188
Ադրբեջան – 74, 196 – 198, 203
Ադրիանուպոլիս – 29, 100
Ադրիանուպոլսի վիլայեթ –99
Աթենք – 29, 57, 75
Աթոն, վանք – 77
Ալաշկերտ – 49, 63-64, 109-110, 128,-129, 131-132, 135, 147, 162, 169
Ալեքսանդրապոլ – 191, 196
Ալեքսանդրետ – 139
Ալեքսանդրիա – 103
Ալջվազ – 52
Ախալցխա – 16, 175, 182-183, 188, 190, 192
Ախալցխայի գավառ – 42, 79, 154, 163, 205
Ախալքալաք – 34, 189
Ախալքալաքի գավառ – 11, 31-32, 42, 79, 153
Ախբակ – 52
Ածղուրի – 183
Աղստև – 159
Ամերիկա, ԱՄՆ – 6, 45, 72, 94, 100, 105, 108, 112-113, 135, 150-151, 158
Այսրկովկաս – 4, 10, 36, 39, 76, 79, 90, 123, 141, 152, 173-174, 179-182, 185-188, 194 – 195, 197
Այվալ – 52, 58, 156, 171
Անատոլիա – 81-82, 87, 94, 133, 148-149
Անգլիա, տե՛ս նաև Մեծ Բրիտանիա – 6, 9, 25, 29, 33-34, 40, 47-49, 81, 94, 96, 104, 107-108, 134, 146, 151, 167, 196
Անիի Դուտակ Մուշ – 177
Անտիոք – 67, 76
Ավստրիա – 25, 33, 84, 93
Ատլանտյան օվկիանոս – 150
Արաբիա – 29
Արազդայան, կայարան – 179
Արարատ – 157, 179-180
Արաքս – 111
Արդահան – 99, 163, 184-190, 205
Արդվին – 79, 162, 184, 205
Արխավե – 130
Արճեշ – 52, 69, 74
Արմութլու – 99
Արտամետ – 146
Աֆիոնի շրջան – 90
Աֆիոն-Ղասագիսար – 75

Բ

Բազրևանդ – 63, 64
Բազանթ – 156
Բաթում – 16, 26, 58, 101, 117, 130, 137, 152, 184, 188-189,
Բաթումի մարզ – 79, 91, 117, 152, 177, 187-189
Բակին – 179
Բայազետ – 21, 26, 63-64, 69, 97, 147, 162, 177-179
Բայբուրդ – 24, 99, 152, 158
Բայբուրդի մարզ – 177
Բայկալ – 132
Բայրախտար – 99
Բաշքալու – 97
Բասեն – 101, 164
Բաքվի նահանգ, սանջակներ – 26, 109, 117, 177, 205
Բաքու – 61, 75, 85, 95, 109, 161, 168
Բելգիա – 40, 138, 171
Բեյրութ – 45
Բեռլին – 43-44
Բերկրի – 52
Բերյոզովկա –132
Բեսարաբիա – 56
Բիթլիս – 26, 61, 63-64, 69, 91, 112, 117, 149, 151
Բիթլիսի վիլայեթ – 28, 55, 65, 71, 74, 117
Բոյ – 197
Բոլնիս-Խաչեն–199
Բորչալու – 11, 32, 199
Բորչալուի գավառ – 12, 42, 184,
Բրեստ-Լիտովսկ –187
Բոստոն – 150
Բոսֆորի նեղուց – 87
Բորժոմի – 175
Բուլղարիա – 6, 68, 70, 74, 87-88, 93, 100, 103-104
Բուխարեստ – 21, 28, 49-50, 57, 61-62, 75, 86, 88
Բուրգաս – 87
Բուրլա – 52

Գ

Գալիպոլի – 61, 87
Գամա, քաղաք – 157
Գեսրտուվան – 46
Գերզեր – 178
Գերմանիա – 6, 8, 25, 33, 55-56, 80-81, 84, 98, 132 -133, 145, 150, 202
Գերմանիա – Ավստրիա- 33
Գլազգո – 171
Գյանջա – 159, 161, 200
Գյանջայի նահանգ – 26, 91, 109-110, 117, 128, 141, 161, 177, 182
Գյումրի – 159, 161, 168, 185, 198-199

Գյումրու նահանգ – 95
Գոմ, քաղաք – 157
Գուրիա – 189

Դ

Դաղստան – 55, 91, 117
Դամասկոս – 157
Դարդանել – 43
Դեգոր – 99
Դիադին – 63-64, 147
Դիարբեքիր – 28, 57
Դիլիջան – 101, 106
Դիլման – 46, 177
Դոբրուջ – 163
Դոլիար – 112

Ե

Եգիպտոս – 23, 90, 132, 156
Եդեսիա – 50
Ելիզավետպոլ – 55
Ելիզավետպոլի նահանգ – 205
Եկատերինոֆելդ – 199
Եկատերինոդար – 159, 166
Եվրոպա – 21, 24, 57, 105, 114, 116, 118, 122, 139
Երզնկա – 24, 145, 152, 158
Երզնկայի մարզ – 177
Երուսաղեմ – 67, 157, 167
Երևան – 15, 55, 66, 78, 91, 93, 95, 97, 103, 109-110, 123, 129, 133, 141, 151-152, 159, 161,168, 178, 182, 187, 196
Երևանի նահանգ – 23, 26, 66, 91, 95, 109-110, 117, 123, 137, 141, 171-172, 177-178, 196
Եփրատ – 29, 65-66, 145

Զ

Զեյթուն – 53, 63-64, 80, 82
Զմյուռնիա – 46, 49, 97
Զուգդիդ – 79

Է

Էգեյան ծով – 87
Էնիշուքրի – 75
Էջմիածին – 33, 61, 70-71, 89, 93-94, 102, 159, 168,
Էրեյլ - 156
Էրզրում – 12, 24, 26, 43, 53, 55, 72, 87-88, 91, 116-117, 127, 129-134, 142, 145, 150, 162, 166, 177, 182-183
Էրզրումի մարզ/վիլայեթ – 28, 55, 74, 91, 117, 145, 177,183

Թ

Թալիշ, գավառ – 197
Թավրիզ – 111, 177
Թելավի – 16
Թեհրան – 29, 92, 101, 157

Թեոդոսիա – 99
Թերեք, մարզ – 77
Թիֆլիս, Թբիլիսի– 5-6, 39-41, 49, 56, 61, 71, 89, 99-101, 106, 110, 118-120, 127-128, 130-131, 133-135, 158-159, 165, 172, 176, 191-193, 198, Թիֆլիսի նահանգ – 42, 78, 91, 110, 117, 129, 177, 205
Թոփրակ-Կալե – 170
Թրակիա – 43, 58, 87
Թուրքիա, Օսմանիա, Օսմանյան կայսրություն, Օսմանյան Թուրքիա – 5-7, 9, 11, 14-16, 21, 23-24, 26, 30, 33, 37, 40, 47-49, 53, 59, 63, 65-66, 68, 74, 80-81, 84-85, 88, 90-~~91,~~ 93, 95, 108, 121, 126, 146, 152, 169, 182, 187, 195-197, 20-1205

Ժ

Ժնև – 58, 130

Ի

Իգդիր – 35, 66-67, 69, 74, 89, 159, 161-162, 165-166, 178, 187
Իռլանդիա – 96
Իտալիա – 65

Լ

Լազիստան – 139-140, 184
Լիս – 61
Լոնդոն – 10, 73, 78, 123, 127, 144, 167, 171

Խ

Խալդին – 182
Խալ-Լուխրանի մարզ– 187
Խարբերդ – 57
Խարբերդի վիլայեթ – 28
Խնուս – 130, 132, 134, 158,
Խնուս-Մուշ – 164
Խոյի շրջան – 177
Խորասան – 99, 177
Խոսրով, բնակավայր – 46
ԽՍՀՄ – 202

Ծ

Ծիրա – 176
Ծիծեռնակաբերդ – 15
Ծուղրութ – 176

Կ

Կահիրե – 136
Կարաիսար – 90
Կարս – 56, 78, 91, 99, 106, 151-152, 161, 177, 180, 185-186, 191-193, -195, 195
Կարսի մարզ, նահանգ – 11, 26, 32, 99, 109-110, 117,

121, 141, 152, 158, 177-178, 187, 193-195, 198, 205
Կիլիկիա – 28, 63-64, 71, 73, 80
Կոնիա – 88, 97, 156
Կոպ – 61
Կոստանդնուպոլիս – 15, 49, 67-68, 87-88,150, 156
Կովկաս, Հարավային Կովկաս, Հյուսիսային Կովկաս – 4, 9, 24, 26, 33-34, 38-39, 55-56, 71, 73-74, 77-78, 87, 89, 91-92, 99-100, 104, 108-110, 114-115, 117-119, 121, 124-125, 128-129, 132, 134, 137, 139, 142, 147, 149, 151-152, 154, 167-169, 172, 195, 197, 202, 205
Կովկասյան լեռնաշղթա, լեռներ – 7, 26, 48, 55, 117, 140, 203
Կրծանիս – 77, 112
Կուֆա – 86

Հ

Հաբաշ – 157
Հալեպ – 72, 82, 97, 157
Համադան – 92, 102
Հայաստան (Արևելյան Հայաստան, Արևմտյան Հայաստան,Օսմանյան Հայաստան, Թուրքաց Հայաստան, Ռուսաց Հայաստան, Ռուսա-հայաստան) – 4, 7, 9, 14-16, 20, 22, 25, 27, 29, 35, 38, 43-45, 47, 49, 54-56, 58, 63-64, 71, 73, 65-66, 73, 80, 82-83, 85, 90, 93, 104, 106-107, 114-115, 138-140, 145, 147, 150-152, 170-173, 194-195, 198, 201, 203-204
Հայաստանի Հանրապետություն–15
Հավլաբար – 106
Հես – 52
Հնդկաստան – 157
Հոլանդիա - 6
Հռոմ – 35
Հրազդան, գետ - 15
Հունաստան – 6, 27, 49, 58, 62, 105

Ղ

Ղազիզման – 74, 99
Ղազվին – 92
Ղամարլու – 159
Ղարադաղ – 89, 110
Ղարասու, գետ – 145
Ղարաքիլիսա, տե՛ս նաև Մեծ Ղարաքիլիսա – 90, 101, 128, 159, 168, 199

Ղրել – 182-183
Ղրիմ – 56
Ղում – 102

Ճ

Ճորոխ, գետ – 90, 184

Մ

Մակեստաժին – 75
Մակս – 52
Մակու, գավառ – 197
Մամրտանկ – 52
Մարագ – 111
Մարադան – 111
Մարսել – 89
Մելազգեր – 135
Մելյազկերտ – 61
Մելայր – 102
Մերձավոր Արևելք – 15, 202
Միջագետք – 49, 63-64, 96, 131, 133, 145, 149, 151, 171
Միջերկրական ծով – 107, 139-140
Միտիլինա – 156
Մոզուն – 178
Մուսա-մոլլա, գյուղ – 185
Մոսկվա – 10, 91, 112-113, 129-130, 133, 142, 170
Մուշ-Մանազերտ-Բիթլիս – 69
Մուշ – 51, 63-64, 69, 104, 110, 129, 132, 134, 151-152, 164, 177
Մցխեթ – 201

Յ

Յավա, կղզի – 157

Ն

Նախիջևան – 97, 99, 178
Ներքին Ախթ – 97
Նյու-Յորք – 10, 150
Նոդան – 110
Նորաշեն – 181
Նորդուզ – 52
Նուխի, գավառ – 170, 180

Շ

Շապին-Գարահիսար – 62
Շատիխ – 52
Շարափխա – 111
Շիրակ – 198
Շորագյալ – 99
Շվեյցարիա – 89
Շուշի – 53, 92, 94, 134

Պ

Պարսկաստան – 29-30, 37, 39- 41, 66-67, 74, 76, 87, 90,

92-93, 96-97, 102-103, 105, 108-111, 121, 134, 139, 157, 197
Պարտիզակ – 72
Պերի – 27
Պետրոգրադ – 10, 27, 34, 85, 90, 100, 129, 138, 140-142
Պոնտոս – 61
Պորտա – 49, 67-68
Պորտ Սաիդ – 76, 86

Ջ

Ջաբրայիլ – 110-111
Ջալալօղլի – 178
Ջանակ – 164
Ջեբելմուսա, Ջեմալմուսա, սար – 76
Ջուլֆա – 46-47, 97, 102, 111, 181, 196-197
Ջուլֆա-Բաքու – 181

Ռ

Ռայխստագ – 6, 8, 126, 194
Ռաջոդո – 156
Ռոստով –142
Ռումինիա – 50, 74, 88, 104, 163
Ռուսաստան – 16, 23-26, 29, 33, 37, 44, 47-48, 53-55, 60, 63-64, 70, 74-75, 84, 91, 102, 104-105, 109, 117-118, 122, 132, 138-139, 141-144, 147, 149-151, 155-156, 159-160, 163, 171, 195, 203-205

Ս

Սալոնիկ – 86
Սանդար – 198
Սանահին – 89
Սասուն – 51, 61, 78, 90, 134
Սարիղամիշ – 90, 131, 159, 174, 186, 205
Սենակի գավառ – 79
Սերբիա – 138
Սիզան – 52
Սիրիա – 29, 49, 151
Սհակերտ - 52
Սոլուն – 50, 58, 65, 67-68, 74, 171
Սողանլուղ – 99
Սովջուք-Բուլաղ – 102, 111
Սոփչախլար – 95
Սոֆիա – 68, 70, 72, 88
Սոֆիան – 111
Սպահան – 102
Սվազ – 24, 152
Սվազի վիլայեթ – 28
Ստամբուլ – 20-22, 27-29,43-44, 48, 50, 52, 57, 61, 65-66, 70, 75, 86, 97-98, 100, 104, 113, 135,144, 157, 167, 169

Ստավրոպոլ –159
Սև ծով – 23, 87, 139-140
Սուդուխ – 111
Սուլթանաբադ – 92, 102
Սուխումի մարզ – 79, 91
Սուրմալուի գավառ – 187, 194, 198
Սուրմագինի մարզ – 178

Վ

Վաղարշապատ – 159
Վան – 26, 51-52, 62, 73-74, 91-94, 96, 103, 108, 110, 113-115, 117, 120, 123, 125, 135, 141, 149, 151-152, 162, 164-165
Վանա լիճ – 31, 63-64, 151
Վանի մարզ, շրջան/վիլայեթ – 28, 49, 54-55, 69, 74, 76, 114, 117, 121, 149, 165, 67, 177
Վասպուրական – 149
Վառնա – 87
Վլադիկավկազ – 55
Վրաստան – 4-5, 10-11, 13, 16, 18, 32, 40-42, 55, 152-155, 172, 190, 201-203, 205

Տ

Տաբախմելա – 101
Տաբարշ – 164
Տիգրիս, գետ – 65-66, 71
Տրապիզոն – 12, 29, 88, 136, 152, 177, 183-184
Տրապիզոնի վիլայեթ – 91, 117

ՈՒ

Ուլուխանլու – 179-181
Ուրմիա – 47, 87, 90, 102, 104, 109, 111, 131, 177

Ց

Ցյուրիխ – 169

Փ

Փարիզ – 10, 76
Փոքր Ասիա – 14, 22, 24, 28, 43, 50, 58, 62, 68, 70, 87, 94, 100, 105,107, 145

Ք

Քարվանսարա – 133
Քութայիս – 6
Քութայիսի նահանգ – 91, 117

Օ

Օգոնիո – 82
Օդեսա – 130
Օզուրգեթի գավառ – 188
Օլթի –152

Օսմանյան Վրաստան – 152
Օտոման – 162
Օրգովե– 166

Ֆ

Ֆրանսիա – 6, 18, 25, 29, 33-34, 40, 48-49, 62, 76, 87, 89, 151
Ֆիլադելֆիա – 150

Բովանդակություն

Թարգմանչի կողմից 5
Առաջաբան..... 14
Մամուլ. 1914-1918 թթ..... 20
Ամփոփում..... 201
Resume..... 206
Անձնանունների ցանկ 210
Տեղանունների ցանկ 215

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ

ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ 1914-1918 ԹԹ.

სომეხთა გენოციდის თემა

ქართულ პერიოდიკაში

1914-1918

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 25.10.2017:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 14.125:
Տպաքանակը՝ 250:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www. publishing.am